ՄԱՅՐ ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՅ

Մաշտոցի անուան Մատենադարանի

Ը

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՅՐ ՅՈՒՅԱԿ
ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՅ

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ՀԱՏՈՐ
Ը.

Ձեռագիրք 2401-2700

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ՝
ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
ՅԱՆԿԵՐԸ ԿԱԶՄԵՑ՝
ՎԱՐԴԱՆ ԴԵՒՐԻԿԵԱՆ

«ՆԱՅԻՐԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
ԵՐԵՒԱՆ – 2013

Տպագրւում է Մաշտոցի անուան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 09
ԴՄԴ 76.11
Մ 239

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի.
Մ 239 – Հտ. Ը., եր.: «Նայիրի», 2013. 1562 էջ:

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց /Մատենադարան, Մաշտոցի անուան հին ձեռագրերի ինստիտուտ:
Հտ. Ը., եր.: «Նայիրի», հրատ., 2013:
Հտ. Ը. համրագրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, 2013:

Մաշտոցեան Մատենադարանի Հայերէն ձեռագրերի Մայր ցուցակի Ը. հատորի մէջ նկարագրուած ձեռագրերի քանակը կրկին 300 է [2401-2700: Այստեղ արդէն սկսւում է յայտնի «Գէորգեան հաւաքածուի» կամ «Նոր ժողովածուի» ձեռագրերի ներկայացումը, իսկ հաւաքածուի գոյացման հիմքում Գէորգ Գ. կաթողիկոսի ջանքերն են, որոնց շնորհիւ յետագայ հնարաւոր կորստից փրկուելով էջմիածնի մատենադարան են մտել եւ հայագիտութեանն ի սպաս դրուել հիմնականում Մայր Աթոռի որոշ միաբանների պատկանած արժէքաւոր շատ ձեռագրեր: Այս հատորով սկսւում է միջնադարագիտական մեծ կարեւորութիւն ունեցող այդ ձեռագիր արժէքների ամբողջական բացայայտումը, որով եւ ապահովւում է նրանց առաւել լայն գիտական գործածութիւնը:

ՀՏԴ 09
ԴՄԴ 76.11

ISBN 978-5-550-01733-3

© Մատենադարան, Մաշտոցի անուան հին ձեռագրերի ինստիտուտ, 2013:
© «Նայիրի», հրատ. ՓԲԸ, 2013:

ՄԱՇՏՈՑԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԱՅՐ ՅՈՒՑԱԿԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

Մեր ժողովրդի գլխաւոր ձեռագրապահոցի՝ Մաշտոցեան Մատենադարանի Հայերէն ձեռագրերի Մայր ցուցակի այս հատորի մէջ նկարագրուած միաւորների քանակը կրկին 300 է [2]. 2401-2700: Այստեղ, ըստ էութեան, սկսւում է յայտնի «Գէորգեան հաւաքածուի» կամ «ժողովածուի» ձեռագրերի ներկայացումը[1]: Անուանումն իսկ ցոյց է տալիս, որ նրա գոյացման առումքում Գէորգ Դ. Մեծագործ կաթողիկոսն է. գիտենք, որ երբ նա 1866 թ. Մայիսի «21ին Յինանց վեցերորդ կիրակիին մեծաշուք հանդիսով ստանում է կաթողիկոսական օծումը»[2], օծման հանդէսի ժամանակ նուէր է ստանում նաեւ ձեռագրեր, որոնք Դանիէլ վ. Շահնազարեանի կազմած եւ «Կարենեան» անունով տպագիր ցուցակով յայտնի շարքի մէջ չեն մուծուում, այլ գրանցուում են մէկով սկսուող նոր համարակալումով[3]: Ձեռագրեր ժողովելու ուղղութիւնամբ Գէորգ Դ. կաթողիկոսի կատարած կարեւոր մի քայլը հրապարակումն էր թեմերի եւ վիճակների առաջնորդներին ու հոգեւոր պետերին ուղղուած շրջաբերական կոնդակների, որոնցով հրահանգում էր վանքերից, եկեղեցիներից եւ անհատ մարդկանցից արժէքաւոր ձեռագրեր հաւաքել եւ ուղարկել Էջմիածնի մատենադարան[4]:

Սակայն «Ձեռագրական գանձերը կորստից փրկելու եւ էջմիածնի գրատունը նորանոր արժէքներով հարստացնելու ուղղութեամբ առանձին նշանակութիւն ունեցաւ հայ եկեղեցու հնաւանդ այն սովորութեան վերականգնումը, ըստ որի կուսակրօն հոգեւորականի ողջ ունեցուածքը՝ մահուանից յետոյ ժառանգութիւն էր մնում այն վանքին, որի միաբանն էր նա»[5]: Այս ձեռնարկմանը հաւատարիմ կաթողիկոսն իր ձեռագիր եւ տպագիր գրքերի անձնական հաւաքածուն գեռեւս իր կեանքի օրօք կտակեց Էջմիածնի մատենադարանին. «Գէորգեանս» հաւաքածուի մէջ արձանագրուած 52 ձեռագիր Գէորգ Դ. կաթողիկոսի աւանդն են:

Եթէ եկեղեցիների եւ անհատ մարդկանց պատկանած ձեռագրերը հիմնականում ծիսական բովանդակութիւն են ունենում, ըստ այդմ եւ՝ բնագրական-բանասիրական առումով պակաս արժէքաւոր են, ապա վանքերին եւ ուսումնական («գրոց-բրոց») վանականներին պատկանած մատեանները, որպէս կանոն, ընտրուվի ժողովուած են լինում բանիմաց եւ գիտական հետաքրքրութիւններ ունեցող ընթերցողների կողմից, առաւել յաճախ՝ ուսումնագիտական որոշակի նպատակով: Ահա այս հանգամանքի շնորհիւ «Գէորգեան» հաւաքածուն, քիչ բացառութիւններով, բաղկացած է գիտական առաջնակարգ արժէք ունեցող ձեռագրերից:

Յիշատակման արժանի առաջին արժէքաւոր ձեռագրակոմբը, որ Գէորգ Դ. կաթողիկոսի տեւական եւ յամառ ջանքերի շնորհիւ 1869 թ. մուծուել է մատենադարան, Տաւքի եւ Տիֆխիսի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու (մահ. 1856 թ., Ախալցխայում) ընտիր հաւաքածուն էր՝ այսօր Մաշտոցեան Մատենադարանում պահպանուող՝ մեծ մասամբ եզակի արժէք ունեցող 93 ձեռագիր: Յատկանշանական է, որ այս մատեանների զգալի մասը Կարապետ արքեպս-ը, երբեմն՝ վերադարձնելու խոստումով, հաւաքած է եղել Մուշի, Բաղէշի, Կարնոյ եւ յարակից շրջանների վանքերից ու եկեղեցիներից, բայց յետոյ Կարնոյ գաղթի ժամանակ հետը տարել է Ախալցխա:

Այստեղ եւ այս առիթով, նաեւ՝ տասնեակ հազարաւոր հայերէն ձեռագրեր կորստեան մատնած բազմակուլ եղեռնի գարագարձի նախօրէին լիովին տեղին է վերարտադրում-վերարծարծումը ուշագրաւ եւ շատ քան ասող մի յիշատակարանի, որ ժամանակին հրապարակել է երջանկայիշատակ Մնեվի Եգանեանը.

Նշանաւոր Մշոյ Ճառընտրի մի էջի լուսանցում Առաքելոց վանքի միաբան Մամբրէ վ. Մամիկոնեանը 1870 թ. գրել է. «Կարապետ եպիսկոպոս Կարնոյ եւ ի վերջոյ եպիսկոպոս Ախալցխայու վիճակի, յամի Տեառն 1833 գմի ոմն վարդապետաց իւրոց առաքէ ի վանս Ղազարու, եւ ի մատենադարանէ վանիցս զգրչագիր մատեանս գայսոսիկ, զորոց զանունսն նշանակեմ ասա՛ ի ստորեւ, ի պատճառս օրինակելոյ կամ տպագրութեամբ ի լոյս հասարակաց հանելոյ տանէ, խոստանալով եւս դարձուցանել. եւ ստեալ խոստման իւրում, ոչ դարձուցանէ: Քանզի ըստ պատմելոյ ծոցոց վանքըդի Յովհաննէս Ծերոնի վարդապետի՝ միաբանի սրբոյ ուխտիս, այս Կարապետ եպիսկոպոս նախ քան զգալն Ռուսաց յաշխարհս Տարօնոյ, գայ ի սուրբ վանս եւ տեսանէ դիպուածիւն մատենիս գայսոսիկ, եւ ապա ոչինի քանի ամաց առաքեալ տանէ առ ինքն, որք են այսոքիկ՝ գիրք ինն[6].

---

[1] *Նախօրդ՝ ե. հատորի մէջ արդէն կան մեր այս երկրորդ մեծ ձեռագրապահոցի տասնութ միաւորի (2383-2400) նկարագրութիւնները:*

[2] *Տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում. հայ ուղղափառ եկեղեցւոյ պատմութիւնը, յարակից ազգային պարագաներով պատմուած, Գ. հատոր, յօդուած 2765:*

[3] *Հաւաքածուի մասին մանրամասն տե՛ս Ո. եգանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները.- Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա., կազմեցին՝ Ո. եգանեան, Ա. Չէլեպեանեան, Փ. Անթաբեան, ներածութիւնը՝ Ո. եգանեանի, խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, 1965, էջ 50-72:*

[4] *Նոյն տեղում, էջ 51:*

[5] *Մանրամասները՝ նոյն տեղում:*

[6] *Թուարկած բոլոր ձեռագրերն այժմ Մատենադարանում են.*

1. Դաշանց գիրք [Հ՟ 2748].

2. Տաղարան հին եւ երեքաթ խազերով [Հ՟ 3403].

3. Խոյենացի (Պատմութիւն Հայոց) [Հ՟ 2865].

4. Տօնապատճառ [Հ՟ 3082].

4. Նեբսխի Ատեանաբանութիւն (Համբրօնացւոյն) [Հ՟ 2488].

6. Ղուկասու մեկնիչ (Աւետարանին) [Հ՟ 2417].

7. Պօղոսի (թղթոց) մեկնիչ [Հ՟ 2691].

8. Նոյն Ղուկասու մեկնիչ (բայց հեղինակն անյայտ) [Հ՟ 2600].

9. Յայտնութեան մեկնիչ (հեղինակն դարձեալ անյայտ) [Հ՟ 2420].

Ի գրեանցս յայտցանէ, զորոց ստեալ խոստման իւրում, յայժմահակ ի վանացս Կարապետ եպիսկոպոս, առաւել ընդ կորուստ օրինակին Մովսիսի Խորենացւոյ, Դաշանց թղթոյն, անյայտ Մեկնութիւն Ղուկասու Աւետարանչի եւ Մեկնութիւն Յայտնութեան ցաւեալ մորմոքեցայ, մանաւանդ ընդ երկուցն առաջնոց՝ այն է՝ Մովսիսի Խորենացւոյ Պատմութեան հին օրինակին եւ Դաշանց թղթոյն, որ յայտ է թէ ի հնագոյն եւ հաւատարիմ օրինակէ պահեալ լինի ի մատենադարանին վանացս, զորոց գգիւտէ պարտ է ինձ Մամբրէ վարդապետի Մամիկոնեանս, եւ ես հօր վանացս Յովհաննէս վարդապետի Մուրատեան, գհետ լինել տեղեկանալ, թէ ո՛ւր արդեօք մնացեալ իցէ ետ վախճանի Կարապետ եպիսկոպոսի, եւ վերջապէս ի ձեռն բերել գհագագիւտ ձեռագիրս: Յայմ *1870, Նոյեմբերի 14, ի վանս Ղազարու»*[7]:

Նոր բան ասել պէտք չէ. կրկնենք նոյն Ծ. Եգանեանի եզրակացութիւնը. «Զգիտենք, յիշատակագիրը հետագայում կարողացա՞ւ իմանալ, թէ որտեղ են գտնւում վերոյիշեալ ձեռագրերը, բայց վստահ ենք, որ եթէ այսօր կարողանար իմանալ, թէ վանքում մնացած հարիւրաւոր մատեանների նման եղեռնի զոհը չեն դարձել, այլ ապահով պահւում են Մաշտոցի սրբալոյս անունը կրող Մատենադարանում, այսպանելու փոխարէն՝ կօրհնէր *«յայիշատակիչ» Բագրատունու յիշատակը»*[8]:

Սա լաւագոյն օրինակն է՝ ցոյց տալու համար, որ Մայր ցուցակի այս եւ յաջորդելիք հատորներում նկարագրուած՝ «Գէղեցիկ» հաւաքածուի ձեռագրերի մեծ մասը նոյն եղեռնի եւ այլ պատահմունքների զոհը դառնալուց փրկուել է *ԺԸ. դ.* երկրորդ կէսի եւ *Ի. դ.* սկզբի մեր հոգեւորական եւ աշխարհական մտաւորականների հետաքրքրական ջանքերի գնով[9]: Իսկ ձեռագրերի ունեցած գիտական եւ ընդհանրապէս մշակութային արժէքները յստակ երեւում են հատորիս թէ՛ նկարագրութիւններով[10] եւ թէ՛ բազմահմուտ Վարդան Գէորգիկեանի կազմած ցանկերով:

* * *

Հատորիս ձեռագրերի առաջին նկարագրութիւնները արել են՝

Ձեռ. Հ՟ 2401-2500 - Գեղամ Բադալեան.

Ձեռ. Հ՟ 2501-2557, 2559-2628, 2630-2638, 2640-2651, 2681-2694, 2696-2699 - Անդրանիկ Զէյթունեան[11].

Հ՟ 2653-2657, 2659-2675 - Վահրամ Ղրիմեան:

Գուցէ վրիպամբ հնում չարուած ձեռագրերը նորերս նկարագրել են՝

Ձեռ. Հ՟ 2558 - Տաթեւիկ Մանուկեան.

Ձեռ. Հ՟ 2629 - Հասիք Ղազարեան.

Ձեռ. Հ՟ 2639, 2652, 2658, 2695, 2700 - Արամ Հիլանեան:

Այսուհանդերձ, Հ՟ 2484, 2676-2680 ձեռագրերի նկարագրութիւնները պատրաստող(ներ)ի անունն անյայտ է[12]:

Ձեռագրերի երկրորդ նկարագրութիւնները *(սկզբնականների սրբագրում-ճշգրտումը)* արել են՝

Հ՟ 2401-2450 - Արմինէ Մելքոնեան եւ Լուսինէ Թումանեան.

Հ՟ 2451-2500- Լուսինէ Թումանեան[13].

Հ՟ 2501-2550 - Դաւիթ Ղազարեան.

Հ՟ 2551-2600 - Տաթեւիկ Մանուկեան.

Հ՟ 2601-2650 - Գայիանէ Խաչատրեան.

Հ՟ 2651-2675 - Քնար Յարութիւնեան.

Հ՟ 2676-2700 - Յասմիկ Իրիցեան:

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

ամէն մէկին վերաբերող տողի վերջում փակագծերի մէջ նշել ենք նրանց ներկայ համարները, որ պարզել է Ծ. Եգանեանը (միայն Յովհ. վրիպամբ գրել էր 2864, ուղղել ենք՝ 2865, որ այժմ ես Խորենացու Պատմութեան յայտնի հնագոյն օրինակն է):

[7] *Մատենադարան, ձեռ. Հ՟ 7729, 292բ:*

[8] *Ծ. Եգանեան. Կարապետ արքեպս. Բագրատունու հայերէն ձեռագրերի հաւաքածուն.- Էջմիածին, 1971/Թ., էջ 60:*

[9] *Ծ. Եգանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները, էջ 67-71 թուարկուած են թէ՛ Գէորգ Գ. եւ նրա յաջորդ Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսների եւ թէ՛ կարապետ Բագրատունի, Դանիէլ Շահնազարեան, Մարգիս Ջալալեան, Մեսրոպ Մնձուռեանց, Մեսրոպ Տէր-Մովսիսեան արքեպիսկոպոսների, եփրէմ Ալիճոլեան վարդապետի եւ շատ ուրիշների ժառանգած՝ տասնեակ ձեռագրեր ամփոփող հաւաքածուների համարաշարերը:*

[10] *Միայն ասենք, որ այստեղ նկարագրուած է նաեւ թղթի վրայ գրուած հայերէն հնագոյն 981 թ. գրուած ժողովածուն՝ ձեռ. Հ՟ 2679, որ նոյնպէս Կ. արքեպս. Բագրատունու հաւաքածուի մասն է:*

[11] *Նկարագրած է եղել Հ՟ 2501-2800 երեքհարիւրեակը, բայց ապած աշխատանքի լրիւ չի պահպանուել, ուստի ձեռագրերի զգալի մասն ի նորոյ է նկարագրուել:*

[12] *Հնարաւոր վրիպումների համար ներողամտութիւն ենք հայցում. նախորդ պատասխանատուներից ուղեկիցներ չենք ստացել, ուստի թուարկում արել ենք ըստ Ձեռագրատան սպասարկման մատեանների:*

[13] *Հ՟ 2401, 2442, 2448, 2455, 2458, 2475, 2485 ձեռագրերի տոմարական նիւթերի նկարագրութիւնները արուել են Գրիգոր Բրուտեանի, իսկ Հ՟ 2485 ձեռագրի երաժշտական նիւթերը՝ Արուսեակ Թամրազեանի հետ խորհրդակցելով:*


2401
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՅՈՎՀԱՆՆԱՎԱՆՔ — ԹՈՒՂԹ՝ Ցուցաննէս արքայ։

ԳՐԻՉ՝ Ցուցաննէս արքայ։

ԹԵՐԹ՝ 278. չգրուած՝ 1բ-2բ, 3բ-4բ, 267ա: ՊՐԱԿ՝ 4+16+Ա-ԻԱ×12 (Ջ 14, ԺԱ 16)։ ՆԻՒԹ՝ թուղթ, արեւելեան։ ՄԵՁՈՒԹԻՒՆ՝ 11x8,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (7,5x5)։ ԳԻՐ՝ նուագիր (ևմուշ՝ 10ա)։ ՏՈՂ՝ 13-18։ ԿԱՋՔ՝ դռոմմագարդ շագանակագոյն կաշի՝ կապիչներով, միջակը տախտակ, աստառ կանաչ մետաքս. լուսանցազարդերը՝ կարմիր։

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ — Մոտաւ յերեսագրէմ՝ 155բ, ճա-կա տա զա րդ՝ 5ա, 79ա, 122բ, 182ա։ Լուսագարդ՝ բուսական, թռչնային (156ա, 268ա), տառեր (36ա)։ Զարդագիր՝ թռչնագիր, ճանգուցագիր։ Գոյներ՝ կարմիր, կապոյտ, դեղին, ևարճի, սեւ.



Նմուշ 10ա

ՊԱՏԱՒՈՒԱԿ-ՊԱՀՊԱՆԱԿ — Տօնական կամ մարգարէների ճաշոց (վրացերէն)։ ԺԹ.-ԺՌ. դդ.։ 2 (Ա-Բ) + 2 (Գ-Դ)։ Ստացուած 21x14,5 չափսի ամբողջական մէկ թերթի ընդլայնակի ծալում-երկատակումով եւ ընդերկայնակի կիսումով։ Մագաղաթ, 10,5x7,4, նուսխուրի, միասիւն (10x10, 10x8. սկզբնապէս՝ երկսիւն), տող՝ 13 (ԱԲ), 10 (ԳԴ)։ Կարդալ Ա.ա, Բբ, Դդ, Գգ, Բա, Ա.բ, Գբ, Դա (ըստ Գ. Մարտոխաճի)։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի եզրերը եւ միջին մաշուած, դռնակն ընկած. յետագայ վերակազմութեան ժամանակ մասեր տեղաշարժուած ԺԹ-ԻԱ (թ. 21-116), Ա-ԺԹ (թ. 117-278), լուսանցներում խոնաւութեան եւ ցեցի ճեմքեր (թ. 244-7 եւ այլն)։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *5ա-78բ* **[Մասն ժամագրոց]**

1. *5ա-7ա* [Երգ ասացեալ ի պատարաման գիշերոյ] — *Յիշեսցուք ի գիշերի... եւ զմեծ զողորմութիւն... Ալէլուիա:*

2. *7ա-9բ* [Կանոնագրութիւն կարգաւ ըստ ութ ձայնից] — *Գաւառ՛, Տէ՛ր, զայնոսիկ... Դասք լուսեղէն... քո սուրբ գայուստ:*

3. *10ար* [Կանոնագրութիւն Բուն Բարեկենդանին եւ Նոր Կիւրակէին] — *Աւրհնեա՛ անձն իմ... ի պատակել ըզսուրբսըդս քո:*

4. *10բ-8ա* Թագաւորք ապաշխարութեան — *Բշ. Թագաւոր յաւիտեան... որ մոլորեցայ ի հօտէ... խառնիլ ի հաւտ քո:*

5. *18ա-22ա* Թագաւոր[ք] մարտիրոսագ — *Կգ. Զողորմութիւն քո, Տէ՛ր... օրհնել մուրբ զերդորդութիւն:*

6. *22ա-3ա* Սրբոյն Ստեփաննոսի եւ ասագ տօնեցուն — *Ալսօր դասք հրդ[եղ]տակացն... Ալսօր դասք:*

7. *23ա-33ա* Ալէլուիա գիշերաւն կարգաւ — *Ալէլուիա, ալէլուիա: Ոդորմութեամբ Տեառն... Ոչ են բանք... խօսք նոցա:*

Ռճժգ. — 1664

8. *33ա-58ա* [Աւետարանի բժշկութեան, իսպաթերից, տաճարի, հանգստեան] — *ա. 33ա-4ա եւ մինչ-գեռ անցանէր... (Մտթ. Ը. 27-34): բ. 34ա-6ա Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդս... (Մտթ. ԺԳ. 36-52): գ. 36ա-8ա եւ յորժամ եկեսցէ... (Մտթ. Իե. 31 - ԻԶ. 2): դ. 38ա-40ա եւ յերեկոյի շաբաթուն... (Մտթ. ԻՀ. 1-20): ե. 40ա-1ա Մինչդեռ նա զայն խօսէր... (Մրկ. ե. 35-43): զ. 41ա-2ա եւ ասէր. Այսպէս է արքայութիւն... (Մրկ. Դ. 26-34): է. 42ար Զգոյշ եղերո՛ւք... (ԺԳ. 33-37): ը. 42բ-4ա եւ իբրեւ երեկոյ եղեւ... (Ժե. 42 - ԺԶ. 8): թ. 44ա-5բ եւ էջ ի կապիտանաւսմ... (Ղկ. Դ. 31-42): ժ. 45բ-8ա Մի՛ երկնչիր, հօ՛տ փոքրիկ... (Ղկ. ԺԲ. 32-48): ժա. 48ար Զգոյշ լի՛ցո՛ւք անձանց... (Ղկ. ԻԱ. 34-38): ժբ. 48բ-50բ եւ ահա այր մի... (ԻԳ. 50 - ԻԴ. 12): ժգ. 50բ-2ա Յետ այսորիկ տօն էր հրէից... (Յվհ. ե. 1-18): ժդ. 52ա-3բ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ գնոսա... (Յվհ. ե. 19-30): ժե. 54ա-5բ Ամէն, ամէն ասեմ ձեզ. ո՛չ է ծառայ մեծ... (Յվհ. ԺԳ. 16-30): ժզ. 55բ-8ա Յետ այսորիկ աղղայեաց... (Յվհ. ԺԲ. 38- Ի.13):*

9. *58ա-60բ* Կանոն աղ օրհնելոյ — *Եւ ասի սաղմոս. Աստուա՛ծ, ողորմեա՛ մեզ... Ընթերցուած յնեսայեա մարգարէէ. Այսպէս ասէ Տէր... եղիցի մեզ ի սրբութիւն, ի քաւութիւն... Գ. հետ կրկնեա՛լ:*

10. *60բ-78բ* [Ժամամուտք ըստ կարգի աւուրց պաճոց եւ տօնից տէրունականաց եւ ամենայն արբոց պաճոց] — *Բշ. Գշ. Եշ. Որ ի Հաւրէ առաքեցար... Յարեաւ փառաց Թագաւոր... մեծ աւետիս:*

Բ 79ա-102բ [Կանոն սրբոյ Պատարագին]

Տե՛ս նեռ. 2385, 101ա-45բ. *1/79ա-83ա: 2/83ա-91ա: 3/91ա-102բ: 4/տիք (մեաւորեները համաձայնութեամբ են եւ առանց գլխաբաժանումների):*

Գ. *102բ-10բ* [Տաղ]

ա. *102բ-3ա* Տաղ Յաւութեան («Գրիգոր») — *Գոչէր հրեշտակն ի վիմին / Վասն յարութեան Յիսուսին... Փութացեալ առաքելոցըն գովեալ, / ՉՅիսուս տեսի յարուցեալ:*

բ. *103աբ* [Տաղ Յաւութեան] — *Յարեաւ յաւուր երրորդին, / Գոչէր հրեշտակն ի վիմին... Տեսին եւ հաւատացին, / Քրիստոս Աստուած կենդանին:*

գ. *103բ-4ա* [Տաղ սրբոյ խաչին. նեռ. 423, 239աբ] — *Ալսօր եղեւ գալ գրշխոյին՝ / Մօրն արքային ինքնակալին... եւ նա գըտաւ ըզգեալսւ խաչին, / Որ էր թաղեալ ներ քաղաքին:*

դ. *104աբ* [Գրիգորի Նարեկացւոյ մեղեդիկ. նեռ. 423, 76բ-7ա] — *Մեւ եմ գեղեցիկ, դուստր եւայի... ի մայր մըտանեմ:*

ե. *105աբ* [Տաղ Յարութեան] – *Հաւքըն հրեական / էին պահապան... Տեսեալ զվարշամակն եւ ըզկտաւն / Ի մարմնոյն ունայն:*

զ. *105բ-6ա* [Տաղ Ծննդեան] – *Մաղիկ պայծառ ծովային / եւ մարգարիտ մեծագին... Ձանապարհիդ որ եկիր, / երկինք յայտնեալ ի յերկիր:*

է. *106ա-7ա* [Տաղ Սուրբ Աստուածածնին] – *Ելնէի ծառի նըման ես / Պտուղ դու քաղցրահամ ես... Վարդի նըման պտղոյն / Լուծիչ ես Աստուածածին:*

ը. *107աբ* [Տաղ աշխարհաճախտաւոր] – *Ուրախ լե՛ր հարսն ի յերկիր, / Բերկրեա՛յ գըշխոյ յաշխարհէ... Ջքեզ աղաչեմք սուրբ կոյս անբիծ, / Բարեխօսեա՛ մեր ազգին:*

թ. *107բ-8ա* [Տաղ ազնիւ յԱռաքել երիցու. ձեռ. 2649, 225ա] – *Այսօր նոր ծօնիւս ցընծայ եկեղեցի... աւրհնեալ գալուստ քո, Տէ՛ր աւետ:*

ժ. *108աբ* [Տաղ Յարութեան, ի Սրիկ Կոստանդէ («Կոստա») – *Կանա[ն]ցըն կանխեալ եկին, / Ի գերեզման գիւղս անոյշ բերին... Աշակերտեալք աւետարանեցէ՛ք / Ըզյարութիւնըն Տեառն:*

ժա. *109ա-10ա* [Տաղ Տեառնընդառաջին] – *Քրիստոս՝ փառաց թագաւորն / այսօր եկեալ յրնծայումն... Լո՛յծ ըզկասկանս մեր մեղաց / Եւ ազատեա՛ յանցանաց:*

ժբ. *110աբ* [Տաղ Քառասնաւրեայ Գալստեան Տեառն ի տաճարն] – *Այսօր Երուսաղէմ ցընծայ / Եւ գուարճացեալ պայծառանայ... Մաքրութեան անկարօղին, / Մաքուր ընծայս մատուցանին:*

Ժ. *111ա-2բ* [Դարագլուխ] – *Ձմգամայ մինչեւ ի չրհեղեղն... ի Մահմետայ երեւիլն են ամք ՌԺԴ. (615):*

ե. ա. *113ա-5բ* [Շարականի] – *Երկնաւոր հաւտ ընտրեալ... Ի՛ր. Երկնաւոր փեսայ... Ի՛ր. Սրբրուհի Մարիամ... Եշ. Առաքեալք Աստուծոյ... Ջշ. Պարունակեալ պահէին...*

բ. *115բ-6ա* [Տաղ Անառակ որդւոյն] – *Հետեւեցայ անառակին ի հեռաւնակ...*

գ. *116բ* Շարական Կիրակմտի – *Ի՛. Ստղ. Անբսկիզբն Աստուած... վասն որոյ եւ մե/// (թաւիշուած):*

Զ. *117ա-245բ* [Տօնացոյց]

Տե՛ս ձեռ. 2441, 3ա-196ա. *1/117ա-22ա: 2/122բ-47ա: 3/147ա-81բ: 4/182ա-211ա: 5/211ա-8բ: 6/218բ-6բ: 7/226բ-39բ: 8/239բ-45բ:*

է. 245բ-8ա [Խոստմ ժամատեղեաց]

ա. *245բ-6բ* Աւարեալ եւ սահմանեալ սուրբ վարդապետին Թումայի Մեծոփեցոյս ի պայծառայութիւն մանկանց եկեղեցոյ՝ Խոստ յաղագս պաշտամն եկեղեցեաց Հայաստանեաց – *Ջի այսպէս լիցի կարգ... նոքա կարգան անպատճառ:*

բ. *246բ-7ա* Յաղագս հսկման գիշերային պաշտամանց – *[ե]ր[բ] առաջի կանոյն երան[էալն] լինի... փոխն գի՛տ եւ կարդա՛/// (մի քանի բառ ցեցակեր):*

գ. *247ա-8ա* Խոստմ Իւղաբերից աւետարանացն եւ Հանգստեան եւ Բժշկութեան – *Յորժամ վասն ի վերուստ... ի Ղուկաս ԼԳ., ՃՄԼ., ՄՇԸ., ի Յովհաննէ՛ Ի. ՃԴ.:*

Ը. *248ա-60բ* Գաղու[ած]ք շարականի կարգաւ – *ԳԿ. երգեցէ՛ք որդի՛[ք] Սիոնի... (260բ-6ա տե՛ս Ր. ժբ.):*

Թ. ա. *260բ-1ա* [Հրաժարումն] – *Հրաժարիմք ի սատանայէ... բ. 261ա-3ա* [Դաւանութիւն հաւատոյ] - *Հոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ գՀայր... գ. 263բ-6բ* [Ջղջումն] - *Մեղայ ամենասուրբ երրորդութեւան... Ողորմեսցի քեզ, մարդ:*

Ժ. *266բ* [Շարականի] – *Յիր. Լուսապայծառ հրեշտակին... Հր. Համբարձէք իշխանք...*

ԺԱ. ա. *267բ* [Աղիւսակ] Ամիսք եւ տօմարի հայոց – *Նաւասարդի... Աւելեաց (Նշուած են հայոց ամիսների կրկնակները, կիսակները եւ ամսամուտները՝ ըստ եօթներեակների):*

բ. *267բ* [Բացատրութիւն աղիւսակի] – *Ամսովն եւ եօթներեկովն ի ներս մո՛ւտ, կա՛լ զեօթներեկին... գտանես զօր ամսամտին անսխալ:*

գ. *268ա-77ա* [Պատճէն տոմարի հայոց] – *Կրկնակ ամսոց այսպէս արա՛. կա՛լ զնաւասարդի ամսին Լ. (30) եւ ե՛րթ է. ... եթէ դար է, ձախակողման դասուն է. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն, ամէն:*

Ի տարբերութիւն այլ [ամ]սագրութիւնների՝ ուսի որոշ յատկոյթիչ հատուածների, օրինակ՝ ժամանակներ, ձայնագիւտ եւն):

ԺԱ. ՅԱԼԻՆԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԹԱՄԱՆԱՒԻ

102բ Ով սուրբ սպասաւորք անմահ պատարագին, զմեղուցեալ Յովաննէս աբեղայն յիշեցէ՛ք, եւ դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ. ամէն:

112ա Ինչ ի Քրիստոսէ մինչեւ ցայժմ որ |112բ| ըզբուսոյս գրեցի, լինին ամք ՌՈԿԷ. (1667) ըստ հայկական թուաբերութեանն, քանզի ՌԺԴԲ. (1665) էր թուականն, ԻՀ. օր պակաս, գի չեւ եւս մտեալ էաք յամիսն Նաւասարդի, այլ անտէն ի Հրոտից՝ յեօթներորդում աւուրն կացաք ի չորեքշաբաթիդ:

181բ Ով սուրբ տօնասէ[ր]ք, յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղուցեալ Յովաննէս սուտանուն աբեղայս, որ արտակուսա միայն երեւիլ կեղծաւոր, եւ ի ներքուստ լի եմ անառակութեամբ եւ լար|182ա|ութեամբ, եւ դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ. ամէ՛ն]:

277ա Փա՛ռք համազոյ եւ միասնական երից անձնաւորութեանց եւ միակի աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ ամենազօր Սուրբ Հոգւոյն, որ եւ փառաւորի երրորդութիւն ամենայն եղանակաց՝ անապատ եւ անվաղճան, [ժ]ամանակաւ եւ անսահման յաւիտենիս, անկէտ եւ անզրաւ, յաւիտեանս յաւիտենից. ամէն: Եւ

արդ, եւ՝ մեղուցեալ եւ անպիտան ծառայելիցս ձեր, իբրեւ տեսի թէ ոչ գոյ փրկութիւն վիրաւորեալ հոգւոյս իմոյ, գնաւ ածի զրան մեծի մարգարէին Եսայեայ, թէ՝ երանի, որ ու|277բ|նիցի զաւակ ի Սիոն եւ յիշատակ երուսաղէմ (Ես. ԼԱ. 9), եւ զհրամանս Տեառն, թէ՝ Արարէ՛ք ձեզ քսակ առանց հնանալոյ (Ղկ. ԺԲ. 33), եւ թէ՝ Գանձեցէ՛ք ձեզ գանձ ի յերկինս (Մթ. Զ. 20)։ Վասն որոյ ես, չարեօք լցեալս եւ մեղօք գեղխեալս, ծոյլս եւ պղերգի ի բարեգործութիւնս, արագս եւ փոյթս ի չարագործութիւնս, սուտանուն Յովաննէս եւեթէ անուն արեւոյ, եւ գործով ունայն եւ թափուր, յօժարեցայ գաղափարել գգիրքս տխեղծ մատամբ եւ անվարժ մտօք՝ զերկոսին գայս[ոյ]սիկ, նախ՝ զհազուեստն եւ զՏանագոյնն, ի թուաբերութենէս հայոց ի ՌՃԺԹ. (1664), ի հայրապետութենէն Սուրբ Էջմիածնա տեառն Յակոբա Ջուղայեցւոյ եւ առաջնորդութեան սուրբ ուխտիս Յովհաննու վանից վերոյգրեալ |278ա| սրբազան վարդապետին Յոհաննիսի՝ աշակերտի մեծին քաջ բաբունապետին Ջահարեա Վաղարշապատեցւոյ։ Արդ, Տ՛ր իմ Յիսուս, զի թէպէտ ո՛չ է ընդունիկի քեզ վարժական իմ եւ ո՛չ է ի պէտս, ըստ այնմ ոչ ուսեալ ես գմիս գուարակաց քոց (Սղմ. ԽԹ. 13), եւ թէ՝ ոչ ընդունիմ ի տանէ քումմէ գուարակս (Սղմ. ԽԹ. 9), եւ թէ՝ Իւղ մեղաւորի մի՛ օծցէ գգլուխ իմ (Սղմ. ՃԽ. 5), եւ թէ՝ Նաշիհ ձեր անընդունելի են ինձ։ Արդ, սակս մարգասիրութեան քո ընկալ սա որպէս լոմայս այլուսկ կամ որպէս ոստ մի յուտոց, կամ որպէս հատ մի յողկուզաց։ Եւ գարձեալ լիշեցէք ի Քրիստոս միաբան սուրբ ուխտիս Յովհաննէս բարունապետն, զՄարգիս վարդապետն, տէր Յովանէսն, տէր Գրիգորն, զՎար|278բ|դան սարկաւագն՝ հանդերձ առհասարակ սարկաւագունք եւ/// (4 բառ ջնջած), եւ գիս՝ մոլորեալ եւ թշուառացեալ սուտանուն Յովհաննէս աբեղայն, եւ գուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ. ամէն։ Եւ գարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ սիրելիք, լիշեցէ՛ք ի Քրիստոս զհանգուցեալ օրհնօղն իմ գհայրն իմ Գրիգորն, գմայր իմ Մարիաննե, եւ գբոյրն իմ Մամառն, եւ գհօրուն իմ գԲառսեղն, եւ գմօրուն իմ Թիւսանդէն, եւ գհոգեւոր պապն իմ Յակոբ, էջմիածնայ դռնապանն, եւ գուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ. ամէն։ Ով սուրբ քնթերցօղք եւ օրինակողք, ով ոք որ հանդիպիք սմա, խորհիցին շնորհէ՛ք վասն վատ գրութեան եւ սղալութեան սորա։

ԿՆՔՈՒԴՐՈՇՄ *1ա (երից), 2ա «Ձիսուսի Քրիստոսի ծառայ Գրիգոր եպիսկոպոս։ Թվին ՌՃԺԲ. (1663)»։*

ԳՐՉԱՔՈՐՉ՝ *1ա Մահսխմաճոսի, Ամիլիոսի, Դրենչխոսի, Կոստանդիանոսի, Մարտեաճոս, Աճառնիոս եւ Յովաննէս. ամենայնի օրհնեա, աբ։ 162բ ես տեառը գգառապաւնս իմ եւ գչաս իմ հսկիմս։ 205բ Տուի եա՞ գպապայ էնօն՞։*

ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստառին փակցուած թղթին. «ՌՃԺԹ.-1664. Մ[եսրոպ] եպ[իսկոպոս]»։*

2402

ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ

Թերթ՝ 212. չգրուած՝ 199ա։ ՊՐԱԿ՝ *Ա-ԻԲx10 (Ա 12, Ժ 9, ԻԲ 1)։* ՆԻՒԹ՝ *սազապաթ։* ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ *10x7։* ԳՐՈՒԹԻՒՆ՝ *միապիսի, երկսիւն (26աբ, 56ա-63ա. 7,5x5)։* ԳԻՐ՝ *բոլորգիր (ճնոյց՝ Ա)։* ՏՈՂ՝ *19։* ԿԱԶՄ՝ *սեւ լաթ, մէջրի՝ սեւ կաշի, միջոյրը ստուարաթուղթ, ատաղոյ թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր։* ՊԱՀՊԱՆԱԿ՝ *1(Ա) + 1(Բ), ապխատկ թուղթ (ԺԹ. դ.), մասն կազմաստառի։*



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳԱՀԱՐԻՒՆ – *Գաւիթ մարգարէ 5բ, հաչելութիւն՝ 27ա, Մաղկումն ի ճնոցին՝ 46բ, Սուրբ Երրորդութիւն՝ 110բ, Խոստացաւոր ընթերի՛ 154բ, Պատարագ՝ 199բ. Լուսացիգ։ Յիսուսի՝ 1ա, 3ա, 11ա, հրեշտակ՝ 205ա, Յեսսեի ծառը՝ 6ա, Աւետգալ՝ 15բ, Աստուածածինը մանկան հետ՝ 17ա, Պախուած Յոսէփ՝ 26բ, Քրիստոսի՝ Քրիստոսի՝ 28բ, 32բ, 35ա, 95ա, 96բ, 130բ, Յովհաննէսն Աւետարանիչ՝ 56ա, Ղուկաս՝ 58ա, Մարկոս՝ 60ա, Մատթեոս՝ 61ա, Հովհ՝ 70ա, Կոյր՝ 71ա, Աբրահամ՝ 145բ, Ներսէս Շնորհալի՝ 193բ։ Կիսախորաձի՝ 6ա։ Ձակատազարդ՝ 47ա, 99ա, 111ա, 139բ, 158բ, 182ա, 200ա։ Զարդագիր՝ ի թ՝ թռչնագիր, ճանճուցագիր։ Գոյներ՝ կարմիր, կանաչ, կապոյտ, վարդագոյն, դեղին, սպիտակ, ճարճի, շագանակագոյն, սեւ, մարմնագոյն, գորշ, ոսկի։*

Ժէ. դար

ՎԻՃԱԿ՝ *բաւարար. կազմը ժԹ. դարի. վերջից պակասաւոր, լուսանցներում խոնաւութեան հետքեր, մանրանկարների ներկերը խոնաւութեան պատճառով արտատպուած ճանդիպակաց էջերին, լուսանցակողերը գունաթափ, սեւացած։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-212բ [թուամագիրք Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ]

Տե՛ս նաեւ. 435, 4ա-156բ. 1. ա/1ա; բ/1ա-3ա; գ/3ա-5ա; դ/5ա; 2-3/յիք; 4. ա/6ա-45բ; բ/46ա-95բ; գ/99ա-110ա; դ/110ա (վերնագիրք), 111ա-6բ; ե/116բ-21ա; զ/121ա-34ա; է/134ա-58ա; ը/158ա-81բ (յիք՝ «Որինեդից գՏէր յամենայն ժամ... »); թ/181բ-212բ «... որ կերակրեցեր զմեզ անմաս»/// (չար, քաւփուած)։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅՑ

Պահպկ Ա.ա. (1890 թ., շգսագիր) Նուէր Միհասս քահանայի Տէր-Պետրոսեանց ի Մատենադարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, ի 6 Նոյեմբեր 1890 ամի։

ՆՇՈՒՄ՝ *պահպկ Ա.ա «2ցր 430», «Ժ.Ա. Մ[եսրոպ] եպ[իսկոպոս]»։*

2403

ԺՈՂՈՎԱԾՈ

(հայատառ գիչաղեռվն)

ԻՂՈՎ Ռ.Հէ. – 1626

ԳՐԻՉ՝ Միսհո սրկ. Մուրատ օղլու: ՍՏԱՑՈՂ՝ բան Վարդան, բաննա Զօֆիեա:

ՔԵՐԹ՝ 211: ՊՐԱԿ՝ Զ-Լ8x8 (Զ, ԺՀ 7, ԼՔ 5): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսազծեռով: ՄԵՏՈՒԹԻՒՆՆ՝ 13,5x9,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (10x6): ԳԻՐ՝ բոլոզիր (նմուշ՝ 2ա): ՏՈՂ՝ 15: ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ, աստառը ծաղկաւոր գործուածք (Ի. դ.). լուսացեակողեղո՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Ա-Բ) + 2 (Գ-Դ), դեղնին թուղթ (Ի. դ.):



Նմուշ 2ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆՆ – Լ ու ս ա ն ց ա յ ի ն. Քրիստոս՝ 40բ, Սուրբ Հոգի՝ 52ա: Լ ու ս ա ն ց ա զ ա ր դ՝ բուսական, գաւաթ, կանթեղ (31բ), խաչ (39բ), տաճար (50բ, 129բ): Զ ա ր դ ա գ ի ր՝ թռչնագիր, ճանճուցագիր, մարդագիր (38ա): Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, շագանակագոյն:

Վիճակ՝ բաւարար. Ի. դ. նորոգուած, վերակազմուած. սկզբից եւ վերջից պակասաւոր, լուսանցներուն խոնաւութեան հետեւեր, փորիկ պատռուածքներ, տեղ-տեղ կարկատուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. *1ա-62ա* [Պատարագամատոյց] /// Եկեալիս, դատաչա – *Քեզկանչար պարլամըդ արի կաթուղիկէ...*

2. *62ա-75բ* [Խոստովանութիւնք]. Խօղխա խոստովանութիւն ալնընայդ – *Նօբսուն պիչիմ խոստովանութիւն ումնու մէնիմ...*

3. *75բ-139ա, 159ա-160ա, 163բ-211բ* [Ժամագիրք]. Խօղխա հարվախդ հեռալի ատամ օղլանլարընա... – *Էյնատամ օսմուչի պիչիմ տա... եաղըլըլարտան խուդիա/// (Քաֆուած)*:

4. *ա. 139ա-49բ* Խօղխա եվրեմ ճրգնաւուրնուն կողին Աստրինին – *|139բ| Պիչե էրնինկ գօգնունկ պուլրուխչիսր օլումն...*

բ. 149բ-58բ Եվրեմ ճգնաւուրուն կողին Աստղ – *Մէնե ազըխլըտա արգանիսիզ խուդունգսէնինկ...*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՈՏԱԿ

154բ-5ա (տա. լա., կապոյտով) Մ՛հ, ո՛հ, ո՛հ, խօլում չիրիր. եագովում սիգկա յիշատակ խալըր: Շուքդուր եաւաթուչիկա (թրգմ.՝ «Մ՛հ, ո՛հ, ո՛հ, ձեռքս չկայ, գրածս ձեղ յիշատակ թող մնայ. շնորհակալութիւն»):

*160բ Հայպա՛թ պիրլիքքատա պիրլանկան Ալի երրորդութիւնկա, Ալդակա պաշլամականկայ, օղուկա ծօղանկայ ադատան թէնսիզ աւալնէբի մէնկիլիքդան դէր կովսուգտա պաշլանմական: Ալի ճաննը ախքաննը ադատան գամանսըզ տագէր կովսուզ ուշ պօյ դուկալտա պիր դարպիւեադ այրրըլմական, հայպաթտա էէր օբմախ ադա օղուլ արի ճանկա հարի |161ա|տա հարքեզ մէնկի մէնկիլ. ամէն: Դուկալլանտը Ագդը պիդիքքի թվականքընէն էրմէնի հիսապընա ՌՀԵ.սինտա (1626), մայիսընէն ԻԹ.նունտայ (29), բատըշահլըքընա Նեմիչ ուլուսունուն Ուչունճի Ջիկմոճտունուն, կաթուդիկոսլուխունա ճաթեխական քընսրնէն Եզմիեածինին սիռոնունտա տէր Մելիսէք կաթողիկոսնուն, խայսիքի պու գամանտա քէդի խարգլըխը պիլա քեյտի խուիու Իլով շահարընա|161բ| ե. ախպաշ պիլա, Ի հաքեզա պիլա թվականքընն ՌՀԵ.սինտա (1626), խայսի ուլու սօվունչուդ պիլա, պարչա քահանայլըխ տա սարկաւագլար պիլա. տա Ժողովուրդ պարը իդիդլար պիլայ խարշիսընա չդխրը խարուկ էդդիլար: Նագըլտը պու պիդիքը շահարընա բատշահնընկ Իլովտա խօլու աշրա եաղրխլը Միսհո սարկաւագ Մուրատ-օղլու, Զամսոչա շահարընտան, խօլդխասընա|162ա| մէնկարմախքնա պարոն [Յ]ակոբչա՝ Նեջով երեսփոխանըն օղլունա՝ բան Վարդաներն, խրգրնա՝ բաննա Զօֆիեա, խայսիքի ուլու սօվուգ տա հաւաս պիլա, եազտըրտը քէնտինա պու ալդըշ պիդիքի յիշատակ քէնտինա մէնկիլիքքա, խայսիքի Պիյ Քէնկրի պէրկայ քօգեերլլարկատէգ խուլլանմայ եախշի սաղլըխդայ տա ադասընա, անասընա ուդախ օմուր տա եախշի սաղլըխ պու ալդըշ|162բ| պիդիքի տա այդքանըն աշրա. ամէն: Էվէթ, մէն արդանիմիզ խօլարմէն, քի եամանլամա կայսիզ ուլուլուխունա տա եանկըշլըքընտա եազովումնուն, գէրա պու խաբարէտի խուվաթիմ, խօլարմէն խօլունուգ Պիյ Քէնկրիտան, քի պէրկայ մանկա եաղրխլարրմա պօշաթլրխ տա խուդխարըլմախ: Ա՛ Պիյ Քէնկրի, խայսիքի ճամարտ բատշահը քէնտի եախշիլրխ պէրկա|163ա| նրնտա, պէրկայ սիգկայ պարչա դուլու եախշիլրխնը տա խուդխարըլմախնը, պարչա դուլու փորձանքալարտան տա եաղրխլարրընկրզտան տա մէնի ունուդմանկըդ քէնտի ալդըշընըզգա պիր Հայր մեր պիլա, քի պէրկայ Պիյ Քէնկրի սիգկա տա մանկա պու տունեաւայ տա օլ տունեաւա ճան դիրլիքին մէնկի մէնկիլիք. ամէն:

Թգրմ. Վեռս Սահակեանի. 160բ «Փառք միասնական եւ անբաժանելի Սուրբ Երրորդութեան, երբ մենք մեր աղօթքը սկսեցինք, երեխան կամաց կամաց սկսեց ծնուել, ծնունդից յետոյ նա սկսում է իր քայլերը (երեւի գրքի ծնունդի մասին է): Սուրբ Հոգու այդչափ շնորհները թող առանց ժամանակների բաշխուեն բոլորին: Փառաւորեալին երկիր ենք պագանում. այս տղան Սուրբ Հոգու շնորհն է. |161ա| թող բոլորին շնորհուի

*յաւիտեանս յաւիտենից. ամէն: Ազօթքներ են, Ազօթագրքի գրութեան թուականն է հայոց տոմարով ՌՀԵ. (1626), մայիսի 29: Ոտս ագգի (ինմիչ) Զիկմոնտ երդողը եւ աթոռանիստ էջմիածնում Մելիքսեդ կաթողիկոսը, ով հաբէթական տոհմից էր սերուած, այս ժամանակ, չնայած խորը ծերութեան, մեծ ուրախութեամբ այցելեցին Իլով քաղաք: 1626 թ. այս նշեալ մարդկանց՝ արդէն |161բ| սպիտակամօրուս, աբեղաներով եւ բոլոր քահանաներով եւ սարկաւագներով հանդերձ, ուրախութեամբ դիմաւորելու ելաւ ժողովուրդը, որոնց մէջ կային նաեւ երիտասարդներ ու անփորձներ: Այս գիրքը գրի է առնուել փադիշահներու Իլով քաղաքում, մեծաւոր Միսհո սարկաւագ Մուրատ օղլուի, ով Ջամոսչա քաղաքից էր: Գրուել է երեսփոխան |162ա| Յակոբշա Շեֆովի որդի պարոն Վարդանի դուստր օրիորդ Ջօֆիայի յատուկ օգնութեամբ եւ ժամանակութեամբ: Վերոյիշեալ անձինք գրել տուեցին գիրքը որպէս իրենց համար յաւիտենական յիշատակ: Տէր Աստուած, երկար տարիներ նրանց, ինչ առողջ գործածեն, ի յիշատակ եւ երկար կեանք մայրերին ու պապերին: Թող առողջութիւն պարգեւի այս Ազօթագիրքը. |162բ| այսքանը. ամէն. Այո՛, փաւսացս եմ յայտնում, որ իմ ներողութիւնների ու մեղքերիս համար գիրս գտանայ մեղանչական, որ գուք բարեխօս լինէք, քանզի այսքան էր իմ ձեռքերի կարողութիւնը: Յառնում եմ ձեռքերս առ Աստված. Տէ՛ր, մեղքերիս թողութիւն տո՛ւր. Տէ՛ր Աստուած, այս վայելուչ փադիշահին իրեն վայելուչ |163ա| տարբեր տեսակ փորձութիւններից ու մեղքերից ազատի՛ր: Ինձ մի՛ մոռացէք ձեր ազօթքների մէջ մէկ հատ Հայր մերով թող որ Տէր Աստուած փրկի ձեզ եւ բոլորին այս աշխարհում, եւ հանդերձեալ աշխարհում թող հոգին յարութիւն առնի, յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹ՝ *158բ (ծաղիկ), 185բ (բուսական զարդաձեւ)*:

ԳՐՁԱԿՈՐԶ՝ *10ա Իշիդ, 31բ սօմ, 187ա դուրսուլարուսդումա մէնիմ դանըխլարը, 208ա Ճանըմ մէնիմ (Քրգմ.՝ «իմ սիրելի»), 211բ չար 3 չարէք եւ կէս*:


2404

ՄԱՇՏՈՑ ՁԵՌԱՅ


ԱՒԵՏԱՐԱՆՈՑ

ԳՐԻՉ՝ Գայիանէ՝ Մեկենեամ Պարոնց Ջանում: ՍՏԱՑՈՂ՝ Մատթէոս ՌՅ:

ԹԵՐԹ՝ 294-7 (տե՛ս Պահպանակ). չգրուած՝ 1բ, 99բ-102ա, 155բ-8ա, 290ա-1ա: ՊՐԱՆ՝ 1+Ա-ԻԲ×12 (Ե 28, Է կրկն., ԺԱ 9, ԺԲ 16, Ի, ԻԱ 14, ԻԲ 2)+6: ՆԻՒԹ՝ թուղթ, առեւկեան (ԺԲ դ. յաճլում, կապոյտ՝ բ. 1, 53-9, 66-74, 90-101, 151-8, 240-86, 289-94): ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 11x9: ԳՐՈՒԹԻՒՆ՝ մխոսիւն (9x6): ԳԻՐ՝ բոլորգիր, նոտրգիր՝ յատկագրողի (53ա-9բ, 66ա-74բ, 90ա-101բ, 151ա-8ա, 240ա-86բ նմուշ՝ 3ա, 1ա): ՏՈՂ՝ 17, 14՝ յատկագրողի: ԿԱԶՄ՝ դռոմագարդ շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ, աստառ՝ կապոյտ թուղթ (մասն պահպանակի, Բ. փեղկիկը՝ հաւատարկագրած՝ թ. 294): լուսանցագրողը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (1) + 6 (289-94. 294բ՝ փակցուած Բ փեղկին), կապոյտ թուղթ, լուսագծերով. կտրուած ուղի մեծ թղթերից, 291բ-2ա, 293ա-4ա՝ զանազան գրութիւններով:



Նմուշ 1ա



Նմուշ 3ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Կ ի ս ա խ ո ւ ա ծ՝ 6ա: ձ ա կ ատ ա գ ա ր դ՝ 102բ, 127ա, 159ա: Լ ո ւ ս ա ն ց ագ ա ր դ՝ բուսական, թռչնային, թռչկապարիկ (45ա, 138ա), տաճար (201բ): Ջ ա ր դ ագ ի ր՝ թռչնագիր, ճանգուցագիր, ձկնային (142ա): Գ ո յ ն ե ր՝ կարմիր, վարդագոյն, կապոյտ, դարձիլ, շագանակագոյն:

ԹՈՂ.– 1641

ՎԻՃԱԿ՝ բառարար. կազմի եզերք եւ մէջի կաշին թեթեւակի մաշուած. 1823 թ. հայատառ դպիրը նորոգել է թերին լրացրել, լուսանցներում խոնարհութեան ճեռներ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1ա-239բ* Գիրք, որ կոչի Մաշտոց՝ արարեալ սրբոյն Մեսրոպայ հայրապետի, որ եւ ասի Մաշտոց, եւ այլոց խառնեալ եկեղեցւոյ սրբոց հայրապետացն, որ պարունակէ յինքեան զվեցեսին խորհուրդս սրբոյ եկեղեցւոյ, բաց ի ձեռնադրութենէ եւ ի թաղմանէ հաճախացից *(խորագիրը՝ 1823 թ. լրացնողի)*:

1. ա. *2ա-5բ* Աւգնեա Հոգիդ Սուրբ Աստուած եղմարիտ: Կանոն եւ խրատ Մկրտութեան, արարեալ է հաչիմաստ վարդապետացն առաջնոցն, նախ՝ մեծին Մեսրոպայ Մաշտոցն կոչեցեալ, եւ յետ նորա՝ մեծն Գրիգոր Տաթեացին, եւ Յովաննէս Երզնկեցին, եւ Գրիգոր Մեռե[ն]ցն Ղաթագին, զոր ըստ խորհրդոցն կարգեցին զաւարտուրիւն սորա – *Զոր պարտ է ուսանել ամենայն քահանայից... գիւղն աւծութեան եւ դշուրն մղրկութեան:*

բ. *6ա-26բ* Սկիզբն Մկրտութեան – *Աւրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած եղմարիտ. եւ կարդալ դաղաւթս. Տէր Աստուած մեր, Աստուած բարերար, որ զվրիպեալս եւ գհեռացեալս... արժանաւորեա՛ զսա փառաւոր յարութեանդ, գնոտ եւ զեյս սորա պահեա՛ ի ձեռն Տեառն մերոյ... վայել է փառք:*

2. *27ա-9ա* Կանոն, յորժամ Ա.օրեայ լինիցի մանուկն – *Առնու մայրն եւ մանկաբարձն գաղայն... եւ*

ասէ գաղօթս. Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ յաւուրս Խ.ևս (40) ըստ օրինացն եկիր ի տաճարն... զի զքեզ աւրհնեն ամենայն գուարթունք երկնից. եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն:

3. *29բ-33ա* Կանոն եւ կարգ հաւասանեաց նշան օրհնելոյ – *Ասեն շարականն... Ընթերցուած յԱռակաց. Որդեակ, եթէ խնաստուն լցի... եւ լրումն հրամանի քո՝ յաճախել եւ բազմանալ եւ լնուլ զերկիր... այժմ եւ միշտ:*

4. *33բ-8բ* Կանոն հանդերձ աւրհնելոյ – *Առնու քահանայն զիաչն... եւ ապա ասէ շարական ԳԳ. հաշոյնշան դրօշմամբ, նշանաւ պարգեւական... մի՛ իշխեսցէ մերձենալ ի սա չար աղանդ դիւաց կամ կախարդաց... եւ Քրիստոսի փառք յաւիտեանս:*

5. *39ա-52ա* Կանոն Պասկ աւրհնելոյ ամենայն հիսնամեայ – *Բայց գիտելի է, զի գակիզքն պասկին նշանակէ... Ընթերցուած ի Ծննդոց. եւ ասաց Աստուած՝ Արասցուք մարդ ըստ պատկեր մեր ում... զի հեռասցի սատանայ ի միջոյ ոսցա. եւ քեզ հանցուք գաւրհնութիւն եւ զփառս Հայր:*

6. *52բ-6բ* Կանոն Պասկ վերացուցանելոյն – *Մաղմոս՝ Լո՛ւր դուստր... եւ ասէ գաղօթս. Տէր Աստուած ամենակալ... եւ տայ նոցա զրաժակն՝ ասելով. Օրհնութիւն, գոհութիւն եւ փառք... Հայր մեր, որ յերկինս (53ա-6բ՝ լրացնողի):*

7. *56բ-60ա* Կանոն Երկրորդ Պասկի – *Քահանայն բերէ գնոսա յեկեղեցին... եւ ապա ասէ գաղօթս. Տէր Աստուած մեր, որ ի հրեշտակաց... լցին արժանաւորք առաքինական գործոց... Հայր մեր, որ յերկինս (56բ-9բ՝ լրացնողի, 60ա՝ հատուած հին գրուածից):*

8. *60ա-5բ* Կանոն Հաղորդ տալոյ – *Առնու քահանայն զմասն եւ խաչ առաջի... եւ ասէ գաղաւթս. Աւրհնեալ ես, Տէր Աստուած ամենակալ... առ ի գտանել մեզ գոգորմութիւն առաջի ահաւոր բեմին ի մասի ժառանգութեամբ Յիսուսի Քրիստոսի... իշխանութիւն եւ զաւրութիւն:*

9. *65բ-115բ* Կանոն հաւատոյ ննջեցելոց առ Քրիստոս – *Աստն սաղմոս Ծ... Եսայեայ 38.10. Ես ասացի ի վերանալ յինէն... եւ առաջնորդեալ հասոյ յանճառ երկնից յայրքայութիւնդ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, ընդ որում քեզ, Հօր եւ [Սուրբ Հոգւոյ] (66ա-74բ, 90ա-99ա՝ լրացնողի):*

ա. *90բ-2ա* Գանձ հաւատոյ ննջեցելոց («Վառաֆել») – *Այսօր էհաս հրաման Արարչէն, / Մահու հրաւէր մարմնոյս հողեղէն... Բարեխօս լե՛ր առ Տէր Աստուած, / Վասն եղբօրս որ այսօր Նընջեաց... Ջանձինս ողորմեաց մեզ:*

բ. *92ա-4ա* Ողր հաւատոյն ննջեցելոյ [«փ Նաղալ եպիսկոպոսէ». ձեռ. 424, 342ա] – *Արարիչն արարածոց մեզ բարեացաւ, / Քաղցըր բնութիւն աստուածային մեզ դառնացաւ... եւ քեզ ամենքս երկրպագեմք, կո՛չս Տիրածին:*

գ. *94ա-5ա* Գանձ ի վերայ փոխ տաղոյց – *Նայիմ, ողքամ ծընօղ տղոչիս / Վա՛յ եւ եղո՛ւկ ասեմ իմ անձինս... Արդ, Տէր ընկա՛լ գնընջեցեալ տղոչաս, / Հանգո՛ ի գասըս լուսեղինացդ, ազա[՛ւեմ], լո՛ւր, Տէր, եւ ողորմեա՛ յ:*

դ. *95ա-6բ* Գանձ ի վերայ մանկանց՝ ի Պաղտասար Դպրէ («Պաղսար») – *Պայծառագոյն որդեա՛կ իմ սիրուն, / Տիպ եւ նըման ծագման արեւուն... Արդ, Տէր, ընկա՛լ գնընջեցեալ ծառաս, / Եւ բերկրեցո՛ ի փառս յարակաս... Լո՛ւր, Տէր, եւ ողորմեա՛յ:*

ե. *96բ-9ա* Ողր ի վերայ զարիպ ննջեցելոյ՝ [«Նաղաշի ասացեալ». ձեռ. 2398, 183բ] – *Ցարիպին կեանքն է լալի ողբերգական, / Դառն ու լեղի, լի տրտմութեամբ ի նեղ գընդան... մէկ մի չեկաւ անդ ի բաղուքըն զարիպին:*

զ. *102բ-7բ* [Գանձ թաղմանՙ («Մանվելոս») – *Մինդ ի չէէ[ն], Քանդ ի սկզբանէ, / Ձորժամ ծագիս փառաւք ի յերկիրէ... Ինձ դուք պաշար պատարագ դրէ՛ք, / Ո՛ւ ի չար դիւացն զիս թափեցէ՛ք:*

է. *107բ-10ա* Ողր ննջեցելոց – *Ով քահանայք եւ վարդապետքն աստուածաբան, / Եւ ժողովուրդք հաւատացեալք ամենեքեան... եւ հաւատովս վերանամ յերկնից խորան:*

ը. *115բ-23ա* [Այգոյն] – *Այգոյն գան ի գերեզմանն... Պաւղոսի առաքելոյն ի Գաղաթացոց ըղթէ. Այլ մեք պարտիմք... Տէր, նորոգեա՛ գմարմին խոնարհութեան մերոյ անբաստեղծ փառաց քոց... Հայր մեր, որ յերկինս:*

ա. *117ա-9բ* Աղաւթք սրբոյն Բարսեղի հայրապետի – *Գոհանամք զքէն, Տէր, Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ այցեւեր... եւ միխիթարեա՛յ հոգով եւ մարմնով, զի արժանի լիցուք փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ:*

11. *123բ-6բ* Կանոնովն եաթն աւուրն – *Երթա[՛ն] ի գերեզման... Ընթերցուած յեսայեայ մարգարէէ. Այսպէս ասէ Տէր՝ Հոգի յինէն ելցէ... զի դու ես, Տէր, դասաւոր կենդանեաց եւ մեռելոց... վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ:*

12. *126բ-37բ* Կանոն եւ կարգ Տղայաթաղին – *Տո՛ւր ինձ՝ Ողորմա՛ ինձ... եւ ապա ասէ գաղօթս. Աստուած յաւիտենական եւ քագաւորական... Նորոգեսցի սա արագաթռիչ թեւեւք ընդ յառաջ Տեառն յաւգս, գոսարք երեսաւք փառաւորելով գանմահ թագաւորութիւնդ Հաւր եւ Որդոյ, Հոգւոյ:*

13. *137բ-41բ* Այգոյն է – *Գայն ի գերեզմանն... Ընթերցուած յԱռակաց. Բայց հոգիք արդարոց... այլ մեք մխիթ[ար]եացուք վասն միւսանգամ կենդանութեան եւ յարութեամբ... վայել է փառք, իշ[խանութիւն]:*

14. *141բ-4բ* [Կանոն եւթան ստուրն] – *Ասկ ի եւթն ալսն երթան ի գերեզմանն... Ընթերցուած յԱռակաց. Արդարքն յաւիտեան կացցեն... եւ փառաւորեն զգալոստա քո յաշխարհս... փառաւորել զՀայր եւ զՈրդի:*

15. *144բ-50բ* Կանոնովն Հոգւիաճգիպատ առնելոյ կամ պատառագելոյ – *Աւետ սաղմոս ի քիւ... Ընթերցուած յԱռակաց. Պատուեա՛ զՏէր... սա եղիցի մեզ կերոդաց ի սրբութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց... անդադար գոհանալով փառաւորեմք:*

16. ա. *150բ* Կանոնովն Տեառնական ասրճնելոյ – *Ածեն զնուիրեալսն ի դուռն եկեղեցոյն... Եւ ասեն սաղմոս՝ Երանի, որում/// (շար. Յափտուած, 151ա-2բ՝ լրացնողի):* բ. *151ա-2բ* Կանօն Աղ ասրճնելոյ – *Աստուա՛ծ, ողորմեա՛ մեզ... եղիցի մեզ ի սրբութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց... անդադար փառաւորեսցուք զՀայր:*

17. *153ա-5ա* Օրճնութիւն Հատի Պատարագի կամ սեղանոյ մատաղի – *Օրհնեցէ՛ք զՏէր, ամենայն ազի՛նք ... զի գու ես կեանք անվախճան եւ երանութիւն ամենայն մարդոց... Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի (153ա-5ա՝ լրացնողի):*

18. *158բ-80բ* Կանոն Ջուր ասրճնելոյ – *Յետ պատարագին երթան ի ջուրնասրճնէք... Ընթերցուած յ[Ելից]. Եւ խաղացոյց Մովսէս գորգիան Իսրայէլի... եւ ապա արկանէ գսուրբ մեռոնն ի ջուրն... խաղաղութեամբ ի տունս իւրեանց ասրճնեալ Տեառն:*

ա. *169ա-79բ* Ասրճնութիւն Ջրի, զոր սասցեալ է Բասսեղի Կեսարու սուրբ հայրապետին – *Ասրճնեալ ես, Տէ՛ր Աստուած ամենակալ... եւ անուն քո կարգացուք գմեծ եւ գփառաւորեալ եւ գաքանչելի... Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ:*

19. *181ա-200բ* Կանոն Ոտնլուային – *Երեկոյին յետ Պատարագին... Եւ ասէ զբաջոզս գայս. Եւ ես գոհութիւն եւ փառաբանութիւն... եւ արժանաւորեա՛ մեզ մաքուր հոգւով հանդիպիլ քեզ... միշտ եւ յաւիտեան:*

20. *201ա-16բ* Կանոնովն Նաւակատեաց պղծեալ տաճարին ի յաճատիճաց, եւ թէ սեղան ես շարժեալ իցէ՝ վերստին հաստատեացնեն – *Մտանէ եպիսկոպոսն... Ազաւիթք. Որ ունիս իշխանութիւն... եւ քաւեսցես գմեղս ժողովրդեան քոյ... զոր եւտուր հարցն նոցայ:*

21. *217ա-8բ* Կանոն սկի եւ մաղզրլման ասրճնելոյ – *Սաղմոս՝ Տէր հովեսցէ զիս... Եւ ասէ գաղաւթս. Աւրհնեալ, Տէ՛ր Աստուած... Եւ ապա տեառնագրէ սուրբ խաչին ասելով... յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:*

22. *219ա-26բ* Կանոն աւազան օրճնելոյ – *Ունի սկիզբն իրկնութեան... Եւ ասէ գաղաւթ. Տէ՛ր Աստուած մեծ եւ փառաւորեալ... եւ ազատեսցին ի ծառայութենէ մեզաց սատանային... փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի:*

23. *226բ-5ա* Կանոն ասրճնութեան զգեսաուց սրբութեան եկեղեցոյ – *Զոր ինչ որ լինի... Եւ եպիսկոպոսն ասէ գաղաւթս. Տէ՛ր Աստուած ամենակալ, ահաւոր եւ բարձրացեալ... առ զսակաւս ի նիւթականացս... այժմ եւ:*

24. *228ա* Կանոն խունկ ասրճնելոյ – *Ի վեր ունելոյ քահանայն ասէ գաղաւթս. Ամենակալ Տէ՛ր Աստուած... այլ պարգեւեա՛ գմեզ շնորհս Հոգւոյդ Սրբոյ... փառք եւ իշխանութիւն եւ պատիւ, այժմ:*

25. *228բ-9բ* Կանոն ասրճնութեան նոսրագետս գրոց – *Տանին յեկեղեցին... Եւ ասէ գաղաւթս. Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած մեր, որ եւտուր մեզ զպատուիրանս... դու եղիցիս մեզ Աստուած... վայել է փառք, իշխանութիւն:*

26. *229բ-32բ* Կանոն զարմախս սեռմանեաց եւ զշեղջս ասրճնելոյ – *Սաղմոս կգուրդ... Ընթերցուած յԱռակաց. Պատուեա՛ զՏէր... եւ մեք յանարատ ձեռաց քոց առեալ պարգեւս բարութեան... միշտ եւ յաւիտեանս:*

27. *233ա-4ա* Կանոն պղծեալ կերակրոց, թէ ոք ուտէ ի իրիստոնեից տագնապեալն կամ ի զոհից հրէից կամ ընեթանոսաց – *Եւսեն սաղմոս Մէ... Եւ եպիսկոպոսն ասէ գաղաւթս. Տէ՛ր Աստուած մեր, որ սուրբ ես... եւ բռնութեամբ անօրինացն ճաշակեաց... փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի [եւ զՍուրբ Հոգի]:*

28. *234բ-9բ* Կանոն եւ աղաւթ յորժամ առ հիւանդս երթան, այսպէս արասցեն – *Եւսեն սաղմոս... Աւետարան Մաթէոսի. Եւ մտեալ ի Կափառնայումն... եւ ասէ գաղաւթս. Տէ՛ր ամենակալ, Աստուա՛ծ արարիչ... եւ հեռի արա՛ զամառանայ... այժմ եւ միշտ:*

Մտ. յս.-ներում կանոնների համառօտ անուանումները:

Բ. *239բ-86բ* Կարգ եւ կանոն հանգստեան ննջեցելոց գերեզմանի օրինութեան՝ կարգաւ շարականն ըստ ութն ձայնիցն, հանդերձ Աւետարանօրն իւրեանց – *Շարական Ա՛Ձ ասա՛ հանգստեան. Ձայն արձակեալ կենարարին... Քարով Սուրբ խաչիս, ազօթք Պահպանեա՛, Հա՛յր մեր, որ յերկինս (240ա-86բ՝ լրացնողի):*

Գ. [Գրութիւնք Խաչատուր դպրի՝ ի վերայ Պահպանակի, 1823 թ.. *կարդալ՝ 294ա-291ա*] – *«/// եղեւ փոքրիշատէ իմանալն իմ բստուգաբանութեան նորին: Հնդրեմ այսուհետեւ չառնել զայսպիսի գրութիւն յիմ վերա... »: 293բ-292ա «/// ի բարեմիտ կացութեամբ յամառեցեալ աւագապոյն եղբօր իմոյ, գերիմաց տիրացու Խաչատուրի, ողջոյն... », 293ա «/// շատով կարգեցաք չորրեակ նիւթով... »:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱՁՈՒԹԵԱՆ ԹՒԱՄԱՆԱԿԻ

200բ Ով սուրբ ընթերցաւղ, յորժամ առնես զնմտնալոյսն եւ զանպիտան գիրիկս յիշել աղաչեմ, եւ աստուած զմեզ յիշէ իւր միւսանգամ գալըստեանն, ամէն:

287ա Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն՝ Հաւր եւ Որդո եւ Հոգւոյն Սրբո. ամէն: Փա՛ռք ապեն[ի]ով բարերարին, որ եւս կարողութիւն տվար անձինս իմոյ հասանել այսմ աւարտ գրոյս՝ Մաշտոց կոչեցեալոյ: Արդ, գրեցաւ զսա ձեռամբ փծոյն եւ անիմաստ գրչի՝ |:. |. |||:. |. |||: |::. («Գայաեան») կոչեցելոյ, ի յերկիրն Աղըւանից, ի գեաւղաքաղաքն Աւետարանոց, ընդ հովանեաւ Սուրբ եկեղեցոյս Յարութիւն կոչեցելոյ, ի թվա-

քերութեան հայոց տաւվմարի Ռ. եւ Ղևոդդի (1641) ամի, եւ յիշատակութեան Պարսից Փոր շահ Ապպասին, եւ ի կաթողիկոսութեան Եչմիածնի տեառն Փիլիպոսի, եւ |287բ| Աղվանից տեառն Գիրիգորի, եւ հայրապետութիւն մերոյ գաւառի Յոհաննէս եպիսկոպոսի: Արդ, երեսս անկեալ աղաչեմ զամենեսեանցդ՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրայիալ աղաւթս ձեր, զի թերեւս ծողութեան արժանացոյց սրբիլ աղտոյ եւ թարախ եւ որդնալից վիրաց, եւ զերծանիլ ի բազմաբեռն չարեաց, |288ա| եւ գասիլ ընդ աշխատաղսն բարեաց: Բարձեալ աղաչեմ զձեզ յիշել ի յաղաւթս ձե[ր] զքերրտնաջան եւ բազմաերախտ եւ զքաղց[ր]ագութ հոգեւոր հայրն |288ա| իմ տէր Առաքել, որ բազում աշխատութեամբ սնուց զիս խրատու եւ ուսմամբ Սուրբ գրոց, ընդ նմին եւ զհարազատ քոյրն իմ դիտգեւոր ծնօղն Հրեիփսիմէն, որ մանկութեամբ գաստիարակեաց զիս, եւ հասարակ միաբանք սուրբ ուխտին, զոր Տէր Աստուած անփորձ եւ սասան պահեսցէ մինչ ի խորին ծերութիւնն. ամէն:

288ա (Վտացողի) Կամաւ անեղին, եա՛ Պարոնց Ջաւրումս, առա գուտըբ գիրքս, որ կոչի Մաշտոց, ի արդար վաստակոց իմոց, եաու ի ձեռն Մաւոիհոոս քահանայիւ՛ յիշատակ ինձ եւ ծնօղաց իմոց, հօրն իմոյ՛ Պապին եւ մօրն՝ Մաւիպուիին, եւ կողակցին իմոյ՛ |288բ| Շաւրումին, եւ որդոց եւ դստերաց իմոց եւ ամենայն աւրեան մերձաւորաց: Իսկ որ հանդիպիք սմա կարդալո կամ օրինակելոյ, յիշեսջիք գիս յաղաւթս ձեր եւ ողորմի ասացէ՛ք ինձ, նոյն ողորմի լիցի ձեզ. ամէն: Բարձեալ՝ ով որ դայս գիրքս ի ձեռաց տէր Մաւոիհոոսի առնուլ կամենաս, եթէ՛ որդոց իմոց, եթէ՛ աւտարաց, երեսաց Տեառն անկեալ լիցի ածէղ դատաստանին. ամէն:

Տէ՛ս ժէ. դ. յիշ-ք, 9՝ էջ 14։

ՅԻՇԵԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏՍԱԳԱՅԻ

1. *1ա (1823 թ., շղագրանման նոտրգիր, սեփ. տե՛ս խորագիրը՝ 1ա) Ջոր ի յառաջմէ գրեալ յումեմնէ գծագրողէ Աղուանցւոյ, բայց թերի եւ անկատար, իսկ այժմ գրութեամբ լրացեալ եւ վերստին նորոգեալ յումմնէ նուաստ դպրէ Աղուանցւոյ՝ հաչատուր կոչեցեալոյ:*

2ա (շղագիր) Տէր հաչատուր Գրիգորեան:

155ա Ձվերստին նորոգօղ գրքոյս՝ զամենամեղ տրուպ հաչատուր գպիրս, յիշեա՛ ի Տէր:

289ա Արդ, վերստին նորոգեցաւ Մաշտոց կոչեցեալ գիրքս ձեռամբ յետին եւ փծուն, նուաստ հաչատուր դպրի Աղուանցւոյ, ի ՌՄՀԲ. (1823) թվին, ի հայրապետութեան տեառն Եփրեմի սրբազան սուրբ կաթողիկոսի Ամենայն Հայոց, եւ առաջնորդութեան սրբազան Սուրգսի արհիեպիսկոպոսի, ի Ջուաբերդ գաւառի, ի դրան սուրբ ուխտին՝ Ինճմասն կոչեցելոյ: |289բ| Քանզի տեսանելով մեր գպիրտանացու գիրքս գայս, եւ գաշխատանս գրոցի սորին, յիրաւի ցաւեցեալ մեր զրաւմամբ ցաւս, զի կայր անկեալ ի ձեռս անչքաց, եւ անպատիւ եղեալ: Եւ մեր գայս նկատեալ, ի վեր առաք, եւ զթերին սորին նորոգ գրութեամբ լցուցաք, որպէս բոնքն լիովին, նոյնպէս եւ սա չունի պակասութիւնս: Վասն որոյ աղաչեմ զհանդիպողսդ՝ յիշել զի[մ] վերոյիշեալ անարժան իրը տիրացու հաչատուրս ի մաքուր մաղթանս ձեր՝ հանգերձ իմայնովքն, եւ դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի՝ Տեառն մերոյ. ամէն:

2. Կազմի Ա. փեղկին փակցուած տպագիր պիտակի վրայ. «Նորին վեհափառութեան տեառն տեառն Գէորգայ Դ.ի՝ երկնապարգեւ հայրապետի եւ պաշտպանի հայկեան մատենագրութեան, նուէր ի խոնարհ ծառայէ Հաւատացեալ քահանայէ Տէր-Ասեփիեանց: Հ՝ի՝ 14-13, 14 Սեպտեմբերի 1880 ամի, ի Շուշի»:

ԿՆՔՒՔԱՐՈՇՈՒ՝ 1բ, 155ա, 282բ, 289բ «Քրիստոսի ծառայ տիրացու հաչատուր, 1823»:

ԳՐՁԱՓՈՐՁ՝ 52ա. տտ. յս. «Սուրբ խաչիս աղ՝. պահպանիչ եւ յոյս. Հայր մեր որ յեր՝»:

ՆՇՈՒՄ՝ Ա. կազմաւտահին փակցուած թղթին. «ՌՂ. - 1641, Մ[եսրոպ] եպ[իսկոպոս]»:

2405

ՄԱՇՏՈՑ ՁԵՌԱՅ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

ԳՐԻՉ՝ եղիազար:

ԹԵՐԹ՝ 179. չգրուած՝ 1բ, 3ա: ՊՐԱԿ՝ Ա-ԺՁ×12 (Ա 13, Գ չիք, ԺՁ 10): ՆԻՒԹ՝ մազադաթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 12x8,8: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (8,5x5,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 38ա): ՏՈՂ՝ 17: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի, դռնակով, միջուկը տախտակ, աստառը կապոյտ կտաւ. յուսացնգակոդներ՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Ա-Բ), մազադաթ (վերջից):



Նմուշ 38ա

ՌՂԲ. – 1646

ՄԱՆՐԱԿԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ – Կիսախոշոր ա՝ 4ա: Լուսացգագարդ՝ բուսական, կենդանական, թռչնային, խաչ (134բ): Ձարդագիր՝ թռչնագիր, ձկնագիր (4ա), ճանճուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, նարնջի, շագանակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի եզերքի՝ մաշուած. միջից եւ վերջից պակասաւոր, յուսացնգեռով խոնաւութեան ճեռնիւ, տեղ-տեղ գունաթափ, պիս. Ա՝ մեծ մասամբ պատռուած, յուսացնգակոդեղը գունաթափուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա (խորագիր՝ ձեռամբ Մեսրոպ եպս. Սմբատեանցի) Մաշտոց հոհաճայի. գրեալ ի թուին հայոց ՌՂԲ.

(=ե., 1646), ի Տիգրանակերտ հաղարի, ընդ ձեռն եղիազար գրչի:

2ա [Յանկ մատենիս] — *Ա. Վասն Մկրտութեան... ԺԹ. Վասն սկիզ եւ մաղթման աւրհնելոյ:*

1. *2բ-25ա* Ա. Կանովն մկրտութեան — *Յորժամ քրիստոնեա առնեն, նախ չէ պարտ յեկեղեցի թողուլ... եւ քահանայն ասէ զաղօթս. Տէր Աստուած մեր, Աստուա՛ծ բարերար... որք մկրտեցան եւ լուսաւորեցան. եւ ետուր զսրբութիւն քո:*

2. *26ա-40բ* [Ր. Վասն Պասկ առնելոյ. ցանկից] — *(սկ. թաթուած) /// եւ եղիցին երկոքեան ի մարմին մի... փոխէ յաջ կողմ փեսային:*

26ա Վր. լս., յետագայի գրչութեամբ. «Թերեք պատկին պահասէ»:

3. *40բ-2ա* Գ. [Վասն Պասկ վերացնելոյ. ցանկից] — *Իսկ յետ է. աւուրն ի Ը.ն լինի վերացումն բագին... եւ ասէ զաղաւթս. Տէր Աստուած մեր, որ յամենայն ժամ... եւ յայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... պատիւ, այժմ:*

4. *42բ-3ա* Դ. Կանոն Հաղորդ տալոյ — *Առնու քահանայն գիրկական խորհուրդն... եւ ասէ քահանայն զաղաւթս. Տէր Աստուած ամենակալ, ամենագութ... առ ի գտանել մեզ զողորմութիւն առաջի քո:*

5. *43ա-79բ* Ե. Կանոն, յորժամ զամենայն ննջեցեալսն ի Քրիստոս յուշարկեն — *Ասեն սաղմոս Ծ՝ Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ... եւ քահանայն ասէ զաղաւթս. Աստուած յաւիտենական, անսկիզբն, անեղ... ասեն Հայր մեր եւ գնան խաղաղութեամբ:*

6. *80ա-7բ* Զ. Կանովն երկրորդ ատուն. Այգալացն — *երթան ի գերեզմանն եւ սկսանին շարական ԳԿ... Պաւղոսի առաքելոյ ի Թեսաղոնիկեցոց. Այլ մեք պարտեմք գոհանալ... ըստ անեղն փառաց քոց, Քրիստո՛ս Աստուած մեր... այժմ:*

7. *87բ-91բ* է. Կանովն է. ատուն, եւ ժե.ին, ամսոյն եւ տարելցին, եւ յամենայն կիրակմտի — *Դան ի գերեզման ննջեցելոցն... Ընծերցուած Յիսայայ մարգարէէ. Այսպէս ասէ Տէր... մեզ արժանի արա՛ յարադուարճ բերկրանաւք աւրհնել զքեզ... այժմ:*

8. *92ա-107բ* Ը. Կանոն ամենայն վախճանեալ տղայի — *Որժամ ամենից ի վայր լինի, ասեն սաղմոս... եւ ասէ զաղաւթս. Սո՛ւրբ ես, Տէր Աստուած մեր... սրաբեղիչ թեւաւք ընդ առաջ Տեառն յարո՛ւս... այժմ:*

9. *107բ-11բ* Թ. Կանովն երկրորդ ատուն — *Այգուն գան ի գերեզմանն եւ ասեն սաղմոս... Ընծերցուած Յիսայա մարգարէէ. Զի ի Տեառնէ եղիցի դարձ արդարոց... եւ ամենայն ընտրելոցն ի Քրիստոս Յիսուս... փառք, իշխանութիւն:*

10. *111բ-9ա* Ժ. Կանովն Ոգեհանգիստ առնելոյ եւ կամ պատարագ մեռելոյ — *Ասի սաղմոս՝ երանի, որում թողուիցին... եւ ասէ զաղաւթս. Որ դատաւորդ ես կենդանեաց... Գ. անգամ կրկնեա՛. Յիշեա՛, Տէր, ողորմութեամբ:*

11. ա. *119ա-29բ* ԺԱ. Կանովն Տեառնականի աւրհնելո — *Ածեն գխոստացեալն եւ գնուիրեալն... եւ ասէ զաղաւթս. Աւրհնեալ ես, Տէր Աստուած ամենակալ... հատուցանել ըստ գործոց իւրաքանչիւրոց. եւ քեզ վայել է:*

բ. *129բ-30ա* Աւրհնութիւն աղի — *Աւրհնեալ ես, Տէր Աստուած ամենակալ... Աւրհնեա՛, Տէր, ողորմեա՛:*

12. *130ա-4ա* ԺԲ. Աւրհնութիւն Հաւի պատարագի — *Գոհանամք եւ փառաւորեմք զքեզ... ի փրկութիւն անձանց մերոց, բարեխաւսութեամբ ամենայն սրբոց... զՍուրբ Հոգին:*

13. *134ա-53ա* ԺԳ. Կանովն Խաչ աւրհնելոյ — *Տանին յեկեղեցին եւ լուանան նախ ջրով, եւ ապա՝ գինով... Ընծերցուած յԱռակաց. Երանելի է այր, որ եգիտ... եւ կատարեա՛ զգօրծս աղաչանաց սոցա եւ արժանաւորեա՛ փառաւորել... այժմ:*

14. *153ա-71բ* ԺԴ. Կանովն Ջուր աւրհնելոյ — *Յաւուր Յայտնութեան Տեառն մերոյ... Ընծերցուած յԵլից. եւ խաղացոյց Մովսէս զորդիսն Իսրայիլի... զի նախատօնակ է Յովհաննու Մկրտչին:*

15. *171բ-4բ* ԺԵ. Կանովն զսեռամանիս, եւ զարմտիս, եւ զղեղջս աւրհնելոյ — *Սաղմոս. Հովիտք բազմամ... Ընծերցուած յԱռակաց. Պատուեա՛ զՏէր ի քոց արդար վաստակոց... մեծապէս պարգեւս բարութեան... Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ:*

16. *174բ-6բ* ԺԶ. Կանովն խաղող եւ հնծաման աւրհնելոյ — *Սաղմոս. Քեզ վայել է... եւ ասէ զաղաւթս. Աւրհնեալ ես, մարդասէ՛ր Աստուած... զի հասեալ են հունձք:*

17. *176բ-7բ* ԺԷ. Կանովն մրգաց աւրհնելոյ — *Ասեն սաղմոս. Ի կարդալ խոմ... եւ ասէ զաղաւթս. Աւրհնեալ ես, Տէր Աստուած... ըստ իւրաքանչիւր պիտոյից... զՀայր եւ:*

18. *178ա* ԺԸ. Կանովն հանդերձ եւ զգեստ աւրհնելոյ — *Տանին յեկեղեցին... եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս. Տէր Աստուած բարձրեալ... ի հանդերձեալսումն զողորմութիւն քո մեծ... զՀայր:*

19. *178բ-9ա* ԺԹ. Կանովն սկիհ եւ մաղզման աւրհնելոյ — *Բերեն յեկեղեցին... եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս. Աւրհնեալ ես, Տէր Աստուած մեր... եւ մեզ արժանի արա՛ պաշտել զքեզ... այժմ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

179բ Փա՛ռք ամենասուրբ երրորդութեան եւ միասնական տէրութեան եւ ինքնիշխան թագաւորութեան Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ յանեզր հանդերձալ յաւիտենին. ամէն: Որոյ ամենակարող զօրութեամբ նորին եղեւ սկիզբն սուրբ գրոցս, որ կոչի Մաշտոց, եւ ողորմութեամբ նորին էառ կլուումն եւ վկատարումն: Արդ, եղեւ աւարտ լրման սորա բատ հայկագեան տումարիս ՌՀԵ. (1646) ամի, ի քաղաքս Տիգրանակերտ, որ եւ Համիդ վերակոչի, ընդ հովանեաւ Սրբոյն

Կիրակոսի, եւ մօրն նորա՝ Յուղիտայի, ձեռամբ գտաւծեալ, անարհեստ, սուտ եւ փուտ գրչի եղիազարի /// (թափուած)։

Տե՛ս ժէ. դ. յիշ.ը, Գ. էջ 212։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. *3բ (1882 թ., շղագիր)* Զայս Մաշտոց նուիրեցի մեծի գրատան Ուուրբ Էջմիածնի ի *1 Յունվարի 1882 ամի, ի հայրապետութեան Ամենայն Հայոց Տ[եառն] Գէորգայ Դ. մեծագործ եւ ազգասէր կաթողիկոսի։* Մեաւոր եպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի *(նման՝ 25բ)։*

2. *3բ (Սահակ վ. Ամատունու ձեռքով, ԺԹ. դ., շղագիր)* Եթէ չէ քո գոցացեալ զսա ի Մատենադարանէ, ընդունիմ եւ ես գնուէր քո սուրբ։

3. *25բ (առ. լս., ԺԹ. դ., շղագիր)* Լիբր եւ լպիրշ։

ՆՇՈՒՄ՝ *1ա («Հ»* 518)։


2406

ՄԱՇՏՈՑ


ԿԱՅԵՆ.

ՍՏԱՆԱՎՈՂ՝ Մխիթարի սուց.։

ԹԵՐԹ՝ 130. չգրաւած 3բ։ ՊՐԱԿ՝ 2+Ա-ժ×12 (Գ, Ը 13)+6։ ՆԻՒԹ՝ մազաղաթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 8,2x5,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (6,5x3,5)։ ԳԻՐ՝ նուռգիր (բանգրդոյ)՝ 1ա-3ա, 91ար, 112բ, 124ա-30բ. նմանչք 7ա, 126բ)։ ՏՈՂ՝ 19։ ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շաքմոնագոյն կաշի, իւսանձչիւս փեղկին 1 խաչ (Ա. փեղկիներ կանաչ ակով), միջնվյր տախտակ, աստառը կապոյտ կտաւ. յատանգագարդերը կարմիր։



Նմուշ 7ա



Նմուշ 126բ

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ – ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 5ա։ Լ ու ս ա ճ գ ա գ ա ր դ՝ բռնական։ Ջ ա ր դ ագ իր՝ ճանճգագիր։ Դ ոյ ն ե ր՝ կարմիր, վարդագոյն, կապոյտ։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի եզրերը թեթեակի մաղտած, մէջի կաշին հալչոտած, թափուած, կապիչներն՝ ընկած, յատանգագոգերը գոնաբաւի. յատանգներուն խոնաւութեան հետեւեր, վերջին թերթերին վտիտկ սպառուածքներ, տեղ-տեղ գիրը ջնջուած։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

– *4ա* [Յանի մատեան] – *Ա. Կանոն մկրտութիւն առնելոյ... Բ. Երկրորդ պսակ առնելոյ։*

1. *4բ-20ա* Ա. Կանոն մկրտութիւն առնելոյ – *Նախ ասեն, Աւրհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ... Եւ քահանայն ասէ զաղօթս գայս. Տէր Աստուած մեր, Աստուած բարերար, որ գվրիպեալսն եւ գհետացեալս... Քարոզ Սուրբ խաչիս։ Աղօթք Պահպանեա՛։*

2. *20բ-1ա* Բ. Կանոն ճշմն աւրհնելոյ – *Զամենայն գգուշութեամբ հարցաքննէ քահանայն գկողմ յաջգականութեան... Սուրբ խաչիս, Պահպանիչ։*

3. *21ա-32բ* [Գ. Պսակ առնելոյ. գանկիզ] – *Եւ առնու քահանան գփեսայն եւ երթայ ի տուն հարսինն... Ընծերցուած ի Պնդոց. Եւ ասաց Աստուած. Աբրասցուք մարդ ըստ պատկերի մերում...*

ՌՃՂԲ. – 1745

ա. *32ար* Տաղ ի վերայ թագաւորի – *Ամենագօր Տէր, թագաւոր թագաւորաց / Թագաւորիս մեր զգեցո՛ հանդերձ փառաց... Եւ գքահանայս ժողովրդեամբըս միաբան մաքրեա՛ յարտից... Հօրն լուսոյ եւ Քրիստոսի, Հոգւոյն Սրբոյ, ամենագօր թագաւորի։*

4. *33ար* Դ. Պսակի երեացին է – *Եւ աւուրն երրորդի վերացուցանէ քահանայն գպսակն... Եւ ասէ գաղօթս գայս. Տէր Աստուած ամենակալ... զի կացցեն ամբիծք եւ անարատք յայսմ աշխարհիս... այժմ եւ։*

5. *33բ-9բ* Ե. Կանոնն հաղորդ տալոյ – *Առնու քահանայն գփրկական խորհուրդն... Եւ ասէ գաղօթս գայս. Տէր Աստուած ամենակալ, ամենագութ... սովիմբ պահեա՛ գմեզ սուրբս եւ անարատս... փառք յաւիտեանս։*

Իբ. *69ա-73ա* ԻԲ. [Բաե]. Եւ համբարձեալ գնեաս աւրհնեաց գնոսա... [Լուծումն]. Աւդ, նախ գիտելի է, զի այս տաւն գերագոյն է... եւ ոմրին շնորհացն արժանաւորեացուք շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով եւ ընդ որում Հաւր միանգամայն եւ Հոգւոյն Սրբոյ վայել է փառ, յաւիտեանս. ամէն:

Իգ. *73բ-4ա* [Յաւելուած] — *Ջի՞նչ է նախատաւնական, զոր առնեմք... իսկ ի յայնժամ յորս գնայց, ասէ, ի նոյն գատեցայց: Ապա ուրեմն յայտ է բանս:*

73ա Աւդ, եւ՝ վերջինս սպաւաւորաց բանին եւ տրուպս բանասիրաց Մաւթէոս քահանայ, որ միայն անուամբ եւ ոչ արդեամբք, տխաղծ մտաւք եւ տարտամ լեզուաւ ձեռնարկեցի յայս գործ տեսութեան, ոչ աւելի ինչ հոգացեալ, այլ ճշմաւտութեանն հետեւեալ, միայն այնմ բանի արարաք լուծումն, որ յայս գլուխ առանձնակի գրի, իսկ այլքն՝ հարքն մեր արարին ի Մաւթէոսի գլուխս, ընդարձակ հարցմամբ անտ գոցեաս: Աւդ, է պիտանացու ի նորա ի քարոզս բանի եւ ի կարգ զրուցաց եւ ի բեմասացութիւնն: Եւ գայս ո՛չ գիտնոց վասն, այլ մանկանց իմոց խորհրդակցացն: Եւ արդ, թեպէտ իմաստնոցա ամենայն յայտնի է այս, բայ ինչն տարբաջանելի կրիւք յառաջ եկն, վասն որով աղաւեմ զթերին լնուլ եւ զաւելորդն կշռել եւ սխալանացն ներել, մանաւանդ ուղիղ մտաւք ընթեռնուլ, ընդ որ եւ հայցեմ որք պատահիք, մաղթել առ մարդասէրն, թերեւս իջցէ մասն ինչ ի սրբան|73բ|ուէր աղաւթից Հերոց ի շարաւալի հոգիս եւ սրբեսցէ զաղտ հնութեան մեղաւք մեռելոյս եւ ազատեսցէ ի կուտակեալ ալեաց, եւ արժանացուսցէ յետին մշակացն:

Աւդ, եղեւ գրաւ համառաւտութեան բանից քարոզութեան ի թուին հայոց Ջ. եւ Խ. (1391), առ ուտս արդիւնաբան հռետորին Գրիգորի մեծի, յերկիրս Երնջանկայ, ի վանքս Ապրակունեաց, զոր մեծ ջանիւ էառ ի յախթարմայից երդարնակացն քաջ նահատակն Քրիստոսի Մաղաքիաս, որ եւ այս եւս ի նորին նշուիցց շնորհացն առեալ գծագրեցի առ ի յիշատակ առ յապա եղելոց մանկանց եկեղեցեացդ Հայաստանեաց: Ալլ որք գաղափարէք, գրեաջիք զսակաւ յիշատակիկս մեր ի վերջք գրոցս, զի եւ գուք յիշեալ լիցիք ի Տեառնէ: Որ եւ դարձեալ աղաւեմ ո՛չ ջնջել կամ հատանել զսակաւ յիշատակս մեր, թեպէտ չեմք արժանի, զի եւ մեզ լիցի հասանել մասին սրբոցն ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

Տէ՛ս ԺԴ. դ. յիշ.բ, էջ 591-ջ:

Բ. *75ա-287ա* Նորին Մաթ[ոս] նուաստ եւ յեսին աշակերտի հաւմնծացն Յոհաննու եւ Գրիգորի, աշխատասիրեալ ի բնութիւն գործոց առաքելոցն, ի մեկնութենն սուրբ հարցն Յոհաննու Ոսկեբերանի եւ Եփրեմի, ի խնդրոյ հարազատ հոգեւոր եղբաւր իւրոյ Յակոբ վարպետի Ովաննեացին:

— *75ա-82բ* Յանկ Գործոցս Մեկնութեանն — *Ա. Առաջին ճառ. Վասն առաջաբանութեանն... Լբ. Երեւսուն եւ Բ. ճառ. Ներքոդեան ի սոյն յարեալ... Կատարեցաւ ջանկ գրոցս ի փառս Քրիստոսի Աստուծոյ:*

ա. *83ա-92բ* Ա. *Յետ քննութեան այնոցիկ, որ վերաբերին ի տնաւրէնութենէ մարմնացեալ Բանին... նշոյլք, որ յանկիւնս տան: Այսքան բանք են <են> յառաջաբանի գործոց, զոր արարեալ է եւ ինդի:*

բ. *93ա-106բ* Բ. Նորին, ի Մեկնութենէն Յովհաննու կարճառօտ — *Ջի՞նչ է պատճառն, որ յամենայն գիրս... եւ ոչ յեւ ԺՐ. ամսոյ:*

գ. *106բ-11բ* Գ. Ջի՞նչ է, որ ասէ. Ջրաննն առաջին. եւ ոչ Աւետարան կամ գիրէ — *Ի հանդէս բանի հրաւիրեալ... գծելով եւ երկնից արքայութեան արժանաւոր լիցուք ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:*

դ. *111բ-6ա* Դ. [Բաճ]. Ջոր սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել – *[Լուծումն]. Գիտելի է, զի փիլիսոփայն բաժանէ գիմաստասիրութիւնն յճ.ս... ժառանգդ լիցուք ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որով եւ ընդ որում Հօր մի՛ եւ Հոգ՛ վայել է փառք՛՛:*

ե. *116ա-21ա* Ե. Զի՞նչ է, որ ասէ Շաւշափեցէ՛ք զիս եւ տեսէ՛ք, զի ես ե՛ն՛ – *[Լուծումն]. Նախ գիտել պարտ է, թէ զի՞նչ էր յառաջ Քրիստոս... պարգեւաց նորա՝ շնորհօք եւ մարդասիրու՛՛ ո՛՛:*

զ. *121ա-3ա* Զ. [Բաճ]. Այլ սպասել աւետեացն Հաւ... [Լուծումն]. Եւ արդ, որովհետեւ հրապիրեցէ՛ք ի պաշտօն... յորոց ազատեսցէ զմեզ Քրիստոս, աւրինեալն յաւիտեանս. ամէն:

է. *123ա-35ա* է. [Բաճ]. Իսկ նոքա մատուցեալ հաւցանէին զնա... [Լուծումն]. Գիտելի [է], զի սովորութիւն էր առաջին իւաստասիրացն... այլ գեղեցկացեալ անճատ պսակօք փառս առ Հօր՛՛:

ը. *135բ-41ա* Ը. [Բաճ]. Այլ առջիք զաւորթիւն... [Լուծումն]. Հաւցաւճնելի է, թէ զինչ զաւորթիւն եան առաքելոցն... արժանաւորեսցէ շնորհ եւ մարդ՛՛:

թ. *141բ-5բ* Թ. [Բաճ]. Ապա դարձան յերուսաղէմ յանուա[ճ]եալ լեռնէն Ձիթենեաց... [Լուծումն]. Նախ հան զտեսութիւն բանիս գիտելի է... առ ի լնով զպատճեալ սիրտս մեր, շնորհօք եւ մարդ՛՛ Տեառն մերոյ եւ փ՛՛, որով եւ ընդ որում Հ՛՛ եւ Հոգոյն Ս՛՛:

ժ. *148բ-53բ* Ժ. [Բաճ]. Եւ ընտրեցին երկուս եւ արկին վիճակ... [Լուծումն]. Զի երիս կերպիւ վիճակ բաժանեաց Մովսէս... որոց լիցի եւ մեզ հասանել շնորհօք եւ մատղաշութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որով եւ ընդ որում Հօրն, միաճգամայն եւ Հոգւոյն Սրբոյ վայել է փառ, իշխ՛՛:

ժա. *154ա-61ա* ԺԱ. [Բաճ]. Եւ ի կատարել աւուրցն Պենտեկոստէիցն... [Լուծումն]. Ի գալ Հոգւոյն Սրբոյ... Ժառանգդորդս առաւցէ շնորհօք եւ մարդաս՛՛, որով եւ ընդ որ՛՛:

ժբ. *161ա-4բ* ԺԲ. [Բաճ]. Եւ էին յերուսաղէմ բնակեալ... [Լուծումն]. Զհաւոր տառապեալ ոչ ուրեք եթէ կամիցին... եւ անդ ի կենացն ժամանել ողորմութեամբ իւրով ի Քրիստոս Յիսուս Տէ՛՛:

ժգ. *164բ-71ա* ԺԳ. [Բաճ]. Զի դեռ երեմ ժամ են աւուրս... [Լուծումն]. Յորժամ նորագոյն ոչ յառաջնորդութիւն գայ... նորին փառացն հաղորդիլ եւ շնորհաց նորին լինել արժանաւոր ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որում փառ յ՛՛:

ժդ. *171ա-6ա* ԺԴ. [Բաճ]. Աւրէ իւրայլգիիք, եւ ոչ ի ձեզ եկիւղածիք իցեն... [Լուծումն]. Խոտէք, ոչ յատակս ծովու... կենացն արժանի լիցուք, շնորհօք եւ մարդ՛՛ որով եւ ընդ որո՛՛:

ժե. *176ա-84բ* ԺԵ. [Բաճ]. Եւ լուեալ զայս զղջացեալքն... [Լուծումն]. Սովորութիւն է թագաւորաց... զի ընդ փեսային Քրիստոսի արժանասցուք վայելել զփառս նորին շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով եւ ընդ որում Հօրն մի՛՛ եւ Հոգ՛՛ փառ:

ժզ. *184բ-90ա* ԺԶ. [Բաճ]. Եւ այր մի նստէր կաղ... [Լուծումն]. Յետ ննջեցեան այնոցիկ, որ առ գալուստ Հոգւոյն Սրբոյ... յորմէ ազատեսցէ զմեզ Քրիստոս՝ մարմնացեալ Աստուած, որում զօրութիւն եւ փառ յաւիտեանս. ամէն:

ժէ. *190բ-7բ* ԺԷ. [Բաճ]. Մովսէս ասաց ցհաւոն մեր. Մարգարէ յարոյցէ ձեզ Տէր Աստուած... [Լուծումն]. Սաւիմած է փորիկ մանկան... երկնից արհաւրութեանն ժառանգորդս առաւցէ շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փ՛՛ Յիսուսի Քրիստոսի, որով եւ ընդ որում Հօրն՛՛:

ժը. *197բ-204բ* ԺԸ. [Բաճ]. եւ բազմութեան հաւատացելոցն էր սիրտ եւ անձն մի... [Լուծումն]. Ի յարտաքին իմաստից... երկնից արհաւրութեանն ժառանգորդս լինել ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որով եւ ընդ որում Հօր միասի՛՛:

ժթ. *204բ-7ա* ԺԹ. [Բաճ]. Յառուցեալ մի ոմն ի մէջ աւետնին... [Լուծումն]. Ջհաչութիւն արանց հաւատարմաց... եւ տալ իշխանութիւն վրէժ հաղարաց շնորհօք ողորմութեանն իւրոյ, որում փառ յաւիտեանս. ամէն:

ի. *207ա-10բ* Ի. [Բաճ]. Եւ եղեւ տրտունջ յուսաց... [Լուծումն]. Ի վերայ բանիս այսորիկ գիտելի է... եւ անա զերկնից առ՛՛ ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որով եւ ընդ որում Հօր մի՛՛ եւ Հոգ՛՛ վայել է փ՛՛:

իա. *210բ-8բ* ԻԱ. [Բաճ]. Ստեփանոս այր լի շն[որհօք] եւ զօրութեամբ... [Լուծումն]. Ի հանդէս տաւնասիրացն... այլ ապաշխարութեամբ արբիլ ի մեղաց եւ արժանի լիցուք տալ փառս ընդ Հօր իւրոյ աեսկզբնականին եւ փառակցի Հոգոյն ճշմարտի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

իբ. *218բ-26ա* ԻԲ. [Բաճ]. Բայց Սաւղոս վնասակար էր եկեղեցւոյն... [Լուծումն]. Զի աստուածային գիրք... արժանաւոր գործով փառաւորեացուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի՛՛:

իգ. *226ա-32ա* ԻԳ. [Բաճ]. Եւ էր Սաւղոս ընդ աշակերտ[ն]ն մասանել... [Լուծումն]. Քանզի ասնեայն բարիք պարգեւեցան մեզ ի Քրիստոսի... հաղորդս լիցուք շնորհօք եւ մարդ՛՛ որով եւ ընդ որում ն՛՛:

իդ. *232բ-40բ* ԻԴ. [Բաճ]. Եւ եկեալ Բառնաբաս յԱնտիոք... [Լուծումն]. Քերթողք գմաուսնս բանին ի յոյթ բաժանեն... եւ արժանի արասցէ խստացելոց բարեացն Տեառն մերոյ, որում փ՛՛:

իե. *240բ-6ա* ԻԵ. [Բաճ]. Բազում ներողութեամբ պարտ է մեզ մտանել յայն հանգիստ... [Լուծումն]. Ամենայն իրաց ժամանակ է... ժառանգդ լինել ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որում վայել է փառ, իշխ՛՛:

իզ. *246բ-51ա* ԻԶ. [Բաճ]. Եւ էր ոմն աշակերտ յՅ[ե]ռսղէմ[ն] վկայեալ յամենայն եղբարց... [Լուծումն]. Ի պատճառէ անկմանն Ադամայ... եւ այնմ կենացն հաղորդս լիցուք. շնորհօք եւ մարդաս՛՛, որով եւ ընդ Հ՛՛:

Իէ *251բ-9բ* Իէ. [Բաճ]. Եւ ասէր Պատղո[ս]. Պատա էր չարչարիլ... [Լուծումն]. Ձղմարիտ վարդապետի յատկութիւն է... եւ ճայեցուս ի նա ուղիղ հաւատով եւ կենդանացուս ճոգով ի փառս Հօր իւրոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որով եւ ընդ որում յամենայնի յափեւեամս փառաւորեսցի Տէր մեր. ամէն:

իբ. *259բ-65բ* ԻԲ. [Բաճ]. Եւ եղ Պատղո[ս] եւ երեկ զնացն... [Լուծումն]. Քանզի սաճմանեցաւ յեկեղեցիս Աստուծոյ... [ար]ժանի եղիցուս փառաւորել զՀայր եւ զՈդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւ՚:

իթ. *265բ-73բ* ԻԹ. [Բաճ]. Եւ ի[ջ]եալ ի Հռ[ա]տանի մարգարէ ումն, անուն Ագաբոս... [Լուծումն]. Գիտուցիս Սուրբ Գոգ... ժառանգորդս արասցէ Քրիստոսիս Յիսուսիս Տեառնէ մերով, որով եւ ընդ որ՚ Հ՚ միաճ՚:

լ. *273բ-9բ* Լ. [Բաճ]. Ե[լ] յետ ամսոց երից եկն ճաճանայապանն ճանդերձ ճար[ա]ւարախսասս Տերտեղոսաս... [Լուծումն]. Թագաւորին երկու իրս ճարկ է լինել... եւ արժանի արասցէ երկնից արհայութեանն ի Քրիստոս Յիսուս, որ է աւրճնեալ յ՚:

լա. *280ա-6ա* ԼԱ. [Բաճ]. Իբրեւ հրամայեցաւ մեզ ճաւել յիտալիա... [Լուծումն]. Երանելին Պաւ[ղոս] գրէ.. եւ խոստացեալ բարեացն ժառանգորդ լիցի[ոյ] ի Քրիստոս] Յիսուս Տէր մեր, որով եւ ընդ որում Հաւր... ամէն:

286բ ի սպառել ապգին հայկազեան եւ [ի] վերջին դարուն սահուցեալ ոգոց տարաժամ կ[որու]սելոց մեծի եւ փոքու եւ ի ստարասուցեալ դասուն քահանայական եւ ի հարեալ ժանեաց բանսարկուին, յամս ՅՈՒԻՆ ՊԿ. (1411), ի բռնակալութեան ապգին Յորգանեան, որ յետին գազան հանդիպեալ դանիելականն, որ ուտէր եւ մանրէր զիւրան եւ զատարան, ո՛չ յայտնի գոլով առաջնորդին եւ հնազանդին, այլ հաւասարեալ կորստեամբ եւ չարեաւք առաւելեալ, որ եւ յիշել ետ զառաջին չարին Թաւմուր կոչեցեալ Կաղին եւ ի նոյն ժամանդի գոլով յետոյ ամենայնի հարեալ զՎատնի արեան դաշն եւ ճալաւ զաէր նորա եւ սպան զՅաւսարն վրաց Կոստանդին եւ զբազումս գերի վարեալ յայսմ դառնութեան ժամանակիս, եւ՝ նուասս եւ խեղդամահ ի մեզս Մաթէ[ոս] յեսնեալս յիմաստից եւ տգէտս ի գիտնականաց եւ մնացեալս որբ ի յիմ հարազատագոյն հարանց հոգեհանաց եւ մարմնականաց, որ եւ յայսմ ամի եղեւ գրաւ կենաց մեծ բաբունոյն իմոյ Գրիգորի՛ յիշատակին մեծի հօրն Յոհաննու Ոսկեբերանի եւ Եփրեմի: [Եւ] զոր ինչ պարգեւեաց Հոգին Սուրբ, ի խնդրոյ հարազատ եւ սիրեցեալ եղբարւր մերոյ Յակոբայ վարդապետի, յորոյ սիրոյ հարեալ, յա[ն]ձն առի գմեծ աշխատանքս զայս, որ ոչ էր իմ կարողութիւն, այլ ի չգոյէ առն, եւ ի հասեալ ժամու անտէրունջ գոլով եւ ի խնդրոյ սրբազան եղբօրն մերոյ սկսայ շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ եւ ողորմութեամբ նորին կատարեցի:

Արդ, աղաչեմ գՀանգիպողսդ սուրբ գանձիս, մտադիրութեամբ ընթեռնուլ եւ զաւելորդն կշռել եւ պակասութեանն ներել, զի ոչ միայն զիւրն հոգւացաք Աստուծով, այլ եւ գնմանակից բանին, որ ի հոմանուութենէ յայլ եւ յայլ գրոց առընթեր միմեանց եդի՛ առ ի դիւրագիւտ լինել աղբատ մանկանց իմոց եւ բեմբասացութիւնս եւ ի [ի]արդ գրուցաց հրապարակաց բանին: Եւ այս՝ դառն եւ տաժանելի կրիւք, քանզի ոչ ունէի զարժանաւորութիւն Հոգւոյն, որ դիւրաւ մտածէի, այլ ժեռլով եւ չարչարանք |287ա| տկարս ոգով ի լոյսէ ած Աստուած Հոգին առ ի լցուցանել գփափագող սորին, վասն որոյ աղաչեմ խնդրել գթողութիւն բազմակէպ յանցանս[աց] իմոց՝ [թ]երեւս իցէ աղաւթք մաղթանաց եւ ողորմութիւն փրկչին ի շարաւալի ոգիս իմ եւ լուսացէ զաղտ հնութեան մեռելոյս, եւ արժանացուսցէ ողորմութեամբ [մաս]ին սրբոց եւ կարգեա[ց]է ընդ յետին մշակաց[ն]: Այլ եւ երջանիկ հօրն մեր[ոյ Սար]գիս վարդ[ապետի]ն յիշատակ ի սմա եղիցի, զի պատճառ եղեւ մերոյս գծա[գ]րութեանն, քանզի նա կանխաւ համաոսեալ էր զսա, եւ մեք նորին [շ]ուտացն հետեւեցաք: Այլ եւ անմե[ղ]ադիր լինել աղաչ[ե]մ, զի դառնութիւն ժամանակի[ս] եւ աղճատութք չար խորհրդոց չփոթեալ ազատեցացուին գհոգի եւ գմարմին իմ, մանաւանդ՝ ծուլութիւն անգութ եւ անհնազանդ աշակերտաց վիրաւորեցին զիս, եւ յաւէտ վիշտք ի սուտ եղբարց, որք անհրաժեշտ վատթարութեամբ դառնացուցին զիս, վասն որոյ եւ ոչ կարացի զբովանդակն մակագրել, այլ զսակաւս ի բազմաց գրեցի առ ի յիշատակ մանկանցդ եկեղեցացդ Հայաստանեայցդ, վասն որոյ գրեսջիք գյիշատակութիւնս իմ ի վերջք գրոցս, որք գաղափարք, զի եւ գուք յիշեալ լիցիք ի Քրիստոս յաւիտենական կենաւք: Եւ որ յաչառնեն եւ հակառակինն, առցեն գնոյնն, զոր եւ արարինն, իսկ կատարողք աղաչանաց մերոց աւրհնեալ լիցին ի Քրիստոս Յիսուս Տէր մեր:

Այլ եւ սովորութիւն է բնական մերոյս ազինս յաւտար ազգաց իմաստից բանին ցանկալ եւ որոնել, թէեւ կարի յետնոց է արարեալ եւ զնոյն ընթեռնուլ եւ զիւրոյ հօր թէեւ կարի մեծացէ աշխա[տ]եալ՝ ոչ ընդունել, վասն որոյ աղաչեմ մի զանմտութիւնս այս ի գործ ածել, այլ ընդ աւտարացն եւ զքոյոս սիրՀել եւ] մեծարել եւ կամակար մտաւք ընթեռնուլ, [զի լիցի] ձեզ թերեւս հասանել յաւիտենական գիտ[ութեանցն], մտանել յանզրաւական գիտութիւնն ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է աւրհնեալ ընդ Հօր իւրում եւ Սուրբ Հոգոյն այժմ եւ մ՚:

Տե՛ս ԺԹ. դ. յիշ-ք. Ա., էջ 119-21:

Գ. *287բ-94ա* Նորին Մաթէ[ոսի] աշ[ակերտի] ներ-

բողեան ոդբերգաբար ոգեալ ի թաղումն երջանիկ րաբունապետիճն Գրի[գոր]ի, ըստ նմին եւ յիշատակել [գոդբ]ս յալեաց կոտոռածին, որ ի Վրաց տումն, ի Փայտակարան խաղաքի, ընկճի պատկեր աւուրցն մի դիպեցաւ, մանաւանդ ի հրաշագեղն Կարապետ եղբայր իւր – *Մվ տայր զմ[ահ]ն իմ փոխանակ մահու քո... [ծովմածուփ եւ խաւարային բանդէս ի լիւր աքանչելի լ[ոյս]: Եւ մեք, ձեւոք հանդերձ փառաորեսցուք գՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ[Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւ՛:*

ՅԱԼԻՆԼԱԳՐՈՒԹԻՒՆ. ԺԸ. դար. նոտրգիր

ա. *1բ-2բ* Եռաձ հոգէշաճ, գոռ ասագեալ է սրբոցն Աստուծոյ – *Արար Աստուած զմարդն հոգի եւ մարմին... եւ դանձս անվնաս ի քշնամոյն:*

Մարդու զգայարանների եւ անդամների դերերի մասին այլաբանօրէն:

բ. *74ա* Պատմութիւն խոգի ի պէտս մարդկան – *Արգ, խոգն է դեղ ամէն ցաւի... եւ թողգի կոյի (Ընդամենը 5 տող):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄՆԱԿի

73ա Տե՛ս Բովանդակութիւն. 73աբ, 286բ-7ա

153բ Զաշխատող բանիս եւ զդծող գմաթէլոս[սուտանուն մոնագնս աղաչեմ յիշել ի Տէր եւ անմեղադիր լինել, զի այսչափ կարացի:

Տե՛ս ԺԹ. դ. յիշ-ք, էջ 592:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

3բ (բոլորգիր, ԺԶ դ.) Զվերջին ստացող քաղուածոյ Աւետարանին Ղուկասու Ծայրեցի Յոհաննէս վարդապետս յիշատակ հոգոյ իմոյ եւ կրկնակի ծնողացն իմոց եւ բազմերախտ ուսուցչին իմոյ Յոհաննէս մեծ րաբունապետին: Որք հանդիրքիք ի սմայ, լի բերան Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ Աստուած զձեզ ողորմսցի իւր միւսանգամ գալստեանն. ամէն:

82բ (նոտրգիր, 1718 թ.) Պատճառ գրոյս այս է, որ ՌՃԿԷ. (1718) թվին, մարտի ԵՒ., Լուսնի ԺԴ., Լուսինն խաւարեցաւ մինչեւ երեք ժամն: Ինչպէս զարհուրելի եղեւ, որ մարդ երեսն չկարեր նայիլ, վերայ գալիքն Աստուած գիտէ: Որեցաւ/// (անունը չնչած) վարդապետ:

ԳՐՉԱՔՈՐՉ՝ *1ա (նոտրգիր) «եղաւ հաղօք եթէ գիրիչայփորձ: Ի սկզբանէ արար Աստուած զերկինսն եւ զերկի եւ երկ: արձ ծառ աբ հառաչհառմասաթ: Ես հաւատամ ամէնայսոյսդ: Եսայիս գ»: 294բ (բոլորգիր) «Ես ասացի գարմանալ»: «Աւերեցաւ աթ»: «Հաստատութիւն իմ լե՛ր, Տէր ես լուս փրկութեան, որ շարդ»: 295ա (նոտրգիր) «Իմաստու/// զօգուտ/// ըստ Տեառն/// զաշխարհս շահ/// յ/// ենն իւր տուժեսցի սէր յիս պտղեալ մարմին մեղքն Թողացուցեալ»: «Աբգ Եսայիս գիր»:*

ՆԿԱՐԱԳՐՈՒՄ՝ *294բ Ճակատագարդ:*

ՆՇՈՒՄ՝ *1ա՝ «Հ[ոգ] 2519» (սեւ մատիտով), «ԺԹ., Մ[եսրոպ] Եպ[իսկոպոս]»: 16ա (ատ. լս.) «2519ից» (սեւ մատիտով), Գա-ին սոսնձուած թղթի վրայ, մեքենագիր. «Վերակազմուած է հին ու նոր կաշիների միացումով: Գրխ. վերականգնիչ՝ Ա. Խաչատրեան, Երեւան, 196[1-]»:*


2520

ԺՈՂՈՎԱԾՈՆ

Ձեռ. – 1306

ԳՐԻՉ. ՍՏԱՅՈՂ՝ Յոհաննէս Նոգնկայեցի:

ԹԻՒՔ 344+1 (կրկն.՝ թ. 80). չզրուած 12աբ: ՊՐԱԿ՝ 12+ԱԲԷ12 (Ին. 9, ԻԳ 10, ԻԴ 14, ԻԶ 13): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵՆԻՒԹԻՒՆ՝ 16,8x12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիճն (13,7-14x9,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 51ա): ՏՈՂ՝ 26 (1գ-291բ), 28 (292ա-344բ): ԿԱԶՄ՝ դոշմազարդ շագանակագոյն կաշի, դռնակով, միջոցի տախտակ, աստառը վաճառկազարդ կոպտ, դռնակիներ՝ կապոյտ կոպտ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (Գ) սկզբից, չզրուած թուղթ, լուսագծերով:



Նմուշ 51ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ – գծանկարային. ճակատագիր՝ 1ա, 13ա, 256ա: Լուսանգագաղ՝ բուսական, թոչնային: Զարդագիր՝ բուսական, հաճգուցագիր, թոչնագիր: Գոյներ՝ կարմիր:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – 2 (Ա-Ռ.) + 2 (Դ-Ե.): ԱՌ.՝ ճաշոց: Ստացուած րնդլայնակի հատուած, եզրաճատուած մէկ թերթի երկայնակի ծալումով: ԺԱ. դար: Մագաղաթ, 16,3x23, երկսիւն ([30]x19,5), տող՝ 10 (պետք է լինի 23), բոլորգիր երկաթագիր (նմուշ՝ Բա): ճաշոց. [Մեծի կիրակի Զատկին. Հինգշաբաթի առ. Թագը արբոյ առաքեղոյն Յակոբայ Կաթողիկէ Ա. 18-27, Սաղմոս, Մատթէոս Ե. 6-7]: Կարդալ՝ Բա, Աբ, Աա, Բբ. «Կամեցեալ ծնաւ զմեզ... առ ի բարկանալ: Զի/// Զի եթէ ոք լսող... Իսկ ոք յառեալ/// [կրանեակտորութիւն]ն: [Խո]ռանաւորութիւն սուրբ... զանձն [յաշխարհի: Ակիզովիա. Սաղմ.]/// Ծոանի ոռ հարցեալ... ոռ սուրբ են աւոխիմ, զի///»: Դե. Ահեռաւան րատ Մարկոսի Ը. 17-32: Ստացուած մէկ թերթի ռնդլայնակի ծալումով եւ եզրաճատուամով (զրաչաչոր վնասուած): ժ. դար: Մագաղաթ (23,7x16,2), երկսիւն ([28]x[18]), տող՝ 17 (պետք է լինի 21), բոլորգիր երկաթագիր (նմուշ՝ Դա): Կարդալ՝ Բբ, Ծա, Դա, Եբ՝ «վտակա]ւին ոչ իմանայք [եւ] ոչ յիշէք... եւ համարձակ գրանն խաւսեցաւ»:



Նմուշ Բա



Նմուշ Դա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշիի եզրամաշ, երկուական կապիչներն ու զամերն ընկած, թ. 12 եւ 23՝ ճիմիից մասամբ պոկուած, թ. 1, 329-44, պատառիկ-պահպանակներին եւ ատառներին գեղի անցեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1ա-11բ* Համառօտ տեսութիւն Յովհաննու Աւետարանիցն՝ տէր Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի — *[Հան]. Ի սկզբանէ էր Բանն... [Լուծումն]. Բան ասի Որդին Աստուծոյ... որ յառաջ քան զյաւիտեանս պատմէ ասելով. Ի սկզբան*[1]:

Բ. *13ա-255բ* [Նաեայի Ասորւոյ Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին]

— *13ա-8ա* Առաջաբանութիւն Յոհաննու Աւետարանին — *Ոչինչ լրջալի գոյ, քան զսիրելեացն... զայն դնէ սկիզբն բանին ասելով. Ի սկզբանէ էր Բ[անն]:*

ա. *18ա-143բ* [Հատած Ա.] Սրբոյն Նաեայի Ասորոց վարդապետի Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին — *[Հան]. Ի սկզբանէ էր Բանն: [Լուծումն]. Պարտ է մեզ յիսկզբան ճառիցս նկատել... քարկոծել եւս խնդրէք:*

— *139ա-43բ* [Յորդորակ] — *Ով սիրելիք, ապաքէն լուայք... Այլ եւ Սմբատ Բագրատունի եւ Մարեմ Սիւնեաց տիկին, որ զգիրս սուրբ Յարգմանեալ հրամայեցին, զնոյն հայցեն յիշել եւ Տէր Յիսուս. յիշողացդ ողորմեացի:*

Բնագիրս «Առաջաբանութիւնք (13ա-5ա) եւ «Վերջաբանք յիշատակարան» բնորոշելի մասը (141ա-3բ) տե՛ս տողին:

բ. *144ա-55բ* Նորին սրբոյն Նաեայի հատած երկրորդ — *[Հան]. Էր ոմն հիւանդ Ղազարոս... [Լուծումն]. Սովորութիւն իսկ է, որոց բուռն հարեալ են... բերել պատմութիւն անչափութեան իրացն եղելոց:*

— *254բ-5բ* [Յորդորակ] — *Յորժամ ձմեռնական ժամանակին... զի հակելով յաջակողմանն գասուն արժանաւորեսցուք վերառաքել փառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ:*

Երկրորդ հատուածը բաժանուած է երկու մասի, Երկրորդ մասը վերնագրուած է. «Սկզբոյն ի յարութիւն Տեառն: Հատած երրորդ գրոցն»: Համմ. Նաեայի Ասորւոց վարդապետի Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին, Թանգարան հայկական հին եւ նոր գպրութեանց, է, Վենետիկ, Ս. Ղազար, 1920, էջ 1-441:

13ա (Թ. դ. կէս) [Առաջաբանութիւն] — *Ոչ ինչ լրջալի գոյ, քան զսիրելեացն լցուցանել զիղձս տենչանաց եւ այնու առաւել հաստատել գաստուածային սիրոյն շաղկապութիւն եւ գանչափ շահաւետութիւն, որ անգի լինիցին ինքն ձգել ըստ պատուիրանին, թէ՝ Մէր ծածկէ զբազմութիւն մեղաց: Իսկ եթէ գանձեռնարկելի իր է, բուռն հարեալ իցէ սիրելոյն գնդրոյ, տե՛ս որքան տարակուսանաս եւ թախիծ իւրում սիրտդին վերայ ածէ: Ջի եթէ ոմն ի հնգկային վախան ակնարկէ՝ իւրում սիրելոյն ուղղաւորել առ գիւտ ճաճանչաւոր տպագիրնին կամ իջանել ի ծովային խորան, ընդ այնքան կուտակեալ կոճակաց ծովասաստ ճանձրամած ջուրցն խոտրիեան, առ ի գիւտ պատուական մարգարտին, իսկ Նորա տրտմեալ առ քնահան վայրսն, ուր գիւտ տպագիրնին իցէ, ակա ապառաժ բոխասէր ափափայիցին: Եւ այլ ոմն ոչ բերելով զարհեստ ուղղական արհեստին առ ծովային ջրոցն վրդովելոյն, զիջումն գործել, ո՞չ ապաքէն հնարս ոչ փոքունս յանձին բերէ այնուհետեւ լուծանել գմեղադրութիւն իւրոյ սիրելոյն, եւ ի ձեռն սերտ |13բ| սիրոյն համարձակապէս առ պատճառն մատչելով յայտնէ գտկարութիւն անձին, եւ գեղեցիկ հաւանութեամբ նահանջեալ ճողոպրէ զինքն առանց իրիք մեղադրանաց յանձեռնարկելի խնդրոյն:*

Իսկ արդ, եթէ առ գիւտ ստորեւ կացեալ տարրական նիւթոցն այնքան դժուարին՝ սակս յոքնակի պիտոյից տաժանմանցն, զիա՞րդ դու յինէն պահանջես գերկնային զրարձրագոյն եւ գանհասանելի իրէ դգիւտ, զոր ոչ լայնութիւն երկրի եւ կամ խորութիւն ծովու միայն ընդմիջեալ ունի, այլ գերագոյն իսկ տարրական բնութեանս անցեալ կա, որ եւ ոչ իմացմամբ մեք՝ Թանձրութեամբ մտաւք եւ ի վայր քարշեալքս խորհրդովքս, կարեմք նկատել, քան թէ իրագործութեամբ բացայայտել:

Արդ, այսոքիկ ինչպէս եւ ինձ յոյժ Ծանուցք են եւ անձեռնարկելիք, այլ քեզ ախորժեալ բաղդանակաւս դրուատել, որ այդքան յոքնահանճարս գտար ի յեսին ժամանակի առ խուզմունս իմաստիցն խորս, որ անհետազօտելիքն ասացան ի վաամամիտ գերահրաշլիցն: Ոչ գիմս անմաքուր իմաստիցս, ապա պարտավեալ խոհագեալ, որ եւ յոյժ անվայելուչ էր իմոյս լրբանաց ի վեր տարրանալ առ այդքան բարձրագոյն եւ երկնային իրդութիւնս, այլ գի ոչ գտի հնարս ինչ անփոյթ առնել գքոյդ յօժարութիւն, որ այդքան պատուոս գիմաստութիւն, մինչեւ յաղթատաց եւ ի ներգեւելոցս եւս որալ ախորժես, նման որոց զիպատարական ծիրանիսն ստանալ փափագեն, ի գազանաց գայրենեաց որսան զշահաւոր պատուականութիւնն: Իսկ ոմանք յայլ իմն տկարագո|14ա|նեցն, յորոգանց գազրացելոց հարբուտանան, յորոց մեռանկ[ա]ն յառաջ գան, որում ոչ անհնարս եւ գքոյդ գիտեմ ճոխութիւն, զոր յաստիսս բաղարկեալ ունիս հայրենական պերճանաւոք յդպահեայ: Այլ ինձ ոչ փոքր ինչ յաւանկնելի էր յայդքան ձկտել ի բարձրութիւն ամենեւին ստորանկելոյս, որ ոչ գիտուն մտօք եւ ոչ բանաչարական արհեստիւ կոխ: Այլ եւ ոչ արժանաւոր ըստ տուչութեան Հոգւոյն, զոր բազմագան հոսանօք շնորհացն եհեղ ի ստորնայնոցս

շահ: Այլ ըստ ոչ մաքրութեան եւս ողորմելի ոմն եւ վարակեալ մեղացն չխթայիւք, որ եւ ոչ յերկնից բարձրութիւնն եմ արժանաւոր նայել, քան եթէ գլխակելոյն ի վերայ երկնի ճառել ինչ: Զի մեղացն ծանրութիւնն, ըստ մարգարէին ձայնի, բարձրագոյն է, քան զգլուխ իմ, որով ի վայր հակեալ կամ, ըստ արժանի պատժապարտութեանս ընկճեալ: Այլ եւ միՙնչ արդեօք յայտնէ առ հրաժարումն իրագործութեան օգտեցայց: Զի եթէ ի ձեռն սիրոյ յատուկ ժամանեալ էր այդքան անձեռնարկելի խնդիր, թերեւս գոյր ճոռոգրելով ի բաց փախչել, այլ դու ընդ սիրոյն հանդամանս եւ զիշխանական հրամանդ շարահարեցեր: Վասն որոյ եւ ոչ գտի հնարս ինչ պատճառելով ըստ նախկի գաղափարութեան հրաժարել եւ ի բաց դառնալ սակս անձին տկարութեան: Վասն զի ի ձեռն սիրոյն մտերմաբար աղերսեցեր աստուածահաճոյական վարուք, ո՛վ տէր Սմբատ Բագրատունի: Իսկ առընթեր եւ զիշխանական հրամանդ ի վերայ ածեր, բառնալով ինձէն զճողոպրելոյն հնարս, ոչ զանձին իմոյ տկ|14բ|արութիւն առ այդքան բարձրագոյն խնդիր խոհագար եւ ոչ դարձեալ անմաքրութեամբս իմով վերաբերել յայսքան մաքրագոյն իմաստս, լրբութիւն ինձ վարկար, բառնալով ինձ բեռինս յոյժ ծանունս եւ դժուարակիրս: Եւ ահա յաչ եւ յահեակ նայելով եւ ոչ մատուցանէ օգնականութիւն ըստ աւետարանական բանին: Վասն որոյ բագում առաչանս առ քո[ր]ոյ տէրութեանդ արկանեմ, առ հրաժարումն այդքան ծանրագոյն իրագործութենէ եւ անշահ եւ անաւգուտ եղեալ ի քո[ր]ոյդ ներող լսողութենէդ. ապաւինեալ աստուածօր բուռն հարից զընծորացց Սուրբ Հոգւոյն, որ տայն առատապէս եւ ոչ նախատէ:

Եւ արդ, պատմեսցուք զաւրինակ խնդրոյս, թերեւս ի ձեռն աղօթից լսողացդ առաւելապէս հասցէ ինձ օգնականութիւն ի վերին չնորհացն: Քանզի այր ոմն, սարկաւագապետ գոյով, Նաեսյ անուանեալ, յոյժ հմուտ եւ վարժ աստրի գպրութեան, ստացօղ բոլորիցն առաքինութեանն, պարկեշտ վարուք, մաքուր առ ամենայն մարմնական հեշտութիւնս, աղբեւրաբար ընկալեալ զընծորս վարդապետութեան ի Հուսյն Սրբոյ ուղղափառ հաւատոյն, որ ի Քրիստոս: Որ եւ յանգիմանեալ զոմն եռեսիկոս, զայր պերճաբան եւ իմաստասէր, վանեալ հալածական առնէր յաշխարհէն Հայաստանեայց, որ երբեմն խոտորնակս ուսուցանէր, յերկուս բաժանելով զՔրիստոսի անբաժ միաւորութիւնն, որ յետ անքակ եւ անշփոթ մարմնաւորութեանն, եւս հաստատէ վերստին զնոյն ուղղափառ, որ ի Քրիստոս գաւանութիւնն, մի յերկուս բնութիւնս խոստովանել, գաւտուածականն՝ բնութեամբ, իսկ |15ա| զնուաստականսն կամաւոր յանձնառութեամբ: Ջնա թախանձեալ մեծին Բագարատու, որ ի տանէն Բագրատունեաց, այր յոյժ զբարձրագոյնս ստացեալ գանուն, որ եւ պետ իշխանաց երբեմն ի բարբարոս ազգէն հագարացւոց անուանեալ, որպէս թէ այնու առաւել պատուի գնա արժանաւոր վարկուցեալ, գորոյ եւ գանցս անցիցն յիւրում տեղւոյնչ փոքր ինչ յիշատակեսցուք: Եւ զի՛նչ արդեօք իցէ օրինակ խնդրոյն, ստանալ նմա գմեկնութիւն սրբոյ Աւետարանին Յոհաննու, որոյ փոյթ ի մտի եդեալ վազվազակի ի ձեռն ուժգին պահոց եւ աղօթից, ջան ոչ փոքր յանձին բերէ շրջագայութեամբ երից ամաց, յաձեալ ընդ անապատս յերկրին Միջագետաց, ուր եւ յուսայր իակ զգիւտ գրոյ ուղղափառ վարդապետացն, եւ հանդիպեալ խնդրոյն առաջնորդութեամբ վերին խնամոցն, շարադրէ համաոտոգաբար ի բաղմաց հատաքելով մի ըստ միոջէ ոճով գմեկնութիւնն Յոհաննու սրբոյ Աւետարանիչ՝ փոխաբերելով յատորի լեզուէն ի հագարական լեզու: Իսկ յորժամ ըմբռնեալ լինէր ի հագարական ազգէն մեծն եւ երեւելին այն իշխանն Հայոց վասամիտն, որ եւ զբովանդակն յանձին բերէր ունել գգիտութիւն, որ ի Քրիստոս հաւատոցն, որ եւ նախանձ ո՛չ փոքրագոյն վասն Քրիստոսի միշտ յանձին կրէր, կշտամբել եւ յանդիմանել զերբռնաւածողացն դասս: Ոչ ինչ արութիւն քաջութեան այնուհետեւ ըստ արժանի իւրոյ մեծութեանն երեւեցոյց, այլ երագապաչս ի վայր հոլովել յաստուածային բարձրագոյն հաւատոցն, զոր ունէր, գլորեցաւ վազվազակի ի վիհ անկանդնելի կորզստեանն, եւ ի բաց ընկեն|15բ|լով զգորշմ ուխտի ճշմարիտ հաւատոցն, սուգ անհնարին բոլոր աշխարհիս Հայաստանեայց հասուցանէր, թէպէտ եւ հրաշտակացաւ ի լսելիս մեր ի խորութեան սրտին հաստատուն պահելով զճշմարիտ հաւատոյս գաւանութիւնս:

Յայնմ ժամանակի ի ձեռն պատահման իմն գանձ գրոյս հասեալ լինի առ տէր Սմբատ Բագրատունի, գոր ընկալեալ խնդութեամբ մեծաւ, հրամայէ փութով ի հագարացւոյն ի հայկական վերաբերել լեզու, ոչ ինչ ներելով իմոյ տկարութենէս: Այլ զոր մեծն այն հրետորն, կատարեալ յարուեստս եւ ի մակացութիւնս, այնքան չան յանձին բերելով տաժանեցաւ: Մ՚վ որ ոչ զիմս աղարտեսցէ յանդգնութիւն, մտաբերել անգամ յայսքան բարձրագոյն խորհուրդս: Զոր յոյժ եւ ոչ զատաքինութիւնն առնն պարտ է, որ յետ այնորիկ գործեցաւ, անյիշատակ թողով, այլ իբր ի նկարագրի փոքր ինչ ցուցանել զնորայն ճգնութիւն, ոչ իբրեւ ներբողելով դրուատել, զի եւ ոչ բազմութիւն յոյժ իմաստասիրաց ի մի վայր գումարելոց կարող են բան ըստ նորա արժանաւորութենանն հատուցանել հանդիսի, այլ միայն դոյզն ինչ բանիւք պատմութիւնս ինչ թեւագրել առ ի գիտութիւն լսողաց:

Սա ըմբռնեալ եղեւ ի մերում իսկ ժամանակի ի հագարական ազգացն վասն նախանձու, որ ի նմանէ բազմախայլ վարդապետութենէն եւ ներհակս միշտ առադրելոյն, դնանի ի բանի հանդերձ որդւովք իւրովք, որով[ք] բագում անգամ բանս հրապարակաւս առաջի արկեալ՝ հանդերձ յոքնագան պարգեւօք, ոչ ինչ խո-

նարհեցոյց գանխոնարհելի խորհուրդս մտացն, որ ի Քրիստոս: Դարձեալ յայլ տեսակ հնարից բերելաք լինէին, սպառնմամբ |16ա| բանգից եւ կապանաց եւ պէս-պէս տանջանաց, այլ ոչ ինչ զանգիտելով երբէք գիջանէր ի բարձրագոյն հաւատոցն՝ որ ի Քրիստոս, եւ մնայեալ ի բանդի անդ բազում ժամանակս, ո՛չ միայն գինքն ամբողջ պահելով յանբիծ հաւատոն, այլ եւ բազմաց լինի առիթ փրկութեան, աներկչելաբար միշտ պահելով զարգելանաւորսն ի բանդին, ուսուցանելով եւ հաստատելով ի հաւատս ամենասուրբ Երրորդութեանն:

Եւ յետ այսորիկ այսպէս եղելոյ՝ հասեալ լինի գանձ գրոյս այսորիկ առ Մարեմ Բագրատունի Սիւնեաց տիկին ի ձեռն Աշոտոյ հարր իւրոյ, մեծ եւ երեւելի տեառն Բագրատունւոյ իշխանաց իշխանի: Իսկ երանուելոյս Սիւնեաց տիկնոջ փոյթ ի մտի եդեալ, վաղվաղակի հրամայեաց երկիցս անգամ փոխաբերել ի հայկական լեզուս՝ առաջնորդութեամբ վերին խնամոցն: Յարդարէ համառօտաբար գաստուածային բարձրագոյն հաւատս՝ վերագոյն ունելով քան իւրումն քաղցր եւ յոյժ գովելի բարոյիցն, որ հաւարակաբար ունէր առ ամենայն մարդիկ զինամս իւրոյ սիրելի Քրիստոսի սուրբ մտացն, մանաւանդ ի միամիտ հաւատոցն, որ ի Քրիստոս. պահպանեալ լինի ի վերին խնամոցն անվրդով առ ի յօգնականութիւն չորից ուստերաց, զոր ոչ պատկառեմ սիրող Քրիստոսի անուանել եւ կենդանի վկայ, որ այնքան ժամանակս եբեր յանձին գժուժկալութիւն, որ ի Քրիստոս հաւատոցն: Եւ որա այսպիսի եղելոյ մի՛ ոք զմեզ յայսմ վայրի բամբասիցէ իբրեւ աւելագործուկ ինչ, խառնելով զմերս ընդ նորայն ջան, կամեցեալ իբրեւ օտարացուցանել կամ ազատել ինչ, այլ զի մի՛ անկատար եւ պակաս վարդապետի փառք յաշակերտէն լինել, |16բ| փոքր ինչ ներեսցեն մեզ լսաւղքդ, եւ բան իմաստասէր բժշկացն, որք ի ձեռն երակացն գիտասցեն զախտին պատճառսն, հնարին այնուհետեւ առ բուժումն: Այսպէս պարտ է ձեզ մտաց աչօք նայել ի ճառս, յոր մտաք, եւ եթէ իցէ ինչ արատ, բժշկել իբրեւ զհոգեկան անդամս, եւ միամտութեամբ սիրոյ օժանդակել հոգեկան սիրոյն շաղկապութեամբ, եւ անընդմիջաբար սիրելութեամբ ի բաց տանել զմախանս թուխաւորս եւ երկրաւորս, եւ միացեալք սիրով նոր ի Քրիստոս, կալցո՛ւք առ միմեանս, եւ աւսօղս եւ լսօղքդ՝ որպէս լոյս առ աչս, եւ բարբառ առ լսելիս, եւ հոտ առ հոտոտելիս: Եւ եթէ իցէ ինչ արատ տկարութեան բանից, հեռատրական բանիւ սերտել եւ պայծառացուցանել, եւ որպէս ջերմութիւն հրոյ, զի գցրտութիւն ի մարմնոյն հալածելով եւ զուարթութեամբ զգոյն պատկերին զգեցուցանէ, այսպէս եւ դուք ընդ ջերմեռանդն սիրով եւ աստուածային հրոյ կայծակամբք մխեակք, աներկեւեան բերելով ի մէջ գսրբութեան սէրն, ուր ո՛չ նախանձ եւ ո՛չ ատելութիւն, ո՛չ յանդգնութիւն այլոցն հանդերձ, եւ սիրոյն յիշատակաւ զբազմութիւն մեղացն ջնջեսցուք ըստ պատուիրանին՝ եթէ. Սէր ծածկէ զբազմութիւն մեղաց, եւ մատուցեալք միամիտք միախորհուրդք, աւսօղս եւ լսօղքդ առ աստուածային ճառիցս գիտելութիւնս, զի դուգապէս օգտեսցուք, զի ազիւ Հոգւոյն Սրբոյ շնորհաց համեմեսցին ճաշակելիք մերոց մտացս, որ եւ զբանն համեմէ, եւ զհոգին սրբէ, եւ զմիտսն լուսաւորէ:

Ապա եթէ ոք ի պարսաւադիտացն ի վերայ մեր ընթ|17ա|ացեալ, խոտորնակս ինչ խորհեսցի հակառակելով, մեք անփոյթ արասցուք զներհակս, առ նոսա արտաճառելով, ըստ պատուիրանին դալեկեալք, ոչ յանդգնեալ այլոցն հանդերձ, այլ միայն զՀոգւոյն Սրբոյ գրից վերառաքել գոհութիւն, որ եւ առիթն իսկ է փոխաբերութեան բառիցն լինքն ապաւինելոց, ըստ Պօղոսի ձայնին, եթէ այլուստ թարգմանութիւնք լեզուաց: Եւ զանց արարեալ զվնասակարքն, յառաջիկայսն ճեպեսցուք, վասն որոյ եւ ի գործ զբանս արկաք եւ դուզնաքեա ինչ վասն աւետարանչացն շարադրեսցուք զորպիսութիւն ճառիցն, որքան հասու կարեն լինել միտքս մեր, եւ այնպէս ճանապարհորդեալ անմոլար, եկեսցուք ի մեկնութիւն սրբոյ Աւետարանին Յովհաննու: Վասն Մատթէոսի եւ Մարկոսի եւ Ղուկայ բազումք կանխեալ ասացին լիւրաքանչիւր տեղիս, իսկ վասն Յովհաննու, զոր եւ ի գործ արկաք զբանս, ասասցուք, որ ինչ միանգամ կարեւորն է:

Սա զամենայն ժամանակս իւրոյ առաքելութեանն առանց գրոյ քարոզէր զԱւետարանն, իսկ իբրեւ կարգեցան երեք աւետարանքն եւ գրեցան եւ հաւին առ նա, որպէս ասի բանն, ընդունելի եղեն նմա, եւ վկայեաց եթէ ճշմարիտ գրեցան, այլ պակաս է ի նոցանէ՝ որ ինչ միանգամ գործեցանն, իսկ զբան վարդապետութեանն Քրիստոսի, զոր եւ մեք կարող եմք գիտել, եթէ երեք աւետարանիչքն յետ ըմբրնեալոյն Յովհաննու Մկրտչի ի բանդ, որ ինչ գործեցաւ ի Տեառնէ, գրեցին, որ եւ ցուցանի սկիզբն ճառից նոցա, եթէ յետ քառասուն աւուր իբրեւ պահեաց Տէրն եւ զփորձապատճոն յաղթահարեաց, սկիզբն |17բ| արարին պատմութեանն իւրեանց, ըստ Մատթէոսի գրելոյն, եթէ յորժամ լուաւ, եթէ կալան գՅովհաննէս, փոխեցաւ ի Հրեաստանէ ի Գալիլեա, իսկ Մարկոս եթէ յետ մատնելոյն Յովհաննու, ևն Յիսուս ի Գալիլեա, իսկ Ղուկաս կանխեալ գրեաց. Հերովդէս, ասէ, ի վերայ ամենայն չարեացն, զոր գործեաց, յաւել եւս ունել զՅովհաննէս եւ եդ ի բանդի: Ուստի եւ աղաչեցին զՅովհաննէս առաքեալն, եթէ այն ժամանակ, որ թողաւ յայլոց աւետարանչացն, որ գործեցան ի Տեառնէ, տացէ նոցա գրով, որ նախ քան զմատնելն Յովհաննու ի բանդ, եղեն ի Քրիստոսէ հրաշագործութիւնքն, զոր եւ գրեացն իսկ Յովհաննէս: Զայս արար, ասէ, սկիզբն

նշանաց Յիսուս ի Կանա Գալիլեացւոց եւ յայտնեաց գփառս իւր՝ ցուցանելով գայն գոլ առաջին հրաշագործութիւն։ Եւ ապա երբեմն յիշատակեաց գՅովհաննէս յիւրում Աւետարանին, զոր ինչ գործեցաւ նախ քան զմատնելն Յովհաննու ի բանդ։ Իսկ երեք աւետարանիչքն, որ ինչ զկնի մատնելոյն Յովհաննու ի բանդ գործեցաւ ի Քրիստոսէ, գրեցին։ Այլ վասն է՞ր արդեօք Յովհաննէս լռէ ի գպրութենէ, որ վասն ծնընդեան փրկչին մերոյ ըստ մարմնոյ։ Այլ քանզի Մատթէոս եւ Ղուկաս կանխեալ յառաջագոյն գրեցին գայն, իսկ սա սկսաւ գրել վասն աստուածութեանն նորա։ Նա եւ չորրորդ գոլով աւետարանչացն, ո՛չ առանց բարձրագոյն խորհրդոյ իցէ, զի ոմանք ըստ չորեքծագեան գոլով արարածոց, ուր պարտ էր համասփիւռ քարոզել Աւետարանն արքայութեան, նոյնպիսի ՅՈւով, ասացին, պարտ էր եւ աւետարանացն գոլ, որք ընդ ամենայն տիեզերս էին աւետարանելոց զբանն կենաց։ Իսկ ոմանց հաճոյ |18ա| ՅՈւեցաւ ըստ չորից մշտահոս գետոցն յառնելական յաղբերէն յառաջախաղաց եղեալ՝ առ տիեզերապ ոտգոմն, եւ սոցա գոլով նմանապէս ՅՈւով ուռճացեալք ի կենդանական աղբերէն՝ ոտգոմանել զպաւաքացեալ միտս մարդկային բնութեանս։ Իրաւապէս չորրորդ աւետարանիչս, իբրեւ յԱստուծոյ պարճալ նմա զայս բարձրագոյն խորհուրդ, իբրեւ առաւել առաքելոյ, որ եւ Որդի Որոտման ի Տեառնէ կոչեցաւ, սակս գերկնայինս որոտալոյն, առ ընդոստուցանել եւ բանալ զմիտս մարդկային բնութեանս, զայն գնէ սիդիպն բանին՝ ասելով. Ի սկզբանէ էր Բ[անն]։

141ա (Թ. դ. կէս) [Վերջաբան-յիշատակարան] — Եւ վասն զի ձրիաք Հոգւոյն Սրբոյ աւարտեալ գլխատրեցաք գաստուածախօս ճառիցս բացատրութիւնիս, ժամ է այսուհետեւ լուսաւորագոյնս շուրջ փայլեցուցանել գաւետարանութեան բան առ սուրբ կաթուղիկէ եկեղեցի, ըստ մարգարէին ձայնի. Լուսաւորեա՛, լուսաւորեա՛, Երուսաղէ՛մ, զի հասեալ է լոյս քո, եւ դարձեալ լոյս պատուիրանն մակաղրի, ըստ տեսողին՝ Պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց։ Հաճոյ ՅՈւեցաւ մեզ լուսաւորական բանիւ գաւետաւոր բանիս ընծայաբերութիւնն հնչեցուցանել առ սուրբ կաթուղիկէ եկեղեցի, զի եթէ որ ի ձեռն իւրոց ծառայից ձրեաց երբեմն աշխարհի զպատգամս, լոյս գնա մակ[ան]ուանէ, որքան վճիռ եւ գոյս եւ անսուտեր լոյս պարտիմք անուանել զլուսոյն այնորիկ պատուիրանն, զոր ՅովհաՀաննէս գոչէր. էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէր զամենայն մարդ, որ գալոց էր յաշխարհ, զորմէ ինքն՝ փրկիչն, ի վերայ իւր առ ի մեր վարդապետութիւն պահ-տառէ ասելով. Ես եմ լոյս եւ ճշմարտութիւն եւ կեանք։ Եւ քանզի ըստ արիթափայլ աստուածական բանիցս, անհետազօտելի ճառիցս, յաճախագոյնս լոյս տուաք բանին, զոր այժմ բացատրութեամբ վերին շնորհացն օժանդակելով, տրամաբանութեամբ տարորոշեալ, յստակագոյնս գաստուածական խորոցն անհետազօտելի զիմաստս բացայայտեցաք։

|*141բ*| Հաճոյ ՅՈւեցաւ մեզ դոյզն ինչ դրուատել զշնորհս կաթուղիկէ եկեղեցւոյ, թէպէտ եւ այնոքիկ ոչ հանդիսաւորք եւ պերճք ըստ արժանաւորութեան, այլ ըստ այրուձի այնորիկ աղքատութեան ընկալեալ զերկուս լումայսն ի Քրիստոսի գանձանակն, եւ զիմս հանգոյն նմին ընկալեալս գուպնաքեա բանիւ դրուատանս ի լքաւորական մատաց։ Ո՛վ հարսն Քրիստոսի եւ մայր հաւատացելոց սուրբ կաթուղիկէ եկեղեցի, ներեաս այնպէս համարձակեալ մերոյ աղքատութեանս ընծայաբերութիւն գբանս աւարտից եմք։ Ո՛վ յոքնապարգեւ եւ բազմերջանիկ, ամենահրաշափառ եւ երանութեամբ ծաղկեալ, մայր եւ դաստիարակ գաւանողաց եռանձնեա եւ եզական աստուածութեանն, վասն զի ի քեզ գլխատրի պարծանք լրութեան ուղիղ հաւատոցն, ի քեզ գաստիարակին մանկունք ընթհանուր ուղղափառութեան եւ սերտին ի հաւատս, ի քեզ ցանկ զենանի Որդին Աստուծոյ, որ միանգամ զենաւ ի փրկութիւն աշխարհի, ի քեզ ցանկ քաշիսի մարմին եւ արիւն Տեառն ի քաւութիւն եւ ի թողութիւն սեռի մարդկան, ի քեզ վեցթեւեան սերովբէքն միշտ զեռահրեալ սրբասացութիւնսն անյայտաբար ձայնիւ զեղգեղեն Որդւոյն Աստուծոյ, ի քեզ միաւորեալ երկնայնոցն ընդ երկրայինս՝ ցանկ փառաւորեն զէակին Աստուած, որ գունակ ի ծնընդեանն։ Քեւ երախայք վերրստին ծնընդեամբ որդիք Աստուծոյ յորջորջին, շնորհիւ քեւ մկրտեալքն ի ստոր բնակութենէս վերաթեւեալք գերամբառնան ի տեղի անգելոց հրեշտակաց, քեւ կղերիկոսացն պճնեալ[ք] միշտ ճոխ|*142ա*|անան հոյլք, քեւ եպիսկոպոսունք գոաւրճացեալք բերկրին, քեւ քահանայք պարծեալք պարկեշտանան ի պատուին, քեւ սարկաւագունք գգօսնանան արժանապէս սպասաւորելով, քեւ ճգնաւորք ժուժկալեալք ճգնին առաքինաբար, քեւ վարժապետք ճոխացեալք հրաւարակեն գաստուածաբանութիւնն, քեւ հերձուածողք ընկճեալ խորտակին, քեւ անպատուեալ յամօթ լինի Բելիար, քեւ բազմամեղքն ապաշխարութեամբ ապատին ի ծառայութենէ մեղաց, քեւ հրաժարելոցն յաշխարհէ կատարեն գյիշատակս, եւ գաւազանութիւն ստանան ոգիքն։

Արդ, որ այսքանս եւ բիւր բարութեանց առիթ, ո՛վ ոք ըստ արժանաւորութեանցն բաւականանալ հատուցանել քեզ հանդիսաւոր բան, ընկա՛լ եւ այժմ գիծաքարս եւ զիմս աղքատութեան ընծայաբերութիւն, ո՛վ եկեղեցի Հայաստանեաց, ոչ յերկրէ եւ ի ծովէ կոհականն նիւթոյ ոսկի կամ ակնս պատուականս, որ գունակ մովսիսական խորանին, եւ ոչ ի Վիրանաւէտ փայտս նոճս կամ հանդերձս ականախիտս, փափուկս եւ երեւելիս ապականացուս, որ գունակ սողոմոնեան տաճարին, այլ ընծայ անապական եւ անկապտելի զանազան երկնային շահաւետութեամբ գերապայծառ շահիւք

առցեալք, այլ եւ սպառապինութիւն անյաղթելի հաւատոցեալոց, ո՛չ պարիսպ պղնձի ըստ մարգարէին Ձայնի շուրջանակի ձեռակերտելով, այլ հրեղէն անմատչելի պարսպաւ պարփակեալ, եւ ոչ սիւն երկաթի ըստ տեսանողին, այլ բոց|142բ|եղէն սուր սերովբէի ի քեզ կացուցանելով պահպանակ, եւ ոչ զինուորական զանգիտողս մահկանացուս, այլ քերովբէական անքթթելի եւ անմահական գումարտակս, լինել միջնապարիսպ ի մէջ քո գառանցն եւ գայլոց: Եւ ո՞ր արդեօք ինի կրողի զայսքան զօրութիւն, զոր մեր յոյժ չքաւորութիւնս ակն բերել քեզ սուրբ եկեղեցի Հայաստան աշխարհիս, եթէ ոչ փեսային քո եւ հաստատակաց տեառնասանդ, զոր ոչ խորեալ թաքուցի գումակ չար եւ վատ ծառայ[ի]ն, այլ արիականելով առ սեղանաւորս՝ հոգեկան շահավաճառութենանցն գործելի ըստ իմում կարի, զարհուրեալ ի սպառնալեացն սաստկութենէ, որ առ չար եւ վատ ծառայն, զի զառակաւորսն եւ զխորինսն եւ զհիացմամբ առցեալսն, բացայայտս եւ տարորոշս գաստուածական ճառիցս վարգապետութիւն ակի բերել քոյոյ լրութեան ընծայ հրաշափառ եւ գերապայծառ, զոր արձանացուցեալ յաշտարակս քո ցանկ գաստիարակին մանգունք, որով սերտեալք յուղղափառութեան հաւատս գհերձուածողացն վանեն զչարաչիառութենացն մոլորութիւնսն, զդիւացն փախուցանեն գդաւս, զապականացուն, որ ի դրախտին զգեցան: Մերկանան գմշկն, զանապական եւ զլուսաւորն, յորմէ մերկացան, վերըստին զգենուն պատմուճան, զպաւքումն առենական աղերսն Տեառն արեամբն առենականին գովացուցանեն, զքաղցն, որ ի դրախտին, Տեառն դրախտին մարմնով վայելելոք գմայլին: Նա եւ պսակ եռաճիւտական անթառամ ի գլուխ քո բերելով փարթամացուցանէ |143ա| եւ պարագրեալ ընդ վերին աւրհնեան մտիցն բարձրախմբիցդն բաղդատէ: Սակս որոյ անգանելով առաջի քո, ո՛վ սուրբ եկեղեցի, իբրեւ ընդ միով ընդ քեզ խօսեցայց, վարձատրեա՛ եւ զինոյ չքաւորութենանս տաժանմունս առ փոխաբերութիւն աստուածային ճառիցս, ի խորի բառիցն ի քոց որդւոց շնորհաց փոխաբերելով լեզու: Վասն որոյ աճապարեալ անհանգիստ վեհ երագութեամբ ընթացիւք ի մտաց ասպարիսի աւարտել գլխաւորեցի գաստուածազարդ բանից հանգամանս յաւուրն եկաւորութեան փեսային քո եւ հաստատակաց կեցուցչին, ի հեթանեայ եկաւորեալ առ ի կենադործել գԼusար, ուստի եւ զպաղատանս առաջի քո արկանելով, հայցել առ ի նոյն կեցուցչէն Քրիստոսէ, զի եւ զիմ գՆացեալ գմեռելոյութիւն մեղացն ընդ Լազարու նորոգեսցէ, եւ որ գնորայն հրամայեաց լուծանել գկապանս, եւ զիմս պարաւանդս տոռանց մեղացն շխթայիցն խզեսցէ, առաքելով յազատութիւն մեղաց, զի առ վաղիւ եւ ես ընդ մանգանցն Եբրայեցւոց ելից, ընդ առաջ նորա ոչ ոստօք ձիթենեաց եւ արմաւենօք, այլ եւ յոքնապայծառ տաճիցս երկնային տնկոց ոստս յաւետս անմահական պտղովք առբերելով, մատուցից ի փառս ամենասուրբ Երրո[որդութեանն]:

Զի եա՝ յետին յուսումնասիրաց, մանաւադ թարգմանաց, ի ձեռն աստուածային սիրոյն աղաչեմ գհայրապետս եւ գքահանայս, գճգնաւորս եւ գվարդապետս, միանգամայն եւ զբոլոր ուխտ սուրբ եկեղեցւոյ, ի վերծանել գգեղեցկագան աստուածաբանական ճառիցս բացատրութիւն, |143բ| յիշեսջիք զիս ի դպրութիւն կենաց, այլ եւ որ յօրինակի գծագրութեան առնուցու ոք զաստուածախոս ճառիցս մեկնութիւն, մաղթեսջիք յողորմածէն Աստուծոյ ապրեցուցանել զիս ի հրահոսան գետոցն ահեղ աւուրն արդար հատուցմանն, յորում սպառնամ հուրն անշէջ գումակ ինձ մեղաւորաց: Այլ առ ընթեր գրեսցեն գյիշատակ բանիցս այսոցիկ առ ի վերատակ իմոյ յոքնամեղ անձին, իսկ եթէ ոք արհամարհելով անփոյթ արասցէ, ընդ ամենեցուն նա տացէ հաշիւ ի դատաստանին, յորոց շահաւոր վիշատակաց գրկեաց գտարամերժեալ անձն իմ ի հանդերձեալ կենացն:

Այլ եւ Սմբատ Բագրատունի եւ Մարեմ Սիւնեաց տիկին, որ գգիրս սուրբ Թարգմանեալ հրամայեցին, գնոյն հայցեն յիշել. եւ Տէր ձիսուս յիշողացդ ողորմեսցի:

Մեկնութեան «Առաջաբանութիւնք եւ «Վերջաբան-յիշատակարանն այս ձեռագրիդ (13ա-18ա եւ 141ա-143բ) առել եւ տպագրել է Յովս. Ձիլ-ը, էջ 59-67, 67-72, ուր տե՛ս նաեւ քննգրիս վերաբերող մանրամասն մատենագիտութիւնը: Իսկ էջ 72 «Այսսեղ յիշատակուած անձնաւորութիւնները՝ Բագրատ Բագրատունի, Ի. գործ երեսնական թուականներին, իսկ Սմբատ Բագրատունի, որ եւ ետսովսծող կոչեցաւ, վախճանուել է 857 թուին. Աշոտ Բագրատունի՝ իշխանաց իշխան եւ ապա՝ թագաւոր: Մարեմ Բագրատունի՝ Աշոտ թագաւորի դուստրը՝ Սիւնեաց տիկին, Վասակ Գաբուռն իշխանի կինը: Ժամանակագրական մանրամասնութիւնները տե՛ս Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրութիւններ, 1948, եր. 86 եւ շար.»:

Գ. *256ա-343ա* [Ամրէնսսի Կապպադովկացւոյ Մեկնութիւն Ցայտնութեանն Յովհաննու]

Տե՛ս ձեռ. 1161, 79բ-168բ: *Յիշակ/343ա-4ա (նման ձեռ. 2516, 240ա-1բ): Նխդր/256բ-7բ: Գուխք/257բ-9ա: Նեբաձուբ/259ա-62ա: ա/262ա-5ա: բ/265ա-7ա: գ/267ա-8ա: դ/268բ-9ա: ե/269ա-70ա: զ/270ա-1բ: է/271բ-2բ: ը/272բ-3բ: թ/273բ-5ա: ժ/275բ-8ա: ժա/278ա-9ա: ժբ/279-80ա: ժգ/280ա-1ա: ժդ/281ա-բ: ժե/281բ-2բ: ժզ/282բ-3ա: ժէ/283ա-բ: ժը/283բ-5ա: ժթ/285ա-7ա: ի/287ա-8բ: իա/288բ-90ա: իբ/290ար: իգ/290բ: իդ/290բ-1ա: իե/291ար: իզ/291բ-3բ: իէ/293բ-5ա: իը/295ա-6ա: իթ/296ա-7ա: լ/297ա-8ա: լա/298ար: լբ/298բ-9ա: լգ/299ա-302ա: լդ/302ա-6ա: լե/306ա-7ա: լզ/307ա-8ա: լէ/308ա-9բ: լը/309բ-10ա: լթ/310ա-1ա: խ/311ար: խա/311բ: խբ/311բ-2բ: խգ/312բ-3ա: խդ/313ա-4ա: խե/314ա-5բ: խզ/315բ: խէ/315բ-6ա: խը/316ար: խթ/317ա: ծ/317ար: ծա/317բ-8բ: ծբ/318բ-9բ: ծգ/319բ-20բ: ծդ/320բ-23ա: ծե/323ա-6ա: ծզ/326ար: ծէ/326բ-7բ: ծը/327բ-9բ: ծթ/328բ-9բ: կ/329բ-30բ: կա/330բ-1ա: կբ/331ար: կգ/331բ-2բ: կդ/332բ-4ա: կե/334ար: կզ/334բ-5բ: կէ/335բ-9բ: կը/339գ-40բ: կթ/340բ-1ա: հ/341ար: հա/341բ-2ա: հբ/342ա-3ա:*

Չ՞ր 1161 ձեռ-ի համնմատ ունի շնչին տարբերութիւններ:

– 343ա Յիշատակ տաղիս գտողի՝ տեառն Սերսիսի գերարհռչակ վարդապետի, զոր գտեալ ի մեծն Անտիոք, գրեաց զսա ի լուսաւորութիւն հոգւոց. եւ՝ Ներսէս, նուաստ ի Քրիստոս եւ տարտամս յուսումնասիրացս, վերջին եւ նուաղեալ ժամանակի ծնունդ, յընծեռնուկն գՅայտնութիւնին Յոհաննու, տագնապէի յանձին |343բ| իմ առ ի յոչ գիտել գլուծումն բանից սքանչելեացս, եւ այսր անդր խուզելով գմեկնութիւն նորին ի մերս բարբառ ոչ գտի, յետ որոյ եհաս ինձ ընթանալ ի մեծն Անտիոք եւ շրջելով յոր անդ վանորայք հռոմոց եւ փոնկաց, այս տենչումն բորբոքէր ի միտս իմ, ուստի եւ քննեալ գտի ի գրեանս հռչակաւոր ուխտի Սրբոյն Պողոսի ի քաղաքի անդ գմեկնութիւն Յայտնութեանս ի լուսնպարտ բարբառ, եւ ի նոյն գիր, որով վարին ֆռանկք, Ր. մեկնչաց արարեալ, եւ փափաքելով թարգմանել՝ ոչ գտի զոք, որ յայնմ բարբառոյ ի հայս կարէր յեղաշրջել: Ապա ելեալ արտաքոյ քաղաքին ի սուրբ լեառնին, որ ի հիւսիսոյ կողմ անդր՝ ի մի վանորէիցն հռոմոց, որում անուն էր Բեթթաս, առ ոմն արգելական միայնակեաց, որոյ անուն Բասիլ, կնքեալ գտի գգյանկալին ի հելլենացի բարբառ եւ ի գիր, ուղղաբան եւ վայելուչ, ոչ լեալ էր Աթանասի պատրիարգի նորին քաղաքի, եւ խնդրեալ աղաչանօք ի բարէմիտ առնէն, առեալ փութացայ գրովքն ի հայրապետական աթոռն՝ առ տէրն իմ եւ կաթողիկոս սուրբ Գրիգորիոս, զոր ծանուցեալ ուրախ եղեւ յոյժ եւ հրամայեաց թարգմանել ի ձեռն մեծպատուին յեպսկոպոսէ Կոստանդեայ, որ անդ ի ներքոյ սրբոյ հայրապետին հովանոյ հաստէր: Եւ սկսեալ օգնականութեամբն Աստուծոյ եւ սրբոյ Տեառնն՝ նա ի թարգմանել, եւ ես ի գրել, վերընծայեցեալք եկեղեցւոյ Հայաստանեաց ուսումնասէր մանկանց, զայս սքանչելի եւ աստուածային Յայտնութեանս Մեկնութիւն: Ազաչեմ զընթերցողսդ եւ իմաստութեան գսիրողսդ՝ յիմանալ զխորս իմաստիցն Աստուծոյ քննութեամբ գհայրապետին Հայոց գտէրն իմ զԳրիգոր զբարեմիտն եւ զբարեբարոյն եւ զառիթին |344ա| թարգմանութեանս եւ գհրամայող մաղթեցէ՛ք Քրիստոսի յաստիս խաղաղութեամբ պահել եւ ի հանդերձեալն սրբոց իւրոց երկնից արքայութիւնն ժառանգակից ընդունել: Այլ եւ գԿոստանդին մետրապօլիտն, որ թարգմանեաց, եւ գԲասիլ կրօնաւոր, որ գօրինակս ետ, Քրիստոս ողորմութեանն իւրոյ արժանացուսցէ աղօթիւք ձեր:

Թարգմանեցաւ աստուածային Յայտնութեանս Մեկնութիւն ի թուիս հայոց ՈՒԻ. (1129), սուրբ եւ հայրապետական աթոռն, որ կոչի Հռոտվկա, շրջապատեալ լաբենական ազրեբէն եպիսկոպոսաւ, որ մատակարարէ բնակչացն զամենայն մարմնական պիտոյս խնամօքն ամենայն, ընդ հովանեաւ աստուածընկալ Նշանին Վանկոյ եւ այլ սքանչելի սրբոցն, որ հանգուցեալ են անդր ի փառս Աստուծոյ: Իսկ սրբաբանեցաւ ի նշանագրութենէն քերդողական արհեստիւ ի յապահով անապատս Սուրբ Գէորգ, ի մէջ լերինս Տօրոսի, որ է ի գահ Կիլիկոյ, եւ ի սկիզբն Պանփիղեայ, ձեռամբ նուաստ եպիսկոպոսի նորին մայրաքաղաքի Տարսոնի տառապելոյս Ներսիսի, շնորհօք եւ ողորմութեամբն Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Հմմտ. Ն. վ. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 268-71:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

44բ Զգծող յիշեսջիք:
143բ Կարգիս եւ զանձն իմ եղկելի
Եւ մեղաներկ արհեստ գրչի,
Զոր եւ մատամբ ծրագրեցի
Եա՝ Յոհ[ան]էս[ ]աղբատ ոգի,
Տառապանօք թանձրագումն,
Կարօտութեամբ անպատմելի,
Սակայն փափաք յոյժ տենչալի
Եւ ախորժանք անքննելի,
Զիս յորդորեաց յայս գործ իրի՝
Ջսա շարել ի քարտիսի,
Զի յայս տեղիքս, յորում էի,
Էր դպրութիւն հրաշալի,
Եւ եա՝ կարօտ այսմ տառի,
Զի յիւր տեղին սա հասանի,
Շտապեցա յաւէտ կարի,
Բայց իւր տեղոյն ոչ հասուցի,
Զի եկն եհաս ի կարգի
Ընթեռնելոյ ի հանդիսի.
Տակաւ կիսով չափ է ԹԵրի
Հանգէս գոլով սա աւարտի:
Զոր աղաչեմք՝ որք հանդիպի,
Աստուածախօս այս մատենի,
Յիշման գոլով գմեզ արժանի
Ջենման գտանիցն առաջի
Եւ մաղթանք աղերսալի
Խոշորութեանս ներելի:

Տե՛ս ԺԹ. դ. յիշ-ք, էջ 43-4:

177բ Վայ զգրկեալս:
227բ Աւաղ գերւոյս:

236ա Մվ ընթերցողք տաղիս եւ աստուածային մարգարանիս, յիշեսջիք գեղկելի գրիչս Յոհ[ան]նէս] կարօտ բանի, նա եւ զծնօղսն մեր եւ զեղբարսն՝ զհոգեւորսն, որ բանին են պատճառ ծննդեան, որ ծնան զմեզ յերկին հոգեւոր, եւ գմարմնոյն ըստ արեան փոխանորդութեան եւ ապագոյութեան եւ գայս յիշումն առաջի սխրալի եւ մեծ խորհրդոյ, եւ դուք՝ յիշօղքդ զմեզ սեռն սրտիւ եւ կատարեալ կամօք յիշեալ լիջիք ի նոյն ի նմանէ, առ որ եւ զմեզ յիշատակիջ հանդիսի, որ եւ ի ձէնջ եւ ի մէնջ անդադար փառաբանի օրհնեալն ի բնաւս:

242բ Երանի է սորա, եւ աղէտ է ինձ:

255բ Ով դիտականքդ խոհեմագոյնք եւ վսեմք առ բանին տեսութիւն, բաղձացողք ի սկզբանն եւ կարօտ մնացօղք առ վախճանն, զուգակից ձերում տենչանաց եւ գիմս վարիչք Թախանձումն, այլ այսմ ըղձութեան անջրպետ տարամեկնումն է, անժարմնոյն ի մարմնոյս:

344ա Դարձեալ յիշեսջիք ի Քրիստոս եւ զիս՝ զտարժանեալ մեղսաներկ ոգիս, զնուաստս Յոհ[աննէս] Եզընկայեցի սպասաւոր բանի, որ հարեալ ցանկութեամբ սիրոյ ի փափաք սորին, գրեցի իմով իսկ տխեղծ մատաղիս, ի միսիթարութիւն վշտացեալ հոգւոյ իմոյ եւ ի վարժ կրթութեան երկասէր անձին բանասիրի եւ ի յիշատակ արձանի հոգւոյ իմոյ եւ ամենայն նախնեացն՝ փոխեցելոց ի Քրիստոս արեան մերձաւորաց եւ համօրէն ամենայն երանեալ[ս]ուորաց՝ հոգեւորաց եւ մարմնաւորաց, զի դուք յիշեսջիք ի Քրիստոսէ Աստուծոյ յուսոյն մերոյ օրհնելոյն յաւ[իտ]:

Գրեցաւ ի թվին ՉՈՀ. (1306), ի քան եւ ինն մարտի ամսոյ:

Տե՛ս ԺԴ. գ. յիշ-ք, էջ 44:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՑԵՏԱԳԱՅԻ

344ք (Բոլորգիր, Ժե. դ., շուրջ 1406 թ.) Ով վէհանձինք եւ պանծալի,

Միշտ ձեռնարկօղք գործոց բարի,
Յորժամ լառեալ դանդիպիք այսմ տառի,
Յիշման արարէ՛ք դիս արժանի՝
Առ Յիսուս գթած փրկիչն ամենայնի
Եւ միշտ առասն ի տուրս բարի՝
Զգերա Մխիթարիչս խնդրող բանի,
Զվերջին ատաչօղ գրոցս հրաշալի,
Զփծուն տատապեալս եւ ոգորմելի,
Զծոյլ յամառեալս եւ հեղգալի,
Զատարտամ մեռեալս մեղօք ի լի,
Զկարօտս աղօթից եւ գործոց բարի,
Ակն ունդիս ձերոյդ չնորհի,
Կարկառ ձեռօք ցանկ բաղձալի,
Զի արժանաւոր հատուղքան Քրիստոսի,
Զիր ինձ չնորհէք դուք պատգայի,
Եւ որպէս կամիք եւ խնդրէք սիրօվ ի լի,
Ընդունն պարգեւեսցէ ձեզ փրկիչն ամենայնի:

Տե՛ս Ժե. գ. յիշ-ք, Ա., էջ 62. այստեղ՝ էջ 61, Ֆ.՝ «Ֆրա Մխիթարիչը կամ Մխիթար Ապարանեցին գործել է 1360-1410 ԹԹ. ընթացքում», ուստի՝ «նրա կողմից գրուած կամ նրա անուան յիշատակութեամբ այս եւ միւս յիշատակագրութիւնները տեղադրում ենք Մխիթարիչ գրչի կողմից 1406 թ. Մակրւում գրուած յիշատակարանին տրւթեր... »:

344բ (բոլորգիր գունաթափ, մասամբ ջերմածջնջած, Ժ.Ձ. դար) Ի թվին/// ին եւ Գասբար վարդապետա/// զլռեա/// այսպէս/// Ժ/// ե. բրիՔ (՝) կորեկ խանձոջոց (՝) Զ. բրիՔ (՝)/// ուշոցի Ապտլին, Ա./// ժամանակաց տան, բայց գուշըրդ եւ խոտ կեցեց/// պատարագն է, զտարեցոց պարտքն է: ե/// զատու բար, որ այն/// տարդ տալքն նոցա:

ԳՐԱՁՓՈՐՔ՝ *344բ. «ձերՁժիվ»: Եա. «Յայսմ աւուր յիշատակ է Սողոնի եւ: Յայսմ աւուր յիշա»:*


ԿՆՔԱԴՐՈՇՔ՝ Գա *Բոլորգրի, կենտրոնում երկդլխանի թագակիր արծիւ, ճանկերում իշխանութեան խորհրդանիշներ՝ կարճ գաւազան եւ խաչապսակ գունդ, «[Ахалцыхской] градской поли[ции]»:*

ՆՇՈՒՄ՝ *Կազմի մէջքին սոսնձուած երկդերս թուղթ. առաջինի չծածկուած մասում. «///Սիւնեաց եպիսկոպոսի եւ Նահապի Աւորւոյ», երկրորդին. «նահապ վարդապետի Աւոր[ւոյ] Մեկնո[թ]իւն Յովհաննու Աւետարանին, քաղուածոյ (3)»: Գա՝ «Մտեփ. եպիսկոպի Սիւնաց Մեկն. Աւտր. Յովհաննու» (սեւ մատիտով), «2՛՛՛ 209», «83» (ջնջած), «137/2520», «ՉՈԵ. - 1306. Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*

2521

ՄԵՍՐՈՊ ԳԱՆՁԱԿԵՑԻ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՊԱՏՃԱՌԱՑ ԳՐՈՑՆ

ԹՒՄՈՒՆ. – 1761



Նշում 16ա

ԹԵՐԹ՝ 70 (գոյի էջակալում Բ-Գ՛., իսա՝ ՃԺԱ., որ է 2բ-68ա). չգրուած՝ 1բ, 68բ: ՊՐԱԿ Ա-Ը՝Ճ (Ա. 7, Չ 9, Ը 6): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ անբնկալելի: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17,1x10,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13,7-14,3x8-8,5): ԳԻՐ՝ նուագիր (ճմուչ՝ 16ա): ՏՈՂ՝ 23-26: ԿԱՉՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի, միջուկը ստուարաթուղթ, աստառը կապոյտ թուղթ (ժԹ. դար): ՊԱՀՊԱՆԱԿ՝ I (Ա) + 2 (Բ-Գ), ԺԹ. դար՝ տեւողացած ճոճոցման ժամանակ, կապոյտ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով՝ եզրաճատման պատճառով անբնկալելի, Ա. մաս կազմաւորի

ՄԱՆՐԱՆԿԱԳՐՈՒԹԻՒՆ՝ *Ճակատագիր՝ 2ա: Ջարդ ագի՛ր բուսական, ճանգուցագիր, թռչնագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, սեւ:*

ՎԻՃԱԿ՝ *բաւարար. թ. 7՝ ճիմիից անջատ, ԺԹ. դարում կապոյտ թղթով կարկատած-ճոճոցած:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

2ա-70բ Համաոսա մեկնութիւն գոցկ, որ կոչի Պատճառաց, ի տառապեալ Մեսրոպայ Կաձոեցւոյ Աղուանից

ա. *2ա-3բ* Ա. Առարկութիւն առաջերորդ սեռի եւ տեսակի – *Ամենայն պատճառ նախկին է... բան որում առաջ եւ բայցայայտեցաք:*

բ. *3բ-6ա* Բ. Յաղագս գոլոյն, որ ի վեր է բան գլա-փտեճականութիւն: Առարկութիւն երկրորդ – *Ամենայն գոլ վերնագոյն... բազում տարբերութիւն ունի, գորս ոչ ունի:*

գ. *6ա-8ա* Գ. Ազնուական ճոգի աստ զբնական – *Հոգին կոչէ մարդոյ... իմացական զօրութեամբ կառա-վարօղ է էութենան իւրոյ:*

դ. *8ա-11ա* Դ. Յաղագս նախկին գոլոյն է, որ է ա-թոռ դասին: Առարկութիւն չորրորդ – *Առաջինն յարա-բածոց է գոլն... եւ ոչ այլ ինչ, եւ այլն նմա անտեսէ (՞):*

ե. *11ա-14ա* Ե. Յաղագս սեռից եւ տեսակաց: Առարկութիւն հինգերորդ – *Իմացութիւն վերնագոյնք... ոչ ունի ներգործութեամբ զանազանութիւնս տեսակաց:*

զ. *14ա-6բ* Զ. Յաղագս անճասութիւն Աստուծոյ: Առարկութիւն Բ. (՞) վեցերորդ – *Պատճառ նախկին գեր ի վերոյ է... ըստ կերագոյն կերպի՛ որպէս ցուցաս:*

է. *16բ-20ա* Է. Յաղագս թէ հրեշտակքն անմարմին են: Առարկութիւն է.երկրորդ – *Իմացութիւն է գոյացու-թիւն... սեռականագոյն է, անտոփոխ է:*

ը. *20ա-2բ* Ը. Դարձեալ վասն հրեշտակաց եւ սե-ռից եւ տեսակաց: Առարկութիւն ութերորդ – *Ամե-նայն իմացութիւն է գիտէ... զանմարմնաւոր մարդիկս աշխարհի:*

թ. *22բ-5բ* Թ. Յաղագս իմացութեան, որ է հրեշ-տակաց: Առարկութիւն Թ. – *Ամենայն իմացութեան հաստատութիւն... ի վերայ այլ արարածոց:*

ժ. *25բ-7բ* Ժ. Յաղագս աստուածութեանց եւ ենթա-կաից: Առարկութիւն Ժ.եր<ր>որդ – *Ամենայն իմացու-թիւն է, զի տեսակօք... եւ ոչ բոլորն, որում կարէ ընդու-նել:*

ժա. *28ա-բ* ԺԱ. Յաղագս մշտնջենաւորաց եւ փո-փոխականաց: Առարկութիւն մեռասասներորդ – *Ամենայն իմացութիւն իմանայ... կարելի է մեկնել ի վե-րայ եւ հրեշտակաց եւ մարդկան:*

ժբ. *28բ-31ա* ԺԲ. Յաղագս աստուածութեանց եւ ենթակաից: Արարկութիւն երկոտասաներորդ – *Առա-ջին ամենից ոմանք... եւ կերպիւ մի բաժան:*

ժգ. *31ա-2ա* ԺԳ. Յաղագս բաստուածութեանց եւ են-թակաից: Առարկութիւն Գ.աներորդ – *Ամենայն իմացութիւն իմանայ զէութիւն... եւ պատահմունքն է համանգամայն յինքն:*

ժդ. *32ա-4ա* ԺԴ. Յաղագս ճոգւոյն մարդոյ: Առար-կութիւն չորեհասասներորդ – *Յամենայն[յ]ն մարգոյ... եւ եր[բ]եմն ըստ բանականին. եւ այլն նմանապէս:*

ժե. *34բ-6ա* ԺԵ. Յաղագս դարձեալ բանական ճոգոյ: Առարկութիւն եԺ.ամի – *Ամենայն գիտօղ, որ գիտէ... Հոգոյն, որով կառաւարի եւ գործէ զիր ինչ:*

ժզ. *36ա-3բ* ԺԶ. Յաղագս զանազանութեան: Ա-ռարկութիւն Զ.երորդ – *Ամենայն զօրութիւնք... միջ-նորդութեամբ հրեշտակաց:*

ժէ. *38բ-9բ* ԺԷ. Յաղագս ըստորոգութեանց եւ են-թակաից: Առարկութիւն է. եւ Ժ.երորդ – *Ամենայն զօ-րութիւն միացեալ է... նոյնպէս ընդհանուրքն իմ աղագաս:*

ժը. *40ա-2ա* ԺԸ. Յաղագս զանազան պատճառ-ոաց: Առարկութիւն Ը. եւ Ժ.երորդ – *Ամենայն գոյնք ունին զէութիւն... ո՛չ ապականի եւ ո՛չ աւերեալ լինի:*

ժթ. *57բ-9բ* ԺԹ. Յաղագս հրեշտակաց եւ հոգուց եւ մարմնոց: Առարկութիւն ինն եւ տասներորդ – *Ի մէջ իմացութեանց ոմն է աստուածայինն... իմացականն յիմացականէ եւ այլն:*

ի. *59բ-62բ, 48ա* Ի. Յաղագս նախկին պատճա-ոին: Առարկութիւն տասներորդ – *Պատճառն նախկին կատարեալ զամենայն արարածս... ոմանք յաւէտ եւ ոմանք նուազք. եւ այլն:*

իա. *48ա-9ա* ԻԱ. Յաղագս դարձեալ նախկին պատճառին: Առարկութիւն ԻԱ.երորդ – *Նախկին հա-րատուտ է ինքեամբ... մարմնաւորք պիտոյից եւ աղքատք:*

իբ. *49ա-50բ* ԻԲ. Յաղագս դարձեալ նախկին պատճառին: Առարկութիւն ԻԲ.երորդ. Ստորոգու-թեանց եւ ենթակաից – *Պատճառն նախկին է գեր ի վերոյ... նախկին պատճառ եւ գեր ի վերոյ:*

իգ. *51ա-2բ* ԻԳ. Յաղագս առաջին հանճայտե-սութեան հրեշտակաց: Առարկութիւն ԻԳ.երորդ – *Ամենայն իմացութիւն աստուածային գիտէ զիրս... եւ ապա հրեշտակաց, որ է իմացութեանց:*

իդ. *52բ-4ա* ԻԴ. Յաղագս ստորոգութեանց եւ են-թակաից: Առարկութիւն ԻԴ.երորդ – *Պատճառ նախ-կին յամենայն էութիւնս... եւ միանայ ի նմայ, որպէս ասացաւ կարգաւ:*

իե. *54ա-6ա* Իե. Յաղագս անմարմին գոյացու-թեան: Առարկութիւն Իե.երորդ – *Գոյացութիւն իմա-ցեալք իմանալիք... այլ յանփոփոխ եւ անապական պատճառս:*

իզ. *56ա-7բ* ԻԶ. Յաղագս իմիճակայ եւ անա-պական գոյացութեան: Առարկութիւն ԻԶ.երորդ – *Ամենայն գոյացութիւն ինքնակայ... գիտութիւն մաս-նաւորաց, որք ի ներքոյ իւրոյ:*

իէ. *42ա-բ* Իէ. Յաղագս մարմնական գոյացու-թեան: Առարկութիւն Իէ.երորդ. – *Ամենայն գոյա-գութիւն՝ ապականելի եւ ոչ մշտնջենաւոր... այլ է նա ինքնակայ գոյացութիւն:*

իը. *42բ-4ա* ԻԸ. Յաղագս դարձեալ անմարմին գո-յացութեան: Առակութիւն ԻԸ.երորդ – *Ամենայն գոյա-գութիւն կայուն էութեամբ իւրով է պարզ... ոչ է ընդու-նակ ապականութեան. որպէս ցուցաս:*

իթ. *44բ-5ա* ԻԹ. Յաղագս թէ անփոփոխին ոչ ընդ ժամանակս: Առարկութիւն ԻԹ.երորդ – *Ամենայն գո-յացութիւն պարզ ինքնակա... քան զժամանակաւորք էութիւնս մարմնական:*

է. *186ա-9բ* Գլուխ եօթներորդ. Բացատրութիւն պատկանելոց առ ունակական եւ արդարացուցիչ շնորհս – *Հարցումն 1. Արդեօք տեսակն արդարացուցիչ իցէ՞ մի եւ պարզունակութիւն, թէ հաւաքումն բազմաց: Պատասխանի. Եթէ նկատեսցի ըստ էութեան…*

ը. *189բ-91ա* Գլուխ ութներորդ. Ցաղագս գործոց շնորհաց – *Հարցումն 1. Մ՞ք են գործի շնորհաց: Պատասխանի. Արդարացուցումն եւ արդիւնք գործոց բարեաց…*

թ. *191ա-2բ* Ցաղագս լինելութեան հաւատոյ – *Ջինելութիւն քաւարանի ունիմք հաստատեալ… եւ ի յիշատակի չարչարանացն Նորա իբրեւ ներգործութիւն չարչարիլ:*

Յաւելեալ ուն.

193բ-4բ (ԺԹ. դ., վրացերէն, մխեթրուլի) [Կերպ անուանակոչութեան] *Քաղուածքներ ֆրանսերէնից թարգմանուած հոգեւոր գրքից (լընթացս երբեմն նաեւ հայերէն առանձին բառեր):*

Մէկ թերթ պակաս, որի մի փոքրիկ հատուած մնացել է Բ. կազմատառի վրայ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

Յա (շղագիր, 1885 թ.) Հ՝ 11: Նուէր սուրբ էջմիածնայ մատենադարանին: Դաբրիէլ Յոհաննիսեանց: 12. Բ. 1885:

ՆՇՈՒՄ՝ Կազմ Ա.՝ *« Πρχορεσοъ »*, «/// ինչ ոչ գոյ ի քեզ», կազմ Բ. ռուսերէն (անընթեռնելի): Կազմի մէջքին փակցուած թղթին. «Աստուածաբանութիւն Հաբեփտի», «2. Անյայտ հեղինակի Աստուածաբանութիւն»: Աստառ Ա.՝ «2. Աստուածաբանութիւն անյայտ հեղինակի: Վրացերէն մի երկու թերթ վերջում», «2$^{\text{թր}}$ 30»: 1ա՝ «Նաշխանց» (սեւ մատիտով), «2$^{\text{թր}}$ 349/ 2533», «ԺԹ. Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»: 83ա (նոտրգիր, արտ. լս.) «Մուտ է, միայն ելանէ ի Հօրէ»: Աստառ Բ (նոտրգիր) «Տէր իմ, եթէ հարցանե[ս]/// որպիսութիւնն, փառք եւ պ/// մութեամբն եւ քո սուրբ ե/// ողջ եւ առողջ է/// հարցանէ///»: «Թուղթս այս հասցէ/// Տեառն Տեառն Սիմօն անտ/// քահանային քաչխոյան մեծ///»*:

* Կազմի թղթի ներս ծալուած էլուսեները նամակի շարադրանքը ծածկում եւ գարձնում են անընթեռնելի:


2534

Ա Ի Ե Տ Ա Բ Ա Ն

ԿԱՆԱՆ.

ԳՐԻՉ, ԾԱՂԿՈՂ, ԿԱԶՄՈՂ, ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ Նիկողոս Մեսրոպեան: ՍՏԱՑՈՂ՝ Յոհաննէս երէց:

ԹԵՐԹ՝ 307-2 (թուիչ՝ 121-123, թ 307բ Պաճպանական է). չգրուած՝ 1ա, 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 150բ, 151ա, 238ա: ՊՐԱԿ 12+Ա-Ի×12 (Գ. ԺԶ 11, Զ 10, ԺԸ 8, ԻԲ 13): ՆԻՒԹ՝ մազադաք: ՄԵՏՐԻՔԻՒՆ՝ 16,2×11,2: ԳՐԻՔԻՒՆ՝ երկսիւն (11,5× 8): ԳԻՐ՝ բոլորգիր (նմոյշ՝ 49ա): ՏՈՂ՝ 21: ԿԱԶՄ՝ չագանակագոյն կաշի, բարձանաձայն առձաթ կրկնակազմով, Ա. փեղկիւն Քրիստոսի ի վերայ չորեքկերպեան աթոռին, երկու հրեշտակ, Քրիստոսի մարմնի վրայ պսակաձեւ (երեք կարմիր եւ չոր կանաչ բաճկոնով) ոսկեզօծ առձաթէ խաչ (յետագայում ազդուած), Բ. փեղկիւն չորս առեւտրականներ, «[Ի՛]ՀԼԿ» (1՛)688 մակագրութեամբ, միջակը տախտակ, աստառը կանաչ մետաքս լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱՆ՝ 4 (Ա-Դ.) + 4 (բ. 307, ե-է.), մաշած, չգրուած (միայն բ. 307բ գրուած, որի պատճառով էլ թերթակցուել է):



Նմոյշ 49ա

ՄԱՆՐԱՆԿԱԶՈՒԹԻՒՆ – Մատթէոս 13բ, Մարկոս 94բ, Ղուկաս 151բ, Յովհաննէս եւ Պողոսեան 238բ՝ Ի ո ր ա ն 1բ, 2ա, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա: Կ ի ս ա ի ո ր ա ն 13բ, 95ա, 152ա, 239ա: Լ ու ց - ա յ ի ն Աւետման Յովսեփայ՝ 15բ, Մոգ յԱրեւելից՝ 16ա, Յովհաննէս Մկրտիչ՝ 18ա, 241ա, Յիսուս Քրիստոս՝ 20բ, 21բ, 22բ, 25ա, 26բ, 27բ, 34բ, 38ա, 39բ, 44ա, 46բ, 48ա, 49ար, 52բ, 56բ, 58ա, 60ա, 63բ, 66ա (եւ թզենի տերեւաց), 67բ, 68բ, 71ա, 74ա, 81բ, 84բ, 89բ (ծնուածիր), 96ար, 97բ (ծնուածիր), 101բ, 103ար, 104բ, 107ա, 109ար, 112բ (ծնուածիր), 114բ, 121ա, 123բ, 125բ (երկիցս), 128բ (եւ թզենի տերեւաց), 129բ, 133ար, 138բ, 142ա, 146բ (յարուցեալ), 160ա, 164բ, 166ար, 168ա, 169ա, 171ա (ծնուածիր), 174ա, 178ա, 182բ, 183բ, 186բ, 187ա, 190բ, 193ա, 198ա, 200բ, 201բ, 206բ, 210ա, 211բ, 217բ, 218ա, 221ա (եւ տաճար), 224բ, 234ա, 240ա, 241ա, 243բ, 245ա, 247ա, 250ա, 252ա, 253ա, 254ա, 255ա, 256բ, 259ար, 260բ, 261բ, 262բ, 263բ, 268բ, 269բ, 270ա, 274բ, 275բ, 277ար, 279ար, 280բ, 281բ, 283ար, 293ա, 295բ (ծնուածիր, խաչ ընդ ոսս), 299ա, 300ա: Ուսուցումն Յոդովղեան՝ 31ա, 50բ, 189ա, 195բ, 196բ, Մատթէոս մաքսաւոր ան ոսս Քրիստոսի՝ 32բ, Իչխան մի մատուցեալ երէիր պսակեալ Յիսուսի՝ 33բ, Նայր երկու՝ 34ա, 64բ, Ուսուցումն աշակերտաց՝ 36ա, 54ա, 102բ, 117բ, 119բ, 137բ, 170ա, 246ա, 299բ, Բ առաքեալ՝ 40ա, 100ա, 216ա, 232բ (առանց լուսապսակների), 234բ, Կոյր եւ համր դիւահար՝ 41բ, Դպիրք եւ փարիսեցիք՝ 42բ (երկու հոգի), 113ա (երեք հոգի), Տանուտէր՝ 45բ (առակ սերմնացանի), Հերովդէս ի վերայ գաճի՝ 48ա, 110ա, Մայր այսահար աղջկայ, հաճուեցաք ան ոսս Քրիստոսի՝ 52ա, Հայր լուսնոտի ան ոսս Քրիստոսի՝ 56ա, Մատուցեալ մանուկ ոմն՝ 61ա, Փարիսեցիք (երեք հոգի)՝ 69բ, 101ա, Ժողովեալ հաճուայսպէսք, դպիրք եւ ծերք՝ 80բ (երեք հոգի), Յիսուս եւ Պետրոս՝ 82բ, Կապուտճ ձեռացն Քրիստոսի՝ 86ա, Քաճանայապետին եւ փարիսեցիքն ժողովեալ ան Պիղատոս՝ 90ա, Խլաքաթե կանայք՝ 90բ, Բծկումն անդամալուծին՝ 95բ, Վեհ մաքսաւոր՝ 99ա (ծնուածիր), Ժողովուրդ՝ 102ա (երեք հոգի), 116ա (հինգ հոգի), 203բ (երեք հոգի), 244ա (չորս հոգի), 255բ (երեք հոգի), 276բ (երեք հոգի), Քրիստոս եւ աշակերտք ի վերա նաւի՝ 105բ, 116բ, 179բ, երկուք ի ժողովրդապետաց՝ 108ա, Առաքեալք 111բ (երեք հոգի), Բծկումն

ՈՀՄ. – 1656

խոսլի եւ համր՝ 115բ, Մատուցեալ մանկտիճ՝ 124ա (երկու հոգի), Բարեխիտս կոյր՝ 127ա, Սանդուկեցիք՝ 131բ (երկու հոգի), Քրիստոս՝ նստած եւ ան ոսս նուռ կին մի եւ շիշ իւղոյ նարդեան՝ 136բ, Յովսէի Արիմաթացի (ծնուածիր)՝ 145ա, 231բ, Աւետումն՝ 154ա, Յարուցեալ Մարիամ՝ 155ա, Յովսէի եւ Մարիամ՝ 157ա, Հովիւ եւ հօտ իւր՝ 157բ, Մանուկ Քրիստոս ի մէջ մսուրի եւ երկու հովիւք լուսապսակներով՝ 158բ, Ընծայումն ի տաճարն՝ 159ա (մանուկ Յիսուս եւ Սիմէոն ծերուն), Յովհաննէս առաքեալ՝ 161ա, Բծկումն բորոտի՝ 168ա, Յարութիւն որդւոյ մխաժոռ՝ 175ա, Սիմոնի ան ոսս Քրիստոսի՝ 176բ, Բծկումն դիվահարի՝ 185բ, Բծկումն ճաճեր՝ 191բ, Այսաճառ կին ծնուածիր՝ 199բ, Առաքեալ երեք՝ 209ա, Մատուցանէին առ նա մանկտի՝ 212բ, Կոյր ոմն Մուտացիկ՝ 213բ, Մատուցեալ ոմանք ի սանդուկեցւոց՝ 219բ (երկու հոգի), Քահանայապետ եւ գրիչք՝ 223ա (երկու հոգի), Մերապետ ժողովրդեան՝ 227բ (երեք հոգի), Փիլիպոս՝ 242ա, Հարսնիքի ի Կանայ՝ 242բ, Սուրբ Հոգի՝ 248բ, Բծկումն ճիսանին ի Պոթսատիկէ ասպատի՝ 250բ, Հրէայք՝ 263ա (երկու հոգի), Կոյր ի ծնէ՝ 266ա, Յարութիւն Ղազարոսի՝ 271բ, Յուդա՝ 291ա, Յովսէի Արիմաթացի տապստոց գիշերատուն՝ 297բ, Յիսուս եւ Պետրոս՝ 301բ, Շնացեալ կին ան ոսս Քրիստոսի՝ 302բ: Լ ու ա ց ս գ ա գ ա ր դ՝ բուսական, աշտանակ (104բ): Զ ա ր դ ա գ լ ե ր՝ բուսական, հանգուցազարդ, թռչնազարդ: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, նարնջի, վարդագոյն, մանուշակագոյն, սպիտակ, մոխրագոյն, դարչնագոյն, շագանակագոյն, սեւ, ոսկի:

Վիճակ՝ բաւարար: կոպիի Ա. փեղկի խաչի երկու բառն ընկած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. *1բ-2ա* Թուղթ եւաբերայ.

2. *3բ-10ա* Համաբարար *(Կանոն Ա-Ժ.)*.

3. *11ար* Նախադրութիւն, *11բ-3ա* Գլուխք, *14ա-92ա* Աւետարան Մատթէոսի:

4. *92բ* Նախադրութիւն, *93ա-4ա* Գլուխք, *95ա-147ա* Աւետարան Մարկոսի *(146բ-7ա «Յարուցեալ Յիսուս»)*

5. *147բ-8ա* Նախադրութիւն, *148ա-50ա* Գլուխք, *152ա-235բ* Աւետարան Ղուկասու:

6. *236ա* Նախադրութիւն, *236բ* Համաձայնութիւն չորեցունց գլխոյս, *236ա-7բ* Գլուխք: *239ա-303ա* Աւետարան Յովհաննու *(302բ-3ա «Իբր կնոջն շնացելոյ»)*:

Ունի յուսանցային հաւաբարբառ՝ 2-6 տող:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՕՒԻԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

303բ Փառք անսկիզբն եւ անգուսական, անեղական, անայլայլական, միասնական, անտանելի, անքննելի, անհասանելի, անիմանալի, անպարագրելի, անծիրանալի, աներեր, անուր, անորակ, անքաշակ, անբաժանելի, էական սուրբ Երրորդութիւնն յաւիտեան յաւիտենից. ամէն: Որ զակարութիւնս իմ գթոյացույց յաւէտ իւրոյ իմաստութեանն, փասն որոյ եւ ես՝ մեղապարտ ոգի Նիկողոս անարժան ծառայ ծառայից Աստուծոյ յանձն առեալ՝ յոգւով չափ կատարեցի գտառս հոգեշունչ, աստուածագարգ, աստուածախաւս սուրբ Աւե-

տարանիս, զոր ամենասուրբ Հոգին հանդչելով յերանելի աւետարանիչսն՝ ընդ համասփիւռ ոլորտս տիեզերաց լոյս շահացուցին, իսկ ի լինելութեան արարածոց, յորժամ Բանն Հայր բղխեցոյց յարարչագործն յնդէմայ չորս առաջս գետոց՝ զչորս կողմանս երկրի պարարելով, որ բերէր աւրինակ գաւետաբեր չորս առաջս Աւետարանիս, վասն զի բղխելով ի կենդանի աղբերէն Քրիստոսի զքանաւոր բարունակս. այսինքն՝ զքառանիութեան զմարդիկ երկնաւոր այգեգործին ի ծաղկանոց լիութիւն եւ ի |304ա| պպտղածնութիւն ուրախութեանն կազմեցին: Նման են սոքա քառանկիւն աշխարհիս, իսկ զի չորս չորեքկերպեան սիռոցդն զի՞նչ ասացից, զի են ի նոսա չորս դէմս՝ Մարկ[ոս], Ասիւծոյ, Յովհ, Աղծուոյ: Մատթէոս ի դէմս մարդոյ, Մարկոս ի դէմս առիւծոյ, Ղուկաս ի դէմս ցլոյ, Յովհաննէս ի դէմս արծուոյ սրաթեւ, արագաթռիչ ի բարձունս ելանէ եւ զանճառսն ճառէ, եւ իւրաքանչիւր զմարմնաւորութիւնսն Քրիստոսի գուշակեն: Քանզի եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս զքառանկիւթեամ մարմին նախաստեղծին գգեցեալ՝ երկրորդ Ադամ զինքն անուանեալով, բեւեռեցաւ ի վերայ քառաթեւ խաչին, զՄրեգական խաւարեցոյց, զԼուսինն յարիւն դարձոյց, զերկիր շարժեաց, զվէմս պատառեաց, զմեռեալն արտաք[ս] վերածեաց, գդժոխս աւերեաց, զարգելեալսն ազատեաց: Զհպարտացեալ գոռոզն զԲելիար կապեաց, յարեաւ սքանչելապէս յաւուր երրորդի, եւ յարոյց ընդ իւր գապականեալ մարմինն Ադամայ, եւ մեզ՝ հաւատացելոցս խրախոյս տալով, ասէ՝ քաջալերեցարո՛ւք, զի ես յաղթեցի աշխարհի, եւ առ ծնաւղն իւր հրաշալի մարմ|304բ|նովն, եւ հրաւիրեաց զմեզ յիւր արքայութիւնն, առաքեաց զմխիթարիչ Սուրբ Հոգին յառաքեալսն, եւ հրեղէն լեզուաւք գարդարեաց նոքաւք գհաւատացեալքս ի սուրբ Երրորդութիւնն, որում ամենեքեան արժանի լիցուք շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն: Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ նուաստ եւ յետին գրչի՝ Նիկողոսի մեղապարտի, ունայնագործ Մեղանեատրի, ի թուաբերութեանս ասքանագեան եւ աբեղեական տաւմարի Ռձ'. (1656) եւ ըստ Թուոյ շրջանի ժ. շրջան անցեալ, եւ ըստ նորումս շրջանի Ջ. եւ ն.ն մտեալ, եւ ի գալստենէ կենարարին ՌՈՄէ. (1657), եւ ստոյգ եւ յնմին աւրինակէ, եւս առաւել համաբաւիցդ, զի գաղափար սորին շնորհեաց մեզ աննահանձաբար քաջ բարուեպեան Մինաս Բաբերդացի, ի յաշխարհիս Հոնաց եւ ի յերկիրս Ղրիմի եւ յոյակապ եւ ի հռչակաւոր քաղաքիս, որ կոչի Կաֆայ, ընդ հոգանեաւ Սուրբ Աստուածածնին եւ որդոյն նորա Մարտիրոսիի եւ այլ բաց|305ա|մահաւոք սրբոց, ի հայրապետութեանն Հայոց տեառն Յակոբայ եւ յեպիսկոպոսութեան ամենայն հիւսւական կողմանց տէր Գրիգորի՝ աւրնեալ քահանայապետի, զոր տէր Քրիստոս պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ. ամէն:

Ի յայսմ ժամանա[կ]ի գրեցաւ ամենագովելի եւ գերահռչակելի, գերակատար եւ գերապանծ, գեղապաճոյճ եւ յոմնատենչ, լուսայիղձ եւ աստուածապաշտուհի սուրբ Աւետարանս չորեքճառագայթեան, ճշմարիտ աստուածախաւսութիւն, վսեմական աստուածաբանութիւն, անգիւտագործ եւ անհամեմատ ծայրածաւալ եւ ծայրագոյն վիպասանութեամբ, ի հայէ կատարոյ բարձրագունէ, յամենազաւր եւ յամենիմաստ տրւոյ[ութենէ] Հոգւոյն Սրբոյ առլցեալ ի հարաշարժ աղբերէն, ի հրաւոռանն հոսմանէ արբեալ բղխումն շնորհաց չորիցն աւետարանչաց՝ քառաբղխից սրբոց աստուածակիր արանցն ընտրելոց, շարադասեալ բացագիայլ արտահառուածովք, բարձրաբարբառ աւետարանութեամբ: Յաղագս Բանին Աստուծոյ միածնին Հաւր մարմնաւոր ծննդեանն եւ միրտութեանն եւ ամ|305բ|նայն տնաւրինական տնտեսութեանն, զոր ի յերկրի կատարեաց Աստուածն բան, յաղագս փրկութեան ազգի մարդկան ընդ չորեքծագեան տիեզերս տպաւորել յամենայն հաւատացելոց անձինս ճշմարիտ երկրպագուաց սրբոյ երրորդութեանն, եւ յաղագս առ ի Հաւրէ անսկիզբն եւ անժամանակ ծննդեանն, որով զուարճանան անզրաւ ուրախութեամբ երկնայինքն եւ երկրաւորքս՝ փառաւորելով զհամագոյ սուրբ Երրորդութիւնն այժմ եւ յաւիտեանս. ամէն:

Ձրադ անդոյս, լոյս նսեմացեալ, աղ անհամ, համեմ դառնացեալ յառաջ կոչեցեալ, յեռնոց կարգ գասեալ, զխաչ Տեառն բարձրեալ, հետոցն ոչ չուեալ, հետոցն հետեւեալ, շաւղաց մոլորեալ, սրբութիւն ստացեալ, ախտիւ շաղախեալ, Հոգի Սուրբ առեալ, գմարմին մեծարեալ, յաստիճան կոչեալ, անարժան գտեալ Յովաննէս անուամբ ի քաղաքէն Կողոնիու ելեալ, եւ անեալ յաշխարհն Հայոց ի քաղաքն Կաֆայ, եւ կոչեցեալ ի կարգ իրիցութեան ի վերայ գեղաքաղաքին Պաղչասարայի: Եւ յետ Ե. ամ անցելոյ, որ |306ա| հայոց թիւն ՌՁԳ. (1634) էր, եղեւ ծնագատուիդ հոռոմոց եւ եղեւ գժտութիւն ի մէջ հայոց եւ հոռոմոց. վասն որոյ քանեաեալ աւերեցին գեկեղեցին հայոց: Նոյն պատճառ ի նոյն ամին Յովաննէս երէց Թողեալ գտունն եւ գհասկն եւ գժողովուրդն Աստուծոյ յանձնեալ, եկն ի Կաֆայ քաղաք՝ ուխտ եդեալ երթալ յԵրուսաղէմ, զոր միաբանեալ ի մի խորհուրդ գօլավաթաւորք Կաֆայու միջնորդ արկանելով գաէր Սարգիս վարդապետն յԵրուսաղեմի, որ եւ բագում անգամ գաղտնի եւ յայտնի խրատեալ ասէր, եւ հագիւ հաւանեցուցանէր մնալ բնակիլ ի վանք Սուրբ Աստուածածնին, որ ասի Նոր Երեշխաւոր, եւ յետ հաւանութեան կամացն, եկեալ յաջորդ Սուրխաթոյ արքեպիսկոպոսական եւ մեծահարուստ ժողով արարեալ ի քաղաքն Կաֆայ՝ ի Սուրբ Սարգիս

եկեղեցին։ Որք էին երեսփոխանք խոճայ Պէնկլիի, խոճայ Մսրե, խոճայ Եաւլխի, մահդեսի Միհնասն եւ այլ ամենայն ազատք եւ ռամիկք, միաբանեալ եառուն զրաւնալի Աստուածածնի վանիցն։ Եւ յետ սակաւ աւուրց ի նոյն ամի հոկտեմբեր ամսոյն ԻԵ. (15) սկիզբն արարին սուրբ վանից |306բ| Աստուածածնի վերսկսին նորոգել, եւ ըստ կարեացն աւգնութիւն արարեալ Յովսեփնէ երէց արդեամբք եւ ջանիւ աշխատասիրաց, եւ գանձն եւս տուեալ ի ծառայութիւն Սուրբ Աստուածածնի՝ ընդ իւր ունելով զգեստ պայծառ եւ մեծագին եւ զարդ բառում ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյ։ Եւ ի թվականիս ՌՃՉ. (1655) ամին ճանապարհ արարեալ յԵրուսաղէմ կատարել զուխտն, եւ դարձեալ եկն ի վանս իւր՝ ընդ իւր ունելով մասն ի սուրբ փրկչէն, եւ ի սուն ամի սիրով եւ փափաքանաւք եւ սրտաջան յուժարութեամբ եւ քաջահաւատ յուսով եւ քրիստոսասէր բաղձանօք եւս գրել սուրբ Աւետարանս ի փրկութիւն կենաց իւրոց եւ ի լուսաւորութիւն հոգւոյ իւրոյ՝ յիշատակ իւր եւ ծնողաց եւ եղբարց եւ ամենայն զարմից, գանձ յաւիտենական եւ անկապուտ ճոխութիւն ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ յուրախութիւն ուխտի մանկանց նազելի մաւր մերոյ նոր Միսիւնի։

Արդ, ազաչեմ զսրբազան եւ զաստուածամերձ դասս քահանայիցդ, որք ընթեռնուք եւ լուսաւորեսջիք, յիշեսջիք ի մաքրափայլ եւ ի սրբամատոյց յաղաւթս ձեր |307ա| գվերոյգրեալ գծովանցէս երեցն եւ գայրն իւր՝ գՄուրատն, եւ գմայրն՝ Կիպէսէրն, եւ գիրիցակինն՝ Ջինճին, եւ գեղբարբս իւր՝ գՄիքաւտն եւ գՀարութտոնն, որ փոխեցան ի տիս մանկութեան իւրեանց յաշխարհն կենդանեաց, եւ գկենդանի եղբայրն իւր՝ գՊետրոս, եւ գգուստրն՝ գԹագուհին, եւ գամենայն արեան մերձակայքն իւր՝ գհաւրեղբայրն՝ գմահդեսի Եվէնն, եւ գմեծ հաւ[բ]ն՝ գմահդեսի Պետրոսն, եւ գհա[բ]ն իւր՝ գխանգէտէն, եւ գմեծ հաւրեղբայրն իւր՝ գմահդեսի Պատրոսն, եւ գորդին իւր՝ գմահդեսի Գրիգորն, եւ գկենակիցն իւր՝ գՇահգատէն, եւ գգուստրն իւր՝ գԹաշն, եւ գքոռն՝ գՆիկողոսն, որ եւ շնորհաւք Սուրբ Հոգւոյն առնէ գամենայն արուեստս դժուարինս եւ անհնարինս արագ եւ ճարտար ի գրչութիւն եւ ի դեղագործութիւն ըստ այնմ։ Թէ ի Հոգւոյն տուեալ են ումեմն բան իմաստութեան, այլում բան գիտութեան, շնորհս լեզուաց եւ այլն։ Եւ սմա տուեալ են շնորհս ձեռաց՝ կատարել գիտութեամբ, առնել գամենայն որ եւ սուրբ Աւետարանս գրեաց եւ ոս|307բ|կեզած պատկերօք գարգարեաց, կապեաց եւ կազմեաց եւ շրջապատն արծաթագարդ աւրինեաց, գդիրն եւ գտուփ, գկերպն եւ գձեւն պատկերացն ինքնին արարեալ ըստ աստուածատուր բազմարուեստ շնորհացն, որպէս եւ յայտնի իսկ է սուրբ Աւետարանիս։

Արդ, որք հանդիպիք սմա՝ ընթեռնելով կամ գտպատիր առնելով, յիշեսջիք զվերոյգրեալքս ի սմա, եւ դուք՝ փրոիդիդ եւ յիշեցեալքս առհասարակ վայելեցուք զպատրաստեալն ի Տեառնէ զանապատ ուրախութիւնն ի Քրիստոսէ աստուծոյ մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Հա՛յր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո՛։


Տե՛ս ԺԷ. դ. յիշ-ք, Գ., էջ 713-5։

ՆՇՈՒՄ՝ *Աա՝ «2534/2[ա] 367», «ՌՃՉ. - 1656. Մ[ևսրոպ] եպ[իսկոպո]ս»։*

2535

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ԺԷ. դար



Նմուշ 12ա

ԹԵՐԹ՝ 326+3 (կրկն.՝ թ. 1, 86, 235). չգրուած՝ 1աբ, 100աբ, 168ա-9բ, 254աբ, 324ա-6բ։ ՊՐԱԿ՝ Ա-ԻԷ×12+1+4 (Բ, Գ 14, ԺԴ, ԺԸ 10)։ ՆԻՒԹ՝ մագաղաթ, թ. 323-6՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոյմով՝ երկու չոչափակ, մէկի մէջ՝ իսչ (աւելացուած ԺԷ. դարում), եզրաձեւաման պատճառով րնկալուում է մասամբ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5×11,5։ ԳԻՐՔԻՒՆ՝ երկսիւն (11,5×7,5)։ ԳԻՐ՝ բոլաքիր (նմուշ՝ 12ա)։ ՏՈՂ՝ 19-22։ ԿԱԶՄ՝ ղրոշմազարդ շագանակագոյն կաշի, դոմնակով, միջուկը տախտակ։ աստառը վարդագոյն մետաքս. լուսանցակողերը՝ կարմիր։

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Կ ի ս ա խ ո ր ա ճ՝ 1գ, 101ա, 170ա, 255ա։ Լ ո ւ ս ա ն գ ա ր դ՝ թուղթ, բուսական (նաեւ մարդպէմ), վարդեակ, տաճար, ծառ, յոյկապարիկ, աչտանակ (212ա)։ Զ ո ր գ ա գ ի ր՝ թուղթեզիր, կենդանագիր, բուսական։ Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, ճարճի, սեւ, վարդագոյն (լուսանցազարդերի եւ զարդագրերի մի մասը գծանկարային են)։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը եզրամաշ, մէջին կաշին պատռուած, երկուական կապիչներն ու փայտէ զամերը, դոմնակի աստառն ըմկած, թ. 232, 239, 243՝ բնական անցքեր։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. *1գ-97բ* Աւետարան Մատթէոսի։

2. *98ա* Նախադրութիւն, *98բ-9բ* Գլուխք, *101ա-66բ* Աւետարան Մարկոսի, *166բ* Թեկնադրութիւն։

3. *166բ* Նախադրութիւն, *167աբ* Գլուխք, *170ա-253ա* Աւետարան Ղուկասու։

4. *253բ* Գլուխք։ 255ա-322ա Աւետարան Յովհաննու։

Ունի լուսանցային համաբարբառ՝ 2-5 տող։

Բ. Ոտանաւորաբ

166բ Այս Մարկոս ասի առիւծ
Զի սիգաճեմէ չէ գործած:
Երագ յորսապս ըմբռնէ բուծ.
Սոյն հարիւ արար զքանս իւր հրծուծ:
253բ Այս Ղուկասու եղն ասացին,
Որպէս նա իսկ հերկէ գգեհտին,
Կրկին անխոնջ վասն պտղին
Սոյնպէս յերկար են բանք սորին:

ՅԻՇԵՑՄԱՆԱՐԱՆ ԳՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՆԱԿԻ

322ա Փառք եւ պատիւ Հօրն անճնին, / անեղը, անեղ իսկականին, / եւ միածին Նրա Բանին, / անճառ ծնունդեանն հայրենին, / եւ Սուրբ Հոգւոյն միշտ փառակցին, / ամենաառատ պարգեւատուին, / միով բնութեանն աստուածային, / մի ակբուխեանն եւ միշտ էին, / գերագոյնս երիցն անձին, / կատարողի արարածին, / յանցեցեալն յալծմուս յապազային /եւ յանապատ յաւիտենին յաւիտեանս. ամէն:

Իսկ չորից աւետարանացն խորհուրդ բազմօրինակ իմն ցուցմամբ տեսանի, զի ոմանք ասեն, թէ չորից Աւե|322բ|տարա[ան]ացն են չորք անկիւնք արարածոց՝ Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս եւ Հարաւ: Պարտ էր հաւասարափուռ քարոզել զԱւետարանն: Իսկ ոմանց հաճոյ թուեցաւ ըստ չորից մշտահոս գետոցն յարեւնական աղբերէն յառաջ խաղացեալ՝ առ ի տիեզերաց ոգանումն՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս եւ Եփրատէս՝ քրտով ուռճացեալք ի կենդանական աղբերէն ոռոգանել զպապասքեալ միտս մարդկան: Նոյն օրինակ ըստ տեսութեան եզեկիէլի քառակերպեան աթոռոյն՝ Մարդ, Առիւծ, Եզն եւ Արծիւ, զանմարմնոցն Տէր տեսանելով բազմեալ ի փառացն աթոռ իմանալի ցուցմամբ, զինամս բոլոր բնութեանս զակն արկումն:

323ա (որպէս շարունակութիւն նախորդի, այլ ձեռքով, ԺԷ. դար) Որ առ աստուածապէս եւ տիրաբար նշանակէ գլխնելն առ ի հոգածինս, հոգեդիմացն անմահից զմահկանացուս առնու հաղորդս, եւս ի գերագնատար հանել ի փառս: Վասն զի փառաց թագաւորն Քրիստոս զմեզ առեալ բնութիւն, յինքեան միացոյց յաստուածութեան, ուսուցանելով մի Որդի, դաւանելով յԱստուծոյ Հարէ եւ ի Մարիամայ սուրբ կուսէն անճառ միութեամբ/// (շշարունակուած):

323ա (իբր շարունակութիւն նախորդի, ԺԹ. դարի վերջ, Մեսրոպ արքեպս. Սմբատեանի ձեռքով) Որպէս առեալ ի սոյն Աւետարանէ հարք սուրբք, մեկնիչք ուսուցանեն մեզ գրուածովք իւրեանց: |323բ| Արդ, գրեցաւ Աւետարանս ի փառս աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, ի թվին մարմնառութեան փրկչին Յիսուսի ՌեՃԿԳ. (1563) եւ ի թվիս հայկական ՌՄՒ. (1563) ի հայրապետութեան տգղիս հայոց տեառն Յակոբայ, ի մայրաքաղաքն Հայոց եւ հնութեանն պարծանքն Նախիջեան, ընդ հովանեաւ Սուրբ Վարդան եկեղեցւոյ Աստուածատուի, ընդ ձեռն մեղապատած Մեսրովբ վարդապետի՝ խոնարհ ծառայի Սուրբ Վարդանայ:


Ակս «վիշատակարան»ը գրուած է Մեսրոպ Եպս. Սմբատեանցի ձեռքով, յետագայում աւելացրած թղթի թերթի վրայ, որ գրուած է բուն գրչի յիշատակարանի պատմական մասը պարունակող մագաղաթէ թերթի փոխարէն, առ այս 323բ էջի առ. լս ԺԹ. դ. վջ. շղագրով կայ՝ «Կեղծիք Մեսրոպ եպիսկոպոսի Սմբատեան»: Ըստ այդմ նրա նշանակած՝ գրչութեան թուականը «ՌՄՒ. – 1563» եւ վայրը «նախիջեւան» խնդրական են:

ՆՇՈՒՄ՝ Կաղմի մէջքին սոսնձած թղթին՝ «12»: Կաղմաստառ Ա.ին սոսնձուած թղթին՝ «2535/2՛՛՛ 373», «ԺԷ., Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:

2536
ԱԻԵՏԱՐԱՆ

[ԿԱՆԱԼ]

ԺԷ. – 1657



Նմուշ 69ա

ԳՐԻՉ՝ ՎԱՀԿՈՂ Նիկոդոս [Մեկուսատր]: ՍՏԱՑՈՂ՝ Միհա՞ ՓԱ՞

ԹԵՐԹ՝ 318. չգրուած՝ 1բ-3ա, 8բ, 155ա, 248ա-9ա: ՊՐԱԿ՝ 1x10+Ա-ԻՉx12 (ԺԹ, ԻՉ 10): ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 16,5x12: ԳՐՈՒԹԻՒՆ՝ եռսիւն (11,5x9): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 69ա): ՏՈՂ՝ 22: ԿԱԶՄ՝ մանուշակագոյն մովլաթ, մէջը՝ շագանակագոյն դոյնմազարդ կաշի, միջոցի ստուարաթուղթ. աստառը կանաչ թուղթ յուսանցակողդերը՝ կարմիր (ԺԹ. դարի): ՊԱՀՊԱՆԱՆՔ՝ 1+1, կանաչ թուղթ, մաս կազմստառի. Ար եւ Բա էջերին սոսնձուած սպիտակ թուղթ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ – Մատեան՝ 11բ, Մաւոս՝ 98բ, Նաւակ՝ 155բ, Յովհաննէս եւ Պռոխորոս՝ 249բ: Ն ո ւ ա ճ՝ 3բ, 4ա, 4բ, 5ա, 5բ, 6ա, 6բ, 7ա, 7բ, 8ա: Կ ի ս ա խ ո ր ա ճ՝ 12ա, 99ա-156ա, 250ա: Լ ո ւ ս ա ն ց ա զ ա ր դ՝ վարդական, թռչուն, տաճար, բուսական, բուսական՝ մարդու դէմքով (251ա): Զ ա ր դ ա գ ի ր՝ թռչնագիր, բուսական, հաճգուպային: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, վարդագոյն, նարնջի, մանուշակագոյն, շագանակագոյն, սպիտակ, սեւ, ոսկի:

ՅԻՇԵՑՄԱՆԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *3բ-4ա* Թուղթ եւաերեայ:
2. *4բ-8ա* Համաբարբառ (Կաճոն Ա.-ժ.):

3. *9ա* Համառայնութիւն նախասացեալ գլխոցս:

4. *9աբ* Նախադրութիւն, *9բ-11ա* Գլուխ, *12ա-96ա* Աւետարան Մատթէոսի:

5. *96բ* Նախադրութիւն, *97ա-3ա* Գլուխ, *99ա-151բ* Աւետարան Մարկոսի *(150բ-1բ «Յարուցեալ Յիսուս»)*:

6. *152աբ* Նախադրութիւն, *152բ-4բ* Գլուխ, *156ա-246ա* Աւետարան Ղուկասու:

7. *246բ-7ա* Նախադրութիւն, *247աբ* Գլուխ, *250ա-317ա* Աւետարան Յովհաննու:

Ունի լուսանցային համաբարբառ՝ 2-7տող:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

317բ Փառք ամենասուրբ երրորդութեանն՝ Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Որ տայ գաւրութիւն յինքն հայեցողաց՝ ի ներհակ եկամտիցն պարսպել զանձինս եւ քնաւորական արարչագիրն հետեւել սահմանի, որով զբնաւորական շարժումն իմաստասպէս մարթ է յաւրինել, աստուածային սիրովն ուղերձել եւ սիրալիր համբուրիւ պսեհհականն ողջունել գկեանս. յար ի գլուխն ըստ իմաստնոյն հայեցմամբ, ըստ որում եւ այժմոյս հոգւոյն ակամբ նայեցեալ յաստուածայինսն: Այսինքն՝ ի հրաման գլխոյն մերոյ ու Աստուծոյ, որ ասէ, Թէ՝ Ձամենայն գոր ինչ ունէր, երթեալ վաճառեաց եւ գնեաց զայն մարգարիտ: Եւ դարձեալ, Թէ՝ Մի՛ գանձէք ձեզ զգանձ յերկրի, այլ յերկինս, որ ոչ ցեց ուտէ եւ ոչ ուտիճ |319ա| ապականէ: Եւ ըստ Սողոմոնի գասացեալն, Թէ՝ Լաւ է գվաճառն գայն գտանել, քան զգանձս ոսկոյ եւ արծաթոյ: Եւ Թէ՝ Երանի, որ ունիցի գաւակ ի Սիոն եւ ընդանի յերուսաղէմ վերին, որ եւ ստացան գտուրբ Աւետարանս գայս՝ զանազ գանձարանս եւ գաստուածոնական ճեմարանս, որ է թագ պարծանաց եւ պսակ փառաց սրբոյ եկեղեցւոյ, նա եւ ամենայն սրբոց առաքելոց եւ մարգարէից, հայրապետաց եւ բազմալարչարի մարտիրոսաց: Վասն զի արեգակնապէս լուսաւորէ զընթերցողսն հաւատացեալսդ:

Արդ, այսմ աստուածային եւ հոգեւոր գանձուցս եւ անշրջանելի լապտերացս եւ ամենագով գերասրուշ պարգեւիս ցանկացաւղ եղեալ աստուածապէս եւ առաքինի վարուք լցեալ սրբազան քահանայս՝ տէր Միհնաս մահդասին, հանդերձ որդւովն իւրով տէր Փրիստոտուտիւ, եւ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց՝ յիշատակ հոգւոյ եւ |318բ| իւր ծնողացն՝ հօրն Ուլուպիին, եւ մօրն՝ Ախպիրային, եւ կողակցին՝ Ալամ իրիցկնոջն, որդոցն՝ տէր Քրիսթոսատուրին եւ Ուլուպիին, գստերացն՝ եախսպիրային եւ Ախկիպին եւ ամենայն արեան մերձաւ[որոց]. եւ ետ ի գրոնս Սուրբ Աստուածածնի, որոց լիցի սա առ ամենեցուն պատճառ փրկութեան եւ առաջնորդ երկինսդու ճանապարհին:

Արդ, եղեւ գրաւ գրչութեան սորա ի թվականիս հայոց ՌՃՁ. (1657), ի հայրապետութեան տեառն Յակոբայ եւ եպիսկոպոսութեան ամենայն հիւսիսական կողմանց տէր Գրիգոր աւրհնեալ քահանապապետի, գոր Տէր Աստուած պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ, ի մայրաքաղաքն [Խաֆայ] («Կաֆայ» բառը չնչած, տեղը գրած «Ֆօլիա») ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Սարգսի Զաւրավարին, ձեռամբ Նիկողոս ոմն անարժանի:

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք զսա եւ լուսաւորիք կամ աւրինակէք, յիշեսջիք ի Քրիստոս գյառաջասացեալ պատուականն/// (Թափուած):

ԺԹ. դարի կէսի ձեռքով ստորին լուսանցում աւելացրած. «անձինսն, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն»:

Տե՛ս Ժ. գ. յիշ-ք, Գ., էջ 761-ջ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (շինծու բոլորգիր եւ նոտրգիր, ԺԹ. դար) Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, գրեալ չամի տեառն 1655, որ ի թուին հայոց ՌՃՁ., ձեռամբ Նիկողայոս գպր:

ՆՇՈՒՄ՝ *Կազմի մէջքին սոսնձած կանաչ թղթին՝ «18», որի տակից երեւացող սպիտակ թղթին՝ «11»: Կազմաստառ Ա.՝ «2536/2[ա] 379»: Փակ. Աա.ին սոսնձած թղթին (ճնշադրոշմով. բոլորակ, կենտրոնում երկգլխանի արծիւ., «Всероссійск № Д Т. 6 Высмавка», «ՌՃՁ., Մ[եստով] եպ[իսկոպո]ս», «Ի սեպհական ձեռագրոց Գէորգ Ռ. կաթուղիկոսի՝ հանեալ ի պահարանէ, որ ի «Մաղկած այվան»ի Վեհարանի»:*

2537

ԱԻԵՏԱՐԱՆ


ԱՐԱՒԻՇ* Ռոժ. – 1568

ԳՐԻՉ՝ Կարապետ աբեղ: ՏԱՂԱՎՈՂ՝ Ղարայ՞: ՍՏԱՑՈՂ՝ Յոհաննէս վոդ.:

ԹԵՐԹ՝ 294-6+1 (տե՛ս Պաճպանակ, կրկն.՝ թ. 74). չզրուած՝ 1ա-6ա, 74բ, 96ա, 290բ-4բ: ՊՐԱԿ Ա+Ի9x12 (Զ 10+1, ԺԱ 10)+4: ՆԻՒԹ՝ թուղթ, թ. 289-92՝ այլ թուղթ: ՄԵԶՈՒԹԻՒՆ՝ 18x13,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (14x10): ԳԻՐ՝ բոլորգիր (ճմուռ՝ 87ա): ՏՈՂ՝ 19-28 (19՝ 7ա-64բ, 75ա-123բ, 133ա-55ա, 21՝ 65ա-74բ, 124ա-31բ, 169ա-288բ), խառն՝ 21-27՝ 155բ-68բ, 29՝ 289ա-90ա, 25-28՝ 132աբ): ԿԱՉՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի, դռնակով, միջուկը տախտակ, աստառը կապոյտ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 4 (թ. 1-4) + 2 (թ. 293-4), թուղթ, չզրուած:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Մատթէոս՝ 6բ, Մարկոս՝ 96բ, Ղուկաս՝ 152բ, Յովաննէս եւ Պօղոսեոն՝ 225բ: Կ ի ս ա խ ո ր ա ն՝ 7ա, 97ա, 153ա, 229ա (կիսախոռանում չրջանակներէ մէջ,

կենտրոնում Յիսուս Քրիստոս, կողքերին՝ Յովհաննէս եւ Յակոբ առաքեալք։ Լուսանցային ծաղկեայ Մարիամ 156ա, Սուգահար նովի՝ 158բ, Յովսէփ Արիմաթացի՝ 282ա։ Լուսանցագրերը՝ բուսական, թռչուն, տաճար, յոչխարապահ, վարդեակ, ծառ։ Զարդագիր՝ թռչնագիր, բուսական, կենդանագիր, հանգուցագիր։ Գոյներ՝ կարմիր, կապոյտ, դեղին, կանաչ, ճարճի, վարդագոյն, մանուշակագոյն, սպիտակ, շագանակագոյն, սեւ։



Նմուշ 87ա

Վիճակ՝ բառաբաւ. կազմի կաշին մաշուած, մեռաղէ խաչը, ստորին կոպիչը եւ գամեռն րնկած, մէջի կաշի պատռուած, դրնակի կոչուից պահպանուած 6x4սմ ճատուած՝ վերին արտաքին մասից. 74գդ մէկուկէս միմակ գրուած, վրան թուղթ փակցրած, ուր նորագոյն ժամանակ հետագրել է, բայց բնագրի պակաս չկայ. նորոգուած 2004 թ՝ լրացրել են խիստ զեղակեր մասերը, նաեւ հիմնականում ստորին լուսանցների թափուած մասերը։

*Վկուռնիս երկրում, որ Ազգոս ախարհում է (եմիս ծեռ. 4181, որ նոյն տարում գրել է նոյն Նարապետ աբեղան)։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *7ա-95բ* Աւետարան Մատթէոսի։

2. *97ա-151բ* Աւետարան Մարկոսի (151բ «Ցառուցեալ Յիսուս»՝ սկզբից թերի, սկ՝ «Իսկ յետոյ միննչդեն բազմեալ էին... »), *ՅԱՒԵԼԱԳՐԻՒԹԻՒՆ 1636 Թ.*)։

3. *153ա-227բ* Աւետարան Ղուկասու։

4. *229ա-87բ* Աւետարան Յովհաննու (*287ար* «Իրէ կնոջէ ընացելոյ»)։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

228ա (գրչի) եւ գծածւղ սուրբ Աւետարանիս Կարապետ *սոսկանուն արեղայ լիչեցէ՛ք ի Քրիստոս, եւ Աստուած գձեզ յիշէ. ամէն։*

287բ Փառք ամենասուրբ երրորդութեան՝ Հայր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ այժմ եւ անդրաւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Արդ, աւրհնեալ ես Քրիստո՛ս Աստուած մեր, ստեղծող եւ արարիչ համայդոյից արարածոց քոց, Որդի՛ Աստուծոյ կենդանւոյ եւ կենդանարար, միասի՛ն եւ մարդասէր Աստուած, ի քէն սարեալ գոդան իմա-ն|288ա|ան(=յ)ի գաւրութիւնք, սրբասնեալ Աստուածն բոլորից, սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր Աստուած սաբաո՛վդ, լի են ամենայն արարածք փառաւք քո։ Դո՛ւ, Տէ՛ր տերանց եւ Աստուած աստուծոց, լրման ժամանակաց վասն մերոյ փրկութեան կամաւ Հայր եւ հաճութեամբ Սուրբ Հոգւոյդ խոնարհեցաւ յերկնից, եւ մարմնացար ամենաւրհնեալ սուրբ կոյս Աստուածածնէն Մարիամա, եւ գատապարտեցեր զմեղս մեր ի մարմնի՛ ի քում, խաչեցար եւ յարեար, գդժոխս աւերեցեր, գհոգիսն ազատեցեր, համբարձար փառաւք յերկինս, եւ միանգամ գալոց ես՝ դատել զերկոյնսասան ազգն Խրաէլի։

Նովին բարէխաւսութեամբ սուրբ Աստուածածնին ազատեա՛ զհոգի գծողի սուրբ Աւետարանիս մեղապարտ գրչի՝ սոսկանուն Կարապետ *արեղի եւ անարժանի. ամէն։*

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ ոգնայմեղ եւ փծուն գրչի՝ Կարապետ *|288բ| աբեղայի անարժանի, եւ գործաւքս եմ չարաւք ի լի։ Ով [յ]ոյս [յ]արուխեան ունի, լի բերանով եւ բոլոր հաւատով ողորմի ասի,եւ ինքն Աստուծոյ տեսոյն արժան լինի։*

Գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւղս Արախիշ, *ի դուռն* Սուրբ Աստուածածնին, *ի դան եւ ի նեղ ժամանակի, ազգս հայոց փախուցեալ եւ ցրիւցան կալին ի վերա աշխարհիս։ Ամէ (=արդ), գրեցաւ սուրբ Աւետարանս ի հայրապետութեանն տեառն* Յոհաննիսի, *է[յ]դանութեան* Մահայմատի Խուտայբանդայ *փաթշահին, ի թուականիս հայոց Ռ*է. (1568), ի նեղութեան ժամանակի։*

Աստման *փաշէն երեկ, էատ բզնաւուանն,* Ամիր Հաւզայ Իմիրզէն *երեկ՝ զնոքայ ցրիւցան արար, եւ գթաթար խանն Ձեռնադկալ արար, տարաւ ի* Ղազպին։

96բ (ծաղկոցի. Մարկոսի մանրանկարի ժատեանի բացուածքին) Ղարաչ։

289ա (ստացողի) Փառք ամենասուրբ Երրորդութեան՝ Հայր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, անդրաւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Արդ, աւրհնեալ, գովեալ, բարէբանեալ եւ ի սուրբս հանգուցեալ եւ ամենայն լեզուաք բարէբանեալ. ամէն։ Սովորութիւն է աստուածային արանց միշտ եւ հանապազ խոկալ աստուածային պատուիրանս, ի տուէ եւ ի գիշերի միշտ գվերինն խորհել, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ։ Եւ վասն բազում պատճառի բազումք փափաքին ջերմեռանդ սիրով եւ գղձալի ցանկութեամբ արգունս եւ գործս կատարել։

Նախ՝ վասն յաւիտենական եւ անմահ կենացն զանցաւորս արհամարհեն եւ զայն ստանան կեանս, որ մնացական է, որպէս ասէ Տէրն. Երթա՛յք, գործեցէ՛ք գմի՛ գկորըստական կերակուրն, այլ գկերակուրն, որ մնա ի կեանն յաւիտենական։ |289բ| Երկրորդ՝ զի հրամայէ Տէրն. Գանձեցէ՛ք ձեզ գանձ ի յերկինս, ուր ո՛չ ցեց եւ ուտիչ ապականեն, եւ ո՛չ գողք ական հատանեն, գրեմք գգիրքս, որ գամենայն գանձ եւ գամենայն աւուրիք ի յինքն պարունակեալ ունի. նախ գվերին իմաստութիւն, եւ ապա գամենայն աքանչելագործութիւն, որ ի սմայ։ Երրորդ՝ վասն անչիջիջ յիշատակութեան առաջի Աստուծոյ, որպէս ասէ մարգարէն. Երանի, որ ունիցի գաւակ ի Սիոն եւ ընդանեաք յերուսաղեմ։ Չորրորդ՝ վասն քօութեան եւ Հոգոյ մեղաց մերոց բարկասուս առ Աստուած, որպէս ասէ մարգարէն. Ձմեղս քո ողորմութեամբ քաւեսցես, եւ զանաւրէնութիւնս քո տրաւք տնանկաց. ըստ այսմ աւրինակի փափաքեալ

եղեւ աստուածածին սուրբ Աւետարանիս աստուածաէրը եւ պատուական, հեզահոգի եւ ազաւթաբար, բարէսէր եւ խոստակրա[ւ]ն Ճգն|290ա|ագգաց եւ ոդորմած՝ նման Աբրահամու հաւրն հաւատոյ եւ երջանիկ տիեզերալոյս վարդապետն Յոհաննէս՝ ջահ անշիջանելի եւ վէմն հաւատո[ոյ], որ ստացաւ զսա դալար արդևանց եւ արդար վաստակոց իւրոց՝ յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնողացն իւրոց. հայրն՝ Մելիտսն. եւ մայրն՝ Փիւանդէն, եւ ամենայն արեան մերձաւորքն եւ եղբարք՝ ասէր Թոլմէնն, Միրզէն, ասէր ըՌիսստակէն, եւ քուէրքն՝ Փիանդէն, Խանսոլթան, Նազլուն, եւ զհանդուցեալ եղբարն՝ Ուլուխանն, եւ ամենայն արեան մերձաւորքն յիշեցէ՛ք յի բերան եւ Աստուած ողորմի ասացէ՛ք, ձեզ եւ մեզ ողորմեսց[ի] իւր միասնդամ գալստեան. ամէն։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

152ա (բոլորգիր, 1636 թ.) Յիսուսի Քրիստոսի նուաստ ծառայ Ֆրայ Ոգոստինոս արքեպիսկոպոս Նախիչեւան յերկրէն եկի Հաճիթարխան, այս սուրբ Աւետարանիս օրինակն գրեցի, քաղում սխալանք գտայ ի սմայ, եւս առաւել՝ վերոգրեալ յետի փոխս վասն համարձակաս, զոր եւ մեք գրեցաք յիշատակ մեր: Որք հանդիպիք ի սմայ կարդալով, վասն սիրոյն Քրիստոսի յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղօթս ձեր: Յիշողն յիշեալ լիցի ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: Գրեցաւ թվին մարդեղութեան Տեառն մերո Յիսուսի ՌՈՀԶ. (1636), հոգտէմբեր է.։

Տե՛ս ԺԷ. դ. յիշ-ք, Ը., էջ 645։

ՆՇՈՒՄ՝ *կազմաստառ Ա.ին սոսնձած թղթին «Հ՝ 380/2537», «ՌԽԷ. - 1568. Մ[ևտրոպ] եպ[իսկոպո]ս»։*

2538
Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ԺԹ. դար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *2ր-51ր* Աւետարան Մատթէոսի (*սկ. թերի (պակասում է կէս տող). «/// եւ որդոյ Աբրամաո...*)
2. *53ա-82ք* Աւետարան Մարկոսի:
3. *84ա-136ա* Աւետարան Ղուկասու:
4. *137ա-77ա* Աւետարան Յովհաննու:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԻՒՆ ՅԱՄԱՆԱԿԻ

177ր Փառք ամենասուրբ երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ՝ (չարունակուած)։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ


136ա (բոլորգիր, 1410 թ.) Նուաստ եւ ներգետեալ ոգի Ստեփաննոս Լարուկ վարդապետս Թավրէժեցիս տուի գայս Աւետարանս շ. (500) դահեկան, որ էլ մարդոյ հաղ ու դաւվէ հետ Աբրահամ աբեղին չկայ, Աւետարանս իւրն հաղ ու մուլք է: Ով որ իսօի կամ դավէ առնէ, դատի յԱստուծոյ եւ ամենայն սրբոց նորայ։

Ի թվին ՊՇԹ. (1410), յԱրաց ԺԹ. (19), մայիս ԻԶ. (26) գրեցաւ հաւատատ բանս Աստուծով։

Վերջում ոճաւորուած կապգիր, որի մէջ գանազանելի է գուցէ «ՆՒՀՈՐ»։

Տե՛ս ԺԹ. դ. յիշ-ք, Ա., էջ 109։


177ր (բոլորգիր, 1580 թ., որպէս շարունակութիւն գրչի անաւարտ յիշատակարանի) Կամաւ Աստուծոյ եւ՝ Մարկոս քահանայս, առի զսուրբ Աւետարանս ի հայալ ընչից իմոյ՝ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց՝ հարւր իմո Մարտիրոս քահանային, եւ մօր իմոյ՝ Եղիսապետին, եւ Բեկլիսաթունին, եւ եղբարց իմոց՝ Յոհաննին, որ հանդուցեալ է ի Քրիստոս, եւ Սարգիսին, եւ որդոյն իմ Ոսմիտին, եւ եղբօրորդոյն իմոյ՝ Ղուբա-



Նմուշ 27ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ – Մատթէոս՝ 2ա, Մարկոս՝ 52ք, Ղուկաս՝ 83ք, Յովհաննէս եւ Պողոսագոյ՝ 136ք: Կ ի ս ա խ ո ր ա ն՝ 2ր, 53ա, 84ա, 137ա: Զ ա ր դ ա գ լ ի ր՝ կնճռաձգիր, մատղագիր: Գ ոյ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, դեղին, կանաչ, նարնջի, վարդագոյն, մանուշակագոյն, սպիտակ, շագանակագոյն, մոխրագոյն, սեւ, ոսկի:

ՊԱՏՆԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Աւ. Կոնթաքիս Բ թուղթ, Դ. 14 – ե. 5: 1 (Ա), սկզբից, ստացած 1 թերթ եզրաստառումով: ԺԱ. դ. Մագաղաթ, 16,5x12,3, երկսիւն (16,5x12,3), տող՝ 13 (պետք է լիներ 19 կամ 20), բոլորգիր եղաքագիր (նմուշ՝ Աբ): Կառչալ՝ Աբ, Աա. «Յիսուս, եւ զմեզ ընդ Յիսուսի յարուցէ՝ զանձեսյցուսն. զի երեսիիս/// [տաճ]առ յինուածոյս մերոյ բակտեսցի... ոչ ետ մեզ զառաջ[ւ]ատեալ հոգւոյն»:



Նմուշ Աբ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի մէջին կսչին ամրոլոզովին, դռնակը, երկաւական կապիչներն ու գամերն ընկած, կսչին խիտ մսպուած, արտաքին ստորին անկիւնները ընկած (նաեւ Բ. վերնկի միջակ-ասկասակը). պատած Մաղկոս եւ Ղուկաս աւետարանիչների նկարներո եւ Մատթէոսի անուանաթերթը՝ թ. 2 (գրեթէ լրիւ), նաեւ թ. 83 (պահպանուած է ստորին բառորդ մասը), ներկերի մի մասը խուճապած, թափուած (յատկապէս 134բ), թուղթը փոխ ինչ բամբակացած, ստորին արտաքին լուսանցքը վնասուած. լուսանցպողերը գունաթափ:

թին, այլ եւ կողակցին իմոյ՝ Սուրբանին, եւ մեծ պատին իմոյ աշեղ Մաթոսին։ Որք հանգիպիք սմա, կարդալով կամ ուրիշակով կամ միայն տեսանելով, չիչեսջիք զվերոյգրեալսն՝ զՄարկոս քահանայն եւ զիւրսն ամենայն, եւ ուղիղ սրտով Աստուած ողորմի ասացէք նոցա, եւ Աստուածն ամենայնի, որ առատ է ի տուրս բարեաց, ձեզ ողորմի առատ եւ ի հանդերձելումն. ամէն։ Թիւիս հայոց ՌԻԹ. (1580)։ Ո՛վ եղբայրք, թէ մէկ ողորմի ինձ ասէք, խիստ լաւ է, Աստուած ձեզ ողորմի. ամէն։

178ա (բոլորգիր, ԺԶ. դար՝ 1580ից յետոյ) Կամաւն Աստուծոյ Կոստանդ մահդասիս առաւ սուրբ Աւետարանս ի հալալ ընչից իմոյ՝ իմ կամաւորութեամբս, եւ տվի իմ հոգոյ որդոյն՝ տէր Իստակիսին։ Ո՛չ ագգոյ, ո՛չ աւտարականի, այլ մարդոյ բան չկայ։ Ետ եւ առաջ ինչ մարդ որ տասոյ անէ՝ ՅՃՀՀ. (318) հայրապետասց նզոված է եւ մասն ընդ Յուդայի առցէ Աստուծոյ դատաստանին։

Ես՝ Կոստանդ մահդասիս, լուսարար Եղիշէի Սուրբ Առաքելոյն եւ տվեալ եմ Աւետարանիս գինն առաջի Աստուծոյ տէր Մարկոսին ԺԲ. մասչիլ, Ա. ֆեթակ։ Եւտոյ տասոյ արաւ, տվի ի. խոն բիրիեմ, Ա. չուխայ, էլ մին ֆեթակ։ Սուրբ Երեք Մանկունքն վկայ է, Իգնատիոս եպիսկոպոս վկայ է, տէր Ակ[ոբ]ն վկայ է, Ոսկան եպիսկոպոս վկայ է։ Ինչ մարդ որ այլ եւ այլ խաւսէ, դատի Տէր։

Տե՛ս ԺԵ. դ. յիշ.ք, Ջ., էջ 504։

ԿՆՔՈՒԴՐՈՒՆԸ *178ա*՝ ոճաւորուած բազմանկիւն. «Աստուծոյ Ոսկան եպիսկոպոս ծառայ Յ[իսուսի] Քրիստոսի»։

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին սոսնձած թղթին «22», Ա. կազմաստառին սոսնձած թղթին. «Ի մատենից Յովսէփ վարդապետի Փինաչեանց», «2538/2[ր] 383», «ՊՈՒԹ. – 1410-ից առաջ, Մ[եսրոպ] եպ[իսկոպոս]»։


2539

Ա. Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ԿՈՐԵՍ գիւղ (Զաքաձորի՝ Ք.)

ԳՐԻՉ՝ Անանուն (3ա-132բ), Յոհաննէս (134ա-262բ)։

ԹԵՐԹ՝ 265. չգրուած՝ Լսբ.դ-2ա, 82բ-3ա, 133ա, 205բ, 263ա-5բ։ ՊՐԱՒ՝ Ա-ԺՕԱx12+Ա-ԺՕԱx12 (է 13)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ 19-19,3x13։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (13-14x9)։ ԳԻՐ բոլորագիր (նմուշ 73ա, 147ա)։ ՏՈՂ 22։ ԿԱՋԻՐ դրոշմագարդ շագանակագոյն կտիճ, Ա. փեղկիճ պղնձէ խաչ, Բ. փեղկիճ՝ փյսմ. դռնակով, միջուկր տախտակ. տատաոր կապոյտ կտաւ. լուսանցակոդեր՝ կարմիր։ ՊԱՀՊԱՆԱԿ 1 (Ա., սկ.), չգրուած թուղթ։



Նմուշ 73ա



Նմուշ 147ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ – Մատթէոս՝ 2բ, Մարկոս՝ 83բ, Ղուկաս՝ 133բ, Յովհաննէս եւ Պողոսորոճ՝ 206բ։ Լուսանցայինք. Սուրբ Հոգի՝ 218ա։ Կիսախոհան՝ 3ա, 84ա, 134ա, 207ա։ Լուսանցագարդ՝ թռչուն, քուսական, ծառ, տաճար, խաչ, յուշկապարիկ։ Ձարդագիր՝ քուսական, թռչնագիր, ճաճգուցագիր։ Գոյներ՝ կարմիր, կապոյտ, դեղին, կանաչ, նարնջի, վարդագոյն (գունափոխուած), սպիտակ, շագանակագոյն, սեւ։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին եզրամաշ, երեսկան կապիչներն ու զամերն ընկած, թ. 1, 207, 262-5՝ շերտազատուածերկրորդկրնաւ, թ. 175ի վերին մասը ճիպիլց անջուտ, թ. 206՝ մի այլ ձեռագրից է՝ ա. երեսին վարձագրական թղթյթի բնագրի մասե է, իսկ բ. էջն օգտագործուել է Յովհաննէս աւետարանչի նկարը նկարելու համար։

ՌԱՀԻՊ., ՌԱՀԻԲ. – 1675, 1678

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. *3ա-82ա* Աւետարան Մատթէոսի։

2. *84ա-132ա* Աւետարան Մարկոսի *(131բ-2ա «Ցառաջելս Յիսուս»)*, *132բ* Նախաբերութիւն։

3. *134ա-205ա* Աւետարան Ղուկասու։ *205ա* Նախաբերութիւն։

4. *207ա-60բ* Աւետարան Յովհաննու։

Բ. Ոտանաւոր.

205ա Այս Ղուկասու եզն ասացին,
Որպէս նա իակ հերկէ զգետին,
Կրկին անխոնջ վասն պտղին
Մոյնպէս յերկար են բանք սորին։

ՅԻՇԵՑԱԿԱՐԱՆ ԳՐՁԻՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

96բ (Անանուն գրչի. ատ. լս.) Յիշեցէք ի Քրիստոս Լեհիւանն, որ այս ադուհացից Վիրապի շաբաթ օրս վաղճանեցաւ, թվիւն ՌՃԻԴ. *(1675)*։

144բ (Յոհան գրչի, ատ. լս.) Կա՛յ, ավա՛ղ խոշոր թղթիս մեռնէն։

218ա (ատ. լս.) Աւետարան ըստ պաշտաման կարգայ եւ գՅոհան գրիչս յիշեա՛։

260բ Փառք եկակի, եռահիւսակ դասանութեանն, ապեհիպային, կատարեալ եւ անսահմանելի Աստուծոյ Հօր, Աստուծոյ Որդւոյ, Աստուծոյ Հոգւոյ. շնորհիւ Տեառն ամենակալի եւ Տորին օգնականութեամբ աւարտեցաւ եռահրաշ եւ հոգիապարգ Աւետարանս, զոր էր շաղկապեալ երանելոյ աւետարանչացն՝ ըստ բազմերանկ գունոց ի մի ոստայն ընկենալով հան|261ա|ճար, զոր արուեստակեալ անուշոցաց ծաղկանց՝ իւղ եփեցական

կազմութեամբ, որ ըստ հոգւոյն յատկութեամբ իմանալի զանազան որակութեամբք գաղափարելով ըստ յոքունց արիւիացելոցն դասակցութեանց՝ առ ի եկեղեցւոյ յարմարումն յօդիւ խաղաղութեամբ գլխոյն պատշաճեալ, զի յայսմանէ կատարելութիւնն՝ չորք Աւետարանքն ի բաղում պատճառէ. չորեքկերպեան կենդանիքն՝ մարդ, առիւծ, ցուլ, արծիւ. չորք նիւթք աշխարհիս՝ հող, ջուր, հուր, օդ՝ հակառակք անհաշտելիք եւ սիրելիք անքակտելիք. չորք <չորք> գիր անուն երրորդութեանն՝ Հայր, Որդի, Հոգի. չորք գետք բղխեալք ի դրախտէն՝ Փիսոն, Գիհոն, Տիգրիս, Եփրատ. չորս անկիւնս եւ եղջերւոցք սեղանոյն. չորք դէմք խաչին, եւ այլ բազում պատճառս, յորս գաղափարի չորեքեան աւետարանիչքս: Զի թէպետ ի բազում բանք ի սոսա երեւին ներհակք միմեանց, այլ քաջ ճշմարիտք եւ յոյժ միաբանք միմեանց:

|261բ| Որդ գրեցաւ Մաթէոս ի խնդրելոյ հրէից հաւատացելոցն, որք էին յերուսաղէմ, գկնի Ը. ամի համբառնելոյ փրկչին ի լեզու յեբրայեցի յերուսաղէմ քաղաքի, զոր առեալ Թովմայի քարոզէ Հնդկաց, եւ Բարդողիմէոս ի Գելմասացւոյն եւ Ամրանայ եւ ամենայն արեւելից: Իսկ Մարկոս գրէ ի հրամանէ Պետրոսի Վիմի վարդապետին իւրոյ Աղէքսանդր քաղաքի ի լեզու եգիպտացի, գկնի ԺԱ. (11) ամի, եւ աւետարանէ յԵթովպէ եւ ի Լիւիկիա, եւ լուսաւորէ գաւեւմուտս: Իսկ Ղուկաս յառաջագոյն աշակերտ գոլով Գալիլեացոյն բժշկապետի, որ եւ ինքն է արուեստիւ բժիշկ, յետոյ աշակերտի սրբոյն Պօղոսի, որ եւ հրամանաւ իսկ նորա գրէ, գկնի ԺԸ. (18) ամի ի լեզու հռովմէացի յԱնտիոք քաղաքի, եւ քարոզէ ի Բիւթանիա եւ յամենայն Մակեդովնիա:

Իսկ Յովհաննէս՝ որդի Զերեթիայ, որդի որոտման, որդի սուրբ Կուսին, զվերինն որոտալով աւետէ եւ աւետարանէ, գկնի <Ժ>ՄԳ. (53) ամի |262ա| գրէ յեփեսոս քաղաք եւ լուսաւորէ զամենայն ասիս: Արդ, Աւետարան կոչի, որ պատմէ մեզ գեղեալ բարութիւնս, գիաղաղութիւն, զոր եգեր հրեշտակաց եւ մարդկան, զքակտումն բռնութենէ թշնամոյն կենաց մերոց, գաւերումն դժոխոց, զազատութիւն հոգւոց, զընծայ աջմէ Աստուծոյ նաեւ բնութեան մարդկութեանս: Ուստի եւ տեսեալ զսորա անճառ փրկագործութեան խորհուրդ, պատուական (10 տող չգրած):

Արդ, գրեցաւ սուրբ կենսաբեր սուրբ Աւետարանս ձեռամբ սուտասնուն Յոհաննի (անունը ջնջած, ապա կէս տող չգրած), ի թըւաբերութեանս հայոց ՌՃ. եւ Իէ. (1678), եւ իշխանութիւնն տաճկաց շահ Սօլէյմանին եւ ի հայրապետութենէն տեառն Յակոբայ, եւ առաջնորդութեանն |362բ| ըստ Թադէի Յովհաննէս արհնպիսկոպոսի, ի յերկիրս Զագաձորի՝ ի գեօղս, որ կոչի Կոռես, ընդ հովանեաւ Սուրբ Գրիգորիս եւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Մարտիրոսիս եւ Սուրբ Յակոբիս, զի սոքայ են մեզ բարեխօսս:

ՅԻՇԵՑՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

262բ *(անարուեստ նոտրգիր, 1678 թ.)* Որք անդիպիք սմայ՝ կարդալով կամ օրօնակելով, լիշեցէ[ք] գվերայգրայս. գիրեցեալ ինձին Ռ[ՃԻէ. (1678): Արդ, լիշեցէք զբարիմիտ եւ հեզայհոգի գտէր Պաւսեղ քա[հանայ, որ բազում փափականէքայ ստացաւ ըստորը (= զսուրբ) Ավատարանս ի հալալ հնդից իմոնէ իշատակ հոգոյ իմոյ եւ հարն իմ Վարդան, եւ մարն իմ Խարուն, եւ կենդանեացս (= կողակից) իմ Կուզեալ (= Գոզալ):

ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմաստաւորին սոսնձած թղթին «2539/Հ[ին 385», «Ռ[Իէ. - 1678. Մ[եսրոպ եպ[իսկոպո]ս»: Տե «Ընծայեալ Յուսիկ վարդապետի Մովսեսեան»:*

2540

ԵՒԱԳՐԻ ՎԱՐՔ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱՏԱՅՈՂ՝ Տիրատուր:

ԹԵՐԹ՝ 163՝ ՊՐԱԿ՝ Ա.-ԺԳ×12 (Ա.8, ԺԳ.11): ՆԻՒԹ՝ թուղթ՝ ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 15,9-16,3×11,2-12,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13-13,5×8,5-9): ԳԻՐ՝ բոլոգիր (նմուշ՝ 58ա): ՏՈՂ՝ 20-22: ԿԱԶՄ՝ դրօշմազարդ չագանակագոյն կապի (Ա.) եւ սեւ լաք (Ր. եւ մշրի), միջոցը տախտակ (Ա.) եւ ստուարաթուղթ (Ր.). աստառը կանաչ մետաքս (Ա.) եւ թուղթ (Ր.): ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Ա.-Ր.) + 1 (Ր.), թուղթ, լուսագծերով՝ աւելացուած նոթագման ժամանակ:



Նմուշ 58ա

ԺԳ. դար

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ – Ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ Լա[ւսանց ազարդ] բոսական: Զ ա ր դ ա գ ի ր՝ թոչնագիր, ճանգուացգիր: Գ ո յ ե ր՝ կարմիր, կապոյտ, վարդագոյն, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար: կազմը եղել է խիստ հայհոյուած, ի դ[եորոգուել է Ա. փեղկի ճիւն կապի օգտագործելով], ներկուական կապիչներն ու գամերն ջնջած, թ 1-2՝ ցեղի անցիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-163ա [Վարք եւ մատենագրութիւնք եագրեալ Պոնտացւոյ]

1. *1ա-6ա* [Վարք եւագրեալ երաեելոյ] – *Ի բազում իրս, ով սիրելիք... ի վերս այսոցն չարութեան:*

2.ա. *6ա–8ա* Եւագրեա Նշանակ յեզեկիկէէ – *Իմանամբ գմարդն զբանսկան... յառաջագոյն երեմիայի մարգարէի:*

բ. *8ա–12ա* Նորին Եւագրեա Վասն հանդերձից սուրբ հարց – *Քանզի յառաջագոյն յղեցեր դու առ իս... ի վերին յաւդան երեւեալ:*

գ. *12ա–20բ* Վասն ութ խորհրդոց – *[Ջ]միտս մոլորականս գետեղեցուցանեն ընթերցուածք... եւ ի գնին մատուցեալ հաստատեալ ունին քառում անգամ:*

դ. *20բ–1ա* Վասն այնորիկ, որ ընդ Բուսս ցնՈրդ[նորՈ] անց[աւեն] – *Յորժամ ընդ քումն ցնորիցն... գթոյ հաստատել մարթ է:*

ե. *21բ–2բ* Վասն հաստատութեան, որ մեռն է յանախտութիւն – *Երկուս գիտեմ գոգուց խաղացութեամբս... մի՛ տեսցէ զարուիթիւնս:*

զ. *22բ–3ա* Վասն Նշանակացն անցաւորութեան – *Ի ժամանակի իբրեւ միտքն առանց զբաղմանց... որ աճեցուցանէ գմեզ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. նմա փառք եւ պատուիրան յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

է. *23ա–35բ* Նորին Եւագրեա Գիանմատոր եւ արդիւնաւոր – *Գործնականք ճառից խելամուտ լիցին... որ ձեռամբն եկեալ իցէ:*

ը. *35բ–57բ* Նորին Եւագրեայ – *[Ա]ռաքին լուսաւոր պատերազմացն... առաւել եւս պատրաստեալ գրգռէ:*

թ. *57բ–67ա* Վասն ընդունելութեան – *Եթէ յաւտարութիւն գնայցես... եւ ծագեսցի լոյսն աղաւթից:*

ժ. *67ա–71բ* Վասն պաշտաման – *Յորժամ կենաց կցորդ եղբայրն քո... եւ ներքին գեղոյն խեղդամահ սատակիցիս:*

ժա. *71բ–9ա* Նորին Եւագրէ – *Ժառանգորդք Աստուծոյ, լուարո՛ւք զպատգամս Աստուծոյ... եւ մի՛ մոռանայցէք զանձն իմ տառապեալ ի ժամ աղաւթիցն:*

ժբ. *79ա–81ա* Եւագրեա բան խրատու – *Ջերապարիս կալոյ իմոյ... աւրհնեալ Սուրբ Երրորդութիւնն:*

ժգ. *81ա–2բ* Նորին Եւագրեայ – *Եթէ ունիցիս ընդ քեւ եղբարս... եւ ի կուսէ վասն մեր ծնաւ յՕգուց Սրբոյ կատարեալ:*

ժդ. *83ա–6ա* Հաւատամ որ ի Նիկիայ – *Հաւատամք ի մի Աստուած... զանձն քո կերակրեսջիր:*

ժե. *86ա–7ա* Նորին Եւագրեա Ած Մարտիրոսոս – *Քնահատակսն Քրիստոսի... բնակեցայց ես յարկս քո, Տէ՛ր, յաւիտեան:*

ժզ. *87ա* Վասն յարութեան – *Յարութեանն Քրիստոսի երկիր պագցուք... զոր աւրհնէն հրեշտակք, եկա՛յք երկիր պագանեսցուք նմա. ամէն:*

ժէ. *87բ–93բ* Ճառ Քրիստեայ – *Աստուծոյ արժանի այն է... զչափ առեալ գտանիցի:*

Արտ. լս. գրից՝ «Ասացեալ երանելւոյն Մեքսուեայ ճգնաւորի վասն ամենայն անցաւոր եւ սուտ կենցաղոյս»:

3. *93բ–163ա* Եւագրիոս ընդդէմ պատասխանի ի Դոց Սրբոց

ա. *93բ–6ա* Ած դեւսն, որ փոռճենն զմեզ. Ասգենա՛, Քրիստո՛ս, – *[Ո]ր ի ներքոյ երկնից... եւ հարքն սուրբքն մեզ պատմեցին:*

բ. *196ա–104ա* Ած խորհուրդն որկոտութեան – *[Ա]ռ խորհուրդն, որ առանց վաստակոյ եւ պահոց... յաղթեաց աշխարհի հաւատովքն: Աւրհնեալ է Աստուած, որ ետ մեզ յաղթութիւն ի վերա խորհրդոցն որկոտութեանն:*

գ. *104ա–13բ* Ած պտղակութեան – *[Խ]որհուրդքն պտղակութեան ի ներքս ի մտի... պահել ի կորուստս: Աւրհնեալ է Տէր, որ ետ մեզ յաղ[թութիւն] ի վերա խորհրդոցն պտղակութեան:*

դ. *113բ–22ա* Ած խորհուրդն ածծաթախոտութեան – *[Ա]ռ դեւն, որ խոստանա ինձ... արդեամբ եւ ճշմարտութեամբ: Աւրհնեալ է Աստուած, որ ետ մեզ յաղթութիւն ի վերա խորհրդոցն ածծաթախրութեան:*

ե. *122ա–32բ* Ած խորհուրդն տրտմութեան – *Ած անձն, որ համարիցին... բայց միայն Տէր Աստուած ապրեսջիք ի սիրոս մեր: Աւրհնեալ է Աստուած, որ ետ մեզ յաղթութիւն ի վերա խորհրդոցն տրտմութեան:*

զ. *132բ–40բ* Ած խորհուրդն սրտնութեան – *Ած անձն, որ ոչ գիտիցէ... զոր ոչն տեսանէ: Աւրհնեալ է Աստուած, որ ետ մեզ յաղթութիւն ի վերա խորհրդոցն սրտնութեան:*

է. *141ա–9ա* [Ած խորհուրդն ձանձրութեան] – *Ած խորհուրդն ձանձրութեան, [ո]ր գործել ձեռաւքն խորշիցի... զոր խոստացաւ սիրելեաց իւրոց: Աւրհնեալ է Քրիստոս, որ ետ մեզ յաղթութիւն ի վերա խորհրդոցն ձանձրութեան:*

ը. *149ա–54բ* Ած խորհուրդ[ս] ամբարճաւաճ նորափառութեան – *[Ա]ռ ամբարճաւաճ նորափառ խորհուրդսն... ոչ գոյ սէրն Աստուծոյ ի նմա: Աւրհնեալ է Աստուած, որ ետ մեզ յաղթութիւն ի վերա խորհրդոցն նորափառութեան:*

թ. *154բ–63ա* Ած խորհուրդսն ամբարտաւանութեան – *[Ա]ռ դեւն ամբարտաւանութեան... եւ զաւրութիւն եւ իշխանութիւն յաւիտեան եւ այժմիկ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն, ամէն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԴՐՁՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՆԱԿԻ

140բ Ձիշէ գմնեաւորս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

163ա (բոլորգիր, ԺԴ. դ.) Ջամենատառապեալս ի բարեաց եւ զբազմահարուածս չարեաւք, զեղկելի անձնս՝ նուաստս Տիրատուր պիտակ անուամբ վարդապետ յորջորջեալ՝ զոստացեալ աստուածային տաղիցս, զծնաւղսն իմ եւ զհարազատս եւ զամենայն երախտաւորս մեր ըստ հոգւո եւ ըստ մարմնո յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, ո՛վ խոհեմամիտ ընթերցողք, աղաչեմ:

163բ (թղտրգիր, 1439 թ.) Ալլ եւ գվերջին ստացաւղ յուսաւոր Պատերազմիս եւագրեալ գՅովսէփի կրաւնաւոր եւ գհոգեւոր հաճշիրակ եղբայրն իւր՝ գՅոհաննէս կրօնաւոր, ազաչեմ յիշել ի Տէր, եւ յօժար կամօք Աստուած ողորմի առել, եւ դուք յիշեալ յիշիք առաջի Քրիստոսի. ամէն: Ի թվին ՉՁԸ. *(1439)* գենաց գգիրքս ի հալալ արդեանց իւրոց յիշատակ բարի իւրն եւ ծնօղաց իւրոց, Տէր Աստուած վայելել ասցէ բազում ժամանակաք. ամէն:

Տե՛ս ժե. դ. յիշ-ք, Ա., էջ 503:

163բ (թղտրգիր, ժե. դար) Եւ՝ Յովսէփի այրեղայս *[բա]*շխեցի գայս գիրքս տէր Սուրիասին՝ իմ հոգեւոր եղբաւրն. եւ է սա սեփական նմայ, եւ այլ ոք ոչ ունի իշխանութիւն ի վերայ սորա, բայց ի տէր Սուրիասէն:

Հարիւրաւոր սա անուանի, / Ընդդէմ դիւաց պատեհ-րազմիւ: / Ով որ սորա հետեւեսցի, / Յաղթէ չարին սատանայի, / Արիանայ ընդդէմ չարի, / Յաղթէ ութիցս խորրրդի, / Այս են գէնք սատանայի, / Ընդ մեզ սոքաւք միշտ մարտնչի: / Եւագրիս հայրն բարի / Յաղթեաց ութիցս խորհրդի / Եգեալ գօս սահման բարի / Բոլոր ազգիս քրիստոնէի:

Տե՛ս ժե. դ. յիշ-ք, Ա., էջ 503:

1ա (նոտրգիր, ԺԸ դ.) Տէր Սաֆօէ:

52ա, 87ա (ստ. լս., շղագիր, ԺԹ դ., ջնջած) Գրիգոր վարդապետին է:

ԿՆՔՈՒԴՐՈՇՈՒ *163բ.* անընթեռնելի, հաւանաբար *163բ էջի* ւիշատակարանի հեղինակ Յովսէփ աբեղայինն է:


ՆՇՈՒՄ՝ *կազմի Ա. փեղկին սոսնձուած թղթին «Քանք եւագրի Վասն խնդրոց եւ գործոց մարդկան», այլ ձեռքով վրան գրած «10բ»: Ա. կազմատտոհին սոսնձած թղթին «Հ*[ին] *387/2540», «ՉՁԸ. — 1439-ց առաջ, Մ[ետրոպ] եպ[իսկոպո]ս», «Առաքեալ յԱստրախան քաղաքէն»:*

2541

ԳԱՆՁԱՐԱՆ ԵՒ ՏԱՂԱՐԱՆ

ԺԵ. դար

ԹԵՐԹ՝ 254: ՊՐԱԿ՝ Ա-ԻԲ×12 (Ա, ԺԷ 9, ԺԸ, ԻԱ, ԻԲ 10): ՆԻՒԹ ԹՈՒՂԹ՝ ՄԵՆՈՒԹԻՒՆՆ 16,1×12,5-13: ԳՈՒՆԱԹԻՒՆ՝ միասիւն (12,5×9,5): ԳԻՒՂ՝ բոլոգիր (նմոյշ 33ա): ՏՈՂ՝ 15: ԿԱԶՄ՝ դոջուածգաղղ չագանակագոյն կաշի, դռնակով, միջուկը տախտակ, առատակ կարմիր կտաւ. լուսանցագծողներ՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (Ա, վ.), չգրուած թուղթ.



Նմոյշ 33ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ – Կ ի ս ա խ ո ւ ա ծ 3ա: ձ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 79ա, 198ա: Լ ու ս ա ն ց ագ ա գ ա ր դ՝ բուսական, տաճար, թռչուն, ձառ, սափոր, խաչ, վարդակ, յոգնապարիկ: Զ ա ր դ ա գ ի ր՝ բուսական, հաճոյացպիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, վարդագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին եզրամաչ, գեղի անգհեռով, դռնակի վերին արտաքին եզրը, երկուական կապիչներեն ու փայտէ զամերն ընկած, 1ա՝ ամբողջութեամբ, եւ 2ա՝ մասամբ խուճացած, թ 1-2, 104, 175-6՝ ստորին արտաքին եզրեն ընկած, 1 թերթ ընկած թ 165-6ի միջեւ, վերջից թերի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-197բ* [Գանձարան]

— *1ա-2բ* Այս ինչ, որ հաւաքեալ կայ ի սմայ, այս է — *Ա. Մնդեդանն Տեառն... Ծ. մեռել թաղի:*

1. *3ա-6բ* [Ա. Գանձ ծննդեան եւ Յայտնութեան. ձեռ. 423, 6բ] («Մկրտիչ») — *Մաքուր եւ անբիծ...*

2. *6բ-11ա* Բ. Գանձ ծննդեան երկրորդ աւուրն («Հաչատուր») — *Հրեղաշրաւէր երգաւք նագելի...*

3. *11ա-5ա* Գ. Գանձ ծրնընդեանն Տեառն երրորդ աւուրն («Հաչատուր») — *Հրենդա, մայր Տեառն Յիսուսի...*

4. *15ա-8ա* Դ. Գանձ Յովհաննու Մկրտչի («Մկրտիչ») — *Մեծապայծառ փառաւք պանծալի...*

5. *18ա-23ա* Ե. Գանձ Ամոռնի Ամենապատկանին («Հաչատուր») — *Հրատ մարգասիրին...*

6. *23ա-6ա* Զ. Գանձ Տեառնընդառաջին («Մկրտիչ») — *Միամանական սուրբ երրորդութիւն...*

7. *26ա-30բ* Է. Գանձ սրբոյն Սարգսի զաւրավա[րին] («Մկրտիչ») — *Մեծապայծառ փառաւք...*

8. *30բ-4բ* Ը. Գանձ սրբոց հայրապետացն ԳԾԺԸ.ից (318) [ի] Նիկ[իա]ա («Հաչատուր») — *Հորհուրդ գաւրութեան, անեղութեան...*

9. *34բ-9ա* Թ. Գանձ Թէոդորոսի գաւրավարին («Հաչատուր») — *Հրենդայհրաւէր մանկունք Միոնի...*

10. *39ա-42ա* Ժ. Գանձ երրորդ կիրակէն յաձառակ որդին («Մկրտիչ») — *Մեծ եւ ահեղ խորհուրդ տիրական, անճառ, անհաս...*

11. *42ա-5ա* ԺԱ. Գանձ չորրորդ կիրակ[էն] ի մեծատու[ձն] եւ ի Ղազա[ր] («Մկրտիչ») — *Մեծ եւ ահեղ խորհուրդ տիրական, որ նորոգեաց գաշխարհս...*

12. *45ա-8բ* ԺԲ. Գանձ սրբոց Բառասեիցն, որ ի Սեբա[ստիա] («Մկրտիչ») — *Մեծ եւ հրգաւր անմահից պարագ...*

13. *48բ-52ա* ԺԳ. Գանձ հինգ[երորդ] կիրակին Աղուհացից («Մկրտիչ») — *Մեծ եւ ահեղ խորհուրդ անեղին...*

14. *52ա-6ա* ԺԴ. Գանձ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին («Մկրտիչ») – *Մեծ եւ հրգաւոր թագաւոր անմահ...*

15. *56ա-60ա* Ժե. Գանձ Ղազարու յարութեան («Խաչատուր») – *Խորհուրդ յառաջ քան...*

16. *60ա-3բ* ԺՋ. Գանձ Ծաղ[կ]ազարդին («Խաչատուր») – *Արնդայ, Սիովն, խորան խորհրդոյ...*

17. *63բ-6բ* Ժէ. Գանձ Մեծի չորեքշաբաթուն («Մկրտիչ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ անեղին...*

18. *66բ-9բ* [ԺԸ.] Գանձ Աւագ հինգշաբաթուն («Մկրտիչ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ ահագին...*

19. *69բ-75բ* ԺԹ. Գանձ Մեծի ուրբաթուն («Խաչատուր») – *Խորհուրդն, որ ծածկեալ էր յազգաց...*

20. *75բ-8բ* Ի. Գանձ Մեծի շաբաթի թաղումն Տեառն («Մկրտիչ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ սոսկալի...*

21. *79ա-82ա* ԻԱ. Գանձ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի («Մկրտիչ») – *Մեծապայծառ ձայն ուրախալի...*

22. *82բ-3ա* ԻԲ. Գանձ Յարութեանն Տեառն երկրորդ աւուրն («Խաչատուր») – *Խնամք խորհրդոյն, գութ արարչական...*

23. *83ա-92բ* ԻԳ. Գանձ Յարութեան Տեառն երրորդ աւուրն («Խաչատուր») – *Խորհուրդ հրաւիրամամբ կամաւ արարչին...*

24. *92բ-5բ* ԻԴ. Գանձ Յարութեան Տեառն չորրորդ աւուր («Մկրտիչ») – *Մարդասիրութեամբ Արդիդ միածին...*

25. *95բ-9բ* ԻԵ. Գանձ աւետեաց Աստուածածնին («Խաչատուր») – *Խընդութեան ձայն բարբառ...*

26. *99բ-103բ* ԻԶ. Գանձ համբարձմանն Տեառն («Մկրտիչ») – *Մեծ եւ հրգաւր տաւնիս ահագին...*

27. *103բ-3ա* ԻԷ. Գանձ Հոգւոյն գալըստեանն Տեառն («Մկրտիչ») – *Մեծ եւ հրգաւր Հոգի...*

28. *108բ-12ա* ԻԸ. Գանձ եկեղեցոյ, ի տէր Մկրտիչ վարդ[պետէ] («Մկրտիչ») – *Մաքրափայլ տաճար տիրական...*

29. *112ա-5ա* ԻԹ. Գանձ Վարդավառին, ի տէր Մկ[կրտիչ վարդապետէ] («Մկրտիչ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ մեզ յայտնեալ...*

30. *115ա-20ա* Լ. Գանձ փոխ[ման սուրբ Աստուածածնին («Մկրտիչ») – *Մեծապայծառ, հրաշակերպ, լուսածին...*

31. *120ա-4բ* ԼԱ. Գանձ երկրորդ աւուրն («Խաչատուր») – *Հոնարհեալ Որդին միածին...*

32. *124բ-3ա* ԼԲ. Գանձ Սուրբ խաչին Քրիստոսի, ի տէր Մկրտիչ [վարդապետէ] («Մկրտիչ») – *Մեծապայծառ ակըն պատուական...*

33. *128ա-33ա* [ԼԳ.] Գանձ Վարագայ խաչին («Խաչատուր») – *Խաչըն կենաց նըշան յաղթութեան...*

34. *133ա-7ա* ԼԴ. Գանձ Գիւտ խաչին («Խաչատուր») – *Խաչի քո, Քրիստո՛ս, երկիր պագանեմք...*

35. *137ա-41ա* ԼԵ. Գանձ Գեղոգեա Ջաւավարին («Խաչատուր») – *Հրնդարհաւէր մանգունք Միովնի...*

36. *141ա-5ա* ԼԶ. Գանձ հրեշտակապետացն Գաբրիէ[ղի] («Մկրտիչ») – *Մեծ եւ ահեղ խորհուրդ հրաշալական...*

37. *145ա-50բ* ԼԷ. Գանձ համատեղ առաքելոցն Քրիստոսի («Խաչատուր») – *Խորհուրդ ազգագ քո մարդեղութեանդ...*

38. *150բ-3բ* ԼԸ. Գանձ սուրբ մարգարէից («Մկրտիչ») – *Մեծ եւ ահեղ անուն հրաշալի...*

39. *153բ-6բ* ԼԹ. Գանձ սրբոց մարտիրոսացն («Մկրտիչ») – *Մեծապայծառ փառաւք զարգարեալ...*

40. *156բ-60ա* Խ. Գանձ Յիսնեմեր Ոսկեբերանին («Խաչատուր») – *Խաչաշարչար խաչելոյն վըկայ...*

41. *160ա-4ա* ԽԱ. Գանձ սրբոյն Նիկալայոսի հայ[րապետի] («Մկրտիչ») – *Մեծ եւ հրգաւր անուն հրաշալի...*

42. *164ա-7ա* ԽԲ. Գանձ սրբոյն Յակովբայ Մծբնա («Մկր[տ]իչ») – *Մեծաշրնչակ անուն գովելի... եւ կենաց բանիւ լուսաւորէ/// |166ա| որ հաւք զարգարեալ...*

Մէկ թերթ ընկած ընգրէչ թ. 165-ին, ուստի եւ գանձս մինչին մասում թերի է:

43. *167բ-73ա* ԽԳ. Գանձ Գաւթայ մարգարէի եւ Յակոբա առ[աքելոյ] («Խաչատուր») – *Խորհուրդ անքննին, անճառ, անհասին...*

44. *173ա-7բ* ԽԴ. (=ԽԹ.) Գանձ սրբոյն Ստեփանոսի («Մկրտիչ») – *Մեծ եւ հրգաւր անմահ թագաւոր...*

45. *177բ-81բ* Խե. Գանձ սուրբ առաքելոց Պետրոսի եւ Պօղ[ոսի] («Մկրտիչ») – *Մեծ եւ ահեղ խորհըրդոյ Քրկչին...*

46. *181բ-5ա* ԽՁ. Գանձ սուրբ առաքե[լոցն] Յոհաննու եւ Յակոբայ («Խաչատուր») – *Խորք անքննին, անճառ, անհասին...*

47. *185ա-8բ* ԽԷ. Գանձ սրբոյն Բարսեղի Կեսարու («Խաչատուր») – *Խաչաբարձ եւ պետ պանծալի...*

48. *189ա-92բ* [ԽԸ. Գանձ] հասարակաց գիշերապաշտաման («Աւառաւել») – *Անտանելիդ երկնի եւ երկրի...*

49. *192բ-7բ* [ԽԹ.] Գանձ մեռելայրաղին ասա՛յ («Ամանվելոս») – *Մինդ ի յՀէն, բանդ որ ի Հաւրէ...*

Բ. *198ա-254բ* [Տաղարան]

1. *198ա-9ա* [Նեռսխի Շնորհալւոյ] Տաղ ծնունդեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի – *Այսաւր աւետեաց Գաբրիէլի լրումն... ըզփառս ի բարձունս:* p. *199բ-200ա Փոխ.* [Ներսեսի Շնորհալւոյ Յորդորակ] («Ներսխի է այս երգ») – *Նոր ծաղիկ բըղխէ այսաւր... սուրբ երրորդութեանդ փառք յաւիտեանս. ամէն:*

2. *200ա-3ա* [Գրիգորի Նարեկացւոյ. ձեռ. 425, 94ա] Տաղ ծընընդեանն առաջի ատուն – *Աւետիս մեծ խորհրդոյ... երգեմք միշտ՝ Քրիստոս աւրնեալ է յաւիտեանս:* p. *203աբ Փոխ.* [Սրկան Կոստանդինի՞ Տաղ] («Կոստանդին») – *Կոյսն ի յայրին Բեղեէմի մանուկ ծընանէր... այժմ եւ անվաղճան, յաւէտ յաւիտեանս. ամէն:*

3. *204ա-5ա* Տաղ ծընդեանն Տեառն երկրորդ աւուրն] – *Այսաւր ի սկզբանն բանն... հովիւքն երգեն նըմայ փառք ի բարձունս:* p. *205ա-6բ* Փոխ. *Մայր Աստուծոյ Մարիամ... որում պատիւ սրբասաց:*

4. *206բ-7բ* Տաղ ծնընդեան Տեառն երրորդ աւուրն – *Ա<ս>կըսբնագարդ գոյից ստեղծողն... փառս տացուք այժմ յաւիտեան:* p. *207բ-8ա* Փոխ. – *Անճառ բանին բարձրելոյ... փառք ի բարձունս երգէին:*

5. *208բ-10բ* [Ներսեսի Շնորհալւոյ] Տաղ Յովանու Մկրտչի («Ա-Ք») – *Անմարմնոցըն հրեղինաց... հայցմամբ առ Տէր:* p. *210բ-1բ Փոխ.* – *Ի բանէն մաղթէ... եւ կակից հոգոյդ, ընդ որում աւրհնեալ ես միշտ, այժմ եւ յաւիտեանս. ամէն:*

6. *211բ-3ա* Տաղ Ռառասնատես գալըստեանն – *Այսաւր ցընծա՛յ էրուսաղէմ... զի քեզ իսկ վայել է փառք, պատիւ եւ գոհութիւն:* p. *213ա-4ա* [Փոխ] – *Քրիստոս փառաց թագաւորն այսաւր եկեալ... քեզ երգեմք միշտ ըզփառս այժմ, յաւիտեանս, հանապազ:*

7. *214ա-5ա* Տաղ Սրբոյն Սարգսի զաւազարին, Սրկան – *Պարծանք հանդիսից խմբից... վասըն գիւտեան կամացն:* p. *215ա-6ա* Փոխ – *Վրկայից հանդիսից հրաշալի... երգաւղին խընդրեցե՛ք:*

8. *216աբ* Տաղ սըրբոյն Թէոդորոսի զաւազարին – *Յայս հանդիսաւոր... զաւրութիւն եւ գիտաս ի յօւխ[տ]եանս. ամէն:* p. *216բ-7ա* [Փոխ] – *Ի գինուորական դասէն... երգեմք գփառս ի բարձունս:*

9. *217ա-8բ* [Գրիգորի Նարեկացւոյ] Տաղ սրբոց Ռառասնիցն («Գրիգորի երգս այս») – *Գունդք սուրբ վըրկայիցն... երկայնամիտ Տէր, փառք քեզ:* p. *218բ-9ա* Փոխ. («Քառասունս») – *Քրիստոս փառաց թագաւոր... նոյն ընդ նոսին քեզ երգեմք. փառք եւ պատիւ յաւիտեանս:*

10. *219բ-21ա* Տաղ սըրբոցն. Գրիգորի Լուսաւորչին – *Գրիգորիոս առաքինի հընչեղ... Աստուած ի մէնջ աւրհնի:* p. *221ա-2ա* Փոխ – *Յայն իմանալի հրաշիցն... ա՛ռ զմեր գոհութեան նըւէրս, տո՛ւր երրորդութեանդ ի փառս. այժմ եւ յաւիտեանս. ամէն:*

11. *222ա-4ա* Տաղ Ղազարու յարութեանն («Մտեփանոսի») – *Մոսկալի գարմանս հրաշից տեսեալ... արարչագործ ձայնիւ:* p. *224ա-5ա* Փոխ – *Ձայնին զաւրութեան փըրկչին... փըրկչիդ գալուստն աւրհնաբանեալ լիցի:*

12. *225ա-6ա* Տաղ Ծաղկազարդին – *Խորհուրդ հայրենի աւանդ... թագաւորին նըւէր:* p. *226բ-7ա* Փոխ – *Աստ եբրայեցոյց մանկունքն... յաւէտ էութեան Հոգոյն այժմ եւ յաւիտեանս. ամէն:*

13. *227ա-8ա* Տաղ Աւագ չորեքշաբաթին – *Հիանան այսաւր գասըք հրեշտակաց... յաւէտ գոհութեամբ միշտ եւ յաւիտեանս:* p. *228ա-9բ* Փոխ – *Որ վասըն մեր յերկինից յերկիր խոնարհեցար... ուստի յաւէտ փառաւորիս ի յաւիտեան:*

14. *230ա-1բ* Տաղ Աւագ հինգշաբթին («Հ-Ա») – *Հոսեալ հրեղինացըն հաւաքեալ կային... Հոգին ճշմարիտ փառք յաւիտեանս. ամէն:* p. *231բ-2ա* Փոխ – *Ընդ երեկոյս հասեալ ժամու... Քրիստոս աւրհնեալ է յաւիտեանս:*

15. *232բ-3բ* Տաղ Աւագ ուրբաթուն – *Ի յուրբաթու մեծի Ջատկիս... ի յաշխարհի յայտնեալ:* p. *232բ-4բ* Փոխ – *Շնորհաւք մըրբոյ Հոգոյն... Քրիստոս աւրհնեալ է յաւիտեանս:*

16. *234բ-5բ* Տաղ Մեծի շաբաթուն – *Այսաւր է շաբաթ... եւ պայծառացոյց զեկեղեցիս հեթանոսաց:* p. *235բ-6բ* Փոխ – *Ընդ որս եւ մանկունքս... բղճայր եւ գԱրդի, Հոգովն յաւիտեանս. ամէն:*

17. *236բ-5ա* [Ներսեսի Շնորհալւոյ] Տաղ փոխման Աստուածածնին – *Այսաւր Կաբրիէլ հրեշտակապետն... կուսական տունիս՝ երրորդութեանըն փառք:* p. *238ա-40ա* Փոխ [Նորին] – *ԵՒնարատ տաճար եւ առագաստ յուսոյ... փառս վերերգել երրորդութեանըն միշտ:*

18. *240աբ* [Գրիգորի Նարեկացւոյ] Տաղ խաչին Քրիստոսի – *Ես ձայն գառեւծուն ասեմ... զամուրս, որ ունի:* p. *240բ* Փոխ - *Սեփական սիւն պատուական... յելս եւ ի մուտս պահապան:*

19. *240բ-2ա* Տաղ սրբոյն Գէորգեա զաւազարի[ին] («Ա Գէորգեա ա») – *Սըրբոյն սրբութիւն տացուք... եւ փառս տալ Տեառն կամաց:*

20. *242բ-4բ* [Ներսեսի Շնորհալւոյ] Տաղ առաքելոցն Քրիստոսի («Ա-Ք») – *Առաքեալք Աստուածորդոյն... յառաւաձիր պարգեւատէրն:*

21. *244բ-6ա* Տաղ սրբոց մարգարէիցն – *Աստուածային խորոցն անճառ... պատիւ անուան այժմ եւ հանապազ եւ յաւիտանս յաւիտենից:*

22. *246ա-7ա* [Ներսեսի Շնորհալւոյ] Տաղ յարութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի («Ներսէս») – *Նոր ձայն աւետեաց հրեշտակապետն... զպտուղ առաջին ունէր տալ նըմին:* p. *247բ-8բ* Փոխ. [Նորին] («Ներսէս») – *Նոր ծաղիկ պայծառ ցուցաս... տո՛ւր աւրհնութիւն յարուցելոյն փառք յաւիտեանս:*

23. *248բ-50ա* Տաղ յարութ[եան] – *Ով քաղցրաձայնեալ քաղցրախոսեալդ... փառաց թագաւոր, քեզ վայել է պատիւ ընդ Հաւր եւ Հոգոյն այժմ, յաւիտեանս. ամէն:* p. *250ա-1բ* Փոխ («Կաթողիկոս Հայոց») – *Կանայքն արտասուաւք լսային գըպրաձայնն արտասուաց... գյարուցեալն ի մեռելոց աւրհնեմք ընդ Հաւր յաւիտեանս:*

24. *251բ-2բ* [Միմասայ սարկաւագի] Տաղ յարութ[եան] – *Այսաւր նոր արեւ հարեալ... աւրհնեալ է յաւիտեանս Քրիստոսաւ։ բ. 252բ-3ա Փոխ* [Ներսեսի Շնորհալւոյ Տաղ] («Ներսեսի երգ») – *Նբաստեալ կանայք ողբային... Փառք յարութեան փրկիոջին։*

25. *253ա-բ* Տաղ համբարձմանն Տեառն («Սահեփանոսի է») – *Սոսկալի ահիւ պահեան հոյլք բոցեղինաց խրմբիցն... զիսորհուրդըն ծածկեալ յագեցաց։ բ. 253բ-4բ* [Փոխ]. – *Ես խաւսիմ զարդարութիւն... եւ անճառ երանութեան առնել գմեզ հաղորդ/// (շար. թափուած)։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՈՏ

78բ Ազաչեմ, զսուրբ վայելուչդ, սուրբ Յարութեանն Քրիստոսի Աստուծոյ մերո յիշել զամենայն մեղաց գծնուդս զԱնուն (բառս գրուած է եղծուած անուան փոխարէն) յիշել ի Քրիստոս, եւ Աստուած զամենեսեան արժանի արասցէ իւր սուրբ յարութեանն։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՆՑ

197բ (բոլորփր ԺԶ. դ.) Ես՝ Լճացի *սուտանուն կիւրակոս աբեղայս գրեցի այս մարմ[ն]օռ/// [յիշատակ՞] շարի սերմանող ոչ գթարի///։*

1ա (շղագիր, 1891 թ.) Սուրբ Էջմիածնի *մատենադարանին նուէր ե[ռանդ]* Լալայեանից. *1891, օգոստոսի 24 յԱղէքսանդրապոլ։*

ԿՆՔՈՒԴՐՈՇՄ՝ *Ա.ա.՝ (երիցս) ուիանկիուն, վերին մասում հրեշտակ, տակը՝ «Քրիստոսի ծառայ Գերենիկ (՞) վարդապետ///»։ Քառանկիւն. «Ղուկաս վարդապետ»։ Վեց անգամ՝ վատ դրոշմուած, ուիանկիուն. «Քրիստոսի ծառայ Սահակ (՞)»։*


ՆՇՈՒՄ՝ *կաղմի Ա. փեղկին սոսնձած թղթին «Յ. Գանձարան»։ Ա. կազմաստառին սոսնձած թղթին «Հ[ին] 409/2541», «Ժե., Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»։*

2542
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԱՆԿՈՒՆՆԱՅ վանք

ԳՐԻՉ՝ Ջամար աբղ։ ԿԱԶՄՈՂ՝ Մելիսեդեկ (1624 թ.)։ ԹՈՒՂԹ ԿՈՒՈՂ՝ Մահկոս։

ԹԵՐԹ՝ 161+3 (կրկն. թ. Ի՛ երից, թ. 131. 1ա-զ, 131գբ)։ ՊՐԱԿ Գ-ԶՁx12 (Գ. 8)։ ՆԻՒԹ՝ թուղթ, թ. 1գբ, 44-46, 51-53՝ այլ թուղթ, ուեպացած նորոգման ժամանակ։ ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 17,2x13,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (14,5x10,5)։ ԳԻՐ՝ բոլորգիր (ճմռոյ՝ Ջա)։ (1գբ, 44-46, 51-53 թերթերը՝ 1624 թ.)։ ՏՈՂ՝ 21-25։ ԿԱՋՈՒ ԶՐՈՂ՝ մսագոյն շագանակագոյն կաշի, դռնակով, միջուկը տսկսոսոյ, աստառը սպիտակ կտաւ. լուսանցակողերը՝ կապոյտ (գունաթափ)։



Նմուշ 92ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ – *Ջ ա ր դ ա գ ի ր՝* հանգուցագիր, բուսական, թռչնագիր։ *Գ ո յ ն ե ր՝* կարմիր, վարդագոյն։

ՊԱՏՃԱՌԻԿ-ՊԱՏՎԱՆԱԿ – *Ճաշոց*։ 1 (վերջում), ստացուած ընդլայնական հատուած մէկ թերթից։ ԺԱ. դ.։ Մտագաթաթ, 13,5x16,8, երկսիւն (12x14), ուղղագիծ երկաթագիր (ճմռոյ՝ Աա), տող՝ 13։ *Ճաշոց. Կարդալ՝* Աբ, Աա։ [Յունուարի ե Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Կանոն շուր առաճնեղոյ Ընթերցուած ե յԵղեկիելէ մարգարէէ, Խէ. 7-12, Պատրոյ առաքելոյն ի Կորնթացւոց Ա. թղթոյն ընթերցուած, Ժ. 1-3, Աւետարան բստ Մաթէոսի, Գ. 13-15] «անդ իմում, եւ անա յախն գետոյն ծառատունկ բարւոյ։ զբուղն եղից, եւ բծղկես[զէ]/// կենդանասցին յորոյ վերայ... մի արբեցիս, այլ յայոս մա[նանեցդի]/// կերակուր, եւ եղի նոցա ի արբոյնն։ առեներին զնոյն ես[գնոր]/// Յայնժամ գայ Յիսուս ի Գաղիղիա։ վայէ է մեզ յնոյ գաւնեցայն առդարու-[թիւն]»։

Նմուշ Աա

Ջիե. – 1476

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին եզրատաշ, ներկական կապիչներն ու զամերն ընկած, սկզբի թերթերը բարակացած, թ. 1գր, 44-46, 51-53՝ ուեպացուած վերակազմման ժամանակ, բնագրերի թափուած մասերը լրացնելով, թ. 1-18, 161՝ ցեկի անգիր։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1ա-36բ* [Թուղթ ընդհանրական Ներսեսի Շնորհալւոյ]

Տե՛ս նեւ. **500**, 4ա-51բ։ ա-բ*չքբ*։ գ/*1ա-2բ*։ դ/*2բ-11ա*։ ե/*11ա-25բ*։ զ/*25բ 31բ*։ է/*31բ 3ա*։ թ/*33ա-4ա*։ ժ/*34ա 5բ*։ ի/*35բ-6բ*։

Բ. *36բ-77ա* Նուաստ վարդապետի Յով[հաննու] եզնկացւոյ] խրատ հասարակաց հրիատոնէից, ֆահանայից եւ ժողովրդոց՝ ի կանոնական սահմանաց առաքելոց, սրբոց եւ հայրապետաց եւ վարդապետաց, եւ սուրբ Հօր մերոյ՝ Վարդան վարդապետի, յոր յամենայնէ ժողովեցի եւ գոեցի։ Կարդալ եւ զիս յիշել։

Տե՛ս նեւ. **228**, 71ա-127ա։ *Նիպր./36բ-8բ*։ 1ա/*38բ-41ա*։ 1բ/*41ա-2բ*։ 1գ/*42բ 3բ (վերջից թերի. «... ոք կամի պէտս տալ նիւ ըմպելոյ կամ///»)* 1դ/*47ա (պահպանուած միայն վերջի էկս էջը. «///մի՛ ասղնորդք...»)։* 1ե/*47ա-3բ*։ 1զ/*48բ-9բ*։ 1է/*49բ-50բ*։ 1ը/*50բ-1բ (ունի յաւելեալ յաճ՝ 51ար. «եւ ընդ Հոգոյն Սրբով Հայր եւ Որդի... զի սուտ է աստանալէ է»)։* 1թ/*յ[բ]*։ 1ժ/*54ար (սկիզբը եւ վերջը թերի. «///աստաց եւ ասէ. Ո՞ գիտեմ... մի՛ վասն փոքր իրաց եւ տակաւ պատ[ճառի]»)։* 1ժա/*յ[բ]*։ 1ժբ/*56ար, Յա (սկզբից թերի. «///հայեին եւ երիկունն ի ժամ քնոյն...»)։* 1ժգ/*55ա-9բ*։ 1ժդ/*56բ-60ա*։ 1ժե/*60ար*։ 1ժզ/*60բ-1ա*։ 1ժէ/*61ար*։ 1ժը/*61բ-2ա*։ 1ժթ/*62ա-3ա*։ Սահակայ կանոնք/*63ար*։ Սրբոյն Սահակայ վասն քահանայից/*63բ*։ Սրբոյն Բարսղի կանոնք/*63բ-4ա*։ 2/*64ա*։ 2ա/*64ար*։ 2բ/*64բ-5ա*։ 2գ/*65ար*։ 2դ/*65բ*։ 2ե/*65բ*։ 2զ/*65բ-6ա*։ 2է/*66ար*։ 2ը/*66բ*։ 2թ/*66բ-7բ*։ 2ժ/*67բ-8ա*։ 2ժա/*67բ-8ա*։ 2ժե/*68ա-70ա*։ 2ժբ/*70ա*։ 2ժգ/*70ա-1բ*։ 2ժդ/*71բ-2բ*։ 2ժե/*72բ-3ա*։ 2ժզ/*73ար*։ 2ժէ/*73բ*։

2ժը/73բ: 2ժթ/73բ-4ա: 2ի/74ա: 2իա/74ա: 2իր/74բ: 2իզ/74բ-5ա: 2իղ/75ապ: 2իե/չիթ: 2իզ/75բ-6ա: 2իէ/76ա: 2իը/76ա-7ա:

Ձեռագիրը նորոգուել է եւ այդ ընթացքում ընդմիջարկուել չեսագալ գրչութեան այլ նիւթերով: Ըստ այդմ

Գ. *77ա-132բ* [Թուասք, Կանոնք, Թուղթ]

Տե՛ս ձեռ. 228, 127ա-208բ: ա/*77ա-81ա*: բ/*81ա-2բ*: գ/*82բ-3բ*: դ/*83բ-5բ*: ե/*85բ-8ա*: զ/*85ա-93ա*: է/*93բ-5ա*: ը/*95ա-9բ*: թ/*99բ-110բ (խորագիրը չկայ)*: ժ/*110բ-4ա*: ժա/*114ա-5բ*: ժբ/*115բ-9բ*: ժգ/*119բ-25ա*: ժդ/*125ա-32բ*:

Դ. ա. *93ապ* [Դարագլուխք] — *ՅԱդամայ մինչեւ զջրհեղեղն գումարին ամք... եւ անտի ի հայ թուականն ամք ՌԽԱ. (241)*:

բ. *93բ* [Սաթողիկոսք Հայոց եւ ամք նոցին] — *Առաջին կաթողիկոս ի Հայք սուրբն Գրիգոր ամս Լ. (30)... յաջորդէ յաթոռ հայրապետութեան Հայաստանեաց Խոսրով:*

ե. *132բ-59բ* [Ճառ Կիրակոսի Երզնկացւոյ]

Տե՛ս ձեռ. 228, 208բ-41բ: -/*132բ-40բ*: ա/*141ա-5ա*: բ/*145ա-8բ*: գ/*148բ-50բ*: դ/*150բ-3բ*: ե/*153բ-6ա*: զ/*156ա-7ա*: է/*157ա-9բ*:

ՅԱԽԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՔ, ԺԸ. ԴԴ.

[Բնագիրք զանազանի]

44ա [Յաղագս որկամոլութեան կամ արբեցութեան] — */// զանդաստանս եւ զայգիս ջրերելոյ... մեղք ուսանի:*

44ա (Գրչից) *«Ով եղբայր, անմեղադիր լե՛ր, որ աւրինակն այլ չկայր»:*

ա. *44ա-6բ* Յաղագս խնամոթեան, թէ որպէս լինի խնամութիւն — *Որ կամէ ի վայր քան զերիս եւ զչորս ազգն... եւ ի խըղճէ եմք անպարտ:*

բ. *51բ* [Հմայագիր] — *Ամամբայ մուամր... Այս մկնայ տամու գիր է...*

գ. *52ա-3բ* [Գուշակութիւնք] — *Թէ գագաթն խաղայ, մեծութիւն է... եւ այլ մաղտանքն լինի. եւ գիս յիշեա՛յ ի Տէր:*

դ. *55ա* Գիր աչաց ցաւի — *Երանելին Փոտինայ խնդրեայ... գրէ, վրէն պահէ:*

ե. *55բ* Վասն խիթի — *Խիթն խթեց, խիթն խոցեց... այս մարդու:*

զ. *55բ, 57աբ* Վասն աղաւթից ասասցուք այսպէս — *Եւ պարտ է քրիստոնէիս աւուրն Ե. հետ աղաւթք առնել... Հօր իմոյ ժառանգեցէ՛ք:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

159բ (գրչի) Փառք սուրբ երրորդութեանն եւ մի աստուածութեանն յաւ|*160ա*|տեսանս յաւիտենից. ամէն: Արդ, գոհութիւն եւ փառս մատուցանեմք համագոյ սուրբ երրորդութեանն՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որ ետ կարողութիւն մեռեալ ոգւոյս եւ տկար անձիս՝ հասանել յաւարտ գրոցս, որ կոչի Հնդհանրական ի սրբոյն Շնորհաց Ներսէսէ եւ յայլ վարդապետաց, *ի[ւրա]*տք ոգէշահք եւ պատուականք ամենայն եպիսկոպոսաց եւ քահանայից, կրասո[ւատրաց] եւ ժողովրդոց:

Արդ, գրեցաւ սա Ձեռամբ ումեմն անարժանի, սուտանուն աբեղի, փծուն գրչի Ջահարի, ի խնդրոյ ճգնաւոր եւ մաքուր սրբասիրի եւ առաքինի, սուրբ եւ ընտրեալ քահանայիս (անուան տեղը բաց, յետագայում նոտրգրով աւելացուած՝ «ի վանէուսն տէր Պարսամիս, որ է Թիրլևզևցի»):

Գրեցաւ սա ի սուրբ եւ ի հռչակաւոր ուխտս առ դրան Սուրբ Լուսաւորչին եւ Սուրբ Վարդիճօրն գերեզմանին, ի վանքս, որ կոչի Անկումեեաց, եւ այլ սրբոցս, որ հաւաքեալ կան ի սայ: Գրեցաւ ի թվականիս հայոց ՋԻԸ. (1476), դեկտեմբեր ամսոյ Ի. (20), եւ յաւարտումն Աստուածատուր հայրապետիս եւ յեպիսկոպոսութեան տէր Գրիգորիս եւ ի դանութեանն Հասանպկիկի եւ ի պարո|*160բ*|ութեան Հուսէյպկիկի. ՋԻԸ. (1476) դնաց ի վերայ թագաւորին:

Մ՛վ սուրբ քահանա՛յք եւ մանո՛ւնք սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպիք կարդալով կամ աւրինակելով եւ աւագիք ի սմանէ, յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր զԳրիգոր եպիսկոպոսն եւ զԱստուածատուր հայրապետն, որ [յոր]դորեցին զմեզ ի գրելն եւ հետ մէր աշխատեցան: Յիշեցէ՛ք եւ զծնօղսն՝ զՄկրիխեեդն, եւ զմայրն իմ զՄելիճն, եւ զեղբայրն իմ զԳասպէն, եւ զքոյրն իմ զԱսլամխերիճն եւ զՏովլաթխսրուն եւ զՄարեամն: Յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասցէ՛ք. ամէն: Եւ զՄարկոսն, որ գիտուիք հա՛յրք իմ եւ եղբա՛յրք, անմեղադիր լեր՛ք սղալանաց եւ խոշորութեան գրիս, զի կայր մեր այս է: Յիշեցէ՛ք եւ զծնօղսն՝ զՄկրիխեեդն, եւ զմայրն իմ զՄելիճն, եւ զեղբայրն իմ զԳասպէն, եւ զքոյրն իմ զԱսլամխերիճն եւ զՏովլաթխսրուն եւ զՄարեամն: Յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասցէ՛ք. ամէն: Եւ զՄարկոսն, որ գիտուիք կոկեց եւ ի հետ մեզ աշխատեցաւ. ամէն:

Ձեռս երթայ, դառնայ ի հող,

Գիրս մնա յիշատակող. ամէն:

Եւ զՀետիճ մամն, որ խիստ աշխատեցաւ ի հետ մեզ՝ ի հացին թխելն, ի տան աւիլելն, եւ գոէր Միճաս, որ զչուրն իբեր գասանն, յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասա[ցէ՛]ք իւրն եւ ծնաւղացն. ամէն, ամէն:

Տե՛ս ժե. գ. յիշ-ք, Բ., էչ 401:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

161ա (կազմողի, 1624 թ.) Արդ, յիշեցէ՛ք զՅովհաննէս եպիսկոպոսն, հանդերձ ծնաւղաւքն իւ[ր]ովք, որ ետ նորոգել զհնացեալ եւ զփտեալ գիրքս՝ յիշատակ հոգոյ իւրոյ: Եւ [է]ս՝ ծոյլս եւ պղերգս ամենայնի, սակաւ ջանս արարեալ՝ հագիւ կարացի նորոգել զսա, քանզի չ[ոչ]Ժ հնացեալ էր:

Դարձեալ յիշեցէ՛ք զՅովաննէս եպիսկոպոսն եւ զՍրապիոն կրաննաւորն եւ զԿօճկով տքնեսն, որ չոյժ աշխատասար էր ի դուրս վանից, եւ Աստուած ողորմի

ասացէ՛ք իւրեանց հոգւոյն, եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի ի միւսանգամ գալըստեանն իւրոյ. ամէն։

Գարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ ընթերնողք. սուրբ մանկո՛ւնք, յորժամ ընթեռնուք զգրեալս, յիշեցէ՛ք ի յաղաւթս ձեր զՄելիսեդեկ կազմողս։ Ահաւ կատարեցաւ այն ի վերայ իմ, որ ասէ. Ոչէ ես որպէս բու աւերակի. եւ այլն, եւ Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն. թվին ՌՀԳ. (1624)։

Տե՛ս Ժէ. դ. յիշ-ք, Ք., էջ 138-9։

161բ (բոլորգիր, Ժէ. դար) Զի դուէն Հասպնահէ Դ. սպիտակ, Ե. սէվ, Բ. սպիտակ, Ա. սէվ, Գ. սպիտակ, Ա. սէվ[էվ], Ա. սպիտակ, Բ. սէվ/// Բ. սէվ, Ա. սպիտա[կ], Բ. սէվ, Բ. սպիտակ, Ա. սէվ. եւ՝ ապեզայ տէր Ովհ։

161բ (նոտրգիր, 1731 թ.) Յիշատակ է այս ՔառոգայկիրՔ Թիլֆիսցի Կօկիճի որդի Մելիքին. թվին ՌՃՁ. (1731) գրեցաւ, յունվարի մ[նում]։

ԳՐՈՒՄՈՐՔ՝ *161բ «Բ. ուխտ է այս գիրքս», «Ետադայգիր»։ Աա «Ես Տէրունս գիր տվ/// բվ»։ Աբ «Յիսուսի Քրիստոսի ծառայ էեյյ»։*

ՆՇՈՒՄ՝ *Կազմի մէջքին սոսնձած թղթին «27»։ Ա. կազմաստառին սոսնձած թղթին «2[illegible] 424/2542», «ՋԻԽ. - 1476, Մ[ևսրոպ] եպ[իսկոպո]ս»։*


2543

Ա Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ


ԱՅԱՒ, ԱՏԱՆԱ.

ԳՐԻՉ՝ Սիմեոն Տրապիզոնցի։

ԹԵՐԹ՝ 204 չգրուած՝ 169բ։ ՊԱՐԱ՝ Ա-ԹԵՐ16 (Ա. 15, Է. ԺԵ 14, Ը 8, Ի 4, ԻԱ 12, ԻԲ 20, ԻԳ 5)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 15,5x10,8։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13-13,5x8,5-9, 170ա-4ա, 203բ-4բ՝ 15x8,5)։ ԳԻՐ՝ բոլորգիր՝ նուռգրի երեսմնակի տառերով (նմուշ՝ 15ա), նոտրգիր (170ա-4ա, նմուշ՝ 170ա)։ ՏՈՂ՝ 14-27։ ԿԱԶՄ՝ դրոջմազարդ շագանակագոյն կաշի, դունակով, միջուկը տախտակ. աստառը չերտազարդ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա (սկ.), թուղթ։



Նմուշ 15ա



Նմուշ 170ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին եզրամաշ, երկտակած կապիչներն ու գամերն ընկած, սկզբից եւ վերջից պակսաւոր, թ. 174՝ հիմից պոկուած, թ. 1-4՝ կազմի գամերից առաջացած երկտակած աճը։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1ա* [Յաղագս խառնելոյ խմորոյն] – *///յիւր եկեղեցին եւ մեզ վիա Հռոմայեցոց եկեղեցին... որպէս ասէ Սոկրատ հրաշքեան պատմագիրքըն։*

Բ. *1ա-4բ* Պա[տ]ճէն, որով զորովայնամոլ արբեցաւղն յամօթ առնեն այսպէս – *Որք ծառայեն որովայնի եւ հակառակին աստուածեղէն գրոց... խնդրեսցեն քողութիւն մեզաց մերոց եւ Քրիստոսի փառք յօւհտեանս՝։*

Գ. *4բ-41բ* [Վկայութիւնք]

Ջկդ. – 1515, Ջկթ – 1520

ա. *4բ-16ա* Վկայութիւնք վասն ծրնրնդեանն Քրիստոսի եւ մրկրբութեան, զի պարտ է տօնել ի միում ատուր, ի յունվարի Ջ. – *Կարգեցին առաքեալքն Տեառն զաւր ծրնրնդեան Տեառն...*

Վկայութիւնք Կղեմէսի, Յովհաննէս Երուսաղէմացւոյ, Նեքտարոսի, Գրիգոր Աստուածաբանի, Բարսեղ Կեսարացւոյ, Հիպոդիտոսի, Սեբերիանոսի, Մելիտոնի, Կիպրիանոսի, Մարուեթայի, ասորի վարդապետների, Յուստինիանոսի, Գրիգոր Արծրունեաց եպիսկոպոսի, Յովհաննէս կթղ-ի, Կոմիտաս կթղ-ի, Ստեփանոս Սիւնեցւոյ, Անանիա վրդ-ի, Ներսէս Շնորհալիի, Կիւրեղ Աղէքսանդրացւոյ երկերից։

բ. *16աբ* Վկայութիւնք ընդէմ նոցա, որ ասեն, թէ Տէրն ո՛չ եկեր զգառնն հինգշաբաթին երեկոյին – *Վասն որոյ հին գառնկին սկսանի...*

Վկայութիւնք Յովհան Ոսկեբերանի, Ջենոբ եպս-ի, Մարութայի, Ներսէս Շնորհալիի երկերից։

գ. *16բ-25ա* Վկայութիւնք, զի պարտ է զօսւորք պատարագն մատուցանել անխմոր եւ անթուր, անաղ եւ անձէք – *Արժան է գիաց պատարագին ջերմ հանել...*

Վկայութիւնք Թագէոս առաքեալի, Մակար երուսաղէմացւոյ, Գրիգոր Աստուածաբանի, Հռոմի էւտն պապի, Դիոնէսիոս Աղէքսանդրացւոյ, Եփրեմի եւ Ջենոբի, Ամոբիկոս եպս-ի, Կիպրիանոսի, Կիւրեղ Աղէքսանդրացւոյ, Կեղեստիանոսի, Յովհան Ոսկեբերանի, Յովհան Իմաստասէրի, Գէորգ կթղ-ի, Կոմիտաս կթղ-ի, Տիրան վրդ-ի, Խոսրով Հռետորի, Ներսէս Շնորհալու երկերից։

դ. *25բ* Մանուէլի եպիսկոպոսի Վասն խաչին – *Ի ձեռն Կոստանդինոսի հաստատեցաւ տաւնախմբութիւն խաչիս...*

ե. *25բ-38ա* Վկայութիւնք, զի պարտ է ասել զեաչեցարն ամենայն աւուր ի դէմս Ուրբո – *Եւ արդ, ոչ եղեւ հնար գնարմինն Տեառն իջուցանել ի խաչէն...*

Վկայութիւնք Նեքտարոսի, Սոկրատի, Իպնատիոսի, Կղեմէսի, Աւրեղիոսի, Որոգինէսի, Խսիդորոսի,

Գրիգոր Աստուածաբանի, Բարսեղ Կեսարացու, Եպիփան Կիպրացու, Կիւրեղ Երուսաղեմացու, Յովհան Ոսկեբերանի, Դաւիթ փիլիսոփայի, Ստեփանոս Սիւնեցու, Ներսէս Շնորհալու, Կոմիտասու կթղ.ի, Գէորգ կթղ.ի, Սեւերիանոսի, Դիոնեսիոս Ազէքսանդրացու, Արիստոտելի երկերից:

զ. *38ա-40բ* Վասն զատկի մատաղի, զի բարի է եւ վասն այլոց մատաղաց – *Կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ...*

Վկայութիւններ Գրեմէս հայրապետի, Սահակ վրդ.ի, Բարսեղ Կեսարացու, Սահակ Պարթեւի, երկերից:

է. *40բ* Վասն աղի աւրհնութեան՝ Յոսուոսի, երեորդ եղեալ եսիսկոպոս յԵրուսաղեմ յետ Յակոբայ եւ Շմաւոնի – *Արդ, առաջին ի Վարդավառի տաւնին...*

ը. *40բ-1բ* Վասն Առաջաւորին պահոցն – *Սայ ստուգապէս նիհուէացող պաքն է...*

Դ. *41բ-98ա, 184ա-9բ, 194ա-7ա, 203ա-4բ* Նուաստ վարդապետի Յոհաննէս ե[ռ]ձնկեցոյ Խրատ հասարակաց Հրիստոնէից, հաւանալոյ եւ ժողովրդոյ՝ ի կաւնոնական սահմանաց առաքելոց, արոց եւ հայրապետաց եւ վարդապետաց եւ սուրբ ե[ռ]ր մերոյ Վաղդան վարդապետի, յոր յամենայնի ժողովիցի եւ գրեցի

> Տե՛ս ձեռ. 228, 71ա-125բ: *Յաւելեալ ունի [յանկ գլխոց]/41բ-3ա: Նիգդ./43ա-6բ:* 1ա/*46բ-51ա (կրկն.՝ 203ա-4բ, վերջը թուխասե. «... իսկ ներկայ ժամանակ///»)*: 1բ/*51բ-4ա*: 1գ/*54բ-7ա*: 1դ/*57ա-62ա*: 1ե/*62ա-4բ (կրկն.՝ 185ա-9բ)*: 1զ/*64բ-6ա*: 1է/*184ա-5ա*: 1ը/*185ա-6ա*: 1թ/*186ա-8ա*: 1ժ/*66բ-9բ*: 1ժա/*70ա-2բ*: 1ժբ/*չկ.*: 1ժգ/*195բ-7ա*: 1ժդ/*72բ-3ա*: 1ժե/*չկ.*: 1ժզ/*194ա-5բ*: 1ժե-ժթ/*չկ.* Սահակա կանոնք/*73բ-4ա*: Սրբոյն Սահակայ Վասն քահանայից/*74ա*: Սրբոյն Բասիղի/*74բ-5ա*: 2/*75ա*: 2ա/*75ա-6ա*: 2բ/*76ա-7ա*: 2գ/*77ա*: 2դ/*77ապ*: 2ե/*77բ*: 2զ/*77բ-8ա*: 2է/*23ա-9ա*: 2ը/*79ապ*: 2թ/*79բ-81ա*: 2ժ/*81ա-2ա*: 2ժա/*82ա-5ա*: 2ժբ/*85ապ*: 2ժգ/*85բ-8ա*: 2ժդ/*88ա-90ա*: 2ժե/*90ապ*: 2ժզ/*90բ-1ա*: 2ժէ/*91ապ*: 2ժը/*91բ*: 2ժթ/*91բ-2ա*: 2ի/*92ա*: 2իա/*92բ*: 2իբ/*92բ-3բ*: 2իգ/*93բ*: 2իդ/*93բ-4բ*: 2իե/*94բ-5ա*: 2իզ/*95ա-6ա*: 2իէ/*96ա*: 2իը/*96ա-8ա:*

ե. *98ա-102բ* Պատճառ Վարդավառի տօնին – *Ամենայն աստուածային տօնք... յաւիտեանն գնայ:*

Զ. *103ա-6բ* Ներսէսի կաթողիկոսի Հայոց ի Հաւատոյ թ[ղ]թէն, որ առ Մանիլ թագաւորն վասն արոց պատկերաց – *Էր ի գիրս ասացեալ եւ վասն սրբոց պատկերացն... գայս պարզբս առաջաւոր:*

է. *106բ-18բ* [Ներսեսի Լամբրոնացւոյ] Ուրոշումն Թ. դասուց աստիճանաց եկեղեցոյ եւ յատկութիւն գործառնութեանց նոցա եւ սգեստուց, ընդ որս եւ ընդդիմադրութիւն այսորիկ խորհրդոց ուսուցչացուցողաց – *Նկեղեցիք քրիստոնէից առաքելական խաւսիք... եւ ցանկութեան սորա:*

> *Տե՛ս Սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ Տարօնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ Մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 80-87:*

Ը. *119ա-20ա* Ի սմին աւուր յիշատակ հրաշիցն, որ եղեն յերուսաղէմ – *Վարդապետ մի Յոհաննէս անուն... այլ եւ եղեւ այս ի Ռ. եւ ՀԱ. (1222) թ.ին, ի յարութեան աւուրն:*

Թ. *120ա-2ա* Խոստովանութիւն հաւանչիցն – *Մեղայ ամենասուրբ Երրորդութեան... եւ ապա՝ Հա՛յր մեր յերկինս*

Ժ. *122բ-57բ* Պատմութիւն արոյ Կուսին Մարիամէ – *Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... ի թագաւորութեանն Հեռկղիանոսի ամբարիշտի... ամէն:*

ԺԱ. *158ա-66ա* [Վկայութիւն արոյ կուսին Կատերինեայ՝ դրսեռ թագաւորին Կոստասա. ձեռ. 1522, 282բ] – *Այս իմաստասէր եւ հանճարեղ կինս էր ի քաղաքէն Ալէքսանդրիա... ի Սինէական լեառնն:*

ԺԲ. *167ա-9ա* Նարեկի Գրիգորի վարդապետի [Աղօթք] – *Ամենայնիւրք Մարիա՛մ, կո՛յս անարատ... զքաւութիւն եւ զլսեծ զողորմութիւն, որում փառք, պատիւ եւ զաւրութիւնն եւ իշխանութիւնն յաւիտեանս. ամէն:*

ԺԳ. *170ա-1ա* [Կարգաւորութիւնք ցուցմանց աւրհնութիւնարեր ցուցակի*] – *///ից սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու... Այսքան է ցուցակ Մաշտոցին:*

> *Տե՛ս Մայր Մաշտոց, հտ., Ա. գիրք Ա., աշխատասիրութեամբ Գ. Տէր-Վարդանեանի, Սբ. Էջմիածին, 2012, էջ 656:*

ԺԴ. *171ա-3ա* [Բաւիճ խաստնոց] – *Հին նոր եւ առաջին նորն...*

Քաղուածքներ Պլատոնից, Արիստոտէլից, Ապոլոնից, Սիբիլլայից, Սոլոնից, Պլուտարքոսից, Սոֆոկլէսից, Յովսէպոսից:

173բ (Յիշատակարան Թարգմանչի) Ոմն բժիշկ, խպտի ազգաւ, յոյժ աստուածասէր եւ բարեկամ եւ սիրելի մեր, եկեալ առ իս՝ յեպիսկոպոսարանն որ ի Կեսարոս, եւ երբեր առ իս զգրեալ Բանքս յիմաստնոց՝ յունարէն լեզուով, եւ խնդրեաց յինէն Թարգմանել զսոսա յարաբացի լեզու, որ եւ Թարգմանեցի վասն խնդրոյ նորա, եւ ապաւ դարձեալ Թարգմանեցի գնայ ի յունարէն լեզուէ ի հայ լեզու, յորում ժամու պատահեցաւ առ մեզ պատուական եւ առաքինասէր եւ աստուածասէր նուիրակն տէր Աւետիք արեղայն, որ եւ բնդերեցաւ գԹարգմանեալն ի մէնջ զսակաւ իմաստասիրաց խօսս, զոր ի վերոյ ասացաք, եւ յոյժ փափաքանաւք խնդրեաց ի մէնջ, վասն որոյ գրեցի զսայ ի խնդրոյ տէր Աւետիքին:

Արդ, աղաչեմ գամենեսեան, որք հանդիպիք շահաւէտ բանիցս, յիշեցէ՛ք գԹարգմանիչ եւ զգրիչ սակաւ բանիցս այսոցիկ գԴաւիթ սոսկանուն եպիսկոպոսս Կիպրոսի եւ զԳեղոզ խրպի (=խպտի) բժիշկ, որ զօրինակն ետ եւ ասաց զձեզ յիշէ. ամէն:

ԺԵ. *175ա* Պոռտադեղ: Գ. հետ ասա՛յ – *Եկին Բ. ճերմակ հուր... արին պորտայդեղ:*

ԺՋ. *175բ-7բ* [Բնութիւն աւձին] – *Խնաստութիւն աւձին զԱդամ ոչ խաբեաց... յայնժամ ի Քրիստոս նայեաց եւ լուսաւորիս:*

ԺԷ. *177բ-8ա* [Աղօթք] – *Տէ՛ր Յիսուս, դու ես ապդնական իմ... բայց ի քէն Տէ՛ր, Տէ՛ր իմ:*

ԺԸ. *178ա-84ա* [Հարցմունք եւ պատասխանիք] – *Ջի՞նչ է, որ ասէ Դաւիթ... որպէս Մովսէսիւն Խորէլի:*

ԺԹ. *189բ-94ա* Տեսիլ սուրբ Աստուածածնին – *Սուրբ կոյսն Մարիամ... եւ անթառամ պսակացն ի Քրիստոս Յիսուսՙՙ ի Տէր մեր, որում փառք յաւիտեան՛՛:*

Ի. *197ա-201բ* Բան գովելի – *Ով որդեակ, վերջին ժամանակն լցաւ երկիր ամենայն մեղաւք... մեծ դատաստանին:*

ԻԱ. *201բ-3ա* Վասն արբեցողացն – *Ջի ամենայն, որ արբենայ, սպանանէ... եւ յանբարիսն վայելեսցուք ի Քրիստոս Յիսուսՙՙ ի Տէր մեր, որո[ւ]մ՛՛:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

166ա Գրեաց զվկայութիւնս Աթանասիոս պապին սրբոյն Կաւատեռնեայ ծառայն, որ զաւրացուցեր զսուրբն Կաւատռիճեայ ի հանդէս նահատակութեան, Քրիստոս Աստուա՛ծ, արա՛յ ողորմութիւն գտանելիքէն բարէխօսութեամբ |166բ| վկայուհոյս, ծառային քո Սիմէոն եպիսկոպոսին:

Գրեցաւ նահատակութիւնս սրբուհեանցն Մարիաննէ եւ Կատէրինեայ ի թվականին հայոց ՋԿԹ. (1520), ամսուն յունվարին, ի քաղաքն ի Լանսանայ, ի դուռն Սուրբ Աստուածածնին, ի պահպանութիւն ամենայն հաւատացելոց. եւ գտանել թողութիւն այնոցիկ, որք հաւատով եւ յուսով կատարեն զյիշատակ սրբոցն Մարիանէ եւ զԿատարինեայ, նայ եւ որք նահատակութիւնս նոցա գրեն, տացի նոցա վարձս ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ:

167բ Մանաւանդ Սիմէոնիս:

168բ Առաւել աղաչեմ զձեզ զամենեսեան արտասուաւքն պաղատանաւք հայցել ի Քրիստոսէ զթողութիւն հոգոյ եւ զաւդչութիւն մարմնոյ Սիմէոնի եպիսկոպոսի:

171ա Ջգծողս յիշեա՛յ ի Տէր:

174ա Սուրբ/// (վերին մէկ տողը կտրուած) ըստակ
Ջխնդիրս քո կատարեցաք,
Ջոր խնդրեցեր գործով արագ,
Ջայս յիմաստնոց բանս, որ ի կարգ,
Ջոր ի յունաց թարմմանեցաք,
Ջսոսա գրեցի շարադասակ
Եւ յՀերմէսինն յաւելաք:
Արդ, աղաչեմ հոգով յստակ
Ջսէր Աւետիքըս հրաւիրակ
Ջիս յիշեսցես արագ երագ
Ի սուրբ աղօթըս քո ընդունակ,
Ակ եւ զծընաւղսն իմ աստ համակ,
Ընդ որս զեղբայրս իմ համշիրակ
Եւ զվարդապետն իմ շարունակ,
Եւ դու յիշեալ լիցիս յերակ
Ի յանմոռաց Տեառն յիշատակ
Երրորդութեան համալքատակ,
Փառք եւ պատիւ միշտ անհատակ:
Ջմեղուցեալ եւ զեռաթիշատա հոգիս աղաչեմ միշտ ազօթիւք յիշել ի Տէր զՍիմէոն Տրապիզոնցիս: Գրեցաւ սակաւ գիրս ի թվականի հայոց ՋԿԴ. (1515), նոյ[եմ]բերին ԻԲ. ի Յ.կաս՝ ի դուռն Սուրբ Վասիլեայ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

174բ (Նոտրգիր, 1760 թ.) Թվին ՌՄՃՊ.ն (1760), յուվար ԻԵ.ի (25), որ եղեւ Մտեփանոսն յեղաւ տըղայ, զոր Տէր Աստուած յանփորձ պահէ. ամէն:

174բ (Նոտրգիր, 1759 թ.) Թվին ՌՄՃԸ.ին (1759), մարտի ԻԵ.ին Զըմրուքը տղայ յեղաւ, զոր Տէր Աստուած յերկար կանք տացէ, յանփորձ, յանսասան պահեսցէ. ամէն:

102բ (բոլորգիր, ԺԷ. դար) Ընդ քահ[ան]այիցն Մելքիսէդեկի եւ Աճառոնի եւ եղիազարու եւ Հեղի ծեր քահանային դասեսցէ զձեր հոգին եւ զձեր ծնողացն, եւ ամենայն ազ[գ]ականաւք ի խորանս լուսոյ ի գասս աջակողմեան, ուր արաւգուարճ բերկրին հրեշտակք, եւ խնդան արդարք. անտ պարիք ի պարս նոցա, եւ վայելէք ի սեղան անմահական, զոր ակն ոչ ետես, |103ա, ստ. լս.| եւ ունկն ոչ լուաւ, եւ սիրտ մար[դ]ու ոչ անկո:

ԿՆՔՈՒԴՐՈՇՈՒ՝ *Պահպանակ Աա երկիցս, ոճաւորուած քագմանկիւն, վերին մասում հրեշտակ, տակը՝ «Տէր»:*


ԳՐՉՈՒՔՈՐՉ՝ *Պահպանակ Աա՝ «Եւ գութ եւ ակ: Գու: Գութնանուն Ալիչալայ պին», «Քարգարեսեցէ եւանկ: Դարեսցես: Արգար է»:* Պահպանակ Աբ *(նոտրգիր) «Հող աւրհնուած աստուածային իջցէ ի հող մահու սորին եւ բուսցէ... եւ եկեալ նոր նորոգեսցէ փառուք ի փառս, Տէր փառաւորէ քեզ Հայր»:*

ՆՇՈՒՄ՝ *Ա. գագմաստառ ին սոսնձած թղթին «Հ՟ր 436/2543»: Աա «ՋԿԴ. - 1515, Մ[եսրով] եպ[իսկոպո]ս», 1ա (ստ. լս.) «Կանոնգիրք: Ն. Յ. վ. ծ. վարդապետ Գրիգորէան», գագմի մէջքին սոսնձած թղթին «Յ. ժողովածու/ժողովածու (բառը գրուած հակառակ դիրքով):*

2544


ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ (ԺՂԱՆԱԳ)

ԹԵՐԹ՝ 227+1 (կդկ.՝ թ. 16)։ ՊՐԱԿ՝ Ա-8x8 (թերթերը խառն են, ճշգրիտ պատկերին ամենևին չ)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 16-16,8x11,5-12,6։ ԳՈՒՆԹԱԿԻՆ՝ միասիւն (12,5x9)։ Գիր բոլորգիր (նմուշ՝ 50ա)։ ՏՈՂ՝ 14։ ԿԱԶՄ՝ դոյժագաղոյ շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ, աստառը դոյժագաղոյ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (Բ) +1 (Գ), չզրուած թուղթ, լուսազծերով եւ լուսադրոյմով՝ եռեմնուկ, Բբ, Գա։



Նմուշ 50ա

ՊԱՀԱՐԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան Ի-ԻԱ., Իբ.՝ 1(Ա) + 1(Գ)։ Թե. դ՝ Մազապաք, Ա՝ 15,8x11,1. Դ՝ 16,3x11,1, միասիւն (12,2x9), բոլորգիր (նմուշ՝ Աբ), տող՝ 20։ Ասբ. «[զտխրակամութիւն երեսաց, զկամս խոհերդոց... ի մէջ ճեպաճոաց։ Հաւաածրս բստ հաւասծոց» (Բան Ի-ԻԱ.)։ Դաբ. «[իր]ին յիշատակաւոն դրեց ինձ ճմաճեցաւ... զտաւամերժեալ զեհիս ազատեալ» (Բան Իե.)։



Նմուշ Աբ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին եզամաշ, եզկուական կապիչներն ու զամերն ընկած. ճնում նուոգուած եւ թերթերի մի մասր պակաս տեղաղրուած. սկզբից, միջից եւ վերջից թերթեր պակաս (տես Բովանդակութիւն), թ. 95ի ստորին աուսակին անկիւնն ընկած՝ գրադաշտը վնասուած, թ. 186 ստորին լուսանցքը կարած. լուսանցակողերը՝ գունաթափուած։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-227բ* [Լուծմունք ի Սուրբ գոգց, Վարդանայ վարդապետի, ի խնդրոյ բարեպաշտ թագաւորին Հեթմոյ՝ ժղլաւք]

Տես ձեռ. 341, 1ա-141ա։ 1. ա/*1ա-2բ* (սկիզբը թերի. «///եւ կոչեցաս Մարկոս...»), բ/*2բ-5բ* (անխորագիր, վերջը թերի. «... ապա թէ մարդ էր սոսկ, որ գար///»); 2/*6ա-8ա* (սկիզբը թերի. «///ունէր յաջ ձեռինն...»)։ 3. ա/*8ա-11բ*։ բ/*11բ-16բ* (վերջից թերի. «... Ընդ՛ր լռեաց գամս և. ի սքանչել///») գ/*16գ-7ա* (սկզբից թերի. «/// Ադամ ի դրախտն...»)։ դ/*17ա-24բ*։ Ե/*24բ-5ա*։ զ/*25ա-6ա*։ է/*26ա-32ա*։ ը/*32ա-4ա*։ թ/*34աբ* (անխորագիր)։ ժ/*34բ-3ա*։ ժա/*35ա-42ա* (անխորագիր)։ ժբ/*42ա-3ա* (անխորագիր)։ ժգ/*43աբ* (վերջից թերի. «... Զինչ՛ց է նոր ոխտ, Պատ. Զի հին ոփ///»)։ ԺԱ/*44ա-6բ* (սկզբից թերի. «///նշանացն Տեառն...»)։ 5. ա/*47ա-50ա* (անխորագիր)։ բ/*50ա-4բ* (անխորագիր)։ գ/*54բ-6ա*։ դ/*56ա-8ա* (անխորագիր)։ 6/*58բ-64բ*։ 7/*65աբ*։ 8/*66աբ* (անխորագիր)։ 9. ա/*70բ-71բ, 73ա-7ա*։ բ/*77ա-82բ, 88ա-բ, 84ա-7ա, 83աբ, 89ա-97ա* գ/*97ա-8ա* (խորագրի առաջին բառը այլ՝ «Մեր»ն)։ դ/*98ա-103բ* (վերջը թերի. «... զի նախքան գմարդն///»)։ 10/*104ա-9բ* (անխորագիր)։ 11. ա/*109բ-12բ, 118աբ, 114ա-5բ* (անխորագիր)։ բ/*115բ-7բ, 113ա* (անխորագիր)։ գ/*113աբ, 119ա-27բ*։ դ/*127բ-8բ* (անխորագիր)։ ե/*128բ-31բ*։ զ/*131բ-3ա*։ է/*133ա-8բ*(անխորագիր)։ բ/*138աբ* (անխորագիր)։ 12. ա/*138բ-41ա*։ բ/*141ա-44ա*։ 13. ա/*144բ-6ա*։ բ/*146ա-9ա*։ գ/*149ա-52բ*։ դ/*152բ-3բ*։ 14. ա/*153բ-4բ, 156աբ*։ բ/*157աբ*։ գ/*157բ-61ա*։ դ/*161ա-6բ*։ ե/*166բ-9ա*։ զ/*169ա-70ա*։ է/*170ա-1բ*։ 15/*179ա-80բ, 174աբ*։ 16/*174բ-8բ* (վերջից թերի. «... չպիտի ձեզ յորդորիչ»)։ 17/*181բ-5ա*։ 18/*68ա-9բ, 72աբ///, 70աբ*, (խորագրի սկզբում ունի. «Այլ ճաշակ քեզ ի վայրի մրգացս», միջից թափուած. «... Տարակոյս է աստուածին հակառակից/// անէին։ Տարգումն է արծարծումն գնացելոյն...»)։ 19-21/*չիք*։ 22. ա/*207ա-8բ, 216ա-7բ* (վերջից թերի. «... եւ որ սէրն հասակաւ, մէկ անձն է եւ///»)։ բ/*չիք*։ գ/*213ա* (սկզբից թերի՝ «/// մարմինն ներկաւ ի ճառագայթս...»)։ դ/*213ա-4բ, 119աբ* (վերջից թերի. «... իակ առ մեզ ամէնն առ որդի է յայ///»)։ 23/*218աբ* (սկզբից եւ վերջից թերի. «/// հեղցի արիւն անաանոց... պէտք յարմանոյս, իսկ այժմ///»)։ 24/*չիք*։ 25/*211ա* (սկզբից թերի՝ «/// [է]ն եւ յիշատակարանք սրբոց...»)։ 26/*211ա-2ա*։ 27/*196բ, 198աբ, 197աբ, 200աբ, 199աբ* (վերջից թերի. «... եւ զու առակ մի. Մաղտմոն ասէ///»)։ Յաւելեալ ունի.

1. *185ա-96ա* Թուղթ Պիղատոսի դատաւորի, զոր գրեաց յաղագս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ առաքեաց առ Տիբերոս կայսր ի Հռոմ — *Ի ժամանակին յայնմիկ չեմ խաչելութեանն... եւ սկսոցին սպասկս գործելոց փառաւոր լինէր անունն Քրիստոսի Աստուծոյ առ ամենեսեան, որում փառք եւ պատիւ հանապազ, վայել է ասժմ։*

2. *201ա-3բ*, Վասն բանին մասանց, ի խնդրոյ բարեգարդ բանեանայի Թորոս ամուն կոչեցելոյ, եղբարդոյդ տեառն Կոստանդնեայ Հայոց Կաթողիկոսի, ի Վարդանայ Աղուանեցւոյ, կարճառաւտ — *Բանին մասունք ութ են... այս են մասունք բանին։*

3. *203բ, 209ա-10բ, 204ա-7ա* [Վասն հոգւոյ. ձեռ. 1764, 361բ] — *Իսկ հարսն, զոր եկն Տէրն արկանել յերկիր... այն է ժամանակն Աստուծոյ մարգանալոյ, ոչ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

4. *212աբ, 215ա* Տաղական բանի գոյցէ — *Իմաստնոյ չէ փոյթ տաղական բան առնել... մի համարիր գայս բնդ վայր, եւ Տեառն փառք։*

5. ա. *215աբ, 220ա-7բ* Նորին Վարդանայ Վարդապետի Աղաւթք աղաչոց առ սուրբ Երրորդութիւնն. Առաւաւտուն — *Լո՛ւս համատարած եւ անճառ ճառագա՛յթ... եւ անխորհրդակ եւ [անվհատ] եւ անարատ պահեա՛յ/// (շար. թափուած)։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑՒՈՑ

172ա-3բ, 155աբ, 181աբ

172ա Այմ հայից արա, իմ պարո՛ն, սակաւ մի աշխատեա՛, քո սակաւ աշխատուին գայլոց շատն է արժէ, զի որպէս լուաք ի Քրիստոսէ, ամէն մարգոյ հրեշտակ կայ պահպան, եւ ձեզ, որ ազգի գլուխ եւ թագաւոր էք,

ինքն գլուխն Քրիստոս է պահապան եւ անմեկնելի: Մի՛ պաշտել գնա որպէս հեռաւոր, այլ որպէս առ քեզ, ի սրտիդ եւ յոգւոջդ: Ուր կամիս զգլուխտ եւ գերեստ դնել ի պատիւ նմա, ի գիրկն դնես եւ յԱստուած միասնաս, եւ զոգի իմ տառապեալ եւ տկար յիշեսցես, որ զ|172բ|քեզ սիրէ առաւել քան զասել…

Շար. տե՛ս Ձեռ. 341, էջ 103ա-4բ, «Յիշատակարան Վարդանայ Արեւելցւոյ»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՐ ՈՐԻՆԱԿԻ

46բ Զանյայտ գանձիս յայտնիչ զՎարդան գանձապահն, որ վարիքամանայք հոգով, յիշատակիեսջիք ի բարեբախտին ի Տէր:

58ա Զհոգիացուցանող բանիցս պատճառ զՎարդան կրկին հոգւով կենդանի վարդապետ յիշատակեա՛ ի Տէր՝ որ աւգտիս ընծերցմամբ:

65ա Վարդանա վարդապետի յիշատա՛ր բանի՛:

66բ Սրբազան կաթողիկոսի Հայոց տեառն Կոստանեայ յիշատակ:

70բ Սրբազան կաթող[իկոսի] Հայոց տեառն Կոստանեայ ողորմիացի՛ Տէր, եւ լոյս վարդապետին Վարդանայ, որ զրանքս յարմարել է:

109բ Խնամալի լուսոյս ծագուլ լոյս վարդապետն Վարդան յիշեսցի ի Տէր:

174բ Զարժանի յիշատակի գսուրբ վարդապետն Վարդան յուսոյ բանիցս ծագեալ յիշեա՛ ի Տէր:

144ա եւ ճշմարիտ ապաշխարողացն փառքն յիւինի պակաս, քան զբնական անձեղ մնացելոցն յաւազանէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

185ա Մուքն էր լոյս հրագիս, եւ շտապալվ էր գրելս: Ամէնզադիր լ՛ր նշանագրացդ՝ թէ անդամիմատ լինի: Աւրհնեալ է Աստուած:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅՆՁԱԳԻԱՅԻ

1բ (նոտրգիր, ԺԷ դ.) Յիշատակ է Կանջեցի Մարտիրոսի որդի տիրացու: Յաւութիւնի:

Պահպանակ Գբ (նոտրգիր, 1740 թ.) Ով որ իցէ, տէր Աստուն պարզական լիցիս, հոգոց ասել դէրոչըն ձեռամբ ուռուճ Ուռուճեանին: Թիվն 1740 Քրիստոսի, յունվարի ատաչի օրըն, ի վայելումըն տէր Մանուելի ի Զմիրնէ, պէպ Պօզիկեճց Դօվլաք:

184բ (նոտրգիր) 1198 (1749), ի փետրվարի Ի-ին (20), ի ձեռն մահտեսի Իսրայէլին:

181բ (արտ. լս., նոտրգիր, ԺԹ. դար) Զքնաղ եւ ցանկալի է գայս հագուագիւտ հին նշանագիրս, եւ յոյժ պիտանի է հնագիտաց:

181բ (ատ. լս., շղագիր, ԺԹ. դ. վերջ) Նուսատ Յովհաննէս ծ[այրագոյն] վարդապետ Գրիգորեան, առաջնորդ հայոց ի Պուկկարիայ |186ա| ի/// (կտրած-հանած):

ԿՆՔԱՐՐՈՆՔ *20ա, 179բ՝ բոլորակ, «Յիսուսի Քրիստոսի ծառայ Յովհաննէս վարդապետ Գրիգորեան, 1874», Պահպանակ Գբ՝ բոլորակ, անընթեռնելի:*


ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմատուտին սոսնձած թղթին «ԺԹ. Մ[եսրոպ] եա[իսկոպո]ս», ձ[եռ] 444/2544», Քա «Ծաղկի մարգաց», «Գիրք Վարդան վարդապետի», կազմի մէջքին սոսնձած թղթին «1. Ծաղկի մարգաց»:*

2545

ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ, ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ՌՃՂԹ. – 1750

ԹԵՐԹ՝ 119 (գրչի էջակալում՝ 1-233, որ է՝ 3ա-117ա). չրուած՝ 2բ, 118ա, 119աբ. ՊՐԱԿ՝ Ա-ԺԹ×10 (Ա 12, ԺԹ 7). ՆԻՒԹ՝ թուղթ. ՄԵՁՈՒԹԻՒՆ՝ 16,1×10,6. ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11×7). ԳԻՐ՝ նոտրգիր (ճմուչ՝ 14ա). ՏՈՂ՝ 20. ԿԱԶՄ՝ դերձմագարդ շագանակագոյն կաշի, միջուկը ստուարաթուղթ (պատրաստուած հասս, կոպիա թղթից). լուսանցակողերը՝ սեւով ցօղուած. ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա (վէ.), չրուած թուղթ, մաս կազմի միջուկի:



Նմուշ 14ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմին եւ բ 1-ին գեղի աճգիր, 3ա՝ վերին մասում առնուազն երկու տող գրչափոշ, չնչած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

2ա-117ա Համառօտութիւնն ճարտասանութեան, դիւրին ոճիւ եւ վայելուչ օրինական, շարադրեցեալ աշխատասիրութեամբ տէր Մխիթարայ վարդապետի Սեբաստացւոյ, արբայհայր կոչեցելոյ, ի յօգուտ այնց ամենից, որ ունին զփափաք զասութիւնս իրեանց զարդարել զեղեցկագումիւք բառիւք եւ մանաւանդ հաճեցուցանել զմիտս ուկնդրօղաց անձանց, ի փառս մանկացելոյ Յիսուսի եւ ի պատիւ մօր իւրոյ ամենօրհնեցելոյ կուսին Մարիամու, յամի Տեառն 1733, ի Վենետիկ. մեծատուաց ակնարկութեամբ

1. *3ա-12բ* Տաղազս առեետի ճարտասանութեան: Գիրք առաջին.

ա. *3ա-4բ* Տաղազս սահմանի ճարտասանութեան եւ բաժանմանց մասանց նորին: Գլուխ առաջներորդ – *[Հ]արտասանութիւն, որ եւ ասի հռետորութիւն, է արհեստ բարւոք ասելոյ… եւ գլխոց նոցին համառօտաբար ընծեռեսցուք:*

բ. *4բ-6ա* Տաղազս խնդրոց ճարտասանականաց: Գլուխ Բ. – *Խնդրոց ճարտասանականաց ոմն է անորոշ եւ ոմն որոշեալ… որ թիւքն իցեն յատանելիք: Վերջ:*

գ. *6ա-9ա* Յաղագս սեռից փաստից, յորս պարապի ճարտասանն: Գլուխ 3 – *Սեռք փաստից եւ վիճաբանութեանց... զօրութեան ունկնդրողաց:*

դ. *9ա-12բ* Յաղագս մանաւանդական մասանց ճարտասանութեան ի հաւարակի եւ յաղագս ճարկատուաց առ ի համաօրինումն նոցին: Գլուխ 4 – *Մասունք ճարտասանութեանն, որպէս ի վերոյ ասացաւ... եւ կատարումնակի արհեստին, որում վարժի: Վախճան նախնոյ գրքին:*

2. *12բ-57բ* Յաղագս առաջնեւորդ մասին ճարտասանութեանն, այսինքն՝ յաղագս գուման: Գիրք երկրորդ

ա. *13ա-4ա* Յաղագս կրկնակի պաշտօնի ճարտասանին ի գուման, եւ յաղագս ոմանց պահանջելոց առ գոման: Գլուխ առաջնեւորդ – *Երկու են պաշտօնք ճարտասանին ի գոման... ի մեռն պէսպիսեաց մեռնարկութեանց:*

բ. *14ա-6բ* Յաղագս մեռնարկութեանն: Գլուխ Բ. – *Մեռնարկութիւն է զօրութիւն իմացականին հաւասարի... որ է կարծի իմն զբարւոյ ապառնոյ:*

գ. *16բ-7բ* Յաղագս տեղեաց ճարտասանական-ացս, յորոց արուեստիանին մեռնարկութիւնք: Գլուխ Գ. – *Տեղին ճարտասանական է շտեմարան իմն մեռնարկութեանց... յառաջիկայ օրինակօք:*

դ. *17բ-25բ* Յաղագս երից առաջնոյ տեղեաց մերոնց: Գլուխ Դ. – *Առաջին տեղին, որ է սահման... քաղցրացուցեալ բերէին ի համ:*

ե. *25բ-30ա* Յաղագս հետեւեցելոց հնգից տեղեաց մերոնց: Գլուխ Ե. – *Չորրորդ տեղին ասացեալ համալծեցեալք... որք լինին վրէժխնդիրք գանձանց. ամէն:*

զ. *30բ-5ա* Յաղագս հետեւեցելոց հնգից տեղեաց մերոնց: Գլուխ վեցերորդ – *Իններորդ տեղին, որ ասի հանգրուիքն... առ նա խոտելով զիրատ նորա:*

է. *35ա-43բ* Յաղագս մնացելոց երից վերջնոց տեղեաց մերոնց: Գլուխ եօթներորդ – *Յորելքատասաներորդ տեղին է, յորմէ արտահանին մեռնարկութիւնք... եւս են ի նոյնում բանի եւ կարգի:*

ը. *43բ-7ա* Յաղագս վեցից տեղեաց արտաքնոց: Գլուխ Ը. – *Նախադատողութիւնք են դատաստանք եւ ենթադատութիւնք... արդիւնաւորի կրել զպատիժս:*

թ. *47բ-50բ* Յաղագս երկրորդի պաշտօնի ճարտասանին ի գոման, այսինքն՝ յաղագս ընդլայնման, որով շարժ կամաց զարթուցանին ի յունկնդիրսն: Գլուխ Թ. – *Ընդլայնումն է ծանրագոյն ստորաստութիւն ինչ... զի գունկնդիրսն առնէ լսօղ:*

ժ. *50բ-7բ* Յաղագս վերաձկատման ոմանց, որ պատին լինել ընդլայնման ի գոման: Գլուխ Ժ. – *Նախ գիտելի է, զի ճարտասանն յընդլայնման պարտի... ատելութեան, տրտմութեանն եւ արհամարհման: Վախճան երկրորդի գրքին:*

3. *57բ-70ա* Յաղագս երրորդի մասին ճարտասանութեանն, այսինքն՝ տուամադրութեանն: Գիրք երկրորդ (= երրորդ)

ա. *57բ-9ա* Յաղագս նախապատկանաց մասանց ասացուածոց, եւ թէ զինչ իցէ սկսուածն: Գլուխ առաջին – *Գիտելի է, զի ասացուածն ունի զչորս մասունս... առնել զսկսուածս հար(=ս)արակս:*

բ. *59ա-60բ* Յաղագս վիպման: Գլուխ երկրորդ – *Վիպումն է իրաց անցելոց... այլով կերպիւ ըստ ճշմարտութեան:*

գ. *60բ-2ա* Յաղագս համահաւաստութեան: Գլուխ երրորդ – *Համահաւաստութիւնն է, յորում բերին զօրութիւնք... եւ զգերազանցագունսն ընկերջնում:*

դ. *62բ-6բ* Յաղագս մեռնելականին, որ ծառայէ համահաւաստութեանն: Գլուխ չորրորդ – *Ջեռնարկումն է յաճախագոյն եւ արհեստական բացայայտութիւն... զօրում պարտի ընդունիլ զպարգեւս:*

ե. *66բ-9ա* Յաղագս կրճատից տեսակաց մեռնարկմանց, որ փոխանակ չորից վերոյգրեցելոց տեսակաց ի գործ ածին: Գլուխ հինգերորդ – *Կրճատից մեռնարկմանց երեք են տեսակք... եւ ոչ գոյ ստերդումն:*

զ. *69աբ* Յաղագս երկրորդի մասին համահաւաստութեանն, որ եւ ասի համամեռոմ: Գլուխ վեցերորդ – *Համահերքոմն է բան, որով բանք ասացեալք... բացայայտաբար ցուցանիցին:*

է. *70ա* Յաղագս չորրորդի մասին ասացուածոց, այսինքն՝ յաղագս համավճարման: Գլուխ եօթերորդ – *Համավճարումն է բան, որով ճարտասանն... ի բարւոք տպաւորելոյ նախապէս զիւրաքանչիւրսն ի մտի:*

4. *70բ-109ա* Յաղագս երրորդի մասին ճարտասանութեան, այսինքն՝ յաղագս եոխաբանութեանն: Գիրք չորրորդ

ա. *70բ-1բ* Յաղագս թէ զի՞նչ իցէ եոխաբանութիւն, եւ որ իցեն յատկական պայմանք նորա: Գլուխ առաջներորդ – *Եոխաբանութիւնն է յարմարից դիտաւորութեանց... պատեհագոյնքն եւ յատկագոյնքն:*

բ. *71բ-2բ* Յաղագս սեռից բառից եւ այլափոխութեանց նոցին: Գլուխ երկրորդ – *Սեռք բառից, որք վերաբերին առ եոխացուցումն բանից... որք վերաբերին առ եոխաբանութիւնն:*

գ. *72բ-7բ* Յաղագս այլափոխութեանն, որ ինաի ի միում բառի: Գլուխ երրորդ – *Տեսակք այլափոխութեանն են եօթն... զինի ոմանց ամսոց եւ այլն:*

դ. *77բ-9բ* Յաղագս այլափոխութեան, որ լինի ի բազում բառս, այսինքն՝ ի բանս: Գլուխ չորրորդ – *Այլափոխութիւնք, որք հնարին ի յաճախածս... զամենայն որ, որիւք բանիւ ընդդէմ ելանէ քեզ:*

ե. *80աբ* Յաղագս նեռց ճարտասանականաց, եւ նախ յաղագս նեռց բառից: Գլուխ Ե. – *Ջեռն ճարտասանական է համակերպութիւնն... համաձայնին իրերաց ձայնիւ:*

գ. *80բ-4ա* Ցաղագս ձեւոց բառից, որ կազմեն առանգութեամբ: Գլուխ վեցերորդ – *Զեւք, որք կազմին առանգութեամբ, են ինն... գկորուստ յաւիտենական գրած է ի մեղս:*

է. *84ա-6ա* Ցաղագս ձեւոց բառից, որ կազմին ի ձեռն բացարձակաց: Գլուխ եօթն – *Զեւքն, որք կազմին բացարձակաբար, են հինգ... ընդ հրամանաւ մեծաւորի, այլ եւ կամակորն:*

ը. *86ա-9ա* Ցաղագս ձեւոց բառից, որ կազմին ի ձեռն նմանութեան: Գլուխ ութերորդ – *Զեւքն, որք կազմին ի ձեռն նմանութեան, են ութն... թէ որով անուամբ յորջորջեցից զբեզ:*

թ. *89ա-102բ* Ցաղագս ձեւոց դիտաւորութեանց: Գլուխ իններորդ – *Զեւքն դիտաւորութեանց կամ իմացուածոց... եւ այս բաւ է յաղագս ձեւոց բառից եւ դիտաւորութեանց նոցին:*

ժ. *103ա-9ա* Ցաղագս պարբերութեան անդամոց եւ հատուածոյ բառից ասացուածոց: Գլուխ տասն – *Պարբերութիւնն է բան... եւ զմայլումն հոգւոյ ամենից հետեւողաց ասից եւ գովեստից ճարտասանականաց: Վաղճան երրորդի մասին ճարտասանութեան:*

5. *109բ-13բ* Ցաղագս չորրորդի մասին ճարտասանութեան, այսինքն՝ յաղագս յիշողութեան: Գիրք հինգերորդ.

ա. *109բ-11ա* Ցաղագս թէ զի՞ն իցէ յիշողութիւնն, եւ ի բանիս բաժանի: Գլուխ առաջներորդ – *Յիշողութիւնն է հաստատուն իմացումն եւ ըմբռնումն... եւ այս է կատարեալ յիշողութիւն:*

բ. *111ա-3բ* Ցաղագս օգտի յիշողութեան եւ կանոնաց կամ պատիրանաց վերաբերեցեղոց առ այն: [Գլուխ երկրորդ] – *Յիշողութիւնն զբազմագիմի բդեսութիւնս առբերէ... կանոնաց եւ խրատուց ուսուցչին: Վաղճան չորրորդի մասին ճարտասանութեան:*

6. *114ա-7ա* Ցաղագս հինգերորդի մասին ճարտասանութեան, այսինքն՝ յաղագս արտաբերութեան: Գլուխ (= Գիրք) վեցերորդ.

ա. *114ա-5ա* Ցաղագս թէ զի՞ն իցէ արտաբերութիւնն, եւ որ՞ն իցէ օգտակար: Գլուխ առաջներորդ – *Արտաբերութիւնն, որպէս յառաջնումն գրզգոջ ասացաւ... ուրուք ներանկեալ համարին:*

բ. *115ա-7ա* Ցաղագս մասանց արտաբերութեան: Գլուխ 2 – *Մասունք արտաբերութեան, որպէս ի վերասացելոց երեւին, են երկու... եւ այսոքիկ սակաւք համառօտապէս շարադրեցեալք բաւական լիցին յաղագս ճարտասանականի արհեստի, ի փառս Յիսուսի եւ պատիւ ծնողի իւրոյ ամենօրհնեցելոյ կուսին Մարիամու: Վախճան վերջնոյ մասին ճարտասանութեան:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

117ա (բնագրի մէջ) Թվին հայոց 1199 (1750):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԻՑ

117բ (1758 թ., նոտրգիր) Թվին հայոց ՌՄԷ. (1758):

3ա (1767 թ., նոտրգիր) Այս է յիշատակ մեղաւորիս, անարժան, Աստուծոյ ծառայ Վարթանիս: 1216 (1767), ամսեանն մայիսի:

2ա (1784 թ., նոտրգիր) Այս է թվականիս մերոյ հայոց 1233 (1784), ամսեան ապրելի 11, որ է այս Ախռայդիրս մեղաւոր, անարժան Վարթանիվրս: 20 դարձեալի առին:

1ա (ժԲ. դ., նոտրգիր) Ես տիրեմու Սարիս մեղաւոր եւ աչաճած (՞) խադա (՞) Եաչատուրին որդին Տիրթի այս:

1բ (ժԲ. դ., նոտրգիր) Այս է յիշատակ գիրս գրեցի, այապէս վայել է: Որ ով կարդայ, ով այս է:

1բ (ժԲ. դ., նոտրգիր) Այս գիրքըս Եսաչ[ատ]ուրի:

118բ (ժԲ. դար, նոտրգիր) Ես՝ մեղաւոր եւ անարժան տիրացու ըզԳիւն գրեցի:


ԳՐՉՈՒԹԻՐՔ՝ *1ա, 1բ, 117բ-9բ՝* առանձին տաւեր, բառեր, թուեր: *2բ «Ի թվին ՌՄԼՔ. (1790)», «թվին ՌՔՀԾԳ.ին (1774): Թվին», «Քարւոք աւելոյ ասի արհ»: 117բ «Թվին հայոց, թվին հայոց [Ռ]ՔՀԾԳ.ին (1774)», «Որպէս, որպէս եւ գրս անվան Քրիստոս սուրբ Աւրաւետ»: 119ա «տրվի դէս լարձու ե. մդր՞»:*

ՆՇՈՒՄ՝ *Ա. կազմատատաին սոսնձած թղթին «Հ՝՞ր 480/2545», «1733, Մ[ատոսպ] նա[խկապո]ս», կազմի մէջքին սոսնձած թղթին «ճարտասանութիւն համաոտա, 87»:*

2546
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԺԴ. դար

ԹԵՐԹ՝ 336-2 (առ.ս Պահպանեալ). չգրուած 1ա, 336բար: ՊԱՐԱԿ՝ Ա-ԻԲx12 (Ա. չիլ, Գ, ԻԳ 11): ՆԻԻՔ՝ թուղթ՝ ՄԵՇՈՒՐԻՆ՝ 16,7-16,3x12,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (14,5x9,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 96ա). ՏՈՂ՝ 17 ԿԱԶՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի. փեղկերին չորեքս դրոշմուած «Տեր Ղազար»*, միջոցը տախտակ, աստառ դրոշմազարդ կոսո. լուսանցակողերը կապոյտ (ԺԸ. դարի երկրորդ կէս): ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (բ. 1) + 1 (բ. 336), թուղթ՝



Նմուշ 96ա

*Տե՛ս Ա. Մալխասեան, Աշխոյս-Ուտիքի կաթոլիկական դպրոցը (ԺԸ. դ. երկրորդ կէս), «Էջմիածին», 2007/թ., էջ 110-7:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – զծանկարային. Լուսագրագրի՝ բուսական, յուշկապարիկ, թռչուն, տաճար, ծառ: Գոյ ե՛ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բառարար. կազմի կաշին եզրամաշ, եղկուական կապիչներն ու գամեռն ընկած, լուսաճգակողերը գունաթափ, վերակազմման ժամանակ եզրաճատուած, նաեւ հիմիերի մաշուածները կարկատած (տե՛ս թ. 58-60, 96 եւ այլուր), խոնաւութիւն տեսած, որից բազմաթիւ թերթեր խոտ են կպել, ապա բաժանելիս ընագրերը վնասել են (յատկապէս 5թ-57ա, 269բ-301ա եւ այլուր), թ. 336ին եւ կազմի Ը. փեղկին ցեցի անցքեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *2ա-296բ* [ձառ, խրատ]

ա. *2ա-10բ* Ա. Թուղթ առաջին. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 80բ] Խոստովանութեան վարուց յանցալ[ևա]ցն – *Որք Սուրբ Հոգւոյն են ցանկացեալք... վայելեցէ՛ք գանանց բարութեանց վայ[ելլու]թիւնսն... ամէն:*

բ. *10բ-9բ* Բ. Թուղթ երկրորդ. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 84բ] Վասն ապաշխարութեան – *ԵՒրմատք դեղոց բժշկաց զցաւս մարմնոյն առողջացուցանեն... եւ նոքա վայելել զանանց բարութեանցն վայելչութիւնսն... ամէն:*

գ. *19բ-30ա* Գ. Թուղթ երրորդ. [Յովհաննու Մանդակունեցւոյ. ձեռ. 3281, 70ա] Վասն պահոց պնդութեան – *Ագռոյ եւ աւգտակար եւ կարի կարեւոր են... վայելչութիւնսն [ե]ւ գանբաւ բարութիւնսն... ամէն:*

դ. *30ա-2բ* Նորի՛ց [Յովհաննու Գանձեցւոյ. ձեռ. 644, 20ա] Խրատու վասն ցայգ[ասպաշտ]ութեան կիրակմտին աւուրն – *[Մի]աշաբաթին, որ է կիրակէ... եւ գՀա՛յր մեր յերկինս անպատճառ ասա՛յ:*

ե. *33ա-44բ* Դ. Թուղթ չորրորդ. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 5ա] Վասն ընդունելի եւ անընդունելի աղաթից – *Անփոփել զմիաս մեր, իմասցուք... եւ գանբաւ բարեացն զվայելչութիւնսն... ամէն:*

զ. *44բ-57ա* Ե. Թուղթ հինգերորդ. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 10ա] Վասն ողՀորմածաց աճանկաց] – *Մի՛ ոք [տղայաբար] բարւոք եւ անընդոյողական... եւ վայելեսցուք մեծապայծառ ուրախութեամբ... յաւիտենից:*

է. *57բ-68բ* Զ. Թուղթ վեցերորդ. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 76բ] Վասն փոխոյ եւ վաշխոյ – *Յոյժ չար է ընչասիրութիւն... եւ կրճնել զատամունս... յաւիտենից:*

ը. *68բ-75բ* Է. Թուղթ եւթներորդ. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 15բ] Վասն սիրոյ եւ մախանաց եւ նախանձուց – *Ոչ ինչ պիտոյ են յաղագս սիրոյ... նախանձաւոր լիցուք շնորհաւք եւ մարդասիրութիւնամբ Տեառն մերոյ եւ փրկչին... ամէն:*

թ. *75բ-90ա* Ը. Թուղթ ութերորդ. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 35ա] Վասն բանաձայից [տեսչ]ութեան ի վերա ժողովդեանն հրամսեալ է զգուշութեամբ պահել – *նա՝ լի անթիւ յանցանաւք եւ ունայն... ընդ որում արժանի արասցէ զմեզ վայելել եւ փառս տալ... ամէն:*

ժ. *90բ-9բ* Թ. Թուղթ [իններորդ. Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 31ա] Վասն անասնամոլաց եւ արուագիտաց եւ իգացելոց – *Ողբալով յիս հոգի իմ հիացեալ զարմանամ... արասցէ կենաց երկնից արքայութիւնն մարդասիրութեամբ Հայր... ամէն:*

ժա. *99բ-108ա* Ժ. Թուղթ տասներորդ. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 54ա] Վասն չանեղոյ սէր բարեկամութեան ընդ թ[շ]նամիսն Աստուծոյ – *Հանապազ գմտաւ ածելով զարհուրիմ... եւ մարտիրոսացն ունկնդիր եղեալ, զի ընդ նոսին փառաւորեսցեն զամենասուրբ երրորդութիւնն... ամէն:*

ժբ. *108ա-18ա* ԺԱ. Թուղթ մեռասասներորդ. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 49բ] Վասն չբամբասելոյ եւ չդատելոյ զԱհաճասյս եւ զվարդապետս – *Մի՛ երբք սգոյ եւ աղբամուխք տրտմութեան... որ հանէ ի բարութիւնս ի վայելոյ արքայութիւնս... ամէն:*

ժգ. *118ա-27բ* ԺԲ. Թուղթ երկոյտասաներորդ. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 28ա] Վասն անաւրէն դիւթականաց – *Ուր երթեալ դադարեցիք եւ լացիք... եւ հանդիպել անանց խոստացեալ բարեացն... ամէն:*

ժդ. *127բ-39ա* ԺԳ. Թուղթ երեքտասաներորդ. Վասն աճեղ հարուածոց կարկտի, որ է աստուածախրատ – *Քազում պատուհասք եւ սպառնալիք են յԱստուածոյ... Ժառանգել եւ վայելել ի լուսաւոր սուրբ քաղաքին ի լոյս փառաց սուրբ երրորդութեանն... ամէն:*

ժե. *139ա-51բ* ԺԴ. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 40բ] Վասն երկիւղի եւ զգուշութեամբ ի սուրբ խորհուրդն մերձենալոյ – *Սոսկան ոսկերք իմ դողութեամբ... եւ ի կենարար մարմին եւ յարիւն Տեառն մերոյ... ամէն:*

ժզ. *151բ-61ա* ԺԵ. Թուղթ հնգետասաներորդ. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 45ա] Վասն մխիթարութեան աղԻատուց – *Ջի՛նչ ասացից կամ զի՛նչ խաւսեցայց... եւ անքաւ բարութեանցն վայելչութիւնսն վայելեսցուք... յաւիտեանս":*

ժէ. *161բ-72ա* ԺԶ. Թուղթ մխիթարութեան. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 18բ] Վասն գան/// ճելոյ յաշխարհիս – *Հայեա գու ի յոյս վերին... եւ խոստացեալ բարութեամբն փափաճեսցուք... ամէն:*

ժը. *172ա-4ա* ԺԷ. [Յովհաննու Մայրավանեցւոյ. ձեռ. 2081, 88ա] Ողրս ի վերայ անապաշխար մեղաւորաց – *Խոստովանողք, փութացարուք ջանալ ապաշխարել... զի քեզ տացից փառս աւրհնութեան... ամէն:*

ժթ. *174ա-7բ* ԺԸ. Աղաւթ ճորի՛ն [Յովհաննու Մայրավանեցւոյ. յաղագս ի վերա անապաշխար մեղաւորաց ձեռ. 2081, 89ա] – *Ով որ անեղբ ես եւ*

անստեղծ... եւ անբաւարարութեանցն ուրախութիւնս ի Քրիստոս... ամէն։

ի. *177բ-9բ* ԹԹ. [Յովհաննու Մայրավանեցոյ. ձեռ. 2081, 89ա] Ցաղաքս պէսպէս առաքինութեանց խառն հարցն – *Յառաջ քան զամենայն առաքինութիւնս... զի գոցուք զողորմութիւն ի Քրիստոսէ ի ձեռն Սուրբ Հոգւոյն։*

իա. *179բ-53ա* Ի. [Յովհաննու Մայրավանեցոյ. ձեռ. 2081, 91ա] Վասն ոռոշութեան խորհրդոց, առ որս կալին ապրել յաշխարհս յաղաքս ախոհք – *Արար Աստուած զմարդն եւ եդ գնա ի դրախտին փափկութեան... առաջի բեմին Քրիստոսի՝ մեծի եւ ահաւորի, որում փառք յաւիտեանս. ամէն։*

իբ. *183ա-92ա* [ԻԱ. Յովհաննու Մայրավանեցոյ. ձեռ. 2081, 92բ] Վասն նմայից դիւթական եւ անաւրէն յուսթողաց – *Առնոյր, առնէր ոք գպլուխ իմ... զմեզ փրկեսցէ շնորհք եւ ողորմութիւնք Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ։*

իգ. *192ա-9բ* ԻԲ. [Յովհաննու Մայրավանեցոյ. ձեռ. 2081, 66բ] Վասն պտղոյ եւ պատարագաց եւ ողորմութիւն աղխասաց – *Բազում գաւտակիք նեփութ վիրաւորէ զմեզ սատանայ... եւ խոստացեալ բարութեանցն ժառանգեսցուք հասանել... ամէն։*

իդ. *199բ-207բ* ԻԳ. [Յովհաննու Մայրավանեցոյ. ձեռ. 2081, 61ա] Թուղթ վասն բարեացաւացուն բարուց – *Ամենայն բնութիւնք մեղաց եւ պիղծ ախտիցն... զերկնից բարութիւնս ժառանգեսցուք... ամէն։*

իե. *207բ-15ա* ԻԴ. [Յովհաննու Մայրավանեցոյ. ձեռ. 2081, 57բ] Թուղթ վասն ոխապահացն եւ ինաւանացն – *Ահեղ անաւրէնութիւք եւ սաստիկ չարութիւնս տեսանեմ... ժառանգեսցուք գանանց բարութեանցն վայելչութիւնս... ամէն։*

իզ. *215ա-9բ* Իե. [Յովհաննու Մայրավանեցոյ. ձեռ. 2081, 64բ] Վասն սակաւ ինչ զողութեան, զոր ոչն ապաշխարիցեն – *Անկարծ գողանայ եւ աներեւոյթ յափշտակէ զմիտս մարդկան սատանա... եւ յանմահ բարիսն վայելեսցուք... ամէն։*

իէ. *219բ-26բ* ԻՋ. [Յովհաննու Մանդակուեցոյ. ձեռ. 942, 89բ] Թուղթ վասն եղուանց սովորութեանց – *Յոյժ չար են ամենայն սովորութիւնք... եւ խոստացեալ բարութեամբք վայելեսցուք... ամէն։*

իը. *226բ-34բ* ԻԷ. [Յովհաննու Մանդակուեցոյ. ձեռ. 942, 286ա] Թուղթ վասն արբեցողաց անաւրէնութեան – *Մեծաւ սգով եւ <եւ> ցաւագին պաղատանաւք... եւ հոգեղէնս գասակցեսցուք... ամէն։*

իթ. *234բ-40բ* ԻԸ. [Յովհաննու Մայրավանեցոյ. ձեռ. 2081, 102բ] Վասն կնաթողաց եւ մաճու չափ մեղաց – *Տէր մեր Յիսուս Քրիստոս վասն փրկական բանիցն... որ յանկարծակի անակնկալ անկանի ի վերս քո իբրեւ գողոգայթ։*

լ. *241ա-5բ* [ԻԹ.] Սուրբ եւ երջանիկ հայր Գրիգո[ր]ի Նարեկացւոյ խրատ վասն աղաւթից եւ արաւսուաց – *Մարդ, ընդէր արտասուաց... զերկինս վերասցիս։*

Ակս բնագիրը ձեռ. 1521, 288ա՝ վերագրուած է Անանիայի, իսկ ձեռ. 1856, 58բ՝ Եփրեմին։

լա. *248բ-53ա* [Լ.] Տեառն Եփրեմի ասացեալ Խորին Ասորոյ, ի հինգերորդ<երորդ> թարմանութենէ. Ցաղաքս ապաշխարութեան – *Յորժամ երիտասարդն էիր, պարտ էր քեզ անեւրեւութիւն քո խորհել... եւ երկնից արքայութեանն արժանի լիցուք... ամէն։*

լբ. *253ա-5ա* [ԼԱ.] Խրատ ոգեշահ վասն աղաւթից եւ խնդրուածոց հաճանից եւ ժողովրդոց – *Բազում ազաւթից մեզ պէտք են... եւ գրաւն հուր նորա շիջուցցես։*

լգ. *255ա-8ա* [ԼԲ. Յովհաննու Գառնեցւոյ խրատ ոգեշահ եւ կանոնական. ձեռ. 84, 222բ] – *Յոհաննէս Գառնեցի, հայրապետեմ գողցունէ սիբ[ր]ելոյդ ի Տեառնէ... անդ իջանի ի խորս հնոց<ց>ին։*

լդ. *258բ-66ա* [ԼԳ. Մովսէս վարդապետ եգնկացւոյ ասացեալ. ձեռ. 2111, 168ա] Խրատ կանոնական յանուն Աստուծոյ Տեառն մերոյ – *Ի գամբարանէ սրբոյ Լուսաւորչին... պահուածք պատուիրանիս աւրհնին յԱստուծոյ եւ յամենայն սրբոց. ամէն։*

լե. *266ա-73ա* [ԼԴ. Յովհաննու Երզնկացւոյ խրատ հասարակաց հրիատոնէից]

Տե՛ս ձեռ. 228, 71ա-108բ: Նիս/յիս: ա-ո/յիս: Ե/266ա-9բ: զ/յիս: Ն/269բ-71ա: ը/271ա-2ա: թ/272ա-5ա: ժ/275ա-8ա: ժա-ժթ/յիս։

լզ. *273ա-96բ* [Խրատ Վարդանայ վարդապետի. ձեռ. 582, 92ա-121բ]

ա. *273ա-8ա* [Լե.] Պատմութիւն եւ խաւսք վասն աճուն ողանցն եւ վասն խստութեան եւ չարութեան նոցա, եւ թէ զինչ են սոքա եւ ուսի իցեն, զոր մեղայաբտս Վարդան յարմարեալ գրեցի յԱստուածշունչ գրոց, ի խն[դրոյ] /// – *Մբդ, եկա՛յք այսաւր ժողովեցարուք... ի հրեղինացն եւ հոգեղինացս այժմ եւ միշտ եւ՛։*

բ. *286բ-96բ* [ԼԶ.] Պատմութիւն եւ խաւսք վասն դժոխոցն... – *Մբդ, եկայք այսաւր, դասք ամենայն,.. զչարութիւն եւ զտանջանքն սոսկալի... ամէ[ն]։*

Բ. *296բ-305բ* [ԼԷ.] Յոհաննու Ոսկեբերանի ա[ւսացեալ՝ Վասն յանիդեռնեալ աւուրն դատաստանի/// Տէր Յիսուս/// դա/// իս Ո – *Պարտապան եմք, ո՛վ սիրելիք... եւ երկնային բարեաց շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ... իշխանութիւն եւ պատիւ։*

Գ. *305բ-13ա* [ԼԸ.] Տեսիլ Աստուածածնին՝ մաւր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր եղեւ զպատիճս մեղաւորաց, ցուցեալ ի հրեշտակէ – *Յարուցեալ գնաց Աստուածածնին... փառք մեծի թագաւորութեանդ քո, փառք մարդասիրութեանդ, եւ քեզ վայել է փառք, իշ՛։*

Դ. *313ա-21ա* [ԼԹ.] Պատմութիւն սրբոյ Գրիգորի Լուսաւորչին, զոր եհաւոց հրեշտակն Տեառն, մինչ էր յայրին, վասն հոգոց մարդկան. ուգնի Տէր Յիսուս Քրիստոս – *Յաւուր միում, յորժամ շրջէր...* եւ այլ գանաղան ուրախութիւնս, ընդ որս եւ մեք արժանի լիցուք փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ՞:

Ե. *321ա-3ա* [Ի.] Յոհաննու Ոսկեբերանի ասացեալ Յաղագս ողորմութեան եւ ապաշխարութեան. ուգնեա՛ ինձ Աստուած – *Եւ արդ, մի եւս անյոյս լինիցի մարդ... բարութեանցն հասանիցէք ի Քրիստոս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:*

Զ. *323ա-7ա* [ԽԱ.] Վարք եւսեբեայն Պարասկեւի եւ Կիրակոսի՝ եղբարս նոցա – *Այր մի էր ի քաղաքին Աղեկսանդրիա... բարեխաւսութեամբ Ծնողի իւրոյ եւ ամենայն սրբոց եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:*

Է. *327ա-35բ* [ԽԲ.] Աղաւթք Անաստասի միայնակեցի. ասացեալ յորժամ էր ի վերինն Սիեթա – *Տէ՛ր, մի՛ սրտմտութիւնդ քո յանդիմանէր զիս... եւ զու զանարդիւնսն [ժառա]նգորդ արքայութեանն արարեր, խնդրե՛/// (շար. թափուած):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱՁՈՒԹԵԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԻ

151բ Տէր Աստուած ողորմեսցի գծողի սորա մեղապարտի եւ ծնողաց իւրոց, որում ողորմեսցի նոցա Քրիստոս յահեղ աւուրն դատաստանին, բարեխաւսութեամբ սրբոյ եւ Նմա փառք յաւիտեանս. ամէն:

152ա Քրիստոս Աստուած, յորժամ այս ամենայն նորոգի ի քոմ գալստեանդ, նորոգեա՛ զհոգի գծողի սորայ մեղապարտի եւ ծնողաց իւրոց. ամէն:

272ա Վա՛յ զմեզ:

313ա Բարեխաւսութեամբ Աստուածածնին, ողորմեա՛ց, Քրիստո՛ս, ստացողի սուրբ գրոցս եւ ինձ՝ մեղաւորի, եւ ծնողաց իմոց եւ յիշողացդ:

321ա Բարեխաւսութեամբ սուրբ Լուսաւորչին Գրիգորի եւ սրբոց հրեշտակապետացն ողորմեա՛, Տէ՛ր Աստուած, ստացողի սուրբ գրոցս եւ ինձ՝ մեղամամկարթ գրչի, եւ ամենայն արեան մերձաւորի իմոյ, եւ յիշողաց մերոց. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

262բ եւ քանզի գոյն գայս բերրի գարաստան բիւրազան ծաղկանց հոտեւան բուրմանց բանից եղանակաց ճոռոմասութեանց հռետորական ձեւոց, որ եւ մարդաբան հրահանգի ընդունական համբակաց ի կրթութիւն քաղցրաբանեալ ճոխասութեանց, արարեալ երանելի Խորենացւոյն Մովսէսի քերթողահօր մեծի ի վարժ թէդորի իւր աշակերտի, տեսեալ իմ եւ ընթերցանութեամբ շրջեալ ի սմին խանթակաթ եղէ ի սէր սորին, ուստի եւ ստացայ՝ օրինակելով գայս մատեան ցանկալի իմովք իսկ ձեռօք, եւ՝ նուաստ Յարութիւն Պետանեան Կոստանդնուպոլսեցի, ի վայելումն անձին իմոյ, յամի Տեառն 1763, օգոստոսի 14, ի Կոստանդնուպոլիս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

76բ (1880 թ., շղագիր) Նմուսատ՝ Յովհաննէս *Ծայրագոյն վարդապետ Գրիգորեան՝ առաջնորդ տեղապահ հայոց Պոլսոյ՝ 1880, օգոստոս 3, ի Վառնայ:*

ԿՆՔՈՂՈՐՈՇՄ՝ *76բ.* կապոյտ թանաքով բոլորակ՝ «*ՅԻՍՈՒՍԻՒ ԳՐԻՍՏՈՍԻ ՇՈՒԱՅ ՅԻՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ: 1874*»:

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *1ա* «պիտոյից», *267բ՝* «ի բարի, բարիսն հասանիլ Աստուծոյ»:

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ *267բ, 268բ՝* թռչնագրեր:


ՆՇՈՒՄ՝ *մէջքին՝ «3», Ա. կազմաստառին՝ «Հ՝ 3. Պիտոյից գիրք. քառածալ, նուագրագիր, գրեալ ի թղթի, գրիչ Յարութիւն Պետանեան, Կ. Պոլիս, 1763, ունի յիշատակարան վերջում: Պարունակի ի մատենիս. «Խրատաբանութիւն յոդորական քերթողահօրն Մովսիսի, գրեալ առ Թէոդորոս՝ աշակերտ իւր», «ՌՄԻԳ. – 1713, Մ[ելտոպ] եպ[իսկոպո]ս», պհպ. Ասա՝ «Հ՝ 655, ցանկ 20, թու 2562»:*

2563
ԺՈՂՈՎԱԾՈՅ


ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՌՄՋԸ. – 1839

ԳՐԻՔ՝ Յովսէփ Արցախեցի՛ (թ. 1-102), անանուն (թ. 103-16):

ԹԵՐԹ՝ 116 (գրչի էջակալում՝ 1-198, որ է՝ 2ա-194ա) չգրուած՝ 104բ-10բ, 113ա-5ա, 116բ: ՊՐԱԿ՝ 1+Ա-ԺԳ×8 (ԺԲ 6, ԺԳ 9, ԺԴ 12): ՆԻԻ՝ թուղթ, լուսաշրջմով՝ բուսական ճախճեր, «186», «Ⱪ», ճճչայրոշմով՝ թ. 6, 20, 33, 38, 48, 54, 58, 67, 74, 89 (դասիճեզարդ բոլորակ)՝ «Ի՛ վուան թագ» ՄԵՆՈՒԻԻՒ՝ 17x10,5: ԳՐՈՒԻԻՒ՝ միապաւն (14,5x7,5): ԳԻՐ՝ նոտագիր՝ թ. 1-102 (նմուշ՝ 37ա), շղագիր՝ թ. 103-16 (նմուշ՝ 111ա): ՏՈՂ՝ 14-17 (1ա-95ա), 19-24 (95բ-116ա): ԿԱԶՄ՝ ծաղկաոգող թուղթ, մէջը, փեղկերի ճիմնատախտերը եւ անկիւնները՝ կաշի, միջուկը տառատաշտը, ատաղձ թուղթ, լուսանցակողերը՝ սեռով զօդուած:



Նմուշ 37ա



Նմուշ 111ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԻՒՆ – Ջ ա ր դ ագ իր՝ թղնագիր, մարդագիր: Գ ոլ ե ր՝ կապոյտ, նարնջի, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բառարար՝ կազմը մաշուած, լուսանցակողերը պատռտուած, թերթերին զանազան ճեռքեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1ա-89ա [Տիտղ.]* Գիրս այս կոչի Տեառակ բալի, ի պետս համբակաց, աշխատասիրութեամբ տեառն Յօսեփայ Արցախեցւոյ՝ գերիմաստ վարդապետի, ի միաբանութենէ վանիցն Սրբոյն Յակոբայ, ի հայրապետութեան տեառն Յօհաննու սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն Հայոց, 1839, մարտի 7, ի վանս Սրբոյն Յակոբայ

ա. *2ա-17բ* Յաղագս նախադրութեան – *Նախադրութիւն է մասն բանի... այսինքն՝ սակս ուրախութեան աշխարհի:*

բ. *18ա-36բ* Յաղագս մակբայի – *Մակբայն է մասն բանի... առաքեա՛ մեզ, զերկուս լծաքարշ եղեն, վախճա[ն] մակբայից:*

գ. *37ա-45բ* Յաղագս շաղկապի – *Շաղկապն է մասն բանի... զի եւ զի բա կամ բայ, բամ, որ եւ այլն, վախճան շաղկապից:*

դ. *46ա-50ա* Յաղագս միջարկութեան – *Միջարկութիւնն է մասն բանի... ասէին ինձ վա՛շ, վա՛շ, աւաղս միջարկութեան:*

ե. *51ա-82բ* Յաղագս խնդրառութեան բայից. բայս – *Համարիմ, համարեալ... չետ ուշաթափելոյն ընդ մատուծու չեան խօսեցաւ:*

Տե՛ս մեռ. 3620, 372ա-411ա:

զ. *83ա-4ա* [Յաղագս թուականի] – *Թուանշանք են տասն... վերջ թուանշանին այսմիկ:*

է. *84ա-9ա* Յաղագս հարցմանց ութից մասանց – *Ունդունելութիւն ըստ սեռին, ըստ ձեւոյն... տրտմութիւն կալաւ գին ի մեղաւորաց, այսինքն՝ եկեալ տրտմութիւն:*

թ. *91ա* Ջայս տասն հոդվս տե՛ս ի միջի Սալամեան հեռականութեան. համառով 252 – *Եզր կրող. հայցական...*

Նկատի ունի հատանաբար հետեւեալը. Սալամեանց Միքայէլ, Քերականութիւն գրաբար լեզուիս հայոց. նորակարգ ոճով, ի պէտս աշակերտաց գերադոյն ճեռարանին կառուցեալ ի Մոսկով... Բաժանեալ լեզուս հատորս, ի փոքր եւ ի մեծ: Հա. Ա. Փոքր քերականութիւն: Մոսկուա, տպ. «Ողոստեան Ս. Աթոռի», 1827. 16 չ՛ն., 433, 6 չ՛ն. էջ:

ժ. *91ա-6բ* Յաղագս առընկակից անդամոց եւ ի նոցանէ ծագեղոց այլոց առընչութեանց – *Գոյական եւ ածական, դերբայի եւ դիմաւոր բայ... տուեալ առ ի նմանէ խրատով եւ այլն:*

ժա. *96բ-8բ* Լուծմունք – *Լուսաշաւիղ լերկինս եյին... ցանգուած է անուն բայի:*

ժբ. *98բ-100ա* [Վասն աստիճանաց] – *Շրջանն է 3060 աստիճան, մի աստիճանն է 60 մղոն... դնի ընդ հոդվոյն գործիականի (100ա՝ ունի նաեւ աստիճանացոյց-աղիւսակ):*

ժգ. *100բ* [Վասն թուոց] – *Միաւոր՝ 1, տասնաւոր՝ 20... միլիաւոր՝ 4000000000000:*

ժդ. *101ա-2ա* [Քաղուածք զանազանի] – *Մինդհան Հոգւոյն Սրբոյ, զորս յԱդամայ... ոչ գոյ գհետս նորա գտանել:*

ԺԵ. *89ա-90բ* Մեկնութիւն Հա՛ր մերին – *Հա՛յր մեր, որ լերկինս ես... սկիզբն էլ քոյ է, թագաւորութեանն վերջն էլ քոյ է:*

Գ. *103ա-4ա, 115բ-6ա* [Հմայագիրք]

ա. *103ա* [Գուշակութիւն] – *Այս են աւուրք չարք ի բոլոր տարւոջ... դեկտեմբեր 3.24:*

բ. *103բ-4ա* Յաղագս չար աստղի – *Այս է չար աստղն... ծ., ի., է. լերկինքն լինի:*

գ. *115բ-6ա* Վասն ջերման – *Կապէ մանեածով, որ մայրն լինի մանել... օգնական լերո՛ւք այս անուն:*

Դ. *111ա* [Նաղաշ Յովնաթանի] Տաղ ուրախութեան – *Եկա՛յք այսօր, որդի՛ք մարդկան, / Ցնծացէ՛ք*

ձայնիւ միաբան... ածէ՛ք, խմէ՛ք կարմիր կինիան, / գնա՛, լի՛ց, բե՛ր [գինւոյ] Շուշան:

ՏԵ՛ս Նաղաշ Յովհաննան, Հանաատեղծութիւններ, Երեւան, 1951, էջ 185-6:

Ե. *111բ-2բ* [Սէրովբէ վարժապետի] Տաղ զօրաւոր – *Վերառաքեմք առ Աստուած զաղերս մեր ու հառաչեմք... թագաւոր քո երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԴՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տե՛ս տիտղ.՝ 1ա:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ (ԺԸ. դ., շղագիր) Ի գրոց տիրացու Հայրապետի Տէր-Աւետիսեանց, 2^{մր} 17:

102բ (1866 թ., շղագիր) Թիւրգան *Ծնվեց 1866 ամին, 30 յուլիսի, Լուսի առաջինին:*

ՆՇՈՒՄ՝ *կազմի մէջքին՝ «1, Տետրակ բալի», Ա. կազմատտաին՝ «Նորին վեհափառութեան Տեառն Տեառն Ղեորգայ Դ-ի՝ երկնապարգեւ հայրապետի եւ պաշտպանի հայկեան մատենադրութեան՝ նուէր ի խոնարհ ծառայէ Համազասպ քահանայէ Տէր-Աւետիքեանց, 2^{մր} 14-1, 14, սեպտեմբերի 1880 ամի, ի Շուշի», «Մ[ետրոպո]ւլ եպ[իսկոպո]սն», «2^{մր} 41, Տետրակ բալի ի պետս համբակաց աշխատասիրութեամբ տեառն Յովսեփայ վարդապետի Արցախեցւոյ, ի հայրապետութեան տեառն Յոհաննու կաթուղիկոսի, գրեալ ի թիֆլի, շաղագիր գրչութեամբ, յամի 1839, ի վանս Սրբոյն Յակովբայ», 1ա՝ «2^{մր} 686, 2563»:*


2564

ՄԻՆԱՍ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ԵՐԵՒԱՆՑԻ, ՏՕՄԱՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ԲԼՈՒՐ ԳԻՒՂ (Երեւանի նահանգ)

ԳՐԻՉ՝ ձեղինակը:

ԹԵՐԹ՝ 133 (գոյն էջակալում՝ 1-151, որ է 2ա-76ա, 74-6, որ է 76բ-7բ, 1-8, որ է 78ա-81բ, 1-104, որ է 82ա-133բ): ՊԱՐԱԿ՝ 1-17x10 (1, 14-7՝ 8, 2, 4, 6, 8, 10՝ 6, 11՝ 3): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծեալով: ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 16x11.5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13.5x9): ԳԻՐ՝ նոտռզիր (ընտուշ 12ա): ՏՈՂ՝ 20: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ աստառ թուղթ. լուսանցակողերը՝ կարմիր:



Նմուշ 12ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, գամերն ու կապիչներից մէկն ընկած, լուսանցակողերը սեւացած, սպառուտուած, խոնաւութեան հետեւանքով թաւմոր մասամբ տարածուած, թերթերի գանագան հետքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *2ա-133բ* [Տիտղ.] Տօմար սրբոյ Լուսաւորչի: Օգնեա՛ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ: Զբուն Տօմարս մեր հայոց վերստին նորոգեալ ի վտակիս եւ ամենաճոխ Մինասայ Սատաթբէկեան Առշարունեան կամասարականի երեւանցւոյ, որ եւ մեքիւ կոչեցեր Առշարունեաց հայրենի գաւառի, ի հայրապետութեան գերերջանիկ եւ երիցս երանեալ եւ սրբոյ Լուսաւորին մերոյ կրիւ նմանեալ տեառն Դանիէլի սրբազան վեհապետի եւ ամենից Հայոց աստուածբնտիր կաթողիկոսի եւ յարաթոռն դիւտապետի, ի նահանգիս մերում Առշարունեաց եւ ի գեօղս, որ կոչի Քուր, 1807 (1256), սեպտեմբերի 25, Կամասարական Առշարունեան Սատաթբէկեան Մինաս. ամէն, ի յետկիրս երեւանու, որովհետեւ Տօմարս մեր սկսի ի սկզբանէ արարածոց եւ վերջանայ ի կատարած աշխարհի, վասն որոյ կոչի յաւիտենա[ա]կան Տօմար հայոց. ամէն:

1. *2բ-77բ* [Հատոր առաջին]

ա. *2բ-23բ* Առաջաբանութիւն գրոցս եւ ադերս առ ի շնորհաստիփուռ սպաս սրբազան – *Մ՛ւ թագաժառանգ, փոխանորդ եւ աթոռակալդ նախկին լուսաւորչացն մերոց... նորոգ Տօմարս սահմանի, ի ջանկ ելեալ եւ աւարտի:*

բ. *24ա-39ա* Տօմար սրբոյ Լուսաւորչի: Տօնի անշարժականի – *Նաւասարդի Ա. տօն է ծննդեան եւ յայտնութեանն Քրիստոսի... տիւն ԺԱ. (11) ժամ եւ գիշերն ԺԳ. (13) ժամ, վերջ Տօմարի:*

գ. *39բ-72բ* Տօնացոյց մշտնջենաւոր – *Ազիւսակաձեւ խորանքով տունք են... զոտոյս գիր տարոյից ցուցանէ:*

դ. *73ա* Տաղ եւ գովասանութիւն սրբոյ գեղարդեանն, որոյ գոյնն է բաս յարմար ձեւովին եւ գիխագիր տանցն մակագրեն գանուն ձեղինակին («Մելիք Միհասի ք») – *Մ՛ահուանն Յիսուսի յայտնիչ դու յայտնիչ, / Զէն հոգեւոր կեցուցիչ, սուրբ աղբերացն բղխիչ... յաւուր մեծի գալստեանն յիսուսեան, ո՛վ սուրբ Գեղարդ:*

ե. *73բ-4բ* Շարական, ասացեալ ի շարադրողէ տաղիս – *Մ՛վ սուրբ գեղարդ յուսաբալ եւ պայծառ... եւ Հոգոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ անդրաւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

զ. *75ա-6ա* Ցանկ առաջին հատորի եկեղեցական տօմարիս – *Առաջաբանութիւն եւ ադերս առ սրբազան հայրապետն... քո երեսուներիք ամաց էր, որ խաչեցաւ, վերջ. ամէն:*

է. *76բ-7բ* Տաղ եւ գովասանութիւն ի փառս կենսատու սուրբ խաչին, որոյ գոյնն է բաս յարմար

ՌՄՄՋ.-ՌՄՄԷ. – 1807-1808

ձեռվին եւ գլխագիր տանցն մակագրեն զանուն ճեղինակին («Մեկիմ Մինասի է բանս») — *Մինն ի Հօրէ միածին, միածին, / Վասն իմ եղեւ կուսածին... կենսատու խաչ տէրունեան:*

2. *78ա-132բ* Հատոր երկրորդ եւ տօմար արարիչն

ա. *78ա-81բ* [Առաջաբանութիւն] — *Թէպէտ հատորս այս ոչ էր այնքան հարկաւոր եւ պիտանի... եւ անդր, քան զանճառելի սահմանս. ամէն:*

բ. *82ա-94բ* [Բացատրութիւն Ա. աղիւսակի] — *Առաջիկայ աղիւսակդ ի ձեռս ամսոց...*

գ. *95ա-111ա* [Բացատրութիւն Բ. աղիւսակի] — *Առաջիկայ աղիւսակդ ցուցանէ զժամանակս, զշրջանս եւ զդարս...*

դ. *111ա-27ա* [Մեկնութիւն ժամանակ բառի] — *Այս եւս գիտելի է, զի մեկնութիւն ժամանակ բառիս...*

ե. *127բ-30ա* Վերաբանութիւն ճոռաասհման Տօմարիս... եւ միաճամուռ ամենայն ազգիս հայոց յուսաւորչակոսն եւ միաբնադաւանի — *Յուշ լիցի աստուածարեալ շնորհուանակ, գերզգօն եւ հոգիբնակալ տէրութեան ձերում... եւ ես ընդ ձեզ փաստաւորեալ զամենասուրբ երրորդութեանն՝ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին Աստուած ճշմարիտ, եղիցի, եղիցի եւ եղիցի. վերջ:*

զ. *130բ* Ցանկ երկրորդ հատորիս — *Մեկնութիւն եօթանասնեօթներորդաց Դանիէլի մարգարէի. 30... Սահման արտաքին Տօմարի. 31, վերջ:*

է. *131ա-2ա* [Վերջաբան] — *Այս եւս գիտելի է, թէպէտ վասն ջատագովութեան ազգիս մերոյ եւ նախնեաց մերոց... որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ անգրաւ յաւիտեանս. ամէն, վերջ:*

ՅԱԿՈԲԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԹ. դ.

Բ. *1ա, 132բ-3բ, կազմաստառ Բ* [Տոմարական եւ թուաբանական հաշիւներ]:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Տե՛ս տիտղ.՝ 2ա:

24ա Օգնեա՛ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ, եւ զսկսեալս մեր խաղաղութեամբ հատո՛ւ աւարտ. ամէն:

74բ 1808 (1257), յունիսի 9, Կամսարական Արշարունեաց Սատաբբէգեան Միհաս. *ամէն:*

81բ Կամսարական Արշարունեաց Սատաբբէգեան Միհաս. *ամէն:*

130բ 1808 (1257), յունիսի 16: Կամսարական Արշարունեաց Սատաբբէգեան Միհաս. *ամէն:*

132ա 1808 (1258), յուլիսի 9: Կամսարական Արշարունեան Սատաբբէգեան Միհաս. *ամէն:*


ԳՐՁԱՓՈՐՁ Ա. *կազմաստառին՝ «Այս է իմ»:*

ՆՇՈՒՄ՝ *կազմի մէջքին՝ «1, Տօմար ս. Լուսաւորչի», կազմաստառ Ա՝ «2՝՛ 124. Տօմար սրբոյ Լուսաւորչի, քառածալ, շղագիր գրեալ ի թղթի, ի ձեռն Միհասայ Սատաբբէգեան Արշարունեան Կամսարականին երեւանցւոյ, ի հայրապետութեան տեառն Դանիէլի, ի գիւղն Բլուր, յամի 1807, ունի յիշատակարան», «ՌՄՁԶ. — 1807, Մ[ետրով] եվ[խոպոմ]», 1ա՝ «2՝՛ 691, 2564»:*


2565
ՇԱՐԱԿՆՈՑ

ԺԴ. դար

ԹԵՐԹ՝ 264-1 (բ. 2-264. տե՛ս Պտոլ-պիպկն): ՊՐԱԿ՝ Ա-ԻԳx12 (Բ, ժԳ 10, Գ, Ե, ԺԲ, ԺԸ 11, ԻԳ 7): ՆԻՒԹ՝ թուղթ Մեծմնիթիոն՝ 14.8x10.5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (11.5x8): ԳԻՐ՝ նոտագիր (ճմուշ՝ 175ա, 199ա՝ բ 199 յետագայի լրացում՝ այլ գրի ձեռով): ՏՈՂ՝ 30: ԿԱԶՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի, միջուկը տախտակ, աստառը թուղթ, լուսանցակոդերը՝ կարմիր:



Նմուշ 175ա



Նմուշ 199ա

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ (յատիճեղէն) — ժամագիրք. ԺԵ. դ., Լենաստան. Ա (բ. 1) + Բ՝ ստացուած ընդեղակցնակի եւ բեղյայնակի հատուածով (բնագիրը վերից կտրած): Մագաղաթ, 14.7x10, միասիւն (13x7 Ա, 12.5x8.5՝ Բ), գոթական (եմուշ՝ Ա բ), տող՝ 16. Տե՛ս Լ. Կիսելева, Каталог рукописей и фрагментов латинского алфавита хранящиеся в Матенадаране, Ереван, 1980, стр. 102-3.



Նմուշ Ա բ

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ — ձ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 2ա, 8բ, 42ա, 78ա, 107բ, 142ա, 176բ, 213ա, 228ա, 252ա՝ լ ո ւ ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական: Զ ա ր դ ա գ ի ր՝ թոյնագիր, ճաճգուցագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը մաշուած-ծռճռուած, մէջի կաշին ճախրացած-թափուած, եւեւ մասամբ ցեցակեր. կապիչներն ու գամերն ընկած, թերթերը ճիմի կարիք թուլացած, բ. 13-4ի, 23-24ի, 46-7ի, 142-143ի 257-8ի, 258-9ի միջեւ 1-2-ական թերթ ընկած, ոմի հետեւանքով կան բնագրական թերթեր, պատառիկ-պահպանակը կեղտոտուած՝ դժուարընթեռնելի:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *2ա-264բ* [Շարակնոց]

Տե՛ս նաև. 1576, 4ա-368բ: *1/2ա-4ա (խորագիրը՝ չի՛ք)*: *2/4ա-6ա*: *3/6ա-8ա (չ՝ չի՛ք)*: *4/8բ-9բ*: *5/9բ-11ա*: *6/11ա-12բ*: *7/12բ Յբ (վերջը թափուած՝ որպէս մայր բաժանգրի ըզքիզ րդ կուսակ///)*: *8/14ա (սկ. թափուած/// Որ ի հրեղէն ամոռ...)*: *9/14բ-16ա*: *10/16ա-17ա*: *11/17ա-18բ*: *12/18բ-20ա*: *13/20ա-Յբ (ունի՝ 21բ-2ա՝ Ա. Ով գերարդ ծարիկ..., Մ. Դասապետն հրեշտակաց եւ սպասաւոր երկնից..., 22աբ՝ Մ. Արարչին արարածոց նորաստեղծեալ... , վերջը թափուած՝ հրաշափառ քո ծընունդ///)*: *14/24աբ (սկ. թափուած՝ ///մանեալի ի սրբոյ կուսէն...)*: *15/24բ-6ա*: *16/26ա-7բ*: *17/27բ-Յբ*: *18/28բ-30բ*: *19/30բ-2ա*: *20/32ա-3բ*: *21/33բ-5բ*: *22/36ա-7բ (ունի՝ 37բ ՀՒ. ստ. Այս շարականս համբարձի ասա՝ կիրակիմտին շնորհիւ — Աւրսկիզբն Աւտրւած...)*: *23/37բ-9ա*: *24/չի՛ք*: *25/42ա-3ա*: *26/43ա-6ա*: *27/46ա-Յբ, 201բ (ա՛վերջը չի՛ք (46բ՝ անդրէն դառնալոյ ի կեանս///, բ՛սկ, չի՛ք (47ա) ///Տաւտացուք գազաթն մեր...)*: *28/48բ-55ա*: *29/55ա-63ա*: *30/63ա-Յա, 72ա-3ա*: *31/73ա-8ա*: *32/78ա-9բ*: *33/79բ-81ա*: *34/81ա-2ա (Հարբեալ նեալ հա...՝ չի՛ք)*: *35/82ա-3ա, 83բ-4ա*: *36/84ա-5բ (Թե, Իմաստուն կուսանգրն...՝ չի՛ք, ունի՝ Թե. Ինալ եղ լապտերաց...)*: *37/86ա-աբ*: *38/87բ-9բ*: *39/90ա-2ա, 95ա-9ա (ունի՝ 93ա Իւխանք ժողովգան ի միասին վասն Տեառն...)*: *40/99ա-100ա, 106բ-7ա*: *41/107բ-Տբ, 109ա-13ա*: *42/113ա-Յա*: *43/118ա-33բ*: *44/133բ-6բ*: *45/136բ-42ա*: *46/142աբ (վերջը թափուած՝ խոստովանիմք Աստուած գՀոգին Սուրբ բրղխումն...)*: *47/143ա-4ա (սկիզբը թափուած՝ էից ստեղծող արարածոց...)*: *48/144ա-5ա*: *49/145ա-6ա*: *50/146բ-7բ*: *51/147բ-Տբ*: *52/148բ-9բ*: *53/150ա-3բ*: *54/153բ-4բ*: *55/154բ-6բ*: *56/156բ-7բ*: *57/157բ-9բ*: *58/159բ-64բ*: *59/164բ-5բ*: *60/165բ-7բ*: *61/167բ-8բ*: *62/168բ-70ա*: *63/170ա-1ա*: *64/171ա-3ա (ծ՝ Անճառամ ծաղիկ...՝ չի՛ք)*: *65/173ա-4բ*: *66/174բ-6ա*: *67/176բ 7ա*: *68/177բ-Տբ*: *69/178բ-9բ*: *70/179բ-80բ*: *71/180բ 1բ*: *72/181բ 2բ*: *73/182բ-3բ*: *74/183բ-5բ*: *75/185բ-7ա*: *76/187ա-Տբ*: *77/189ա-91ա*: *78/191բ-2բ*: *79/192բ-4բ*: *80/194բ-5բ*: *81/195բ-7բ*: *82/197բ-201բ, 202ա, 202բ-4ա, 204բ-207բ, 106աբ (ունի՝ 202ա՝ Թե. Մե. Պրաւկ եւ փառք պարժանաց եկեղեցոյ Քրիստոսի..., ժ՝ չի՛ք)*: *83/207բ-11ա*: *84/83աբ, 85ա, 87աբ, 89բ-90ա, 92ա-3ա, 100աբ, 108բ-9ա*: *85/100բ-5ա*: *86/213ա-25ա*: *87/225ա-45ա*: *88/252ա-64բ*: *89/245ա-9բ*: *90/68ա-72ա*: *91/211բ-2բ (ունի՝ 212բ՝ Բջ. Հայր երկնաւոր է մեզ գբաւած...)*: *92/202ա*: *93/39ա-41բ (ունի՝ 40ա-1բ՝ Գկ. 2. երկնաւոր զօրացն օրհնեալ... + Մ. Ուրախացիր սրբոյ աստուածածին... + ՚ի. ի սուրբ տաճար հոգեւոր... +Տ. Սրբոյդ գընդից, երկնից զօրաց... + Գկ. ՃԸ. ի լարմատոց հարց ընտրեալ...)*: *94/35բ-6ա*: *95/249բ-52ա*: *96/105ա-6ա*:

Յաւելեալ ունի՝

204աբ Շարական սրբոյ Տարագրիսեանց — *ՂՋ. Տէնչալի տօնիւ սրբոյդ գուարճանան...*

ՅԱԽԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺԷ. դ.

Բ. *Փշգ. Աբ* [Շարականացոյց] — *///ուրբաքնին... գկնի ասա՝ Սուրբ Աստուած:*

ԴՐՁԱԳՐՈՒՔ *176ա՝ «Գաբրիել հրեշտակ, Մխբաս, 211ա, 264բ՝ հայերէն տառեր, կազմաստառ ի «Ընդ մաստուցեալ... ամէն մէկ-մէկ առ/// այսէ եւ գիս յիշ»:*

ՆԿԱՐԱԳՈՐՔ՝ *176ա՝ հրեշտակներ:*


ՆՇՈՒՄ՝ *2ա՝ «Հ^ին 805, 2565, ԺՉ., Մ[եառպ] եպ[իսկոպոս]»:*

2566
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ


Ժէ. դար

ԳՐԻՉ՝ Կիրակոս Կրօնաւոր, Պետրոս: ՍՏԱՑՈՂ՝ Մանակ:

ԹԵՐԹ՝ 273: ՊՐԱԿ Ա-ԻԸx12 (Ա, Ջ, Բ, Ե, ԺԲ 11, Գ 13, ԺԱ, Ի, ԻԱ, 10, ԻԳ-ԻԹ՝ 1 պրակ՝ ԻԹ՝ չի՛, ԻԸ 9): ՆԻՒԹ՝ քուղթ (կարմրատուն): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17x13: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (13x8.5): ԳԻՐ՝ նոտրգիր (ճմուշ. Կիրակոս գրչի՝ 37ա, Պետրոս գրչի՝ 168ա): ՏՈՂ՝ 17-21: ԿԱՋՄ՝ շագանակագոյն գոյնմազարդ կաշի, 2 կապչիով, միջուկը տախտակ. աստառը դոյնմազարդ կտաւ. լուսանցազարդեր՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ+ԳԴ՝ չգոյած քուղթ:



Նմուշ 37ա



Նմուշ 168ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ — Լ ո ւ ս ա ճ գ ա զ ա ր ը՝ քուսական, թոչնային: Ջ ա ր դ ա գ ի ր՝ ճանճուցագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. Ի. դարի վերջի նոտրգման ժամանակ կազմի, ճաեւ թերթերի բռնած հատուածները լրացուած, թերթերը կեդտոտուած. թ. 32բ սխալ տեղադրուած, պէտք է լինի թ. 6-7ի միջեւ. կարգով՝ 6բ, 32աբ, 7ա, թ. 8ր հակառակ կարուած՝ կարդալ 8բ, 8ա:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1ա-150բ* [Քարոզ]

1. *1ա-6բ, 32աբ, 7աբ, 8բ, 8ա* Քարոզ ի բանն սուրբ Աւետարանին, որ ասէ. «Խոտ չգէտ եղեռն՚ի իբրեւ ըզպուձ, միամիտ՝ իբրեւ ըզպաղուխ» — *Նախ գիտելի է, զի որպէս մարդն հոգի է եւ մարմին... ապայ գտանես ի[ոդուխիւն մեղաց քոց:*

2. *8ա-21ա* Քարոզ ի բանն Յոհաննէ աւետարանչին, որ ասէ. «Ան արի՚ք, գնացարուք աստի» — *Հրամեալ մարդարէն Միքիայ... բարկութեան յաղթողն գազանակերբ, մարտիրոսացն պսակակից լինի. եւ Քրիստոսի մարդայսիրին փառք յաւիտեան. ամէն:*

3. *21բ-31բ, 33ա-9ա* [Քարոզ] — *Ամենայն գիրք աստուածային գնաւոյած արդար գաստուր քարոզեն... այլ Ծանրացալ մեղաւք իչեան յատակս գժոխոց, որոց փրկեսցէ Քրիստոս Աստուած:*

4. *39ա-59ա* Քարոզ ի բանն Աւետարանին, որ ասէ «Մի՛ տայ սրբութիւն շանց» – *Առաջին սրբութիւն անուանի հաղորդութիւն... որոց փրկեսցէ զմեզ ի մեզոյ Քրիստոս Աստուած մեր:*

5. *59ա-78ա* Քարոզ ի բանն Աւետարանին Ոհաննու, որ ասէ. «Ամենայն, որ ատէ զեղբայր իւր, մարդասպան է, եւ գիտեմ, զի ամենայն մարդասպան ոչ ունի կեանս անձին իւրոյ» – *Զայն հրամայէ, թէ ամենայն, որ ատէ... եւ անհաշտ խռովութեան գամենայն հաւատացեալս անուան իւրոյ:*

6. *78ա-88ա* Քարոզ ի բան մարգարէի Դաւթի, որ ասէ. «Որպէս իժի եւ խարբի, զի խլեալ է զականջս իւր, զի մի լուիցէ զձայն թովչի ճարտարի» – *Եւ վասն ինչ պատճառի մարգարէն առակաւ խօսի... որոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած գամենայն հաւատացեալս անուան իւրոյ:*

7. *88բ-100բ* Քարոզ ի բանն Սողոմոնի, որ ասէ. «Ձանձն իւր ի գործս իւր ոչ բժշկէ, եղբայր է այնոցիկ, որ անձն առնիցէ» – *Անձն զբանական հոգին ասէ... որոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած գամենայն հաւատացեալս անուան իւրոյ:*

8. *100բ-16ա* Քարոզ ի բան Սողոմոնի, որ ասէ. «Ցիշեա՛ զարարիչն ի յաւուր մանկութեան ի՛ւ եւ գնա՛ ի ճանապարհս առդարութեան» – *Ասէն իմաստունք, թէ Դ. բան առնոյ մեր կամաց լինի... որոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած մեր շար աղբատութեան եւս:*

9. *116բ-38ա* Քարոզ ի բան Սողոմոնի, որ ասէ. «Լաւ է աւր մահուն, քան զաւր ծնընդեան» – *Եւ պարտ է գիտել, զի հեթանոսք... որում փառք եւ երկրպագութիւն ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեան:*

10. *138բ-45ա* Նորին [Գրիգորի Տաթեւացւոյ] քարոզ ի բանն, որ ասէ. «Խոստովան լեր՛ւ միմեանց զմեղս ձեր» – *Նախ գիտելի է, զի խոստովանութիւն է հարկաւոր... եւ հաճոյութիւն է Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան, որպէս ասացաք, որ եւ զմեզ արժանաւորեսցէ Քրիստոս (Ամառան, հտ. ՀՀ.):*

11. *145բ-50բ* Նորին [Գրիգորի Տաթեւացւոյ] քարոզ ի բանն ապաշխարութեանն, ի բանն, որ ասէ. «Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ» – *Նախ տեսցուք, թէ զինչ է ապաշխարութիւն... զի նոցայ է արքայութիւն Աստուծոյ. եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն (Ամառան հտ. Հե.):*

Ը. *150բ-7ա* Հարցումն սրբոյն Բարսղի եւ պատասխանիք սրբոյն Գրիգորի Աստուածաբանի – *Բարսեղ ասէ. Յորժամ ոչ երկինք էին... Գրիգոր ասէ. Ի վերայ տարրականն... այլ ինչ գործ կամ քակտեսցի վասն այլ մեռելոյ:*

Ց. *157ա-8բ* Գիրք առակաց, ասացեալ սուրբ վարդապետին Վարդանայ, ի պետս հոգոյ եւ մարմնոյ

ա. *157ա Ամենայն աստուածեղէն գիրք առակաւ ցուցանեն մեզ...*

բ. *157ա Իմաստասէր ոմն սահմանեաց...*

գ. *157աբ [Ի]մաստնասէր ոմն աղքատ ունէր ծոյլ որդիս...*

դ. *157բ Ասաց իմաստնասէր ոմն, թէ որ ունի յիմաստութիւն...*

ե. *157բ-8ա Այր մի եհատ սրով գլեզու գորթիկան դրացոյ իւրոյ...*

զ. *158աբ Ահ առակաց, թէ այր մի ունէր Ժ. (10) այծ...*

Դ. *158բ-63բ* Սրբոյն Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի ասացեաց՝ ի թերահաւատութիւն Թոմայ առաքելոյն – *Յորժամ յարեաւ հովիւն քաջ... արդ, երանութիւնս այս առ մեզ անցանէ, որք ոչ տեսեալ հաւատաք ի նայ. ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, յորում փառք յաւիտեանս. ամէն:*

Ե. *163բ-8բ* Եղիշէի Հայոց վարդապետի ասացեալ՝ ի յարութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ – *Կանխագոյն Մարիամ Մագդաղենացին եկն եհաս... եւ զմեզ արժանի արասցէ Քրիստոս Աստուած խաչեալ թագաւորն մեր:*

Զ. *168բ-224բ* Խաւսք կրաւնաւորի միայնակեցի, որ է Մակար կոչեցեալ, ընդ ամիրայի զրուց – *Թագաւորեաց Պարսից այր բարեբարոյ... եւ կացին ի միասին, փառաւորելով գՀայր եւ գՈրդի եւ գՍուրբ Հոգին այժմ:*

Է. *225ա-39բ* [Տաղ]

1. *225ա-7ա* [Յովհաննու Երզնկացւոյ Տաղ] – *Առաջնաճաշակ պտղոյն, / Մահուան առաջին մարդոյն... փառաւորեսցուք զՅիսուս մայր Մանուէլի սուրբ կուս:*

2. *227ա-9բ* Այլ տաղ սուրբ Աստուածածնին – *Ողջոյն ընդ քեզ Մարիամ, / Մայր Աստուծոյ հաւատամ... 228աբ Փոխէ զձայնդ – Ծաղիկ պայծառ ծովային / եւ մարգարիտ մեծագին... 228բ-9բ Յորդ[որ]ակ – Կենաց տապանակ, / աստուածպատիճ տախտակ...*

3. *229բ-30բ* Տաղ բազմախոհուրդ, ի Սրվաչ [Կոստանդայ] – *Խաչն ի նախնումն երեւեցաւ / Մաղկեալ ի դրախտն աստուածատունկ... ամէն ազգաց երկրպագի, / յարաձգական յաւիտեանի:*

4. *230բ-7ա* [Տաղ Յովհաննու Ոձկուրացւոյ]

ա. *230բ-1ա* Այլ բանիմ Յովանիսի ասացեալ վասն սիրո – *Արեկ, արեկ իմ խուպ սուրաթ, / Փա՜ռք ու պատիւ քո ստեղծաւղին...*

բ. *231ա-2ա* Այլ բանիմ Յովանիսի – *Տեսայ պատկեր մի կեղեցիկ, / Ջեւտ գԱրեգակն, որ նոր կելնու...*

գ. *232աբ* Այլ բանիմ Յովանիսի – *[Ա]րեւ նման շողշող կուտան, / Քանի սիրով գայեղդ ածես...*

դ. *232բ-3ա* Այլ բանիմ Յովանիսի – *Հազար ուսուֆ է քեզ ծառայ, / Է՛ Արեգակն ու խուպ սուրաթ...*

ե. *233աբ* Ալ բանի Յովանիսի – *Հանցկումն այլ ո՞վ տեսեր զմրուխ, / Տպագիտն ակն ու ջուհար…*

զ. *233բ-4ա* Ալ բանի Յովանիսի – *Լուսերեսացդ է քո փափաք, / Քաղաք Խութան ու Քինմաչին…*

է. *234աբ* Ալ բայնի Յովանիսի – *Թէ մահն չէր ու կամ մեռնիլ, / Իս ունի շատ բան հոգալու…*

ը. *234բ-5բ* Ալ բանի Յովանիսի – *Ահայ եղեւ պայծառ գարուն, / Ծաղկանց ազգին ու բաղչանին…*

թ. *235բ* Բանի Յովանիսի – *Ես զքեզ տեսայ սիրով նստատած, / Արեւ նման Արեգական…*

5. *236ա-7ա* [Ողբ եւ մաղթանք ի խաչատուդ Կեչառեցոյ ասացեալ] – *Տո՛ւր ինձ բնութիւն բարի, / Կանդացո՛յ զսիրտս իմ քարեղէն… Ջանք պա՛յ ելնես ի դուս, / որ չայթիս անշէջ գեհենէն:*

Հաչասուր Կեչառեցի, Երեւան, 1958, էջ 139-44:

6. *237ա-9բ* Գովանի Աստուածածնին՝ ումեմ[ն] գաւսանէ Քուչար Վանեցոյ – *Ազդի՛ւր կենդանի, բխումն զանազան, / Մեղայ քեզ, մեղայ, կո՛յս անապական… իւրըն հովանի, աչըն վերնական, մեղա:*

Ը. *241ա-64բ* Պատմութիւն սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին, ի Առաճել վարդապետէ [Բաղիշեցւոյ] ասացեալ

ա. *241ա-2բ* Ոտանաւոր սահմանեալ վասն մանկանց եկեղեցոյ – *Աւրհնեալ Հա՛յր երկնաւոր, լուս անճառական, / Գովեալ Որդին Աստուած, ծնունդ խոկական… արփիափայլ լուսով, ամբով էր ծածկեալ, / լուսաւորիչ լինել ազգիս խաւարեալ:*

բ. *242բ-3ա* Յաղագս սնընդեան Տղատուայ եւ բաջութիւն նորին եւ թագաւորելն Հայոց եւ գալն առ նայ Գրիգոր – *Այլ եւ Տրդատ՝ որդի մեծին Խոսրովի, / Տարեալ սնոցին գնաց ի յայլում տեղի… Տրդատ արքայն գնայ սիրով մեծաւրէ / եւ բազում պարգեւաց գնա արժան առնէ:*

գ. *243բ-4բ* Յաղագս հրաւիրելոյն Տղատուայ զԳրիգոր ի զռնումն կոոց, եւ նայ ոչ հաւանեցաւ բանին Տղատուայ թագաւորին – *Ի յեկեղեցայ գաւառն, ի գեաւղն երագայ, / Պատկեր կոոց կանկնեալ էր նայ Տրդատայ… կամէր ծածկել գլուսն անշիջանելի, / պատճառն փրկութեան Հայաստան երկրի:*

դ. *244բ-5բ* [Ա.] Սկիզբն շարչարանաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին – *Ասաց կապել գնալ յորմն ապառանից, / Առաւսանաւք պնդել լուսատուն գարմից… Թէպէտ ի յաշխարհս փարթամացեալ է, / այլ հուրն յաւիտենից նոցա պահեալ է:*

ե. *245բ-7ա* [Բ.] Երկրորդ շարչարանի Լուսաւորչին – *Հրաման ետ ֆոգաւորն, եւ գնալ կախեցին / եւ աղբ բերեալ ներքոյ նորա ծխեցին… այլ չարչար տանջանս ածեմ ես դորայ, / Թող քո Աստուածն անանց կենդանութիւն տայ:*

զ. *247աբ* Ի. Երկրորդ շարչարանի սուրբ Լուսաւորչին – *Եդին ի կոճ պրնդել զոյրքս նորա, / Եւ արիւնն հոսէր ի յերկրի վերայ… զի չարչարանս կրեաց վասն անուան նորա, / Եւ անպատում բարեաց ժառանգ առնէ գնայ:*

է. *247բ* Դ. Զորրորդ շարչարանի սուրբ Լուսաւորչին – *Հարձեալ Տրդատ արքայն կրկին հրաման տայ / Բեւեռս երկայնս հարուլ ի յոտսն նորայ… ոչ ի սերմանելն արդիւնս ստանայ, / այլ ինչ խաղաղութեամբ որայն ի հունձ գայ:*

ը. *247բ-8ա* Ե. Ե.երորդ շարչարանի Լուսաւորչին – *Ապայ արկեալ ի պարկ մոխիր գազախի, / Ի գլուխն հագուցին սրբոյն Գրիգորի… ալո, ասէ, մտաց աչալք իմ տեսի, / զոր պատրաստեաց Աստուած սրբոյն ի յերկրի:*

թ. *248ա* Զ. Զ.երորդ շարչարանի սրբոյն Գրիգորի – *Հրաման ետ հարկանել զաման արտասուին, / Ակրն երկնահ[ալ]եաց սրբոյն Գրիգորի… զի հոտ անմահութեան նովաւ բուրեսցին, / եւ գարշութիւն մեղաց մերոց փարատին:*

ժ. *248բ* Է. Է.երորդ շարչարանի սուրբ Լուսաւորչին – *Ձագար եդին սրբոյն ի նստո տեղին / Եւ ջուր տկով հեղին ի յորովայնին, այնմ, որ գետն շնորհաց ի յիւրմէ բխին, որով Հայաստանեաց երկիրս առոգին:*

ժա. *248բ* Ը. Ը.երորդ շարչարանի սրբոյն Գրիգորի – *Յայնժամ այլ չարչարանս նիւթեր Գրիգորի, / Ասաց թէ քերեցէ՛ք քերչաւք երկաթի… ասէ յորժամ մշակն ի գործ աշխատի, / ապայ վարձատրութեան արժանի լինի:*

ժբ. *248բ-9ա* Թ. Թ.երորդ շարչարանի սրբոյն Գրիգորի – *Յայնժամ բերել ետուր տաւտակ երկաթի, / Սփռեալ որպէս մահիճս ի վերայ երկրի… Թէ գիա՞րդ համբերես եւ կաս կենդանի, / ասաց՝ Անճառ շնորհաւք Որդոյն միածնի:*

ժգ. *249աբ* [Ժ.] Ժ.երորդ շարչարանի սրբոյն Գրիգորի – *Ապայ կապիճ երկաթս ի ծունկս հագուցեալ, / Աւուրս երիս այնպէս զտուբըն շարչարեալ… քանզի գու իշխեցեր հրով ինձ սպառնալ, / այլ դուն մին փոխան տանջանս ընկալեալ:*

ժդ. *249բ-50ա* ԺԱ. Մեռասան շարչարանի սուրբ Լուսաւորչին – *Ետուր բերել կապար եւ քան զջուր հալեալ, / Եւ չերմընեռանդ այնր զմարմնովն արկեալ… որգի է Անակայ, որ զհայր քո սպանեալ, / եւ զտունս Հայոց մեծաց խաւարեցուցեալ:*

ժե. *250ա-1բ* [ԺԲ.] Երկոտասան շարչարանի սրբոյն Գրիգորի ի վիրապն – *Վրճիռ մահու հասին ի վերայ նորին, / Տարեալ գնաց արկին ի խոր վիրապին… ժ. եւ Գ. (13) կարի սիրով Արարչին, / աւրն հաց մի արկանէ ի խոր վիրապին:*

ժզ. *251բ-2բ* Վասն սպասաւորութեան հրեշտակին՝ սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին – *Յորժամ զԳրիգոր արկին ի խոր վիրապին, / Ի մէջ ինհաւորաց*

իժի եւ քարբրէն... եւ մերս եկեղեցի ի ձայնակից լինին, / փառատրութեան մեծի մարմնացեալ Բանին:

ժԷ. *252բ-4բ* Վասն գալըստեան Հռիփսիմանցն – *Արդ, մինչ սուրբն Գրիգոր ի վիրապին կայր, / եւ աղաչեր զԱստուած հայոցս համար... շնորհաւք Հոգւոյն Սրբոյ զաւրացուցանէր, / անճառ Հաւրէն լուսոյ հարատացուցանէր:*

ժը. *254բ-6ա* Վասն նահատակութեան սրբոց Հռիփսիմեանցն եւ խոզ դառնալն Դռդատայ արաքին – *Յայնժամ Տրդատ արքայն բարկութեամբ լցեալ, / Զկուսանսն սպանանել հրաման իսկ տուեալ... համբերութեամբդ քո հայրդդ սրբանեալ, / շատ փառք եւ մեծութիւն կայ քեզ պատրաստեալ:*

ժբ. *256ա-7ա* Վասն ճանելոյն Լուսաւորչին ի վիրապն – *Հանեալ զԳրիգորիոս ի խոր վիրապէն, / տարեալ, զի բժշկեսցէ զարքայն ի ախտէն... Ծանուց խոբան լուսոյ կազմեալ անեղէն, / առեալ հրամանս՛ մ շինել տաճար քարեղէն:*

ի. *257աբ* Վասն բժշկութեան Տրդատայ՝ ի խով դառնալումն մարդոյ կերպ – *Մինչ ի աւուրս Կ. (60) Գրիգոր ազատեր, / այլ եւ տեսիլն մեծ շնորհաւք տեսանէր... շնորհաւք Լուսաւորչին արքայն բժշկէր, / որպէս մատաղ մանուկ փափուկ զարդարէր:*

իա. *257բ-9ա* Վասն ձեռնադրութեան Լուսաւորչին – *Յայնժամ արքայն գաւրաւք գնալ ազատչէր, / եւ համարէն աշխարհս գնամէն պաղատէր... յանկարծակի սաստիկ շարժեցաւ տեղին, / եւ ինքնին ծածկեցաւ գանձն աստուածային:*

իբ. *259ա-60բ* Ցաղագս շինութեան Սուրբ Կարապետին եւ միաոտութեան Տրդատայ եւ բոլոր աշխարհիս Հայոց – *Արդ, մինչ եկեղեցիս անդէն հիմնարկեաց, / եւ անթիւ բազմութիւն մարդկան հաւաքեաց... զսեր-մըն հոգեւոր, զոր եւ սերմանեաց, / հարիւրաւոր արդիւնս ըշտեմարանեաց:*

իգ. *260բ-1բ* Գնալ Լուսաւորչին եւ Տրդատայ ի մեծն Հոռոմ – *Արդ, մինչ երկիրս Հայոց լուսաւորեցան, / ձեռամբ սուրբ Գրիգորի ի լնատուած զարձան... զի լինիցի պատճառ նոցա սրբութեան, / ազատութիւն կրից, ախտից մարմնական:*

իդ. *261դ-2բ* Սպանանելն Տրդատայ զվիշապն միեղջեր – *Այլ եւ եղջիւր մի կայր ի յայն աշխարհին, / եւ վիշապ մի ահեղ չիրար կռուէին... ի լեառն Տիւրոսի, մերձ Մուշ քաղաքին, / որ այժմ Դաղարու վանք կոչեն նմին:*

իե. *262բ-4ա* Վասն ելանելոյ սուղն Գրիգորի յաթնապատն ճգնաւորական վաւրուխ – *Սուրբն Գրիգոր հովիւն Հայաստանեաց, / յորժամ զազգս հայոց ի կռոց սրբեաց... ԽԴ. (40) աւր միհիտ ճաշակեաց, / զի էր նայ զաւրացեալ ի Հոգւոյն շնորհաց:*

իզ. *264աբ* Վասն մանուսն սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին, եւ տանել մարմին նորա Ըստըմբալ – *Ի լիառըն Սեպոհու Գրիգոր աղաւթէր, / եւ հրեշտակաց դասուն խաւսակից լինէր... հովիւն, որ գնայ ծածկ[կ]եաց, դեռ կենդանի էր, / եւ նայ Բ. աչաքն խաւարեալ էր:*

Թ. *265ա-73բ* Պատմութիւն Մեծին Ներսէսի Հայոց հայրապետին, ասացեալ Առաքել արքազան վարդապետէ [Բաղիշեցւոյ] – *[Ա]նուն աւրհնեալ անճառ Աստուծոյ մեծին, / Հաւր եւ Որդո, Հոգւոյն նոցին... Ասեն վա՛յ եւ եղուկ ազգիս Արամին, / զի խաւարայլ եղեւ այսուր մեր աչիին:*

ՅԱԽԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՔ, ԺՐ. Դ.

Ժ. ա. *240ա* [Գրատարք] – *Տեառն այս անուն աստուածաբան վարդապետի... ընդ սմին եւս (վարդապետի, 2 միաւոր):*

բ. *239բ Խոյանձէլան ազգն գերի փարաւան... քեզ նման կուս եւ:*

գ. *239բ Եւ Տէրն ընդ առաջի մանկուք ամենայն... Նման կուս եւ պատուական:*

դ. *240ա Իջալ ի յերկինս երկիր պագութենդն ին դաս հրեշտակս էր... մատեա սուրբ նշան աթուռքն տաճարին Միմոն ծերի:*

ե. *240ա Տէրն հրամայեալ Աղթամարի խան շրջեալ... Եղեալ մարմնով յարութեան չէ քեզ նման կուս եւ:*

զ. *240բ Ալէք – Ջիարդ գատաւ նստաւ միայնացեալ քաղաքն բազմաժողով... ամենայն բարեկամք նորա անարգեցին զնա եւ եղեն նմա թշնամիք:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԹԱՄԱՆԱԿԻ

1. *Տը (Կիրակոս գրչի) Քրիստո՛ս Աստուած, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց, եւս առաւել՝* Սահակին* *եւ ծնաւղաց իւրոց Աստուած ողորմի:*

* *Ետնէը եղծուած, բայց ընթերցւում է:*

59ա Եւս առաւել գտատացող սուրբ գրոցս (այլ ձեռքով «տէր Մաթէոսն եւ ծնաւղքն եւ ամենայն ընտանիքն») եւ զեղկեվի Կիրակոս, կարգ[ացողաց (նման՝ 100բ):

78ա Եւս առաւել գտատացող սուրբ գրոցս (այլ ձեռքով «Մաթէոսին») եւ Կիրակոս գանարժանս կրօնաւոր:

138բ (ստ. լա.) Մի՛ անփոյթ առնէր, ով ընթերցող, այլ միտ ա՛ռ |139ա| լըրջմտութեամբ եւ դիմայ յոյսով առ Քրիստոս սորին ծիւաւք:

145ա Մանաւանդ ատացող գրոյս գՍահակն եւ գծնաւղսն իւր. ամէն:

2. *168բ (Պետրոս գրչի) Մանաւանդ գատացող սուրբ գրոյս գՍահակն եւ տարն իւր՝* Բաշխումն *գմայրն իւր՝* Սալթայխաթունն *եւ զեղբարքն իւր՝* Նազարն, Աստուածատուրն *եւ գիս՝ անմիտ* Պետրոս *գծողս. եւ նմայ փառք յաւիտեանս. ամէն:*

168բ Ի գրոյդ լսել օգնեա՛յ, Յիսուս Քրիստոս:

206ա Մխալ էր աւրինակն:

237ա Աւգնեա՛յ, Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ։
265ա Լսողաց՝ խրատ, կարդացողաց՝ ապուժ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. *241ա (1692 թ., Նոտրգիր) Ես՝ սուտանուն, մեղօք լի եւ տառապեալ եղկելի* Սարգիս *յանուն էրէց, որ ձեռնադրեցա Դաւիթ վարդապետէն հայրապետութեան տեառն* Նա[հապետի՛ն, *թագաւորութիւն շահ* Սուլէյմանի՛, *առաջնորդութիւն տէր* Խաչէ՛ատո՛ս, *քաղաքաւարութիւն խուջ[այ]* Յ*ա*վերի՛. *Թվին Ռձհ. Յէկին (1692)։*

2. *240բ (1699 թ., Նոտրգիր) Թվին Ռձհ[.ում (1699) մեծ սէրտէրն փոխվեցաւ առ Աստուած, Աստուած ողորմի իր հոգուն, Աստուած իր մեղաց թո[ղութիւն տայ. ամէն։ Ողորմայծ հոգի* Խաթունճա՛ն *նոյն տարին փոխվեցաւ առ Աստուած, Աստուած իր մեղաց թո[ղութիւն տայ. ամէն։*

3 *21ա (1711 թ., Նոտրգիր) ///որ կարճ առի ի Դաւիր վարդապետէ ի թվին Ռճ[կ.] (1711) ///թան Դ. տղայ ծնաւ։*

4. *239բ (1711 թ., Նոտրգիր) Ես՝ սուտանուն, մեղօք լի եւ տառապեալ եղկելի* Մաթէոս *էրէցս, որ ձեռնադրեցա ի Դաւիթ վարդապետէ, թագաւորութիւն շահ* Ապասի՛ն, *հայրապետութիւն տեառն* Յակոբի՛ն, *առաջնորդութիւն խոջայ* Սաֆրոասի՛ն, *թվին Ռճկ. (1711)։*

5. *110բ (1822 թ., շղագիր, ստ. լս.) Ն[ուաստ]* Յովհաննէ*ս ծ. վարդապետ* Գրիգորեա՛ն, *առաջնորդ[ական] տ[եղապահ] հայոց* Պոլկարիո՛յ։ *Յունվար 29, 1882, ի* Ռուսեա՛ստ։

ԿՆՔՈՒԳՐՈՒՆԻ՝ *160բ. կապոյտ քանաքով բոլորակ՝ «ՅԻՍՈՒՍԻՒ ՔՐԻՍՏՈՍԻՒ ՇԱՌԱՅ ՅԻՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ, 1874»։*

ԳՉՁԱՓՈՐՁ՝ *220բ՝ խզրզոց, 239բ՝ «մեղա, մեղա, Տէր մեղայ, Տէր ինձ ողորմեա՛»։*

ՆՇՈՒՄ՝ *կազմի մէջքին (ճերմակով տպուած) «Քարոզգիրք», կազմաստառ ԱՀ «Հ[ին] 10. Քարոզգիրք կիրակօսի ուրուն, քառածաղ, հասարակ նօտրագիր, գրեալ ի թղթի, թուականն անյայտ, կազմ իւր գոլով մաշեալ, կարկատեալ են թղթով գրէթէ բովանդակ մերքը իւր, յորոց եւ բազումք վնասեալ ի ցեցոյ։ Պարունակին ի սմա. ա. Քարոզ ի բանն, որ ասէ. «Եղերուզ խորագէտք իբրեւ զօձս», բ. Այլ հոգեշահ քարոզ, սկիզբն մերի, գ. Քարոզ ի բանն, որ ասէ. «Մի՛ տայք զսրբութիւն շանց» ի լեզու աշխարհիկ, դ. Քարոզ ի բանն. «Ամենայն, որ առէ զերաքայր իւր, մարդասպան է» յաշխարհիկ լեզու, ե. Քարոզ ի բանն Դաւթի, որ ասէ. «Որպէս իժի եւ քարբի, զի խզեալ է զականջս իւր» յաշխարհիկ լեզու, զ. Քարոզ ի բանն Սողոմոնի «Զանձն իւր ի գործս ոչ բժշկէ» յաշխարհիկ լեզու, է. Քարոզ ի բանն Սողոմոնի, որ ասէ. «Ձիշեա՛ զարարիչն քո յաւուրս մանկութեան քո» յաշխարհիկ լեզու, ը. Քարոզ ի բանն Սողոմոնի. «Լաւ է օր մահուն, քան զօր ծննդեան» յաշխարհիկ լեզու, թ. Քարոզ ի բանն. «Հոստովան եղերուք միմեանց զմեղս», ժ. Քարոզ ի բանն. «Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ», ժա. Հարցուածն սրբոյն Բարսղի եւ պատասխանիք սրբոյն Գրիգորի, ժբ. Գիրք առաւակաց Վարդանայ վարդապետի, ժգ. Ճառ սրբոյն Յակովբայ սրբոյ եպիսկոպոսի ասացեալ ի քեռարձաւատութիւնն Թումայ առաքելոյն, ժդ. Ճառ եղիշէի վարդապետի ի ճարտութիւնն Քրիստոսի, ժե. Խօսք Մակարայ միայնակեցւոյ ընդ պարսից ամիրայ Ապոլ-Ագիգի, ժզ. Ճարտասն «Առաջեաճաշակ պտղոյն», ժէ. Տաղ Աստուածածնի «Ողջոյն ընդ Մարիամ», ժը. Տաղ «Խաչն ի նախնումն», ժԹ. Տաղ Յովանիսի «Արեգ, արեգ իմ խուպ եւն», ի. Գովասանք Աստուածածնի. «Աղբիւր կենդանի», իա. Պատմութիւն սրբոյն Գրիգորի յԱռաքել վարդապետէ», «Հ[ին] 732, 2566, ԺԷ. – Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»։*


2567

ՀՈՂՎԱԾՈՅ


ԵԳԵՒԻՒ. Ռճկ. – 1659

ԳՐԻՔ՝ Գրիգոր Զէյթունցի (թ. 1ա-22, 24-33, 46-55, 110-27), Սարգիս (թ. 23, 34-45, 56-109), անանուն (թ. 128-40)։


ԹՒՐԹ՝ 140։ ՊԱՐԱԿ՝ Ա-ԺԲx12 (Ա, է, ժԹ 10, Գ 2, Դ 9, ժ 6, ժԱ 11, ժԳ 8, ժՌ 14)։ ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18x14։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն՝ թ. 1-97, 109-140 (14x9.5), երկսիւն՝ թ. 98-108 (14x10)։ ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 48ա, 98ա, 133ա)։ ՏՈՂ՝ 29 (թ. 1-22, 25-34, 46-55, 110-27), 32 (թ. 23-4, 35-45, 56-97), 34 (թ. 98-108), 30 (թ. 109), 28 (թ. 128-140)։ ԿԱՊՄ՝ դոյլագարդ չագանակագոյն կաշի, միջուկր տախտակ, աստառ թուղթ լուսանցակողերը՝ կարմիր։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա.Բ+ԳԳ չգրուած թուղթ։



Նմուշ 48ա



Նմուշ 98ա



Նմուշ 133ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆ – Լ ւ ս ա ն գ ա գ ա ր դ՝ բուսական Զ ա ր դ ա գ ի ր հանգուցագիր՝ Գ ո յ ն՝ կարմիր։

ՎԻՃԱԿ՝ բառարտ. թերթերին խոնաւութեան եւ ձեթի ճեռմիր, ոտդ թերթեր ընկած կամ ետեւառաջ դրուած. կարգաւ՝ թ. 1-22,

46-55, 24-45, 56-7, 23, 58-140. կազմը նորոգուած է Ի դ., լուսանցակողերը գունաթափուած, աղտոտուած, թ. 7-8, 10, 46-7ի ստ. աջ անկիւնը, թ. 11ի վերին հատուածը, թ. 35ի ստ. եւ վերին աջ անկիւնները պատռած, 35բ եզի արտաքին լս.ում յետագայի եղծուած անընթեռնելի խզրզոց:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1ա-7բ* [Խրատ ինչ] – *(սկ. թափուած) ///եւ առաքեցեր զնոսա բաշխել զկեանս մարդկան, որ եւտուր սուտերս հոգեւորս ի ձեռս առաքելոյն եւ առաքեցեր ընդդէմ բանսարկուին, նոյն ողորմութեամբն ողորմեա՛յ ինձ եւ տո՛ւր կարողութիւն եւ ի թիկունս հա՛ս ասել զբան Աւետարանին առաքելոյն մարգարէին, որ ասէ... այլ եւ զգրոց աշակերտեալ մանկունդ, որ ծարաւիդ էք յանհատականն ծովէ, մշտահոս ուխիք յընդարձակութիւն սրտից ձերոց բղխեսցէ, մինչ զի եղիջիք իւրաքանչիւր ոք ի ձէնջ, զեւս բղխեալ յորովայնէ մտաց ի զովացումն պատքեալ անձանց եւ ի լուացումն աղտոյ գարշութեանց եւ ժամանել ձեր ի բարիոք աւարտն եւ ի փառս հանդերձեալ կենացն. ամէն:*

Բ. *7բ-22բ, 46ա-55բ* Յօհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին, որ ասէ. Ի սկզբանէ, Տէր, զերկիր հաստատեցեր եւ գործ – *Ակ նախ քան ի մտանել բանիս նախերգաբար... վասն այսորիկ դիւրաւ իմացուին եւ շարժական կոչին եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:*

Գ. *24ա-31ա* [Վարդանայ Արեւելցւոյ] Աշխարհացոյց

Տե՛ս ձեռ. 20, 251ա-7ա: ա/*24ա*բ: բ/*24բ-5ա*: գ/*25ա-5բ*: դ/*28բ-31ա*:

Տպ. Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, Քննական հրատ. Հակ Պէրպէրեանի, Բարիզ, 1960, էջ 1-76:

Դ. *31աբ* [Գրիգորի Կեսարացւոյ Անուանի հաղագ] – *Աւետեաց երկիր Երուսաղէմ է... Փիլիպպեա, Յաւոն, Փիլիպպոլիս:*

Ե. *31բ* Նշանագիրք անուանց. կարճաբանութիւն – *Աբրահամ Ջ. Ահարոն Ի... առագաստ, արուեստ, աշխարհ, ասպարէզ, ամբարիշտ:*

Զ. *32ա-5բ* [Մանուէլ]

ա. *32ա* [Յաղագս թագաւորաց, թղթոց, Ադամայ] – *Առաջին թագաւորն Հնդկաց Գորաբ... մարմնով ընդ Աստուած միաւորեալ:*

բ. *32ար* [Գիրն առաջին] – *Այս է գիրն առաջին, գրեալ մատամբն Աստուծոյ եւ կնքեալ... մեծ ես, Տէ՛ր, կարօղ ես դու, Տէ՛ր, յաղթող Աստուած. եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն:*

գ. *32բ-3ա* [Հարցմունք եւ պատասխանիք] – *Հարցումն. Վասն էր ի հաւատամքն Ջ. (80) անուն գիր չկայ... Հարցումն. Ո՞րն է Ե. զգալարանքն... Հարցումն. Ո՞րն է Ջ. շարժման մեղքն... որոց փրկեսցէ զմեզ յամենայն սատանայական փորձութենէ Քրիստոս Աստուածն մեր. ամէն:*

դ. *33բ* Անուանի թագաւորաց Պարթեաց – *ա. Հոչէ, բ. Տիգրան... ժ. Գագիկ, ժա. Դաւիթ:*

ե. *33բ* Այս է կարգ վարդապետացն մերոց – *Նախ Մխիթար, որ մականուն Գօշ կոչի... Ներսէս Գաւաշեցին ի գեղջէն Մոխաչքերթոյ:*

զ. *34ա-5ա* Յաղագս բառասնորդաց պահոցն – *Զի անուն պահոցս այս Դ.իւք բացայայտի... այսքան վասն անուանց քառասնորդաց պահոցս:*

է. *35ար* Այլ [փառք] խաչի – *Փա՛ռք կենսատու խաչի քո... զազատարար զբարձրանալն քո ի խաչն կենսատու օրհ՛:*

Է. *23ար, 36ա-45բ, 56ա-84ա* [Քարոզ Գրիգորի Տաթեւացւոյ]

ա. *36ա-7բ* [Նորին առաջին քարոզ վասն աղօթից] – *(սկ. թափուած) ///զի որպէս անհաճոյ է Աստուծոյ յանդգնութիւն մեղաւորին... որ եւ զմեզ արժանի արասցէ Քրիստոս Աստուած մեր, ողորմութիւն իւրոյ. եւ նմա փառք յաւիտեանս ամէն (Ամառան հտ., գլ. ՁԱ.):*

բ. *37բ-41ա* Նորին Վասն ողորմութեան, ի բանն. Ողորմութեամբ եւ հաւատով սրբին մեղ – *Ջամենայն արարածս, զոր սահեցուեցաց Աստուած... անշէջ լապտերօք մտանել ի յառագաստ հարսնեացց փեսային՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն (Ամառան հտ., գլ. ՂԸ.):*

գ. *41ա-2բ* Նորին Վասն չորեքշաբաթու եւ ուրբաթու, [ի բանն]. Պահեմ երկիցս ի շաբաթու կամ տասանորդս – *Պատճառ պահոցս, որպէս ասէ սուրբն ի դրախտին... եւ անտրտում ուրախութեանցն հաղորդս լինել ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն (Ջմեռան հտ., գլ. ԻԷ.):*

դ. *42բ-5* Յայլմէ դարձեալ Վասն պահոց, [ի բանն]. Եւ պահեալ զի. (40) տիւ եւ գի. (40 գիշեր – *Ասէ Յոբ, Կեանքս մարդոյ պատերազմ է... այսպէս պարտ է մեզ ի.օրեա պահօք մերկանալ գինն մորթին մեղաց եւ նորոգիլ բարի գործովք, ի փառս նորոգողին մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ (Ջմեռան հտ., գլ. ԻԳ.):*

ե. *45բ* Այս հարոզս ժ.բանեան օրինաց միջէն է – *Պատուեա՛յ զօր շաբաթուն... յորոյորդ՝ յորժամ մեռանիմք/// (վերջը թափուած. Ամառան հտ., գլ. Ք.):*

զ. *56ա-7բ, 23ար* Նորին դարձեալ հարոզ յաւուր Վարդավառի. աղ օրինութեան վասն ընծայից եւ պատարագաց՝ Պատուեա՛ զՏէր ի հոյոց առդար վաստակոց եւ ճա՛ն ննա պտուղ ի հոյոց առդար արմտեաց – *Տուրք ողորմութեան յԲ. դէմս որոշ... արժանաւորիկ երկնային կոչմանն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն (Ամառան հտ., գլ. ՃՒԶ.):*

է. *58ա-60բ* Նորին Վասն կարգաց աղօթից, ի բանն. Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս – *Ջբերան իմ*

բացի եւ առի գինոյ... պարտ է յամենայն ժամ աղօթել, զի փրկեմք յամենայնէ. ամէն (Ամառան հտ., գլ. ՁԴ.)։

ը. *60բ-3բ* Նորին բառով եւ մեկնութիւն վասն սուրբ պատարագին – *Նախ քննելի է, թէ վասն է՞ր կոչի հաղորդութիւն... եւ ի մի եւ ի նոյն հրոյն պարզ արծաթն սրբի եւ անմաքուրն/// (վերջը թափուած. Ամառան հտ., գլ. ԼԻ.)։*

թ. *64աբ* Քառով Վասն միաանգամ գալստեան աւուրն – *Վարդապետք ասեն, թէ վասն Ք.ի.ան պատճառի... եւ գիւքն ի դժոխս, որ գերազանցեն անգթութեամբ, քան դամենայն տանջողս։*

ժ. *64բ-9բ* Գրիգորի եռամեծի ասէ հոետորի եւ տիեզերալոյս վարդապետի Քառով Վասն գալստեան եւ դատաստանի, զի որպէս փայլակն, որ ելանէ յարեւելից եւ երեւի] – *Ձիքրիական գալուստն Քրիստոսի Աստուծոյ մերոյ... եթէ եկայք աւրհնեալք հօր իմոյ ժառանգեցէ՛ք պատրաստեալ ձեզ գործոյթիւնն. ամէն (Ամառան հտ., գլ. ՃԿԶ.)։*

ժա. *69բ-72բ* Նորին Քառով Վասն խնդրոյ, ի բանն. Խնդրեցէ՛ք նախ զարհայութիւնն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա. եւ այն – *Ի ձեռնտուութենէ Հոգւոյն Սրբոյ եւ օժանդակութեամբ աղօթից ձեր կամիմ... եւ նմա փառք եւ գոհութիւն եւ երկրպագութիւն ընդ Հօր իւրում եւ ամենասուրբ Հոգւոյն. ամէն (Ձմեռան հտ., գլ. ՀԳ.)։*

ժբ. *72բ-3բ* Յայլմէ Քառով Այգոյն. Վասն արհուեստն եւ գործոյ՝ Ընդէ՞ր կայ աստ զօրս ցերեկ դատաւարկ, ասեն ցնա. Զի ոչ ոք կալաւ – *Ասեն իմաստունք, թէ ամենայն ինչ, որ պատուական է... որում եւ գմնզ արժանի արասցէ իւր սուրբ արքայութեանն. ամէն (Ձմեռան հտ., գլ. ՂԸ.)։*

ժգ. *73բ-4ա* Այս ոուիշ տեղացց է. Վասն ժամու աղօթից – *Ու է առաչին ժամ աղօթիցն... վասն որոյ ցերեկն հինգ անգամ աղօթեմք։*

ժդ. *74բ-8բ* Քառով Վարդավառին, ի բանն՝ Ու յետ Ջ. աւուր առնէ Յիսուս զպատարագս – *Ի վերայ այսմ բանի ժե. գլխոյրէն բանս խնդրելի է... զի դատաստանի ժամ եւ հաւուցման ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։*

ժե. *75բ-84ա* Նորին Քառով փոխման սուրբ Աստուածածնին, ի բանն. Բազում դստերք սուացան մեծութիւն, բազումք առարին զօրութիւն, բայց դու առաւել եղեր եւ զանցուցեր զամենայն – *Սրարիչն Աստուած արար գլուսաւորս մեծամեծս... հանցուք գփառս եւ գպատիւ միածնին Որդւոյ քո ընդ Հօր առենակալի եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն (Ամառան հտ., գլ. ՃԼ.)։*

Ը. *84բ-97բ* [Թովմայի վարդապետի Մեկնութիւն մարգարէութեանն Դանիելի] – *Ու էր այր մի, քնակեալ ի Բաբելոն... Արդ, յերեսս անկեալ պաղատիմ քրիստոսասէրս եւ վերնակրօն եղբարցդ, յիշեսչիք ի բարին Քրիստոս գմեծ վարժապետն մեր, գվարդապետն Վարդան, որ զգիրս Դանիելի մեկնեաց՝ առեալ յԳ. մեկնչաց՝ յեփրեմէ, ի Հիպոլիտոսէ յԱյոց, ի Հիպոլիտոսէ Հռոմայ եւ ի Ստեփանոս փիլիսոփայէ Հայոց, եւ ի մի հաւաքեալ լուսաւորեաց դպաոս եկեղեցւոյ վարդապետաց ի Ձժէ. (1268)* [Վականիս մեր, ի կենդանաթաղ գերեզմանի Լուսաւորչին Գրիգորի, ի Սուրբ Վիրապն *սկսեալ եւ ի յԱղուց վանքն աւարտեալ, առաջի սուր եւ փառաւորեալ նահատակին* Ստեփանոսի Հոիփսիմեանց *քահանային, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի մինչ ի գալուստն Քրիստոսի։ Ու եւ նուաստս ի մանկունս եկեղեցւոյ Թովմայ պիտականուն վարդապետս, սակաւ մի առի ի գրոց մեկնչացն վասն վարդապետացդ եւ գրոց աշակերտացդ առ ձեռն պատրաստ, զի դիւրաւ գրեալ լինի, եւ անճաշակ մի՛ լինիցին ի հրեշտականման առն Աստուծոյ Դանիելի։*

> *Ձեռ. 1134, 81ա-125ա՝ նիւթս վերագրուած է Թովմա վարդապետին, թէեւ վերջ բերուած յիշատակարանն այնտեղ չկայ։*
>
> *Տե՛ս Մեկնութիւնք Դանիէլի մարգարէութեան, Թովմա Մեծոփեցի..., աշխ. Յ. Քէոսէեան, Մ. Արարեան, Գ. Նէրսիսեան, Էջմիածին, 2007, էջ 309-349 (ձեռագրիս մասին՝ էջ 18)։*

Ի. *98ա-105ա* [Մանուէլ]

ա. *98ա* Բանի աղօթից խօսի ընդ Աստուծոյ, գրեալ ձեռամբ Կիրակոսի, եւ ունի օրինակս գայս – *Ամենայն անձն աստուածասէր... որք են ի մարմնի. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։*

բ. *98աբ* [Գրիգորի] Նիւսացոյն ի Հայր մեր, որ յերկինս գոցն – *Նուիրել է խոստումն իրիք... եւ փրկչին ընդ Հոգոյ Նորա Սրբոյ։*

գ. *98բ-9բ* Ի Տրամախաբանէն Կիւրղի, որ առ Երեմիա ՂՒ. բանէն – *Ասեն զվերաբերութիւնն, թէ ըստ այսմ օրինակի... քանզի անկարելի է նմա ամենեւին եւ ոչինչ։*

դ. *99բ-102ա* Ուոգիմէի խօսի յեզեկիել մարգարէ – *Արդ, է պատճառք առաչին տեսլեանն... լերին անուն է կամ մեծին Լիբանանու։*

ե. *102ա* Ի վերայ իշխանին Տիւրոսի – *Դու էիր, ասէ, մատանի եւ կնիք աջոյ... որ յիշելով զսէր միաբանութեան։*

զ. *102աբ* Պատգամ ի վերայ եգիպտոսի – *Սպառնա եգիպտոսի ի ձեռն Կամփիւսոյ... որ ի ձեռն Կիւրոսի եւ ի ձեռն տնօրէնութեան բանին։*

է. *102բ* Ի վերայ Գովգայ եւ Մագովգայ – *Ագգք են առքա, որ զինի դարձին մարտ պատերազմի տուեալ ընդ հրէայսն... եւ ի դարձին իրրեւ որիք արձակեալ ի կապարանէ խայտալ ասէ։*

ը. *102բ-3բ* [Սրբ]ոյն յեզեկիէլ մեկնիչ ասուածց – *Կողակ սիմաձէս... եւ լ. (30) լայն, որ է Հ. (70), փառք Քրիստոսի Աստուծոյ։*

թ. *103բ-5ա* [Ի Կանոնագրոց Հայոց] – *Զի՞նչ է արժանի եպիսկոպոսին... ունի սա համաձայն Բարսղի սրբոյ:*

Քաղուածք Կղեմէսի, Անտիոքի ժողովի, Սահակ հայրապետի, Սիոն կաթողիկոսի, Ներսէսի, Դուինի ժողովի, Բարսեղ Նեսորացւոյ, Բենեդիքտոսի կանոններից:

ժ. *105բ-8բ* Ներսէսի եպիսկոպոսի՝ եղբօր կաթողիկոսին Հայոց տէր Գրիգորիսի պատասխանի թղթոյ ոուսմն Յակոբայ Ասորոց վարդապետի, ի մայրաքաղաքին Մելտենոյ Հայոց – *Ի գալի դիտաւորութիւն քում նամակի... եւ ցամենայն հաւատացեալս անուան իւրոյ Քրիստոս Աստուած մեր, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:*

ԺԱ. *109ար* [Տաղ – *Ալ՛նեղն Աստուած անճառական, / անուն՝ւ անհնա եւ անսահման... նեղելոց եւ տարակուսելոց եւ պարտապանաց / դուռն հանգստեան եւ հ[ո]ւարս փրկութեան տացէ:*

ԺԲ. *110ա-27բ* [Առակի Վաղգանայ Այգեկցւոյ]

ա. *110ա (սկ. թափուած) ///բար եւ սուրբ եւ ես երկրի, այլք խոտորեցան...*

բ. *110ա Կաքաւն երթայր գրիւք եւ յանկարծակի անկաւ ի ծօղակն...*

գ. *110ա Առիւծն եւ գայլն եւ աղուեսն եղեն եղբայրք...*

դ. *110աբ Գայլն ետես էշ մի գէր...*

ե. *110բ Աղուէսն էառ կաքաւ մի...*

զ. *110բ-1ա Աղուէսն առեալ գլխոն ի բերանն...*

է. *111ա Կատուն առաւ փիլոն...*

ը. *111ար Էր միայնակեաց մի...*

թ. *111բ Աղուէսն եգիտ ուղտ մի մերձ ի մահ...*

ժ. *111բ Ուղտն եւ գայլն եւ աղուէսն եղեն եղբայրք...*

ժա. *111բ Աղուէսն խաբեաց զգայլն...*

ժբ. *111բ-2ա Աղուէսն ետես զպանիրն...*

ժգ. *112ա Խօսօղն աղաղակելով աղօթէր ի ծառ մի...*

ժդ. *112ա Աղուէսն ի գետն անկաւ...*

ժե. *112աբ Աղուէս եգիտ ղրեհ մի...*

ժզ. *112բ Կին մի մեծահասակ եւ սաստիկ գէր...*

ժէ. *112բ Առիւծն կայաւ սպասաւոր գաղուէսն...*

ժը. *112բ-3ա Գայլն յափշտակեաց յանասուն մի...*

ժթ. *113ա Արծիւն հալածէր զկաքաւն...*

ի. *113ա Շունն եւ խոտօղն եղբայրք եղեն...*

իա. *113աբ Գայլն եւ ջորին եւ աղուէսն եղեն եղբայրք...*

իբ. *113բ Խօսողն տարան ի դարպաս թագաւորին...*

իգ. *113բ-4ա Անգգամ եւ լեզուանի եւ բարկացող կին...*

իդ. *114ա-5բ Ի քաղաք մի աւադ երէց մի ծերացեալ...*

իե. *115բ-6ա Էր թագաւոր մի, եւ ոչ ունէր ժառանգ...*

իզ. *116աբ Էր պատանի մի աղօթարար...*

իէ. *116բ-7բ Կայր թագաւոր մի անիրաւ...*

իը. *117բ Առիւծն հիւանդացաւ...*

իթ. *117բ Առիւծն մի կորիւն <կորիւն> ծնաւ...*

լ. *117բ-3ա Այր մի ցանեալ էր զընկուզի ծառի տակ պարտէզ ձմերուկ...*

լա. *118ա Միայնակեաց ոմն յոյժ անուանի եւ ճգնաւոր...*

լբ. *118աբ Միայնակեաց մի նստէր ի վերայ վիմի մի...*

լգ. *118բ Կրօնաւոր մի նստեալ դրամ կու համրէր...*

լդ. *118բ Իշխանի մի որդի մեռաւ...*

լե. *118բ-9ա Եկեսցուք ի բան Աւետարանին, որ ասէ, զի Որ գանձն ձեր են, անդ եւ սիրտք ձեր եղիցին: Մեռաւ ոմն իշխան, որ ունէր բազում գանձս...*

լզ. *119ա Եղբայր ոմն գնաց առ հայրն...*

լէ. *119ա Ի պատմութենէ ասեն, եթէ ի Դալաթան...*

լը. *119ա-20ա Թագաւոր ոմն մեռաւ, եւ մնաց Ց. որդի...*

լթ. *120ա Աղեգսանդր թագաւորն երթայր յամենայն տեղ...*

խ. *120աբ Աղէքսանդր թագաւորն հանդիպեցաւ օր մի...*

խա. *120բ Հանդիպեալ Աղէքսանդրու չեզր տեղի մի հեծելովն...*

խբ. *120բ Աղէքսանդր թագաւորն բազում գօրօք իջեալ ի կղզի մի...*

խգ. *120բ Աղէքսանդր թագաւոր բազում գօրօք պատիւ հրաւիրեցաւ...*

խդ. *120բ Այր մի ըմբռնեցին վասն գողութեան...*

խե. *120բ-1ա Մարդ մի գերեզման մի կողոպտեաց...*

խզ. *121ա Ի յաշխարհս Ե. իրք են, որ ի մարդկանէ անգիտելի է...*

խէ. *121ա Երեք իրք են, որ գմարդն ի չարէն ի զատ պահէ...*

խը. *121ա Թագաւոր մի յիւր խազինան Ռ. ակն ունէր պատուական...*

խթ. *121աբ Խօճայ մի աղքատացաւ...*

ծ. *121բ Մարդ մի կայր բարի...*

ծա. *121բ-2ա Երկու մարդ գաշխարհս ի շուռ եկին...*

ծբ. *122ա Մարդ մի պարգևան...*

ծգ. *122ա Մարդ մի չերուսաղէմ երթայր...*

ծդ. *122աբ Մարդ մի աղքատացաւ...*

ծե. *122բ Գնաց մարդ մի ի մրջիմն ի մօտ...*

ծզ. *122բ Մարդ մի անյագ էր ի յարծաթսիրութիւն...*

ծէ. *122բ-3ա Վարդապետ մի Ց. օր եւ Գ. դիշեր քարոզեաց...*

ծը. *123ա Ջհուտ մի ջրհորէն էր անկել...*

ծթ. *123ա* Այր մի մեռաւ, եւ տանէին ի թաղել…

կ. *123աբ* Առիւծն հիւանդացաւ, եւ եղեալ ի խնդիր…

կա. *123բ* եկեալ բժշկապետ մի ձայնէր եւ ասէր…

կբ. *123բ-4ա* Այր ոմն բակլայ եւ սիսեռ ցանեաց…

կգ. *124ա* է գազան մի ի ծովն եւ է հրաձէր…

կդ. *124աբ* Այր ոմն վաճառական ունէր բազում գանձս…

կե. *124բ* Մուկ մի յուղտ ի մօտ գնաց…

կզ. *124բ* Մրջիւն մի յանբնակ տեղի մի…

կէ. *124բ-5ա* Աղքատ մի ի գիւղ մի երթայր…

կը. *125ա* է հաւ մի ի Հնդկաց աշխարհն…

կթ. *125ա* Աղքատ մի ի լերին միս խորովէր…

ճ. *125աբ* Այծեղն ժողովեցան եւ թուխթ ուղաւուբեցին առ գայլերն…

հա. *125բ* Կրիայքն ժողովեցան առ արծիւն…

հբ. *125բ-6ա* էր ի Հնդիկս էշ մի…

հգ. *126ա* Ոխիան եւ աղուէսն արա ցանեցին…

հդ. *126աբ* Այր ոմն Ռ. (*1.000*) խոզ էած ի մին տեղի…

հե. *126բ-7ա* Կին մի տղայ ունէր եւ սովորեցաւ ի գողութիւն…

հզ. *127ա* էշ մի ի գետն անկաւ…

հէ. *127ա* Թագաւոր մի ի վերայ իւր աշխարհին ի շուրջ կուգայր…

հը. *127աբ* Եւ ահայ ժողովեցան ամենայն իրաց ի մի տեղի…

հթ. *127բ* Աւձն յորժամ ելանէ ի ծակէն…

ձ. *127բ* Արքայիկ օձի սովորութիւն այն է…

ձա. *127բ* է գազան մի ի Հնդկաց աշխարհն…

ԺԳ. *128ա-9ա* [Յանկի գլխոց Սուրբ Գրոց] — *Արարածոց. Վասն գերութեան Ղովտայ ԺԴ. գլուխ… վասն Բէլա խորտակմանն ի Դանիէլէ ԺԴ. գլ.:*

ԺԳ. *131ա-9բ* Յանկ այսմատուրիս ըստ այբուբենից, վասն դիտաւ գտանելոյ զպատմութիւն եւ վկայութիւն մարտիրոսաց, զոր կամիցիս — *Աբուդիմոսի վկայի. օգոստոսի Իե. (25)…*

Թ. 137-ՏԻ սիջից թերթեր ընկած լինելու պատճառով նիւթս թերի. պակասում են այբուբենի հ-ու տառերով սկսուղ անձնանունները:

ժե. *140բ* [Տաղ հայատառ թուրերէն] — *Ումարիմ պարիմ խուտաուէմն սիզի մուզ, / Սաղլաբն իրէպպիմ շէյթան շէրին դէն մուզ… էպէտիլ. ամէն: Որպէս աւրհնեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս զտունն… մանկունքն նոյն աւրհնութեամբըն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵՒՆ ԺԱՄԱՆԱԿԻ

31ա Թվին ՌՃԼ. *(1659)* գրեցաւ գիծս ի Նդեսիոյ, ձեռամբ Գրիգոր վարդապետիս Ջէթունցւոյ, որ եկի ի նորոգումն անդրանիկ եկեղեցեայ մօրն լուսոյ Սուրբ Աստուածածնին Տեառն տաճարին, եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն:

45բ Որ եւ գանյիշելի Սարգիս ծառայս իւր Նորոգեսցէ ողորմութեամբն իւրով. ամէն:

Այս եւ նախորդը տե՛ս Ժ. գ-ի յիշ-ք, Ե., էջ 866, 1324:

78բ ՋՍարգիս գրչիկս յիշեցէ՛ք ի Քրիստոս:

97բ Եւ այժմ զանարհեստ գրչիկս Սարգիս արեղայս յիշել ի Տէր աղաչեմ, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. *26ա (1826 թ., նոտրգիր)* Սանայհէր Ծերոնի հարանիքըդր թվին ՌՄՀԵ.ին *(1826)*, որ բարձ հարսնիք սուրբ Յակոբայ պասի ելուն էրին, որ Տէր Աստուած վայելուզմըն տացէ. ամէն:

2. *87բ (1826 թ., նոտրգիր)* Գրեցաւ գիրս եղսայբերթիթ թվին ՌՄՀԵ.ն *(1826)*, յոկնիսի Ա.ին, որ աշխար եկաւ, Տէր Աստուած երկար կէօք պահեսցէ. ամէն:

3. *32բ (1827 թ., նոտրգիր)* Թվին ՌՄՀԶ.ն *(1827)*, մարտի Ի.ին *(20)* Լուսաւորչու կիրակին է:

4. *108բ (1828 թ., նոտրգիր)* Այս է յԱւետարանի քաղաքըդր առնդրը, թվին ՌՄՀէ.ին *(1828)*, այնտից յետոյդր Ա. ամիս յետ տիրացու Յօհաննդր յաշխա[թ]ի էկաւ, Աստուած յերկան կենօք պահեսցէ. ամէն:

5. *123բ (1839 թ., շղագիր) 1839ին* եւ մարտի 18-ին գերեցաւ:

6. *45բ (1845 թ., շղագիր)* Այս է Պապպիկին գրածն է, *1845* ամի եղեւ *(նման՝ 73բ)*:

7. *62բ (1873 թ., շղագիր, մատիտով)* Գրեցի Օհաննէս Պարունակօվս թվին *1873ի, օգոստոսին 29* օրն:

8. *1ա (1885 թ., շղագիր)* Նուէր Սուրբ Էջմիածնայ Մատենադարանին: Գարիրէկ Յոհաննիսեանց: *1885 թ. մայիս 12:*

9. *33ա (ԺԹ. դ., շղագիր)* Յուցակ. փրկեսցէ զմեզ յամենայն սատանի փորցութեանց: Գիրք քարոզաց եւ խրատոց, որ գնա գերեցաւ զառկային փառաց, որ կբնութիւն չմարիգան. ամէն:

10. *90բ (ԺԹ դ., նոտրգիր)* Գրպեր Թարգի Գէորպեղս վերառեալ եւ պարտ եմ Ղարսէցի Գրիգորի որ:

11. *96բ (ԺԹ դ., շղագիր)* Թըվինը հասարակաց, որ եղեւ Ավէտաւնդարպոլ բընակիչ քաղաքացոց ծառա. ամէն *(նման՝ 103բ, 125բ)*:

ԳՐԱՉՓՈՐՉ *33բ* «Յուցակ ի մեզ»: *43բ* «Журналъ стараися чудо»: *44ա* «Աչքուբեն՝ Ա-ի»: *55բ* «Կարմիր փողանոյար պիր փարիշաբն լուր գործան չիչախլար: Պիր փարիշաբն լուր գործինա չիչակ ալլորի մազի. ամէն»: *91բ՝* «Стараися чудо блазъ ученика. Նաեւ արաբաիուանշան ծածկագրութեամբ» «վարդապետ», ծածկագրութեան փորձեր»: *106բ՝* «Կենգական ի մեզ է Ճըշարտութիւն»: *109բ՝* «Նոայի Մէ գլխ. Տեսէ՛ք զիարդ կորեաւ յարդարն… որդիք շնութեան *(Նոայի Մէ., 1-3)*»: *129բ (շղագիր)* «Ումարիմ պարիմ խաստա-

տէմն մուզ, / Սաղլասն շէքիզէմ շէքիյն մուզ... էրինի-զաչ տահմվէչ զայմ մուզ» (նոյնը՝ 130ա): 130բ՝ «Յանկ այսմաւորիս այբուբենից վասն դիրաւ գտանելոյ — Այն է ամենայն, որ ինչ է պատմական, / Լուս այս է, որ ինչ կենաց լուս... յասէ պատմական վերնոց»: 139բ՝ «Разговоръ куда укра, երեւեցան Աստուած մարմնով ի մէջ մարդկան ի սուրբ կուսէն, երեւեցան, լուս ծագեցան տէր եւ որքի ի սուրբ վասն մեզաց եւ էր վասն»: 140ա՝ «Մեղաւոր գիշերին այս է ժամին ի մեզ գաւիչ ամենակալ Աստուածածին ի մեզ, միածին Աստուած. ամէն»: Կազմաստառ Բ «ողորմութեամբ քով սաստակչիա Աստուած կորոյ գամնայն նեղիչս իմ, զի ես ծառայ քո եմ»: 30բ-1ա, 109բ, 129բ-30ա, 139բ-40ա, կազմաստառ Բ գանազան տառեր, բառեր, թուեր:

ՆԿԱՐԱԳՓՈՐՁ՝ 21բ, 22բ, 24բ-5ա, 57բ, 61բ, 84ա, 115ա, 127բ, 129բ-30բ՝ գանազան պատկերներ:


ԿՆՔԱԴՐՈՇԻՐ՝ 127բ՝ երկիցս (սեւ թանաքով ուրանկիւն)՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ՇԱՒԻՂ / ԳՐԻԳՈՐ / ՎԱՐԴԱՊԵՏ արաբաթուանշան ծածկագրութեամբ»:

ՆՇՈՒՄ՝ կազմաստառ Ա՝ «չ^ի^ 13, ժողովածու. աշխարհագրութիւն համառօտ, քարտզագիրք, քառածայլ, նոտրագիր, գրեալ ի թղթի, թիւն եւ գրիչ անյայտ, պարունակին ի սմա քարտզ, աղօթք, մեկնութիւնք սաստկեալք ի գանազան անձանց, մեկնութիւն Դանիէլի, գրիչ՝ Գրիգոր վարդապետ Զէյթունցի, ՌՃՀ. տե՛ս յիշատ., 2567, չ^ի^ 735, ՌՃՀ. — 1659, Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», պիտ. Ա՝ «2567», 1ա՝ «չ^ի^ 17, գրած է, Ղոյումչի Ծէօ»:


2568
ՀԱՒԱՔԱԾՈՅ

ժ. *209բ-10բ* Ի վերայ Իւղամայ – *[Բան]. Բանն Տեառն, որ եղեւ առ Երեմիայ մարգարէ... [ԽՒ. 34-39]: [Մեկնութիւն]. Եղամացիք ազգք են պարսկականք... գգևերութիւնն նոցա ի ժամանակի բառնալոյ թագաւորութեանն Քաղդեացւոց ասէ:*

ժա. *210բ-39ա* Ի վերայ Բարեիացւոց – *[Բան]. Բանն, զոր խաւսեցաւ Տէր... [Մ. 1-5]: [Մեկնութիւն]. Մարգարէանայ եւ ի վերայ Բաբելովնի... եւ Աւետարան նորա ողորմութիւն եւ արդարութիւն շնորհ աւազանին ի նմանէ:*

ժբ. *239ա-53բ* Սրբոյն Երեմիայ Ողբ – *Նման իմն առնէ մարգարէն այնոցիկ... զի ի չորից հողմոց արդարք ի կեանս ժողովին, եւ մեզաւորք՝ ի տանջանան յաւիտենից:*

ժգ. *253բ-5ա* Աղաւթք Երեմիայի մարգարէի յետ ողբալոյ զգետութիւնն Երուսաղէմի – *[Բան]. Յիշեա՛յ, Տէր, որ ինչ անցք անցին... [1-2]: [Մեկնութիւն]. Ի կարոտածի ողբոցս աղաւթէ... զի որպէս մերժեց[եր], ասէ, եւ բարկացար, նմանապէս գթա՛յ եւ գարձո՛յ: Կատարեցաւ Մարգարէութիւն Երեմիայ:*

Լուսանցներում երբեմն կան աղբիւրների յիշատակումներ, քոմն եւ յետագայ գրչութեամբ արբագրումներ, յաւելումներ: Մեկնութեան հատուածաբաժանման պատաճին այլ յատկանիշներ չկան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. *255ա (Խաւիթ գրչի)* Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտենաս յաւիտենից. ամէն: Եւ գոհութիւն, որ ետ մեզ յանկել գայս ձեռնարկութիւն, որ ի վեր իսկ էր, քան զկար մեր եւ յամաւթ արար զամե|255բ|նայն խափանիչս այսմ տոհի եւ գաւրացոյց զտկարութիւն իմ, եւ ծագեաց ի նսեմացեալ միտս զնշոյլս լուսոյ իւրոյ աննախանձն յամենայն ի պարգեւս իւր: Եւ զի սկիզբն արարաք այսմ իրողութեան ի Թուականիս Հայոց ՈԼԶ. (1187) եւ կատարեցաք գկնի միոյ ամի: Եւ զի թեպէտ յաւժարեցաք զտիրապետն առնուլ գմիտս եւ հակիրճ գնել բանիւ, այլ բազմապատիկ վրիպեցաք, զի յոյժ սխալ եւ անգոյ պատահեցաք աւրինակի, եւ բազում հնչեաց ի վերայ մեր փորձութիւնք ներքոյ եւ արտաքոյ, յորմէ յոգդողդեցաք մասաւք եւ տկարացաք ո՛չ միայն յ[ր]նորութիւն սրբոյն բանիցն Յովհաննու, այլ եւ յայնոսիկ, յոր գմտացեալն ի նմանէ համարձակեցաք լնուլ, զի բնաւիգն ոչ էր նորայն մեկնութիւն, վասն որոյ աղաչեմ զհարս եւ զեղբարս՝ թողութիւն առնել յանդգնութեան իմոյ եւ սիրով Հոգւոյն ուղղել զսխալանսն: Այլ եւ յայսմ ամի սակաւ (=սակա՞) մերոյս գործոյ առաւ քաղաքն սուրբ Երուսաղէմ ի Սալահադդինն կուչեցելոյ բռնաւորէ՝ յաղագս բազմանալոյ մեզաց քրիստոնէից, եւ զերի վարեցաւ նշանն սուրբ՝ հանդերձ թագաւորաւն եւ բազում գաւրաւք: Եւ թագաւորութիւնն Վրաց չփոթեալ կայր, զի Թամարն՝ դուստր Գեւորգեայ թագաւորի, եմոյղ գայլն առաջին |256ա| [որդի թա]գաւորին Ռիւզոց (= Ռուսաց) եւ եառ այլ այլ յԱլանաց թագաւորութենէն՝ ի մայրենի ընտանութենէ իւրմէ Սաւսլան անուն, որ եւ Դաւիթ ի թագաւորկն անուանեցաւ: Եւ եղեւ այս ի հայրապետութեանն տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի եւ յեպիսկոպոսութեան տեառն Բարսղի հռչակաւոր ուխտիս Հաղբատայ: Բայց գրեցաւ յանապատիս Գետկայ, ընդ հովանեաւ Սրբոյն Գողգոթայի եւ Լուսաւորչին Գրիգորի: Արդ, որք ընդաւրինակէք, անպարսաւ մտաւք յիշեսջիք զմեզ, աղաչեմ, ընդ նմին եւ զեղբարս, որ ընդ մեզ, եւ Տէր զձեզ յիշեսցէ: Եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Տե՛ս Յովս. յիշ-ք, էջ 521-2 (համարում է Դաւիթ գրիչը «կարծում եմ Քոթայրեցին»), նաեւ՝ Ե-ԺԲ. դպ. յիշ-ք, էջ 253:

256ա Այս յիշատակարանս Մխիթար վարդապետին է, Գոշին՝ յարմարողի գՄեկնութիւն սրբոյ կոսակիս, զոր եւ ես՝ սիրող եւ համակամ եւ յորգորիչ նորին Դաւիթ, յիմումս եդի աւրինակի վասն յաւերժութեան նորայն անուան յամենայն աւրինակս, որոյ ախորժելի երեւիլ գծել գաս: Հաւանութեամբ եւ սիրով ընկալալ եւ շնորհակալ եմ քումմ նազելի եւ երկիւղած պարկեշտութեան, ո՛վ պատուականդ ինձ եւ սիրող ճշմարտութեան, զի թէեւ սուղ տարացուցիր ի յարդարեալ, բաւական է իմաստնոյ յաճմունս բանից եւ յեղաշրջմանց ի նշանակս |256բ| խորհրդականս եւ զի անպարապ եղեալ իմոյս անձին ի ժամանել եւ դրոշմել գաս, այլ եւ այլ ոմն տխմարաց եառ գծել եւ ապաշաւ ունիմ, թեպէտ եւ ուղղեցի յետոյ: Արդ, որք ընդաւրինակէք, ընդ ախմարացն գիծս զգուշութեամբ հայեցարո՛ւք եւ ուղղեցէ՛ք զոր ինչ սխալ գտանի, եւ զիմդ աներկեւեան ընկալարո՛ւք եւ զմեզ եւս մասնաւորեցէ՛ք աղաւթից: Եւ արդ, իմումս գրութեան գայս տառ Բ-ժան ամ էր առաւնն Երուսաղէմի, որ եւ տակաւին եւս ի ձեռս է այլագեաց, ըստ յաճախութեան մեզաց մերոց եւ խէ. (47) է առ Ռ.ով (1198) թուականս Հայոց: Եւ զի թեպէտ նախանձու մեծաւ վասն սրբոյ քաղաքին ելին ի կողմանցն Իսաղացւոց թագաւորք եւ գաւրապլուխք արիականք ընդ Թիրակ եւ ընդ մէջ Անդղատական ովկիանոսի, եւ անցին կէսք ի կողմանս Ասիացւոց եւ Կիպրկացւոց, եւ այլք միջածովեայք ելին յԱղէքսանդր Եգիպ[տ]ոսի եւ ովմանք յԱհախայ ծովեզերեայ, սակայն զրաւ եղեալ ի կենաց թագաւորի նոցա ցիրեւցան եղեալ զաւրքն ամենայն ընդ կրու[նկ]ին դառնային, եւ կէսք աստին մնային՝ ամրացեալք ի քաղաքսն ծովեզերեայս, մինչեւ այլ զրասցէ բարձրեալն ի բարձանց եւ անդրէն դար/// (չշարունակուած):

Տե՛ս Յովս. յիշ-ք, էջ 523-4, նաեւ՝ Ե-ԺԲ. դպ. յիշ-ք, էջ 296: Յովս., էջ 524. «Գրիչը Դաւիթ Քոթայրեցին է... որ մասամբ ինքն արտագրել է, եւ մասամբ «այլոց ախմարաց» արտագրել տուել եւ ուղղել է Թոշ Մխիթարի Երեմիայի Մեկնութիւնը 1198 թուին»: Էջերի վերին մասերի խուճացած տառերը յետագայ գրչութեամբ նորոգուել են:

2. *36ա (Առաքեալ գրի) Ջատաւագեալ Առաքեալս յիշեա՛ ի Քրիստոս, ազաչեմ:*

Տե՛ս ե-ԺԲ. դդ. յիշ.-ք, էջ 296:

45բ ///աւրինակողին:

Երկտող յիշատակարան է խնամքով քերուած, կարդացում են միայն առանձին տառեր:

205ա Յիշեա՛յ զիս, Քրիստո՛ս, ի յարքայութեան քումմ:

230ա Քերուած յիշատակարան. կարդացում են միայն առանձին տառեր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. *1ա (կազմողի, Ժէ. դ., անարուեստ բոլորգիր) Ջաւտճա/// գԿարապետ սո/// զի տեսի զայս աստուա-ծա/// եւ սրբեալ Երեմ/// սեալ եւ անխո/// սիրութեան եւ մեղ/// խարհէ, եւ մեք կաս/// նէր մեզ ի Քրիստոսէ ա/// կասեալս [եր]բես անկեալ ազաչեմ/// նոջ պատուա-կան հա՛րք եւ եղբա՛րք իմ, խնդրել ի Քրիստոսէ Յողու-թիւն [մեղա]ց ինձ եւ իմոցն ամենայնի՛ հաւր իմոյ Յո-հաննիսի եւ մաւր՝ Եղիսաբեթիւ, եւ եղբարցն Յովանի-սի եւ Գրիգորի եւ զաւակաց նոցա. ամէն: Մանաւանդ ի ժամ սուրբ պատարագին եւ ազաւթից ձերոց եւ ամե-նայն գործոց բարեաց մասնաւորեցէ՛ք զմեզ եւ զառա-ջին աշխատողք սորա, տեսալք եւ ընթերցալք, վաւե-լողք եւ աւրինակողք բոլոր հաւատով եւ հայրական գթով խնդրելով մեղաց ներումն յԱստուծոյ: Քրիստոս Աստուած ողորմի ամենայն երախտաւորաց մեր[ոց]՝ հոգեւորաց եւ մարմնաւորաց, մանաւանդ Մկրտչին/// ր քումերն իմոյ Թարթիպաշային. ամէն: Այլ եւ զեզբայր մեր գԿարապետ պատեւական քահանայն եւ փիլիսոփան յիշեցէ՛ք ի Քրիստոս Աստուած, զի շնորհեսցէ նմայ գարքայութիւնն երկնից, եւ ծնաւղաց նորին. ամէն, որ աւգնական եղեւ ի գալմէ սորայ, այլ եւ նոցա, որ արարին զողորմութիւն ի ձեռս նորա. ամէն:*

Քրիստո՛ս, Որդի՛ Աստուծոյ, քո յաճաւոր եւ ի փա-ռաւորեալ գալստեանն ամենայն սրբոց բարեխաւսու-թեամբ եւ մարգարէին Երեմիայի, այլ եւ երկոտասան մարգարէիցն, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց, եւս առաւել վարպետ Վարդանիին, որ սակաւ ընչիւք նորո-գեաց, կազմեալ գայս գիրքս, եւ գերկոտասան մարգա-րէիցն, որք բարեխաւս լինին նմա վասն աշխատանաց նորին. ամէն, եղիցի, եղիցի: Այլ եւ ձեզ յիցի ողորմու-թիւն ի Քրիստոսէ աստի եւ ի հանդերձեալն՝ ընթերցո-ղացդ, վայելողացդ եւ լաւ պահողացդ, մանաւանդ գմեզ յիշողացդ առ Աստուած. ամէն: Աղաչեմ զձեզ, յետ ելանելոյ մեզ յանցաւորիս կենաց, առ ոմ եւ լիցի այս, մի՛ արգելուք ի խնդրողաց վասն ընթերցման: Նաեւ երախտաւոր ուս[անո]ղացն իմոյ՝ Մկրտիչ բաբունա-պետին եւ Գրիգորի քաջ քարտուղարին լիցի ողորմու-թիւն ի Քրիստոսէ. ամէն:

— 11ա (Ժէ. դ., անարուեստ բոլորգիր) ՁՄկրտիչ բաբունապետն յիշեցէ՛ք ի Քրիստոս, որ հանճարեղ եւ կողովամիտ բանիւ զգիրքս դաս ասաց եւ գտրգէ[մ]քս լուսաւոր[եաց]:*

** Այս Մկրտիչը նախորդ՝ կազմողի յիշատակարանի Մկրտիչն է:*

2. *27ա (Ժե. դ., անարուեստ բոլորգիր) Եւ զիս՝ գա-նարժան Յովաննէս վարդապետս, յիշեցէ՛ք ի Քրիստոս, որ մականուն Երզուրթենց կոչի, ի յերկրէն Ծատաճայ:*

3. *66ր (Ժե.-ԺՁ դդ., անարուեստ բոլորգիր) ՁԵրզու-րթենց Յովաննէս վարդապետն յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէ՛ք նմայ, եւ Աստուած ձեզ ողորմի. ամէն:*

4. *103ա (Ժե.-ԺՁ դդ., անարուեստ բոլորգիր) Յո-վաննէս վարդապետի մեղացն Աստուած մաքրումն տացէ:*

5. *146ա (Ժե.-ԺՁ դդ., անարուեստ բոլորգիր) Տէր Աստուած, ողորմութիւն եւ մեղաց Թողութիւն շնորհեալ Յովաննէս վարդապետին:*

ԿՆՔԱԳՐՈՒԹԻՒՆ՝ *Ձա. սեւով շրջանակ, մէջը թագա-պատկ գինանշան, եզրերին՝ "Печ. Ахалцыхской градской полиціи":*

ԳՐՉԱՔՈՐԴ՝ *1ա (շղագիր)՝ «Արարած ես Աստուծոյ յաւրինեալ/// փառաւոր ստեղծեր///», «աբգդեզարա», 1բ՝ «ծառին, արաց, զոր /// ես Յովաննէս/// չեալ գՏէր/// ի մեղաց», 10բ՝ «Այս այս այս ինչ ինձ էր զարմանալի ինձ չ լ ն անշահականչանց, զինչ կամիք զի ար, ալար չ, ա չչչչ», 37ա՝ «ն, բնակ», 65ա՝ «ժաղագաղ ես առ», 108բ՝ «թագ, զի դու հրչակ, թագաւոր յաւիտեան, Տէր իմ, ընդ էին Հաւր, զուգական զորր ասէ համայքնակ», 191ա՝ «մեկն»:*

ՆԿԱՐԱԳՈՐԴ՝ *60ա, 92ար՝ բուսական նախշ:*

ՆՇՈՒՄ՝ *կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «Գոշ Մխիթար վարդապետի Մեկնութիւն Երեմիայի մարգա-րէութեան», Աա՝ «Ձնէ.-1198, Մ[եսրոպ] եա[խկո-պո]ս», Հ[ին] 163/2606», Ձա՝ «Հ[ին] 166/35»:*

2607


ԺՈՂՈՎԱԾՈՅ

Ձեթ. – 1300


ԳՐԻՉ՝ Թուրս ffj. (Ձա-376բ, 395բ-405բ), Թումա (376բ-95բ): ՍՐԲԱԳՐՈՂ՝ Գեորգ վրդ., Կոստանդին ffj.: ՍՏԱՑՈՂ՝ Թուրս ffj. (գրիչը):

ԹԵՐԹ՝ 406. չգրուած 1բ, 2ա, 12բ: ՊԱԿԱՍ Ա-Լեx12 (Ա, Ե՝ 10, Բ՝ 14, ե, Ժե՝ 11, ԱՒ՝ 2): ՆԻՒԹ՝ թուղթ (թ. 11-12, 49, 178-80, 406՝ լուսագծերով, ԺՁ. դ., թ. 398, 405՝ մագաղաթ): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 25,5x18,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (Ձա-326բ՝ 20,5x15), միասիւն (327ա-405բ՝ 21x14,5): ԿԻՐ՝ բոլորգիր (նմոյշ՝ 88ա), նուագիր՝

11ա-2բ, 49աբ, 178ա-80բ (նմուշ՝ 49բ)։ ՏՈՂ՝ 31։ ԿԱՉՄ՝ դռոշմազարդ չագաճակագոյն կաշի, դռնակով և մէկ կապիչով, միջուկը տախտակ, ատառոտ դռոշմազարդ կոտ, դռնակիներ՝ կապոյտ կոտ լուսանցակողերը՝ կարմիր։




Նմուշ 49բ




Նմուշ 88ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ — Լուսագրագրի՝ վարդեակներ (109ա, 118բ, 139բ եւ այլուր)։ Գոյներ՝ կարմիր։

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ 1. Ա՝ սկզբում Հին Ճաշոց (վրացերէն. բվնդ՝ րատ Բեռնար Ուտիէի)։ ԺԱ. դ։ Ստացուած մի զոյգ թերթի յայնակի ճաստոմով եւ եզրաճաստոմով՝ բնագիրը վնասուած։ Մագաղաթ, 24×16,5, երկսիւն (24x16,5), նոսխաւոր՝ բոլորգիծ եվաթագիր (նմուշ՝ Ա3ա), տող՝ 18։ 2. Աւետարան րատ Յովհաննու, ե., 14-25։ Թ. դ.։ 1 (Բ. վշմ.)՝ ստացուած 1 թերթի լայնակի ճաստոմով, եզրաճաստոմած՝ բնագիրը վնասուած։ Մագաղաթ (24,5x17), երկսիւն (24x21,7), բոլորգիծ եվաթագիր (նմուշ՝ Բա), տող 11։ Կարգալ՝ Բա-Բբ. «Զնա Յիսուսի տանեաին»... Այլ փոխեացաւ ի մանուաճէ ի կեանս։ [Ամէն, ամէն ասեմ ձեզ]»։



Նմուշ Ա3ա



Նմուշ Բա

ՎԻՃԱԿ՝ բաւաբար։ Նախկինում եղել է խիստ հարկաւոր, նաեւ՝ աբար ԺԷ. դ. ճոռոգուել է բաւական կոպիտ ձեւով, եզրերը մաշուած լինելու պատճառով համարեա բոլոր թերթերը կարկատուել են, բոլի բաւակ մասեր են կարկատուել են, կարկատաններ են գրուած են (տե՛ս թ. 235-236), պակասող թերթերի փոխարէն տեղացուել են ճոռոր, վերակազմել պրակներ, այդ պատճառով ոռոշ թերթեր պակասում են կամ ընկել են, նաեւ՝ եռեւառաջ են (տե՛ս մասնաւորապէս 244ա-305ա եւ 357ա-76բ թերթերի բնագրեր եւ ձկատակարած յետագայի բաժինը)։ Կազմ մաշուած, վնասուած, 3 գոմե ու 2 կապիչ ընկած, Ա. փեղկին գամեր անգին, դռնակը կծկուած, վերին եզրը պատռուած, պատառիկ-պահպանակներ խուճացած, կծկուած, կեղտոտուած, լուսանցակողեր գունաթափ, թ. 3, 6-7, 48-50, 184-5՝ ճմռիկ մասամբ պոկուած, թ. 215՝ վնասուած, թ. 3-48՝ կաւերը թուլացած, ձեռագիրը խամաւութիւն տեսած, ճիւիներն մօտ կեղտոտուած, թերթերին աղտոտուածութեան զանազան ճեռներ։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *3ա-156ա* [Մեկնութիւն ժամանակագրութեան, արարեալ երանելոյն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի, եւ կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի]

1. *3աբ* [Յառաջաբանութիւն] — *Զչափ անձին ուսուցանեն մեզ աստուածային պատուիրանք... որով փառաւորի անկարաւոն փառաց աստուածային։*

2. *3բ-4ա* Յովհաննու Իմաստասիրի [Օձնեցւոյ] Յաղագս գիշերային ժամուց — *Ազգաբարութիւն ժամահարին... ի մէջ գիշերին կենդանացաք կենարարին մերոյ յարութեամբն։*

3. *4աբ* Յառաջաբանութիւն պատմութեանց, թէ որպէս կարգեալ է աղաւթից մեռոց հայցք, Սահեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի — *Յաստուածային ժամանեալ խառաղութեան խորհուրդ... եւ ոչ որպէս ի գրախտին սակաւուրեայք։*

Երկրորդ եւ երրորդ միաւորները չկան տպագրի մէջ՝ Մեկնութիւն ժամակարգութեան, արարեալ երանելոյն Խոսրովու Անձեւացւոյ եպիսկոպոսի, կ. Պոլիս, Օրթագիւղ, տպ. «Երից որդւոց Ղազոսի Արտպան Ապուխեցւոյ», 1840. (է., 252, 1 չհ. էջ)։

4. *4բ-5բ* Բացայայտութիւն կարգաց եկեղեցւոյ, հառոգութեանց եւ աղաւթից ըստ իւրաքանչիւր ժամուց, երանելոյն տեառն Խոսրովայ Անձեւացեաց եպիսկոպոսի — *Ընդ Աստուծոյ եւ վասն Աստուծոյ խաւսելով... փառք ընդ Հաւր եւ ընդ Սուրբ Հոգւոյն, այժմ եւ յանսպառ յաւիտեանս, եւ յաւիտեանս յաւիտենին. ամէն։*

5. *5բ-9բ* Քառոց հսկման — *Զարթուցեալքս ամենեքեան ի հանգստենէ քնոյս... ըստ երրորդութեանն, որում փառք յաւիտեանս. ամէն։*

ա. *9բ-47ա* [Աղաւթք գիշերապաշտամանց] — *Զքէն գոհանամք, Տէր Աստուած մեր... գնոյն գնեն աւարտ, որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ [եւ յաւիտեանս. ամէն]։*

Տե՛ս տպ. էջ 7-63։ 10բ ստ. լս., ԺԸ. դ.ի ձեռքով «Ի. թուղթ տեղս է պակաս»։

բ. *47ա-50ա* Աղաւթք — *[Բան]. Գոհանամք զքէն... [Լուծմունք]. Ամենայն ուրեք մեզ գոհութեան պէտք են... եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս. ամէն։*

48բ ստ. լս.՝ «Մէկ թուղթ տեղս պակաս է»։ Վերջին երկու տողը կայ նաեւ 49բ էջում, որը լրացուած թերթ է։

Տպագրի հաճեմատ այստեղ այլ բնագիր է՝

գ. *50ա-91բ* Մովսէսի Քերթողահաւր Յերգս երից մանկանցն — *Երեք մանկունքն աւրինակ էին մարգկային բնութեանս... Զի երկնից արքայութեանն արժանի լիցուք՝ փառաւորելով գՀայր եւ գՈրդի եւ գՀոգին Սուրբ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն։*

60ա վերին լս., Ի. դ. շղագրով «Պակաս է մի թերթ», 64բ ստ. լս., գրած-ջնջած՝ «Մէկ թուղթ տեղս պակաս»։

դ. *91բ-6բ* Բ. Տեառն Յովհաննու Հայոց կաթողիկոսի՝ եթէ գինի խորհուրդ ունի արեւագային աղաւթին — *Այս աղաւթքս զմիւսանգամ գայուստն Քրիստոսի նշանակէ... ընդ որում Հաւր եւ Սուրբ Հոգւոյն վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ [եւ յաւիտեանս]. ամէն։*

ե. *96բ-102բ* Գ. Տեառն Յովհաննու Հայոց կաթողիկոսի եւ Իմաստասիրի Վասն Երեռդ ժամու աղաւթիցն — *Իսկ տունջեանն որոշեալ սահմանք ժամու աղաւթիցն... եւ առաքինի վարուց փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՀոգիդ Սուրբ, այժմ եւ միշտ [եւ յաւիտեանս. ամէն]:*

զ. *102բ-9ա* Գ. Տեառն Յովհաննու Հայոց կաթողիկոսի Վասն Ջ. ժամու աղաւթ — *Իսկ վեցերորդ ժամու կարգեալ աղաւթքն յայտնի է... բարեացն արժանի լիցուք հասանել՝ փառաւորելով զՀայրն երկնաւոր եւ զՈրդին միածին եւ զՀոգին ճշմարիտ, այժմ եւ միշտ:*

է. *109ա-18բ* Ե. Տեառն Յովհաննու Հայոց կաթողիկոսի Վասն Թ. ժամու աղաւթիցն — *Իսկ իններորդ ժամուն կարգեալ գաղաւթն... եւ ընդ նոսին գոհանալով փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն]:*

ը. *118բ-39բ* Ջ. Երանելոյն Խոսրովու Վասն երեկոյին ժամու — *Նախքան զերեկոյին պաշտամանն... ընդ որում Հաւր, միանգամայն եւ Հոգւոյն Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ [եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն]:*

թ. *139բ-56ա* Է. Յաղագս խաղաղականին աղաւթից — *Իսկ հանգստեան ժամու աղաւթքն... արժանի լիցուք փառաւորելով զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ եւ մ[իշտ եւ յաւիտեանս. ամէն]:*

> *Դ-Թ. միաւորները տե՛ս Մեկնութիւն ժանգարգութեան, էջ 146-252:*

156ա Ես՝ Մովսէս, *մեղաւոր մեռեալս, ոդի ծնունդ վերջին ժամանակի եւ սպասաւոր պիտակ բանի, կամեցայ հաւաքումն առնել սրբոցն բանից, որ վասն աղաւթից եւ ժամակարգութեան արարեալ էին յառաջագոյն, եւ գիւրաքանչիւր առանձնակի որոշեալսն յանցնիւր տեղւոջ կարգել, այլ եւ բոնադատեալ եղէ ի սիրելի եղբարէ ումեմն Թէոդորայ՝ զթողեալսն ի մեծէն Խոսրովու զբանս աղաւթից յանցնիւր տեղւոջ վերլուծութեամբ դնել: Ո՛վ եղբայր, երբ զմեկնիչն գրես, գու զադաւթիցն այլ գրէ, որ տեսնուն, մէկ ի մէկու աւգտին: Եւ իմ թէպէտ եւ հայեցեալ տեսանէի յոյժ անարժան գիս այսպիսի գործառնութեան եւ լրբութիւն մեծ գայսպիսի իրողութեանց բուռն հարկանել, որ ի վեր է քան զկար եւ զարժան իմ, սակայն զմտաւ ածի, թէ եւ ձագ ագռաւոյ թէ ընդ արծուոյ եւ ընդ բազէի աւազարիկ լինիցի, ոչ ինչ շփոթումն եղիցի, զի ամենեցունց յայտնի երեւի, թէ ագռաւն ագռաւ է, սեւաթոր մի զագրալի կենդանի եւ ամենեցունց ատելի, եւ նոյնպէս ագռաւ մնացէ եւ ծանիցի, եւ քան հեղգութեամբ ի հանգիստ յաւժարել աշխատութիւնն յաւէտ է բարի, եւ իւրաքանչիւր ոք զիւր վարձ առցէ: Եւ թէպէտ եւ կամեցայ հաւաքաղ լինել ի հունձս սրբոցն, սակայն փախեա յաշխատութենէ ամենայնսն ոչ կարացեալ քննել, այլ եւ խնայելով ի լսելիս ունկնդրաց եւ զի մնացեալքն գնոյն գաւրութիւն ունին, եւ իմ չմեղադրութիւն պահանջելով յամենեցունց ներումն խնդրեմ, եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւ[իտեանս. ամէն]:*

Բ. *156ա-76բ* Քառով գիշերային ժամուն պաշտաման, զկնի՝ Տէր, եթէ շրթանցն, [Խոսրովու Անձնեացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն աղաւթից, հատոր գից]— *Յարթուցեալքս ամենեքեան ի հանգստանէ քնոյս... Երկրպագէ երիցս եւ երթայ խաղաղութեամբ:*

> *176բ տե. յս. յետագայի ձեռքով գրուած՝ «Մէկ թուղթ տեղս պակաս էս:*
>
> *Այս միաւորը կամ նախորդի շարունակութիւնն է, կամ Խոսրովի քուն Մեկնութիւնն է (տե՛ս Ֆբ՝ սկզբնաւորը):*

Գ. *176բ-91բ* Հաւատոյն հանդատաւս մեկնութեան արդյ պատարագին, զոր յառաջագոյն արարեալ է արդյ լուսաւոր հարց — *Աստուած, որ մեծն է ողորմութեամբ, անսկիզբնն եւ անվախճանն... երկիր պատանելով ամենասուրբ երրորդութեանն եւ միասնական աստուածութեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ. ամէն:*

> *177ա տե. յս. յետագայի ձեռքով գրուած՝ «Դ. թուղթ տեղս է պակաս»:*

Դ. *191բ-243ա* Մեծին Խոսրովու Մեկնութիւն, զոր արարել է Բարոգին, որ յետ Աւետարանին եւ զՀաւատամքն ասելոյ — *[Բան]. Եւ եւս հաւատով աղաչեցուք... [Մեկնութիւն]. Զի հաւատք առնէ լսելի... Որ յամենայնի եւ յամենեցունց վասն ամենայնի եւս գոհանալ, այժմ եւ միշտ եւ յաւ[իտեանս. ամէն]:*

— *242բ-3ա Գոհասցուք եւ մեք գմարդասիրէն Աստուծոյ... Հեղինակի վերջաբան-յիշատակարան, որ վերաբերում է առաւելապէս Ս. Երրորդութեանն ու Յիսուսի կեանքին:*

ե. *244ա-303ա* [Յաղագս միաբանութեան հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ]

> *Տե՛ս նեւ. 500, 66բ-191բ: ա/244ա-5բ: բ/245բ-55բ: գ/255բ-6բ: դ/256բ: 62ա: ե/262ա-7բ: զ/267բ-74բ: է/274բ-5բ: ը/275բ-80բ: թ/280բ-1ա: ժ/281ար: ժա/281բ-2բ: ժբ/282բ-3բ: ժգ/283բ-5բ: ժդ/285բ-7ա: ժե/287ար, 297ար, 290ար, 295ա: ժզ/295ար, 291ա-3ա: ժէ/293ա-4բ, 289ար, 296ար, 298ար: ժը/295բ-303ա:*
>
> *Ման. յս.-ներում ունի միաւորների խորագրերը: Յուցումներ բովանդակութեան վերաբերեալ՝ 257բ «Թ.», 258բ «Ժ.», 299բ՝ «Ջ. թուղթ յառաջ գնա՛յ եւ գտնես»: 290բ Դ. թուղթ շրջէ՛, որպէս նշանն ցուցանէ: 294բ Զ. թուղթ յետ շրջէ՛ եւ գտանես: 295բ Ե. թուղթ յետ շրջէ՛ եւ գտանես, որպէս եւ նշանադրեցեալ է: 296բ Թ. թուղթ յետ շրջէ՛ եւ գտանես: 297բ Ը. թուղթ յետ շրջէ՛ եւ գտանես:*

Ջ. *303ա-32բ* Թուղթ զանազանի՛

ա. *303ա-27բ* Թուղթ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց, զրեալ եղբաւր նորին Նէրսիսի եպիսկոպոսի, հրամանաւ նորին, ի Միջագետս Աստոց կոչեցեալ նահանգին... ի խնդրոյ ուրումն աստուածասիրի Առեւծ անուն իշխանի Թկուրացն ասացի — *Որ*

քէպէտ եւ տէրունական հրամանն յորդորէ... ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք եւ զաւրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Տե՛ս Ընդհանրական թուղթք Ս. Ներսիսի Շնորհալւոյ, յերուսաղէմ, 1871, էջ 240-289:

բ. *327բ-32ա* ժէ. Նէրսեսի կաթողիկոսի հայոց Պատասխանի թղթոյն Յակոբայ վարդապետի Ասորւոյ՝ ի մայրաքաղաքէն Մեղեհինոյ Հայոց – *Ի գթալի դիտաւորութեան գրաւորական քոմ նամակի... ապրել ի դրժանաց, յորոց նեղիմք ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ամէն:*

Տե՛ս Ընդհանրական թուղթք, էջ 230-240:

գ. *332ա-3ա* ժԸ. Թուղթ մխիթարական տեառն Նէրսիսի կաթողիկոսի՝ առ ոմն իշխան առեւելեան, վասն որոյ իւրոյ տարաժամ վախճանելոյ – *Անտես է յոյս աստուածային... աւրհնէ՛ք նովաւ զՏէրն անդադար:*

դ. *333աբ* Նորին տեառն Նէրսիսի գրեալ առ եղբարսդին իւր Ապիւռատն ի Կոստանդինուպոլիս – *Ախբեդական լուսոյ ծագման... Որպէս լինիս տեղեակ կրից ի չեկելոցըդ բնաւից:*

է. *303ա-54բ* [Թուղթ տեառն Նէրսիսի կաթողիկոսի Հայոց՝ գրեալ ի զանազան ժամանակս առ այլեւայլ անձինս]

Տե՛ս նեւ. 500, 52ա-66ա: ա/*341ա-4բ*: բ/*333բ-4բ*: գ/*334բ-5բ*: դ/*335բ-6ա*: ե/*336ա-7ա*: զ/*337ա-8ա*: է/*338աբ*: ը/*338բ-9ա*: թ/*339ա*: ժ/*339ա*: ժա/*339բ-41ա*:

Տե՛ս Ընդհանրական թուղթք. նիւթերը մասամբ խառն՝ ա. միատոր թուղթը գրուած է վերջում: Ունի նաեւ՝

ժբ. *344բ-5ա* Նորին տեառն Նէրսիսի կաթողիկոսի գրեալ բան մխիթարութեան առ վտանգեալսն մարմնով, որ յանբարեաց ոմանց նախատեալ եղեն, զոր ծանուցին նմա գրով – *Ընկալայ գիր թախծանաց զախտացելոցդ մարմնով... առ նովաւ գնեն գարգալութիւնն երկնից ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք եւ զաւրութիւն յաւիտեանս. ամէն:*

Տպ. Ընդհանրական թուղթք, էջ 289-96:

ժգ. *348ա-54բ* ԺԹ. Թուղթ ի Նէրսիսէ արեւպիսկոպոսէ Կիլիկեցւոց Տարսոնի՝ պատասխանի Յոսկանոն արգելական եգիաւորի... ի վերայ ֆահանայական կարգի եւ ժողովրդականաց ոդեղ հաւատովն, որ ի Քրիստոս – *Գիր քո պատուականութեանդ, երանելի ա՛յրդ Աստուծոյ... զի փառաւորեսցի ի քեզ Հայրն երկնաւոր միածին Որդւովն եւ ամենասուրբ Հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Ը. *354բ-9ք* Ի. [Բնագիրէ զանազանմամբ]

ա. *354բ-5ա* Տեառն Եփրեմի Խորին Ասորւոյ ասացեալ – *Տանք տարեկանք, զոր կատարեն ըստ մովսէսական աւրինացն...*

բ. *355աբ* Ի Մնացորդաց յաղագս Սաղովմոնի – *Վասն զի գրեաց Մովսէս...*

գ. *355բ-6ա* Ի Մնացորդաց մնացորդն, զոր բազմաչաւն յուզմամբ ոագիւ կարացի գտանել – *Յոյժ յարդյց...*

դ. *356ա-7ա* Կարգաւորութիւն աւրհնութիւնաբեր ցուցակի, որ ունի յիսնեան զժամանակի իւրամանչիւր կարգեալ կանոնացդ զոեղիսն, թէ ո՛վ ոք կամ յորմէ՛ գաւառէ հայրապետաց ժամանակն ճշմարկեցից, թէ ով երեր ի Հայոց աշխարհս եւ որոց հրաւմանաւ կարգեալ ճառեցին – *Յետ ՃԺԱ. (111) ամի սրբոյն Գրիգորի եղեւ թարգմանութիւն հայերէն լեզուիս...*

ե. *357ա-9բ* Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի Բան հաւատոյ եւ նոոին նմանեացն – *Սուրբ հաւատ ճշմարիտ... Այլ հասարակ բնութեանն հասարակութիւն յանձնաւորութեանն երեւի որոշեալ///:*

Բաժանուած է Ա-ի հաւատածներին, վերջից թերի՝ թերթեր ընկած լինելու պատճառով:

Թ. *360ա-76բ* [Ոն. Սրբոց վարդապետաց Հայոց Մովսիսի եւ Դաւթի Հաւցմամբ ընդ երկաբնակ շարադասան] – *///աղաւէ տարրերէ ապականութիւն... աւրհնութիւն եւ գովութիւն եւ փառք եւ պատիւ Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն]:*

363բ ստ. լա՝ «Ով եղ[բ]այր, լերբ յայս տեղս հասնիս, ի կազմ տղայ է, Ջ. տետր ու կէս գնա՛, գոնուս նշանաւոս: 369բ ստ. լա՝ «Է. տետր յառաջ համարէ՛, գոնուս: Կազմս տղայ է, այսու նշանաւոս: ԺԲ գ. գրչութեամբ վերջին երկու լիշատակութիւնների վերջում գրուած է. «Ծանօթ. Վերջին կազմողն ուղղել է: Շարունակութիւն են կազմում: 376բ էջում կայ Գուրգէն քարտուղարի լիշատակարանը. տե՛ս նեւ. 270, 279բ:

Ժ. *376բ-91ա* [Ճառ Յովհաննու Օձնեցւոյ]

ա. *376բ-7ա* Ջհետ այլ ճառերոյ ասացեալ եւ զայս Յոճան Աւձոյին – *Մրդ, գնել յառաջ կոչէ առ ինքն... անհասանելի մարդեղութեան Բանին հասանել: Եւ այս մինչեւ ցայս վայր եղիցի:*

բ. *377ա-91ա* Նորին ընդդէմ երեւութակամաց – *Յոյժ տենչալի էր ինձ եւ փափագելի... զորս ճառ խաչին քո ժողովեսցէ՛ լինել ժառանգս արքայութեան քոմ:*

ԺԱ. *391ա-7բ* [Տեսիլ]

ա. *391ա-5բ* Տեսիլ սուրբ վարդապետին Յոհաննէսի, որ մականուն Կոզեոն կոչի – *Ի ժամանակին, յորում էր թուականն հայոց ՆՀ. (1021)... եւ խաղաղութեամբ գնացին յաշխարհն իւրեանց. եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս:*

բ. *395բ-7բ* Տեսիլ սրբոյն Նէրսիսի Հայոց հայրապետին, որ է թոոն Գրիգորի սուրբ Լուսաւորչին Հայոց – *Պապ ինչպարն յորժամ արքայն գբաժակն մահու... եղեւ երկիր վասն մեղաց փշաբեր, նոյնպէս եւ վասն մեղաց///:*

ԺԲ. *398ա-402ա* [Խոստովանութիւնք]

ա. *398ա-401ա* Խոստովանութիւն մեղաց եւ խոյտառակութիւն անձին իմ[նայ]ւոժար կամաւ եղկե-

լոյս Վարդանայ Առեւելացոյ... — *Ով դուք, ընտրեա՛լք եւ պիտանիք հա՛յք... որք գաստուածաքանս միշտ աւրինեմք, զքեզ ընդ նմին փառաւորեմք:*

բ. *401ա-2ա* Բանի խոստովանութեան յանցանաց, ասացեալ սուրբ վարդապետին Մեղրկա — *Քրիստո՛ս, Որդի՛ Աստուծոյ, արարի՛չ եւ Տէ՛ր... դի եւ ես արժանի եղէց փառաւորել զամենասուրբ վերրոդութիւնդ՝ զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:*

ժԳ. *402ա-5ա* [Նկոսիսի Շնորհալւոյ Բանի տաղաչափականի]

ա. *402ա-4բ* Տեառն Ներսէսի սրբոյ տիեզերական վարդապետի եւ կաթողիկոսի Հայոց ասացեալ Ցաղագս երկնի եւ զաւդոյց ծորա, ի դիմաց ծորին բառաոնեաբար, ի չափ երկոտասանիցն պարզեալ ոտից, ի խնդրոյ առն բժշկապետի եւ աստղագիտի Մխիթարայ — *Իմ եղեալ գոլով բնութիւն եւ սկզբնական / ի յանեղէն ձգեալ կամար անգուգական... եւ փառս տամ անեղ բնութեանս արարչական:*

բ. *404բ-5ա* Նորին ի խնդրոյ ամուսն նախագիծ [տաղից տացց յորդորակ. «Մխի[թար»] — *Միշտ էիդ անեղ բնութիւն բնաւորեցան, / Անեղիդ [անմահութիւնն ճ]ետեւեցան... որ կայացաւ:*

գ. *405աբ* Այդոյմ բան մաղթանաց ձայնիւ աղերսանաց ճոգոց առ Աստուած — *Աստուած անեղ անհասական, / Հայր գթութեան. ինձ ողորմեա՛... Հայր եւ Սուրբ Հոգւոյդ, միշտ եւ յաւիտեանս. ամէն:*

դ. *405բ* Նորին Տաղ ոգեշաւիղ ըստ նմոյն/// չափաբերեալ տանց (Ա-Ք) — *Աստուածային բանից լսե՛լի.../// (Թափուած):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. *27ա (Թորոս գրչի)* Զհաւքն իմ, որ գնիւթս պատրաստեցին, եւ զողորմելի գերիս ծնաւոք մերովք եւ զարմիւք յիշեցէ՛ք, եւ Աստուած զձեզ յիշէ:

50ա Զհաւքն իմ եւ զմարքն եւ զողորմելի գերիս եւ զծնողսն եւ զեղբարսն եւ զքեռ եւ զարմն յիշեցէ՛ք ի բարին Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ (նման՝ 17բ, 35բ, 109ա, 118բ, 191բ, 262ա, 293ա):

78ա Զանուիչն իմ զՀատաւտի եւ զերկու Վասիլ եւ զողորմելի գերիս ծնողաւք մերովք եւ զարմիւք յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ (նման՝ 127բ, 344բ):

91բ Զուսուցիչքն իմ գԲարսեղ եւ գՈրոս եւ զողորմելի գերիս ծնողաւք մերովք եւ զարմիւք յիշեցէ՛ք ի բարին Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ. եւ նմա փառք յաւ[իտեանս]:

139բ Զեղբայրն իմ զՆերսէս քահանայ, որ այժմ վախճանեցաւ, եւ զողորմելի գերիս ծնողաւք մերովք եւ եղբարքք եւ քեռ յիշեցէ՛ք ի բարին Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ, եւ նմա փառք:

156ա Ով եղբայր, երբ գմեզնիչն գրես, դու գաղաւթիս այլ գրէ՛, որ տեսնուն մէկ ի մէկու աւգտին:

168բ Որք յընթեռնուլն զսա այլափոխաբանիցն պատահեսցէ, մի՛ տգիտութեան վարկիցի կամ անձնահաճութեան եւ մի՛ համարձակեսցի յեղաշրջել բան ինչ, զի յաւրինակէ Մեզնութեանն տեառն Խորովու ուղղեցաք, որչափ գտաք, գո՛ի նմանէ քննեալն:

176բ Տէ՛ր Յիսուս Քրիստոս Աստուած, գթա՛յ եւ ողորմութիւն շնորհեա՛ Գէորգեա վարդապետի, որ գքարողնիս եւ զաղաւթիս զորդել է ի Մեզնիչն մեծին Խորովու եւ ողոր[մեա՛յ] գերոյս Թորոսի եւ ծնողաց մերոց եւ եղբարց եւ զարմից, եւ այնոցիկ, որ յիշէն զմեզ:

196ա Արդ, բա՛յց զանկնդգ մտաց եւ լո՛ւր գահապին սպառնալիսն Աստուծոյ վասն ոչ երկիդիս/// պատգամս Աստուծոյ կենդանոյ:

243ա Յիշատակարան. Շնորհաւք եւ առաւտ գթութեամբ մարդասիրին Աստուծոյ, Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այն որ վասն կամելոյ զկենանս ամենեցուն ընդարձակեալ աճեցոյց գաւրինակս եւ զճանապարհս փրկութեան, ըստ այլեւայլ բարոյից հասակաց եւ արուեստից մարդկան, այլեւայլ ձեւս |243բ| եւ արուեստս փրկականս, բարեպաշտոյնս եւ խոնարհագոյնս, նրբաշաւիղս եւ անդորրընթացս, յոլովաջանս եւ թեթեւախոնջս, նախապատիս եւ երկրորդականս, զի ըստ կարի կամ յաւժարութեան այսմ կամ այլում հետեւելով ոք մի՛ յուսահատ եղեալ ի գժուարութենէն, վերջոտնեալ անհաղորդ մնասցէ փրկական ճանապարհի իմիք, այլ ըստ չափոյ գաւրութեան կամ յաւժարութեան կամ ընդ մի կամ ընդ յոլովս ի ճանապարհաց հետեւեալ՝ ժամանեսցէ փրկութեան: Յայս ամենառատ գթութիւնս Աստուծոյ հայեցեալ ես՝ մեղուցեալ ծառայս Աստուծոյ Թորոս սոսկ անուամբ քահանայ ի կրաւնաւորական ձեւի, քանզի տեսեալ զիս ի բարձրագոյն առաքինութեանցն շատագ կասեցեալ զարատուրի գնացիւք, մանաւանդ յաղթեալ ի ծանրութենէ հոգեղէն յարկիս եւ ոչ ունելով այլ ինչ տեսակ բարեաց, գմտաս ածի, զի գոնէ այնու աւրինակաւ շահեցայց գոյգն ինչ մասն փրկական գտխմարութեան եւ գտկարութեան, վհատութիւնս ի բաց եդեալ, ձեռնամուխ եղէ ի գրութիւն Մեզնութեան աղաւթնոյս եւ պատարագիկ, զոր մեզնեալ էին սուրբ հարքն մեր՝ մեծն Խորով եւ տէր Ներսէս եւ այլ սուրբ հարքն, մեծաս աշխատութեամբ գլխաւորեալ յանկ հանի շնորհաւքն Աստուծոյ, ի յիշատակ բարոյ ինձ եւ իմոց ծնողացն՝ ի Քրիստոս գնացելոց, եւ եղբարց իմոց, եւ քեռ եւ զարմից, որոց կենդանեացս եւ ննջեցելոցն մերոց աղաւթիւք վայելողացդ յիցի ի շնորհացն Աստուծոյ գրել ի կենացն Աստուծոյ մատեանսն: Եւ զայս մեծաս թախանձանաւք խնդրեմ ի վայելողացդ՝ ի սոյն գմեզ բարոյ յիշման արժանի արասցէ, զի եւ ինքն յիշեսցի յողորմածէն Աստուծոյ. ամէն:

Կատարեցաւ գիրս ի մեծ թուիս ՉԽԹ. (1300), ի բազմաթշուառ ժամանակի, ի հալրապետութեան տեառն Գրիգորի եւ ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ: Աղաչեմ գամենեսեան, յիշեցէ՛ք գվերոյգրեալքս եւ գամենայն հաւատացեալս ի Քրիստոս, եւ որք յիշէք, յիշեալ լիցի ի Քրիստոսէ: Յիշեցէ՛ք եւ գԿոստանդին քահանայ, որ յղորդեցն ածեցեց ինձ:

267բ Ով սուրբ հարք եւ հոգւով իմով հարազատք, յիշեցէ՛ք գտաւտիպ սակաւ գրիս ի մաքրափայլ յաղաւթս ձեր:

301բ Դեղ, որ զգրոցն եղերքն պընդէ: Ջրդեղ անցո՛ յ ի վերայ ու յարեւն դի՛ր, որ/// որնայ, եւ զողորմելիս յիշէ, եւ Աստուած զքեզ յիշէ:

303ա Ջողորմելի գերիս եւ ծնողսն իմ եւ զամենայն զարմն յիշեցէ՛ք ի բարին Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ (նման՝ 42ա, 57բ, 96բ, 327բ, 332ա, 334բ, 339ա, 376բ, 402ա):

354բ Ջողորմելի գերիս Թորոս եւ զԹուման եւ զԿոստաւնիկ ծնողաւք եւ եղբարբք եւ քեռք եւ ամենայն զարմիւք յիշեցէ՛ք ի Տէր, եւ Աստուած զձեզ յիշէ:

2. *395բ (Թուման գրչի) Ջսրբասէր քահանայն գԹորոս՝ ստացաւղ սուրբ տաոիս եւ զզծնատւսն իւր, հանդերձ եղբարբն եւ քերբ յիշեցէ՛ք ի բարին Քրիստոս, ընդ նոսին եւ զանխմաստ գրողս գԹուման եւ զծնատւսն իմ աղաչեմ յիշել ի Տէր, եւ Աստուած զզձեզ յիշէ, եւ նմա փառք յաւիտեանս:*

Հայի 168բ, 196ա, 267բ, 303ա էչերի միաւորներից, մնացեալը տե՛ս ԺԳ. դ. յիշ-ք, էչ 871-ՅԻ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՁԵՌԱԳԱՅԻ

1. *120ա (ԺԸ. դ., անարուեստ բոլորգիր) Գիրքս Վաւագայ է: Ձեզ վարձք է, տո՛ւք գիս ի քաղաքն ու ի գեղանն, որ կարդան: Մի՛ արգիլէք (նման՝ 72ա, 96ա, 120ա, 144ա, 168ա, 215ա, 239ա):*

Տե՛ս ԺԳ. դ. յիշ-ք, էչ 873:

2. *73բ (ԺԶ. դ., անարուեստ բոլորգիր) Ոչ գիտեմ, թէ ո՞վ կոյր մոաւք գայս չորս տեղս գուղիղն քերել է, որ յետոյ յուղղափառաց եդաւ, եւ գրել է, թէ Եփեսոսի ժողովոյն է, զի Եփեսոսին այն է, որ մինչ ի յայս տեղս էր, եւ այս այլ սրբոց: Եւ դու գուղիղին ասա՛, որ չմոլորիս:*

3. *391բ (բոլորգիր, ԺԶ. դ.) Վերջին ստացող/// ար Աստուած ողորմի իւր ծնողացն, իւր կողակցին եւ Ք. որդուն՝ Յակոբիւն եւ Մարտիրոսին եւ Ք. դստեր/// կին եւ Թոխատին, Աստուած գնոսա/// աւրհնէ իւր հալա/// եւ էառ գաղաւթի գմեկնութիւն տէր Աստուած///:*

Պոտկ-պհնակ Բք (1701 թ., անարուեստ նոտրգիր) ես՝ Գրիգորըս կարդացի թվին ՌՃՕ. (1701), մարտի Ա. օր:

4. *295բ (ԺԷ դ., անարուեստ նոտրգիր) Աստուած ողորմի Գիւթիին հոգոյն, իւր կնոջն Հեղիսին, Ջանիւպկին, Տուտուխին, Թորոսի, Սարգսին:*

ԿՆՔԱԳՐՈՒՇՔ՝ *21ա. սեւով շրջանակ, մէջը թագապատակ գինամշան, եզրերին՝ "Печ. Ахалцыхской градской полиции":*

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *2բ՝ «ՊՄվ, ՁՁԱԻ», «Էէր Աստուած, թո՛ղ դոցա, զի ոչ գիտեն գինչ գործեն», 166ա՝ «աբբսրբզնճ»:*

ՆՇՈՒՄ՝ *Մէջքին փակցուած թերթիկին՝ «Մովսէս վարդապետի/// Մեկնութիւն ժամագրոց»: 1ա (ԺԹ. դ., շղագիր) «Պակասորդ»: Պակաս է մի թերթ»: «Փառք ի բարձունիցդ» տե՛ս 58ա երես: «Մեծացուցէն» ասելով մինչեւ «եւ զաւրք բարձանց, որ գիտակք էին»: «Եւ յամենայն ժամ»ի մի մասը, որ վերջանում է 73բ երեսի վերայ «յիշատակաւ նախնեացն գութ ածէին չաստուած» տե՛ս սորա շարունակութիւնը 76ա երեսի վերայ, բաց թողնելով երկու թերթ. «Աւրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց»: «Մուրք Աստուածի մասին ունի այս խրատը. «Եւ երեք սրբասացութեամբ», վերջ. «մինչ հասանեն շնորհաւքն Աստուծոյ մերոյ» եւ այլն, որը 1840 թուի Օրթագիւղում տպուած ժամասացութեան մէջ չկայ: Տե՛ս թղ. 83ա-84ա»: «Հմր 172/2607, ՉԽԹ.-1300, Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»: 2ա՝ «Հմր 148/20»: 4ա (ԺԲ. դ., շղագիր) «Այս Ծննեցումն է: Տե՛ս Սիւնեցուցը Հմր 1454, Մեկն. ժամ., Թղ. 3ա»:

2608


ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՇԻՆԱՀԱՅՐ գիպ [ՈՐՈՏՆ] ՌՁԳ. — 1635

ԳՐԻՉ. ՍՏԱՁՈՂ Յովհաննէս: ՍՏԱՁՈՂ Ահիստակէս վրդ.:

ԹԵՐԹ՝ 269+1 (կրկն.՝ թ. 1) չգրուած 1ար: ՊՐԱԿ՝ Ա-ԻԲ×12+3 (Ա. 11, ԻԱ, ԻԲ՝ 14)*: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26,4×20: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (20×14): ԳԻՐ՝ բոլորգիր (նման՝ 5ա): ՏՈՂ 29, 31: ԿԱՉՄ՝ դռոյմազարդ շրագանակագոյն կաշի դռնակով, միջուկը տախտակ. աստառը. Ա. փեղկինը կարմիր կտաւ, Բ՝ դրչմազարդ կտաւ լուսանցակողերը կարմիր:

* Պրակներ կազմուած են ուրոյն եղանակով. համարեա բոլորը երկնոյ են, առաջին եւ վերջին թերթեր հաստ են, իսկ միջինները բարակ: Երբեմն հաստ են նաեւ մէջտեղի զոյգերը: Ասպէս է առուել պրակն աւելի ամուր դարձնելու համար:



Նման 5ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ — ձ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 2ա: Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական, խաչ, տաճար, թռչնային, չորկապարիկ. վարդակ: Ձ ա ր դ ա գ ի ր՝ թռչնագիր, ճանճուցագիր: Գ ո լ ե ր՝ կարմիր, կապոյտ, սպիտակ. լուսանցակողերը՝ կարմիր:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Ա+Բ: 1. Ա՝ Աւետարան քառ Յովհաննու, ԺԹ 24-37, Աւետարան քառ Ղուկասու, ԺԴ. 21-31: Ա՝ Ժ դ: Ստացուած 1 թերթի ընդլայնակի հատուածով: Մագաղաթ, 25,5×18,3, երկսիւն (20×16), բոլորգիծ երկաթագիր (ճեռ՝ Ա:ա), տող 13: Կառդալ՝ Նբ-Ա:ա. «Ում եւ ելցէ, զի լցցի գիրն. եթէ ճաչեցին ի նա, որ խոցեցին (վերչադարձ)» (Յվհ. ԺԹ 24-37): 2. Բ՝ Ժ դ: Ստացուած 1 թերթի ընդլայնակի հատուածով: Մագաղաթ, 25,2×20, երկսիւն (19,5×16), բոլորգիծ երկաթագիր (ճեռ՝ Բա), տող 12: Կառդալ Բա-Բբ՝ «Եւ եկեալ ծառայն պատմեաց զայն... Տայցէ պատուհասս ընդ աղտոյ թագաւորի եւ ոչ նստեալ» (Ղկս., ԺԴ 21-31):



Ա:ա



Բա

ՎիճԱԿ՝ բառարար. կազմի կաշիի վնասուած, մաշուած, մէկի ստորին մասի կաշին մասամբ անջատուած, դրմնակը ծալուած, Բ. փեղկի ստորին մասը պակուած, վերին մասում մէջի կաշին անջատուած, պատառիկ-պակասնակներ կծկուած, խոնաւացած, եզերները վնասուած, լուսանցակողերը գունաթափ, որոշ թերթերի եզերը բամբակակապած, թ. 1-47՝ բորբոսի հետեւեր, թ. 9, 33, 84, 107-110, 138, 142, 182՝ լուսանցների մաշ (ճատնեսաբար լուսանցազարդ ունեցող) հատուածներ կտրած-ճատնած, թ. 151՝ լուսանցազարդի մասը պատռուած, թերթերին խոնաւութեան հետեւներ, հիմիերի մօտ կեղտոտուած, գեղակեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

– *1գ* Այս ինչ կայ ի գիրս (= Ցանկ) – *Ա. Մեկնութիւն աղաւթից... Բ. Թուղթ դաշնաց սիրոյ եւ միաբանութեան:*

ա. *2ա-170բ* [Մեկնութիւն ժամակարգութեան, արարեալ երանելոյն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի եւ կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի] – *Քանզի ճանաչել անձին ուսուցանեն մեզ աստուածային պատուիրանք...*

– *170աբ* Եւ՝ Մովսէս, մեղաւք մեռեալս, ոգի ծնունդ վերջին ժամանակի եւ սպասաւոր պիտուկ բանի, կոմեցայ հաւաքումն առնել սրբոցն բանից, որ վասն աղաւթից եւ ժամակարգութեան արարեալ էին յառաջագոյն եւ գիւրաքանչիւր առանձնակի որոշեալսն յանգնիւր տեղւոջ կարդել, այլ եւ բռնադատեալ եղէ ի սիրելի եղբարէ ուսեմն Թէղորայ՝ զիծդեալսն ի մեծէն Խոսրովու զբանս աղաւթից յանգնիւր տեղւոջ վերլուծութեամբ դնել: Մվ հարաբ, երբ գմեկնիչն գրեա, դու գաղաթիկս այլ գրէ՛, որ տեսնուն, մէկ ի մէկու ալաթին: Եւ իմ թէպէտ եւ հայեցեալ տեսանէի յոյժ անարժան գիս այսպիսի |*170բ*| գործառնութեան, եւ լրբութիւն մեծ գայսպիսի իրողութեանց բուռն հարկանել, որ ի վեր է, քան զկար եւ զարժանն իմ, սակայն զմտաւ ածի, թէ եւ ձագ ագռաւոյ թէ ընդ արծուոյ եւ ընդ բազէի աւգտակարիկ յինքեան, ոչ ինչ շփոթումն եղիցի, զի ամենեցունց յայտնի երեւի, թէ ագռաւն ագռաւ է, տեւաթիր մի զազրալի կենդանի եւ ամենեցունց ատելի, եւ նոյնպէս ագռաւ մնացէ եւ ծանիցի, եւ քան հեղգութեամբ ի հանդիստ յաժարել աշխատութիւնն յաւէտ է բարի, եւ իւրաքանչիւր ոք գիւր վարձ առցէ: Եւ թէպէտ եւ կամեցա հասկաքաղ լինել ի հունձս սրբոցն եւ ճռաքաղ ի կուես, սակայն փախեաւ յաշխատութենէ զամենայնն ոչ կարացեալ քրնել, այլ եւ խնայելով ի լսելիս ունկնդրաց եւ զի մնացեալքն գնոյն զաւրութիւն ունին, եւ իմ չմեղադրութիւն պահանջելով, յամենեցունց ներումն խնդրեմ ի Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն. Ռ. *(1.000)* ամէն:

Տե՛ս եւ հմմտ. ձեռ. 1325, 2607: Տե՛ս նաեւ Մեկնութիւն ժամակարգութեան, արարեալ երանելւոյն Խոսրովու Անձեւացւոյ եպիսկոպոսի... Կ. Պոլիս, 1840:

բ. *170բ-211բ* [Յովհաննու Արճիշեցւոյ Մեկնութիւն պատարագի]

Տե՛ս ձեռ. 45, 62բ-106ա; ա/170բ-1բ; բ/171բ-211բ:

Տե՛ս Յովհաննու Արճիշեցւոյ Մեկնութիւն պատարագի, Հ. միաբան, 1860, 150 էջ:

գ. *211բ-3ա* Յովհաննու վարդապետին Գաւոնեցւոյ [Ողբ] – *Աստանաւոր պիտոյ է մեզ ողբ հառաչանաց... Ընդ չարութեանն զանչիշաւարութիւնն, եւ զքրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս. ամէն:*

դ. *213բ-8բ* Կարգ եւ կանոն աղաթից, զոր խնդրեալ է ի հոգեկիր արանց, յումեմնէ միայնացելոյ աթթուն եւ զուարթուն հոգւոյ Գրիգորի Նարեկացւոյ, որ եւ զուգանէ Նախադրութիւն բանիս, թէ ոչ հաւարի զանձն արժանի այսպիսի իրի, վասն այն զառաճելոյն ի մէջ առեալ, դնէ սկզբն կանոնիս պատմութեան եւ ոգչհան խրատու – *Առաքեալն Պաւղոս, անաւթն ընտրութեան... ի սէր Տեառն բեւեռեալ եւ անեղկիպ ննջեա՛ ի փառս նորա, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:*

ե. *218բ-21ա* Թուղթ վասն կարգաց եկեղեցւոյ եւ ժամուց, զոր ասացեալ է եսայի վարդապետի [Նչեցւոյ] ի խնդրոյ |*219ա*| վարդապետաց Սիւնեաց եւ առաջնորդաց վանօրէիցն աստուածասէր կրամաւորացն – *Ջհնաստաւեղծ եւ գովելի նամակս խնդրոյ ընկալայ... յորմէ գերծեցուցէ գմեզ Քրիստոս Աստուած մեր, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:*

զ. *221ա* Գրիգորիսի կաթուղիկոսի [Տաղ] – *Գոյ յիս գիտութիւն, բայց խամրացեալ է, / Գոյ երկիւղ բարեաց, այլ շիջանի միշտ... Թողցէ Յիսուս բազմաց, զոր պահանջեաց նա:*

է. *221ա-5ա* Ներբողեան կենսատու |*221բ*| սուրբ խաչին առ ի սրբոյ հաւէն մերմէ Գաւթ ասացեալ, տեառն Նէրսիսի կաթուղիկոսին մերոյ փոխադրեալ յոտանաւոր չափս եւ ստանաւոր եղաւ – *Բարձրացուցէք գՏէր Աստուած մեր միաբան, / Մարգարէն յառաջ ձայնեալ տայ ձեզ հրաման... պատուէ զՅիսուս ի սա փառաս, որ է այժմ եւ ապայն, որ գալոց է:*

Ը. *225բ-49ա* [Գ]ովեստ բանի ներբողական բացատացոփեամբ Նեռէսի կաթողիկոսի Հայոց Ցաղազա գեռազունիցն Էտփեանց՝ հրեշտակապետացն սրբոց Միխայելի եւ Գաբրիելի եւ ամենայն երկնայինոց զաւոթեանց, զոր տաւնեն եկեղեցիք Քրիստոսի ընդ տիեզերս, համախմբեալ ուրախութեամբ, ի նոյեմբերի Ը. – *Այսաւր երկրաւորս եկեղեցւոյ... երբորդութեանն երգել ըզփառս ընդ ձեզ աւէտ միշտ յաւիտեան:*

Թ. *249բ-53բ* Ցաղազա տաւնի սրբոյ խաչին – *Ամենայն բարեկամի գալուստ եւ սիրելոյ ուրախարարք են... աստուածընկալ մտացն Դաւիթ առասցոգք ընդ նմա:*

ժ. *253բ-4բ* [ի Հարանց վարուց]

1. *253բ-4ա* Պատմեաց ոմն մի յանապատականացն վասն առն մի <մի> մեծատան... եւ աւրհնեցին, որ զողորմութիւնն գնեաց:

2. *254ա* Մի ոմն ի ծերոցն գնաց ի քաղաքն եւ մտեալ յեկեղեցին... եթէ գոհութեամբ համբերէ եւ փառաւորէ զԱստուած:

3. *254բ* Քուրմ մի կողոն գնաց յանապատն... եւ ծերքն հաւանեցին բանի քրմին:

ԺԱ. *254բ-5ա* Կիւրղի Երուսաղեմացոյ Վասն պաաատարազաց – *Քանզի յորժամ զպատարագն մատուցանեմք... այլ գԲրիստոս զենեալ մատուցանեմք Հաւրն եւ Աստուծոյ վասն քաւութեան նոցա. նմա փառք յաւիտեանս. ամէն:*

ԺԲ. *255ա-64ա* [Թ]ուղթ սիրոյ եւ միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի եւ սուրբ պարոն Սեղբեստրոսի եւ Տրդատ Հայոց արքայի եւ սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի – *Կամաք եւ կարդութեամբ համագոյ Սուրբ երրորդութեանն... աւանդեցաք ի ձեռն աւետադպրին Հայոց արքային մեծիմաստին Ագաթանգելոսի ի փառս Աստուծոյ. եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն, ամէն:*

ԺԳ. *266ա-9բ* [Ընթերցուածք]

ա. *266ա-բ* [Աւետարան ըստ Ղուկասու, *Բ. Ց-20- եւ հովիւք էին] ի տեւուղն յայնմիկ բացաւիեագք...*

բ. *266բ* Ձեռ այսորիկ ելանեն ի հովուանէն ի սուրբ Բեղղէեմ, եւ ժողովն ի ներոս ի յայրն ի մատրանն, եւ այս կանովն կատարի. Սաղմոս կգ. Տէր ասաց ցիս: Ալէլուիա: Ասաց Տէր ցտէր իմ: Աւետարանն Մատթէոսի *[Ա. 18–25] – [Եւ] Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս...*

գ. *266բ-7բ* Եւ յետ ընթեռնոյն զԱւետարանն ելանեն յանդէն յեկեղեցին եւ սկսանին զզպաշտօնն եւ յարեն եւ նոյն զհոգևումն եւ ընթեռնոյն |267ա| ընթերցուածծ ԲԺ., եւ նախ ասի սաղմոս, կգ. ՃԻՆ. Ձիշեալ Տէր զդա: Ընթերցուած ի Ծննդոց սկիզբն *[Ա. 1 – Բ. 5] – [Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր: Եւ երկ]իր էր աներեւոյթ... ի վերայ երկրի, եւ մարդ չէր որ/// (թափուած՝ ԹերԹ ընկած):*

դ. *268ա-9բ* [Ընթերցուած ի Դանիելէ – *Պատկե]ին ոսկւոյ, զոր կանգնեցեր... [Գ. 12–90]*

Սկիզբը ԹերԹ ԹերԹ ընկած լինելու պատճառով:

ե. *269բ* Ապա ասի Մեծացուացէ:

ԺԴ. *269բ* [Մաճուճի ԺԸ. դ. գշոտեամբ, անաոուեստ նուոդիր]

– *Է ճանապարհ, որ թուի մարդկան ուղիղ, բայց կատարածն հայի յատակս դժոխոց: Ըստ նմին, եթէ արդարն հպիւ կեցցէ, իսկ մեղաւորն եւ ամբարիշտն ուր երեւեսցի:*

– *Ի պտղոյ արդարդութիւն բուսանի: Մառ կենաց բարձին դարաժամ որդիք անօրինաց: Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր Թողեր զի:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱԹԱՐ ՕՐԻՆԱԿ

249բ Ջանծին բարեաց ծնաւղ բանիս
Մի՛ մոռանայք տաւնողք վերկից
Ջներսէս եղբայր հայրապետիս,
Որոյ անուն տէր Գրիգորիս:
Յորմէ խնդրոյ գիշեալ ըստ իս,
Յարմարեցաւ շինուած ճառիս
Եւ եղանակ շարունակիս
Առ ի պատիւ մեծատաւնիս:
Այդ, յիշեսջիք ընդ Տեառն եւ զիս,
Լսողք վերնոցդն գովեստիս,
Եւ գուք յիշեալ առ տէրունիս
Լինիք յերկնից նորայն բարիս:
Ասացաւ եւ գրեցաւ ի Ներսէսէ կաթուդիկոսէ Հայոց ի Կլայս Հռոմական, ի թվին ՌԽԱ. (1162):
Եւ գՅովսէփ յոյժ եղկելիս՝
Ըզգծատ այսմն ճառիս,
Վատթարագոյն մեղասներիս
Ծանրաբեռնեալ դժոխարիկիս,
Որ խաբեցայ ի կենցաղիս
Եւ գործեցի բազում չարիս,
Անզնդջ կամաւք ի չաշխարհիս
Յերես անկեալ արտասուալիս:
Ընթերցողաց այս կատակիս
Յիշման առնել գմեզ արժանիս,
Թողուլ անառակիս,
Ջնխլեեալ չարիս իմ չերկրիս:
Եւ տնաւրինել ի ներկայիս
Ջփրկութիւն մեղաւորիս
Եւ չաջորդել ի չապառնիս
Ջճանապարհրդս գովելիս,
Եւ ձեզ լիցի մասն բարիս
Ընդ սուրբս իւր եւ սիրելիս.
Ամէն, ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

264ա Փա՛ռք քեզ անաոհման եւ անղուգական անուն, անսկիզբն եւ անվախճան, անեղ եւ անապական,

եւ էական էութիւն, անուր, աներբ, անուսումէք եւ անժամանակ, յերիս բաժանեալ անձնաւորութիւնս եւ ի մի տէրութիւն եւ աստուածութիւն բովանդակեալ, անքակ միաւորութեամբ բաժանեալ եւ որոշեալ միաւորութեամբ, պարզ, անզնին եւ թիւ կատարեալ, ի միոյ պատճառէ շարժեալ եւ կնքեալ ի յերիս անեղականք, անսկզբունք յառաջնմէ եւ ապա յառաջ եկեալ ի միոյն պատճառէ, Որդի ծննդեամբ եւ Հոգի բղխմամբ, ո՛չ սկսեալք եւ ո՛չ դադրեալք միակամբք, մի Տէր եւ Աստուած՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, յորմէ գոյացան երեւելի եւ յաներեւոյթ տարրեղէն արարածք, որոյ Հաւր անհասի եւ անծնի, եւ Որդւոյ նորա միածնի, եւ Սուրբ Հոգւոյն նորոգաւոյի փառք եւ պատիւ գոհացական երկրպագութեամբ յանցելումն, ներկայէս եւ յայժմէս |264բ| մինչեւ յաւիտեան եւ յաւիտենից յաւիտեանս. ամէն: Գրեցաւ սուրբ գիրս առ ստորոտով ի յերկիրն Որոտան, ի գիւղն, որ կոչի Շինաճայր, ընդ հովանեաւ Սուրբ Ստեփաննոսի, յառաջնորդութեան տեառն Փիլիպոսի, որ բարեմասնական գաւազանաւ եւ բարձրագահ իշխանութեամբ տիրէ մերում ժողովրդեան: Պահեսցէ Տէր Աստուած եւ զաւրացուսցէ ի կամս իւր. ամէն: Արդ, եղեւ գրաւ սուրբ գանձարանիս յամի շրջագայութեան արամագեանս տոհմի, հայկականս սեռի ի քան ու մին յոբելեանի, յաւելեալ երեսուն ու չորս թուոյ, որ է ՌՉԴ. (1635) թվականն: Աստանաւր կատարեցաւ հոգիակեցոյց եւ ցանկալի գրասիս աստուածադիր ամենունակ առաստութեամբ, յորմէ գնան գնտք եւ բղխեն աղբերք անմահարարք եւ զովացուցիչք, որք առողանեն զծարաւեալ ոգիս ի սմա փափագողաց, ծառք երկնուղէշք, բարեհամք, տիեղերաց ծաղիկք եւ տունկք տենչալիք եւ ծաղկանոցք, լի անուշահոտ ծաղկաւք, երփն-երփն երանգաւք սպիտակափայլք եւ ծիրանածիւք, գոյն առ գունով, որք պատրաստ են զիմանալեացն գաւառ, լայնատարած վայրաւք եւ համասփիւռ ընդարձակութեամբ, զի արդարեւ տարածանին երկնաքայլիցն ճեմարանք, որք թեւատարած սլացմամբ վեր առոցին յերերն վերին՝ ի լոյսն մշտատիւ եւ անվայրապիակ, քանզի որք տիրապէս զստորնայնոյս քայլեցին սրբակրօնիցն գուպարք, անցեալ գնան ընդ նբբաշաւիղն ընդ այն պողոտայ, զոր գունդք մարգարէիցն եւ արդարոցն երամք թեւաբուսեալք հոգւոյն թեւաւք աւտապարիկ երթեւեկութեամբ, ջոկատասեալք ընդ չոլիցս սրբաբանողացն դասուց, որք հանդարտագոյ քաղցրանուագ ձայնիւ գանւելին դրուատեն գաւրհնաբանութիւն: |265ա| Որոյ այսպիսի ըղձալի փարթամութեանց համահետեւեալ երանելի վարդապետն մեր Արիստակէս եւ ետ գնաղրել ըղսա ի վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ եղիցի յաշխարհէս, քանզի պարունակեալ ունի առ ինքն գմեկնութիւն աղաւթիցն բովանդակ եւ գմեկնութիւն սուրբ պատարագին եւ հրատ վասն ժամուց եւ առանձնութեան եւ ի խորհուրդ սուրբ եկեղեցւոյ եւ այլ հրատ ոգեշահք միանձանց եւ Պատճառ սրբոյ խաչին եւ Բարձրացուցչքն ոտանաւոր եւ Գովեստ հրեշտակապետացն եւ Թուղթ դաշնաց եւ միաբանութեան:

Արդ, աղաչեմ գամենեսեան մոխրամած երեսաւք, որ լուսաւորիք յայսմ լուսարանէ, յիշեսդիք սրտի մտաւք գեղեցիկ գծաւղս գՅովհաննէս գաւժրընդակիչ եւ զյորդորիչ զվարպետն իմ գԱստուածատուր քահանայս եւ խորհրդութեան եւ փցուն եւ ախմար եւ անարհեստ գրոյս աղաչեմ չլինել մեզդիր, զի այլոյ էր կար մեր: Եւ որ առատն է ի տալն, քան ի ճշդելն, տացէ ձեզ՝ յիշողացդ եւ յիշելոցս գիւր արքայութիւնն եւ ամենայն հաւատացելոց: Եւ նմա փառք, պատիւ եւ աւրհնութիւն յանլռելի ձայնից եւ յամենայն եղանութեանց այժմ եւ յաւիտեանս. ամէն, ամէն, ամէն:

16ա Ով սուրբ ընթերցաւղք, զբազմամեղ գծաւղս յիշեա՛, աղաչեմ (նման՝ 16բ, 32ա, 91ա, 253բ):

20ա Ջղոքնաթշաւտ եւ գստաւոպեալ գծողս Յովաննէս յիշեցէ՛ք առ Աստուած, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն (նման՝ 27բ, 34բ, 52ա):

83բ Ով հարք եւ եղբարք, որք հանդիպիք սմա, յիշեցէ՛ք ի մաքրափայլ աղաւթս ձեր զմեղաւք լցեալ եւ զանարժան գծա[ւ]ղս՝ գՅովհաննէս, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն:

81ա Յերես անկեալ աղաչեմ գծաւղս եղկելի, / գհանդիպաւղսդ այսմ ոգեշահ տառի / յիշման առնել մեզ արժանի, / ասել՝ Տէր, իսղ զյանցանս գծողի եւ գիւրոցն ամենայնի, / զի եւ ձեզ ողորմեսցի Տէրն ամենի. / ամէն, եղիցի:

103բ Ջմեղաւոր եւ զանպիտան գծողս յիշեա՛, ով եղբա՛րք, եւ խորհրդութեան եւ փցուն եւ ախմար գրոյս անմեղադիր լերո՛ւք, զի կար մեր այլոյ չափ էր, եւ մեզաց իսղոցս հայցեցէ՛ք Աստուծոյ, զի եւ ձեզ ողորմեսցի. ամէն:

128ա Ջսատացաւղ եւ զգծաւղ լուսաւազդ մատենիս՝ զստաւոպեալ եւ մեղաւք մեռեալ գՅովհաննէս յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ:

211բ Ով պատուական սուրբ ընթերցո՛ւղք, որք ընթեռնուք եւ լուսաւորիք հոգով, աղաչեմ, մի՛ մոռանայք գաշխատաւղս գՅովաննէս ի մաքրափայլ աղաւթս առաջի սոսկալի խորհրդոյն՝ զենեալ գառիվն եւ միշտ կենդանոյն, եւ որ յիշէ, յիշեալ լիցի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱՏԱՔԱՅ

1. *265ա (1637 թ., անաբուեստ նոտրգիր) Ես՝ Արիստակէս վարդապէտս, տէր Յակոբս, տէր Բարսեղս վաճառեցաք գայս գիրքս Զաւրեվայ անապատին՝ Դավիթ պարոնտէրին, տէր Խաչատուրին, տէր Աճոռնին եւ այլ միաբանիցն, ի թվին ՌՉՉ.ին (1637): Մի՛ ոք հակառակութիւն արասցէ, եւ ով հակառակի, սեւերես լիցի աւուրն դատաստանին. ամէն:*

ես՝ Դաւիթ եպիսկոպոսս եւ իմ միաբանքս բոնաւոյս զայս գիրք Մեծ անապատին Արիստակէս վարդապետէն։ Եւ ով որ հանգիպիք սմա, յիշեցէ՛ք զմեզ յաղօթս ձեր առ Աստուած, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն։

2. *264ա (ժէ. դ., անարուեստ նոտրգիր)* Զարեհայ անապատին է գիրքս։

3. *265բ (ժէ դ., անարուեստ բոլորգիր)* Ես՝ տրուպ եւ ամէնից ոտաց հող եւ մոխիր եւ ծառայ էս կենաց մորմոքեալ եւ տօչորեալ սրտիւ աղաչեմ ըզձեզ վասն ի սէրն արքասիրեան եւ վասն ի սէրն Աստուծոյ ամենեքեան խնդրից՛էք ինդուիին մեղայ զգծող սորին՝ Նսէննաճօ [=Օհաննէսէ] իմ անունս վիրու։

4. *1գ (1848 թ., շղագիր)* Զայս գիրք ընծայեաց Սահանեու նորակառոյց ուսումնարանիս Ագա պարոն Բէգն Դանկրէկեանց՝ *ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ արեւշատութիւն իւրոյ օրինեալ զաւակաց։ Ի 1848 ամի, ի 11 հոկտեմբերի, ի Մառաս։*

5. *2ա (ԺՀ. դ., անարուեստ նոտրգիր, եղծուած)* Ես՝ խաչատուր արեգայս, գնացի անապատ մեկի/// *որ ինձի հետ տայր գաս Բ (՞)/// մեկայ մեռան // ին է եւ մի՞ ոք հակառակեսցի։*

6. *1գ (ԺԹ. դ., անարուեստ նոտրգիր)* Ես՝ նուաստ եսայի Կոլտանեցի, *ստացա այս խորհրդի Մենկնիչս, ազատելով ի ձեռաց անօրինաց, եւ եռու վախճ փառաւոր ուխտին Երից մանկանց վանիցս, ձեռամբ քեռին իմոյ Ներսէս կաթողիկոսին [Աշտարակեցւոյ], որ անջինջ յիշատակ մնայ իմ հոգւոյս, ընթերցօղք յիշեն զրազմամեղս, եւս առաւել ծնօղք իմ Գեւորքն եւ Պաղիճն։ Եւ որք յիշէք, յիշեալ լիցիք առաջի ահեղ առեներն Քրիստոսի, եւ ասացէ՛ք Հա՛յր մեր, որ յերկինս, որ է Հոգոյն հանկուցելոյց։*

7. *46ա (Ի. դ., շղագիր)* Ըստ Հ[ին] *172 Մենկնութիւն ժամագրոց ուղղագոյն օրինակի, է պահաս «լուսաւորեսցուք եւ մեք զաչս մտաց մերոց, նայելով ի լոյս ճշմարիտ, իմաստութեամբ վարել զընթացս կենաց մերոց, զի յաւրհնութիւն վայելիցեմք, եւ զի հով...»։*

ԳՐՁԱՓՈՐՁ Պատկ-պհպնկ Աբ՝ *«է ճանապարհ, որ թուի մարդկան թէ աջ է, բայց վախճան նոցա հալի յատակս դժոխոց» (տե՛ս 269 բ նիւթը), 1ա՝ «կամակոր»։*

ՆՇՈՒՄ՝ *կապմի մէջքին փակցուած թերթիկին՝ «Մովսէս վարդապետի Մենկնութիւն ժամագրոց, (2)», 1ա՝ «Հ[ին] 175/2608, ՌԳԿ.-1635, Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս», 1գ (ԺԷ դ., անարուեստ բոլորգիր, եղծուած)՝ «Գիրքս գրիգոր վար[դապետին է]»։*

2609


ՍԱՐԳԻՍ ԿՈՒՆԴ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ

ԲՐՑՆԻ ՈՒՂ. – 1184


ԳՐԻՉ՝ Մարտիրոս Բչղեցի։ ՍՏԱՑՈՂ՝ Թադէոս վրդ.։ ԿԱԶՄՈՂ՝ Սահակ վրդ.։

ԹԵՐԹ՝ 319+1 (կրկն՝ բ. 1). չգրուած՝ 1ա, 25բ-ճա. ՊՐԱԿ՝ Ա-Ջ×12 (Ա՝ 11, Ջ՝ 9)*։ ՆԻՒԹ՝ թուղթ. ՄԵՑՈՒԹԻՒՆ՝ 26×17։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (21,5×12,5)։ ԳԻՐ՝ բոլորգիր. ՆՄՈՒՇ՝ 109ա (երեմն՝ խոշոր. ՆՄՈՒՇ՝ 28ա)։ ՏՈՂ՝ 24-26 (մեծ մասամբ՝ 25)։ ԿԱԶՄ՝ դոշտազարդ բազ շագանակագոյն կաշի, գոնակով եւ 3 կապիչով, միջուկը տախտակ, աստառը կապոյտ կտաւ. լուսանցակողերը՝ կարմիր. ՊԱՀՊԱՆԱԿ՝ Բ+ԳԳ՝ չգրուած սպիտակ թուղթ (ժէ դ.)՝ լուսագծերով եւ լուսադրոշմով՝ բուսական ոճաւորուած գինանշան, որի ներսում եռեւի ոտքերի վրայ կանգնած կատուազգի եւ 3 հառաթե ծաղիկ։

*Ցուցահանմանները՝ ըստ այբուբենի գրերի կարգի։




Նմուշ 28ա



Նմուշ 109ա

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՏՃԱՆԱԿ – Աւետարան ըստ Մատթէոսի, ԺԶ. 11-12, 14-17, 19-20, 22-23՝ 1 (Ա) + 1 (Ե)։ Ծ. դ.։ Ստացուած մէկական երեսիւն թերթերի ընդայնակի եւ երկայնակի ճաստոմով, եզրատաւոտուած, պահպանուած մէկ սիւնը եւ միւսի եզրը։ Մագաղաթ, 25,4×16, միասիւն (12×9,5), բոլորգիծ երկաթագիր (ճմուշ՝ եա), տող՝ 9+2։ Կատարյ՝ Աբ, եբ, եա, Աա. «Թէ ոչ վասն ճացի ասացի նեզ... ին խոհին զաստատեցոյն»։



Նմուշ եա

Ա. պատառիկ-պահպանակի ստորին եւ Բ. պատառիկ-պահպանակի վերին եզրերին 16×3,5 չափսի, երկաւական տող ունեցող մագաղաթէ կարկատանիներ (կատուած սպիտակ թելով, վրան ցեցի ածքեր)։ Մտթ. ԺԾ. 27, 29, Ի. 4, 8. Աա՝ «Մեք քոյրի՛ զամենայն եւ եկա՛ գկնի Իս, տղ [գի՛նչ լինիցի մեզ]», (Մտթ. ԺԾ. 27)։ Աբ՝ «Նոցա վարձս, սկսեալ յեռոյն մինչ» (Մտթ. Ի. 8)։ Եա՝ «[Հար]իւրապտիկ տոցէ [եւ] գկեանսն յտի[տանկասս]» (Մտթ. ԺԾ. 29), Եբ՝ «Ոմ յայգի ի[մ եւ ոո] ինչ ահաճ ի[ցէ]» (Մտթ. Ի. 4)։

Վիճակ՝ բաւարար. կազմի Ա. փեղկի 3 զամերէ ընկած, կապիչները մաշուած, պատառիկ-պահպանակները կեղտոտուած, խոնաւացած, կծկուած, լուսանցակողերը՝ գունաթափ, պենք. Բ, ԳԴ, թ. 1-22, 282-319՝ ցեցի ածքեր, քանաի բաւար թթուայնութեան հետեւանքով գոադպտր մասամբ խոնաւացած, հիմիերի մօտ թերթերը կեղտոտուած, խոնաւութեան եւ ապատոռածութեան զանազան հետքեր, սկզբի եւ վերջի թերթերը ճոռոգուած։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1գ-318բ [Սարգսի վարդապետի Կուճղի] Պատճառս Աւետարանին Ղուկասու

– *1գ-3բ* [Նախաբան] – Ղուկասու Աւետարանս երրորդ է ըստ կարգի աւետարանչացն... եւ լինիցիմք ճշմարտագէս ժառանգք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի: Յաջողեալ Քրիստոս գգործս իմ:

ա. *3բ-35բ* [Գլուխ Ա.] – Քանզի բազումք յուժարեցին վերստին գրել... եւ այնուհետեւ համարեցաւ Խրատչեղի իբրև գհրեշտակ իշխեալ յերկնից:

բ. *35բ-60բ* [Գլուխ Բ.] – Եւ հրաման յՈգոստոս կայսերէ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս... զի Ղուկաս գրէ. «Ասացաներ ի ժողովուրդս նոցայ փառաւորեալ յամենեցուն[ց]»:

գ. *60բ-5բ* [Գլուխ Գ.] – Ի հինգետասանն[երորդի] ամի տէրութեանն Տիբերեայ կայսեր եւ ի դատաւորութեան Պիղատոսի Պոնտացւոյ... այսպէս եւ մեք ի Քրիստոս մկրտեալք վերստին ժամանեցաք ի դրախտն:

դ. *65բ-79ա* [Գլուխ Դ.] – Եւ Յիսուս լի Հոգովն Սրբով դարձաւ ի Յորդանանէ... զի վասն ամենեցուն առաքեցաւ:

ե. *79ա-83ա* [Գլուխ Ե.] – Եղև ի խոնել գնովաւ ժողովրդոցն եւ լսել գբանն Աստուծոյ... քանզի ոչ էին մաշեալ հրէական վարդապետութեամբն:

զ. *83բ-90ա* [Գլուխ Զ.] – Եղև ի շաբաթու Բ.որդումն առաջնոյն, որ էր ամն ութջոյն շաբաթ... Յուի ինձ ՚ի գհանդերձեալ դատաստանացն հատուցմանն ասէ:

է. *90ա-101ա* [Գլուխ Է.] – Իբրև կատարեաց գամենայն բանս իւր ի լսելիս ժողովրդեանն... եւ աւտարացուցանել եւ առնել հաղորդս գիւաց:

ը. *101բ-6բ* [Գլուխ Ը.] – Եւ ինքն շրջէր ընդ քաղաքս եւ ընդ գեաւղս... զի մի առաչաւք ինչ կարծիցի[ն]:

թ. *106բ-21բ* [Գլուխ Թ.] – Կոչեաց գառաքեալսն եւ ետ նոցա զաւրութիւն եւ իշխանութիւն ի վերա դիւաց... որ ոչ փոյթ արարին գործեացն եւ բազմութեան ձկանցն:

ժ. *121բ-31բ* [Գլուխ Ժ.] – Յետ այսորիկ երեւեցոյց Տէր այլևս ՀԲ. (72)... զի ամենայն առաքինութիւն կամեցաւ ուսանել եւ ըստ կարգի ուղղել:

ժա. *131բ-42ա* [Գլուխ ԺԱ.] – Եւ եղեւ ի տեղոջ ուրեք կալ յաղաւթս... հնարէին բանիւն գրպարտութիւն դնել ի վերայ նորայ:

ժբ. *142ա-54ա* [Գլուխ ԺԲ.] – Յիսուս ասէ. Ջգոյշ լերուք ի խմորոյ փարիսեցոցն... որ յետին բնիւն եւ նաքարաւիպտ անուանեաց:

ժգ. *154ա-63ա* [Գլուխ ԺԳ.] — Եկին ոմանք ի նմին <ժամ> ժամանակի եւ ասեն նմայ վասն գալիլեացոցն... որք ի յայնժամ երկիր պագանելոց էին նմայ:

ժդ. *163ա-70ա* [Գլուխ ԺԴ.] – Եւ ի մտանել նորայ ի տուն ուրեմն յիշխանաց փարիսացոցն ուտել հաց ի շաբաթու... և գհատուցումն հրով սպառնայ յասելն զաւտ նորայ հուր ծախել:

ժե. *170ա-83բ* [Գլուխ ԺԵ.] – Եւ էին մերձ առ նայ ամենայն մաքսաւորք և մեղաւորք... եւ միանգամայն ասել իսկական նորայ բարեգործութեանն եւ ամենայն աշխարհի խնամածութեանն:

ժզ. *183բ-95բ* [Գլուխ ԺԶ.] – Եւ ասէ առ աշակերտս իւր. Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես... այսքան վայրենամիտք եղեն անհաստատութեամբն:

ժէ. *195բ-203բ* [Գլուխ ԺԷ.] – Եւ ասէ առ աշակերտսն իւր. Ջկ մարթ չգալ գայթ[ակղութեան]... և գկենդանիսն որաւցեալ կերակրի:

ժը. *203բ-13ա* [Գլուխ ԺԸ.] – Հատաւոր մի էր... քանզի գհետ իսկ երթային՝ փառաւորելով զնշանագործն:

ժթ. *213ա-29բ* [Գլուխ ԺԹ.] – Եւ մտեալ շրջէր ընդ երեքով... որ ոսոխութ աւրհնէին զեկաւորութիւն թագաւորութեան նորայ:

ի. *229բ-37ա* [Գլուխ Ի.] – Իսկ ի միւսում աւուրն յայնցանէ, մինչդեռ ուսուցանէր, ասեն ցնա... քան զայն, որ բարեաւն վարին ի չարն:

իա. *237ա-47ա* [Գլուխ ԻԱ.] – Ետես մեծատունս, որ արկանէին գտուրս իւրեանց ի գանձանակն... եւ յեգիպտոս ե. քաղաքաւն, որ պահեցան:

իբ. *247ա-66բ* [Գլուխ ԻԲ.] – Մերձեցաւ տաւն բաղարջակերացն, որ կոչէր պասէք... եկն սփոեցաւ ի վերայ Փրկչին մերոյ:

իգ. *266բ-90բ* [Գլուխ ԻԳ.] – Եւ յարուցեալ ամենեքին՝ ածին գնա առ Պիղատոս... Հանդարատեցին եւ կանայքն ի նմին աւուր ըստ աւրինացն, թէպէտ եւ ջերմէին [ի] սպասաւորութիւն Տեառն ամենայն ուրեք:

իդ. *290բ-317բ* [Գլուխ ԻԴ.] – Բայց ի միաշաբաթոցն վաղ՝ քաջ ընդ առաւաւտն եկին ի գերեզմանն... եւ եղեն խորհրդակից Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն:

– *318ա* [Վերջաբան] – Հզաւրին եւ անճառին, փառաց փառաւորին, անբաւ վեհին... փառք եւ զաւրութիւն ի ներկայիցս եւ յանցեալսն, ի սպառնալից եւ յանյաւնգից, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ռ. Մարգիսեանը հաւանական է համարում, որ հեղինակը Մատենադարանում Միւնեցին է (տե՛ս Վեհեսկի ցուցակ, Բ., էջ 294-304), Գ. Յովսէփեանը բնորոշել է «Մատենադարանի Կուճղի կամ Մարգիս Կուճղի» (Յիշ-ք, էջ 499): Լուսանցներում բուն գրչութեամբ կան սրբագրութիւններ, ուղիղների եւ նրանց հեղինակների անունների նշումներ, հաւանաբաւական որեւէ նշան չունի: Տե՛ս Մարգիս Կուճղ (ԺԲ. դ.), Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, աշխ. Եղիկ եպս. Պետրոսյանի, Ս. Էջմիածին, 2005, «Անեղ. Ա», էջ 17-636. հմմտ. Եղիկ եպս. Պետրոսեան, Սրմէն Տէր-Մոսէսեան, Մուրք գրքի հայերէն մեկնութիւնների մատենագիտութիւն, Երեւան, 2002, էջ 91:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

242բ Ով ընդ[ե]ղծողդ եւ կամ ընդաւրինակողդ, յորժամ ի պէտս հաստատութեանն հաւատոյ լուծանես զպլուխ գրոցս, ասասջիր, թէ՝ Աստուա՛ծ, որ կամիս

գկեալ ամենայն մարդոյ, ողորմեա՛յ ի քում մեծի գալստեանդ սուրբ վարդապա[ետ]ին Սահեփանոսի, որ կոչի Կուռնդ։ եւ որք ընդ նմա աշխատեալք են ի գործս բարիոք գրոցս այսմիկ, ընդ նոսին եւ ստացողի սորայ՝ Թաղէոս վարդապետի եւ ծնողաց իւրոց, եւ զիա՛ զանպիտան եւ զսուտասնունս Մարտիրոց երեց ի դղեկ քաղաքէս Բրջնոյ, յիշեսցիք եւ ողորմութիւն ի Քրիստոսէ հայցեսցէ՛ք, զի կարող է Աստուած ի ձեռն այլոց այլում ողորմութիւն առնել, եւ դուք, որ յիշէքդ, յիշեալ |243ա| լիցիք ի Քրիստոսէ Յիսուէ մերոյ, որում[/] փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։ հալատեալոյս մի՛ մեզադրեր, զի երեց խալատի։

318ա Աստանաւոր յանգ եղեալ աւարտեցաւ տառս այս հրամանաւ սուրբ եւ յատակ յամենայնի Թաղէոս վարդապետի՝ ընդրելոյ եւ խմաստնոյ, ընծիեցցասիրի եւ բարեպաշտի, վարժ եւ կիրթ յամենայն գործ բարեաց՝ ի լուսաւորութիւն սրբոյ եկեղեցոյ եւ ի բարեխաւսութիւն անձին իւրոյ եւ ծնողաց իւրոց՝ ստանալով զսայ յիշատակ բարի կենաց եւ մահու, ի ձեռն Մարտիրոսի անարհեստ եւ փցուն գրչի եւ յեսին ամենայն երիցանց, ի դղեկ քաղաքէ Բրջնոյ, որ է մեր[ձ ի] Պվին քաղաք Հայոց յարեւելս կոյս։ |318բ| Արդ, աղերսիս հայցեմք յամենեցուն, որք ժառանգէք կամ ընծիեցոյք կամ ի գանձաիար առնոյք, զԹաղէոս վարդապետ եւ զծնողսն իւր յիշեսցիք ի Քրիստոս, ընդ նմին եւ զվարձական սորին գրոց զՄարտիրոս յիշեսցիք ի Քրիստոս, եւ դուք՝ որ յիշէք, յիշեալ լիցիք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեան յաւիտենից. ամէն։

Ի վեց հարիւրերորդի երեսներորդի երրորդի (ՈՒԳ՝ 1184) եղեւ կատարումն սորայ ի փառս Աստուծոյ։ Ո՛վ եղբայր եւ տէր իմ Թաղեո՛ս, քանզ կամաց եւ մտաց քոց յիշատակարան գծե՛ալ եւ մեզ |որդւոյին ընդ նոսին եւ զիա՛ եւ զու եւս առչիս |որդւոյին ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։

Այս երկու յիշ-ները տե՛ս Յովս., Յիշ-ք, էջ 499-502, չ՚ր 299 (հեծատրութեան ուսումնասիրման համար կարեւոր է այս ձեռագիրը, որի համար եւ ուղղագրութիւնը պահեցինք անփոփոխ)։ Տե՛ս նաեւ ե–ԺԲ. դդ. յիշ-ք, էջ 244-5։

Ծա Ջոմանս աւետարանիչս եւ գոմանս Աւետարանս քարոզս արարին։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. *243ա* (ԺԲ. դ., կազմողի, անարուեստ բոլորգիր) Ես՝ նուաստ ծառայ Յիսուսի Քրիստոսի Սահակ վարդապետ, յոյժ փափագանաւք սիրով Հոգւոյն առի զսուրբ գիրքս գայս՝ զՍնկնիչս Ղուկասու Աւետարանին եւ եդի ի մխսին զՄատթէոսի Մ[ռկն]ին, զոր գնեալ էի, եւ ձեռնաւք իմովք կազմեցի յոյժ սիրով, եւ եդի ինձ եւ իմ սիրելեացն լինել յիշատակ բարի, ակն ունելով առ Քրիստոս՝ տալ մեզ վերկնից արքայութիւնն եւ գմեղադ թողութիւն ի ձեռն բարեխաւսութեան սուրբ գրոցս. ամէն։

Արդ, ո՛չ գին կայ այս գրոցս եւ ո՛չ ծախ, այլ որ վարդապետ լինի յիմ ազգէ եւ կամ ի յայս քաղաքէ ի Բալուայ, նայ ժառանգէ զգիրքս գայս Աստուծով։ Տէր Յիսուս Քրիստոս ողորմեսցի Յակոբ երիցու հոգւոյն, որ երեսո գՈւսկասու Մեկնիչն եւ գին ոչ էառ, այլ կամեցաւ իւր յիշատակ լինել առ մեզ, մեղաց թողութիւն եւ վերկնից արքայութիւնն շնորհեսցէ նմայ Տէրն մեր Յիսուս Քրիստոս. ամէն։

2. *319ա* (ԺԳ. դ., անարուեստ բոլորգիր) Արարչագործ Աստուած, որ յոչ էից գոյացուցեր զեղե[այս] ամենայն/// զլուխ արարեր///, տալով նմա տեղի բարձր քան զարեգական, որ եւ հա/// ամ, թէ ընդ բարձրութեան տեղոյն նմանապէս եւ փառաց բարձրագունի գնա արժանացուցեր, իսկ նա յայնքան ճոխութենէ ա/// աք անգեան մախանաք այնմ, որ պաշծառուիեանն արաւեալ լեալ եւ խաւար վասն ամբառնալոյն եղեալ, եւ գնայ եւս խաւարեցոյց ի ճշմարիտ լուսոյ կենաց դրախտին, վիրաւորելով ի ձեռն նախնոյն զբաւանդակ վերնէքս ի նմանէ, եւ ոչ ոք էր՝ որ ի թիկունս հասանէր նաստագունիցս, իսկ արարչական զթութեամբ շարժեալ յարարածս քո, առաքելով զէակից բանդ Ճշ[մար]տի փրկութիւն բանական հատից, որ եղեւ հովի/// իկ բնաւին ծառայելոցս, փրկելով ի զանազան հարուածոց, խաչիս եւ արեամբ աւարտեալ զմեր փրկութիւն, ուղղելով զգնացս մեր ի ճանապարհս վերնոյն երուսաղէմի՝ մասին ամենեցուն գնալով ի գաւրութենէ ի գաւրութիւն, մինչեւ գայցէ միւսանգամ հատուցանել ըստ իւրաքանչիւր գործոց յաւուր ան[երեկի], [յ]որժամ գողան եւ սարսափին/// այն արա/// ք... Յայնմ աւուր յահեղին ողորմա՛ նւասուագունիս, որ անուամբ եւեթ ունիմ զաստիճան քահանայական, պարտական գտեալ բիւր քանքարոյ, որ եւ վարդապետական ընկալա աշտիճան՝ Գրիգորս անուամբ, եւ մակ[անուեալ] վարդապետ, որ եւ անունս բաւական է ինձ |319բ| կշտամբութիւն անուղա եւ սոզոսկէր անձինս այլոց ահ ուսուցիչ եւ ինձ կորուսիչ, զայլս ժրացուցանեմ բանիւ [Տեառն], Տէզդ գտանիմ գործով, յաղագս որո անունս բաւական է ինձ ի յանդիմանութիւն։ Եւ արդ, Տէ՛ր բարերար, ես ինձեն բողոքեմ եւ հրապարակատես գոչեմ յականջս ամենեցուն, ո՛չ թաքուցանեմ զիմայթիեալ վէրս հոգոյս, ո՛չ կարեմ վիրաւորս կեղծաւորել, առաջի ծածկագէտ բժշկիդ պատմեմ զանաւր[էն]ութիւ[ւ]նս իմ, զի արդարացայց։ Ո՛ Տէր բարերար, զոր ստեղծեր արարչութեամբ, մի՛ անտես առներ ողորմութեամբդ, զոր ազատեցեր խաչիւդ, մի՛ թողուր ի ծառայութեան մեղաց եւ գժոխոց, զոր գնեցեր արեամբ, մի՛ մերժեր ի տիրական իշխանութենէդ, աաելով ի բաց կացէ՛ք ամէնայն մշակք տնաւր[ենութեան], այլ ներեա՛, զթա՛յ, ողորմա՛յ ինչուառացեալ եւ եղկելի անձինս յառաջ յիշեցեալ անուանն՝ տառապեալս եւ տկարա՝ Գրիգոր վարդապետս, աղաչեմ, պաղատիմ [խնդր]եմ ի բարե-

յար կամացդ, միջնորդութեամբ եւ բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնիդ եւ ամենայն սրբոց եւ թող զպարտիս յանցանաց իմոց եւ ծնողացն իմ թագուհէ եւ Աստուածատուր, հաշտարար կամաւք նայել եւ ողորմած աչաւք ծոցութիւն առնել եւ ներումն ամենայն սխալանաց մերոց. ամէն:

Արդ, աղաչեմ զամենիսեան, որք ընթեռնուք, մեզաց թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ, զի եւ մեզ նոյն եղիցի յամենատատ ողորմութենէն Աստուծոյ. ամէն:

Ըստ Գ. Յովսեփեանի՝ այս լիշատակարանը «1283 (՞) թուականէն» է (տե՛ս միշ-ք, էջ 502):

3. *318բ (ԺԴ. դ., անարուեստ բոլորգիր) Յիշեցէք զԵաճառզէսն՝ գՎասիլ երիցու որդին, եւ զէլանն եւ զաղգատուէն իմ զամենիսեան, եւ Աստուած գձեզ յիշէ:*

4. *318բ (ԺԴ. դ., անարուեստ բոլորգիր) Յիշեցէք զՍաւգիս՝ զՏիմաւթին որդին, զԱբրայտիկնայ որդին: Հանապազ յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր, եւ Աստուած զձեզ յիշէ:*

5. *1բ (ԺԸ. դ., անարուեստ նոտրգիր) Երեւի լինել գործք կամ Գրիգորի Տաթեւացւոյ, որ ըստ այլ գործոց ունի եւ Քաղաւածոյ Աւետարանին Ղուկայ, կամ Մատթէոս վարդապետի, որ ունի վեցօրէից գիրք: Մեկնութիւն գործոց, գրեալ ի Գրիգոր Տաթեւացի, նոյնպէս եւ Մեկնութիւն Ղուկայ:*

Սրան հետեւում է Գաւեգին Յովսեփեանի նշումը. «Սխալ է, որովհետեւ, ըստ յիշատակարանի, գրուած է 1184 թ. փրկչական, Բշնիում: Գաւեգին վարդապետ»:

ԿՆՔԱԳՐՈՆՔ *1ա. սեւով շրջանակ, մէջը թագաւորական զինանշան, եզրերին "Печ. Ахалцыхской градской полиціи"[1]:*

ԳՐՔԱՔՈՐՔ *1ա՝ «ամէն», 1բ՝ «Ով եղբարք, աղաչ զձ», «պարտ», 25բ՝ «բգդեցեքբժիլիսկհհձձ դղճճմմյննշշոոո չչչչպպպչչչչչ ոոոոսսսվվվտտտրրրցցցւււփփփքքքքքքեւ ...օֆֆֆֆֆ, Աստուծոյ» (նոյնը 4ական անգամ կրկնուած): 26ա՝ խզբզդց, որի ներքոյմ «ածձ»:*

ՆԿԱՐԱԶԱՐՔ *244ա, 245ա, 247ա, 265բ՝ թռչուն:*

ՆՇՈՒՄ *Կազմի մէջքին փակցուած թերթիկին՝ «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին, (1)», իսկ՝ «Հ[ին] 177/2609, Հ[ին] 181/13., ՈՒԳ.-1184. Մ[եսրոպ] եպ[իսկոպոս]»:*

2610


ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ

(խմբ. Առիստակէս վրդ.)

ԳԱՄԱՂԻԷԼԻ վաճ (ԽԻՋԱՆԻ մօտ) ՊՀԲ — 1363

Գրիչ՝ Յովհաննէս կբ., Պետրոս կր.: ԿԱԶՄՈՂ եւ ԹՈՒՂԹ ԿՈՂՈՂ՝ Ստեփաննոս: ՍՏԱՑՈՂ՝ Յովհաննէս վրդ.:

ԹԵՐԹ՝ 259: ՊՐԱԿ՝ 2+Ա-ԻԲ×12 (Ա՝ 11, Ը՝ 16, ԺԲ՝ 10, ԻԲ՝ 7): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 24,5×17,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ եռվսիս (18,5×12,5): Գիր՝ բոլորգիր (եմուչ՝ 17ա): ՏՈՂ՝ 25-29 (խատն): ԿԱԶՄ՝ դրոյիւազաղ բաց շագանակագոյն կաշի, դռնակով, միջակը տափասակ, աստառը դեռատգաղ եւ վանդակագործ կտաւ յուսացնակողերը՝ կարմիր:




Նմոյշ 17ա

ՄԵՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ – Ձ ա կ ա տ ա գ ա ր դ՝ Յա (ԺԶ դ.): Լ ո ւ ս ա ճ գ ա գ ա ր դ՝ յուլկապտիկ, բուսական: Ջ ա ր դ ա գ ի ր՝ ճաճգուցագիր, թռչնագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կանաչ: դեղին, մուգ դառնագոյն, սեւ:

ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ – Մարգարէութիւն Եսայեայ, ԻԸ. 7-15, ԻԸ. 21 - ԻԹ. 7, ԻԹ. 12-17: ԺԱ. դ.: Ա.Բ+ԳԳ: Աստուցուած երկուական կից թերթերի ծալումով: Մազապուրծ, 23,2×17, սիսեռիս (16,5×10,5), ուղղագիծ եռվաքագիր (եմուչ՝ Ա.բ), առող 17: Կառոյալ՝ Գա, Գբ, Աա, Աբ, Բա, Բբ, Գա, Գբ. «[Դանդալոեցիքն յաբեներգուութենէ գիրոյն... Ի բոլս գլխաւն Քերմեդ. եւ Քերմիոյ յանծաւո համահեսցի»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմը մաշուած, եռեխական զանեռն ու կապիչներն ընկած, պաստառիկ-պահպանակները խուճացած, կեղտոտուած, կծկուած, վրան ցեցի անցքեր, թ. 1-6 ճիմիից մասամբ պոկուած, թ. 79 առաջին լուսացնի վերին եզրը պոկուած, թ. 1-6, 9-14, 250-3, 255-9 ցեցի անցքեր, հիմնեռի մօտ կեղտոտուած, թերթերին սպրտոտուածութեան զանազան հետքեր:



Նմոյշ Աբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1բ-2բ, 240աբ* Համաբաբան Աւետարանագ. կանոնիճ Դ-ծ., Ա.

Բ. *3ա-10ա* Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանի [=Ներսիսի Շնորհալւոյ Մեկնութիւն խորանաց Աւետարանին] — *Մատեանք աստուածայինք եւ հոգեբուս վարդապետութիւնք... ՚ր է աւրհնեալ ընդ Հաւր եւ ընդ Որդոյ ՚ւերեք անձինս եւ մի էութեան եւ աստուածութեան, գովեալ գոհաբանեալ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս:*

Տե՛ս Վիգէն Ղազարեան, Մեկնութիւնք խորանաց, Էջմիածին, 2004, էջ 96-98:

Գ. *10ա-2բ* Յեկեղեցական պատմութենէ. — *Առաքեալք էին ԻԸ, եւ այլ աշակերտք... եւ ապա իւր իսկ Յիսուսի երեւեալ նոցա, որում փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն:*

Դ. 12բ–258բ Ծոդդվումն մեկնութեան սրբոյ Աւետարանին ըստ Մաթէոսի բանից իմաստուն վարդա-

պետաց եկեղեցոյ՝ կարգեալ եւ յատիճեալ դիւրահաս ընթերցողաց, առաջին՝ Սերսէսի Հայոց կաթուղիկոսի ի, խնդրոյ նորին եղբաւր Գրիգորիսի՝ վերադիտողի Հայոց

Տե՛ս նեւ. 1253, 15ա-353ա. *Լծ՝ալական/12բ-7ա: ա/17ա-99ա: բ/99ա-165բ: գ/165բ-214ա: դ/214ա-53բ:*

Տե՛ս նաեւ Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, արարեալ ի տրոյն Սերսէսէ Շնորհալւոյ..., կ. Պոլիս, 1825: Տպագրի համեմատ ձեռագրում ամբողջ բնագիրը (ըստ այդմ եւ գլուխները) շատ համառօտ են, բնթերցներն ու սկզբնատողերը երբեմն տարբեր են:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. *259ա (գրչի) Փառք սուրբ երրորդութեանն՝ երեքանձնեալ եւ մի բնութեան աստուածութեանն, յամենայն գոյեղինաց, որ արժանաւորեաց զանարժանս՝ հաւանեալ յաւարտումն տեառնայիսս Մեկնութեան սուրբ Աւետարանիս Մարթէոսի՝ ձեռամբ անարհեստ եւ փգուն գրչի՝ պիտակաւոն Յովհաննէս կրօնաւորի, ի ստացումն եւ ի վայելս գերապանծ եւ մեծ րարուեալ պատկին Յովհաննիսի, յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնաւղաց եւ վարժապետաց, եղբարց եւ ամենայն արեան մերձաւորաց եւ առաջնորդ վերին գնացմանն:*

Արդ, որք հանդիպիք ի շահս ուսումնեաց աստուածախօս Մեկնութեանն, գվարդապետն Յովհաննէս եւ զիւրան ամենայն եւ զանւարմար տառապիտ (= տառատիպ) սորին եւ զիմն ամենայն յիշեսջիք ի մաքրափալ եւ յարժանաւոր յաղաւթս ձեր, զի եւ դուք յիշեսջիք առ բուն բարին Քրիստոս, որում փառք յաւիտեանս. ամէն: Նա եւ զՊետրոս սրբասնեալ կրօնաւոր յիշման արժանի առնէք, որ յառաջոյ եւ յետոյ գրեաց եւ աւգանական եղեւ մեզ վասն անկարութեանն, զի յոյժ վշտացայ ի բազում ձանձրութենէ: |259բ| Այլ եւ զՍտեփաննոս՝ կազմող սորայ, որ եւ զթուղթս այլ կոկեաց, եւ զմիաբան եղբարքս մեր զՍէֆ եւ Կիրակոս եւ զԱնդրեասիկն (վերջին երկու անունը՝ յետագայ յաւելում) եւ զԹորոս եւ զԴաւիթ, որք աւգնական եղեն մեզ ձեռնտուութեամբ եւ ամենայն գործովք, եւ զհոգեւոր տնտես մեր, որ ապասաւորեաց մեզ լրջմտութեամբ, զամենայն գգրեալքս ի սմայ յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ մեղայ թողութիւն խնդրեցէ՛ք, եւ Աստուած զձերն եւ զմերն առ հասարակ թողցէ:

Արդ, գրեցաւ սայ ի նուրբ եւ ի նեղ ժամանակի, յորում գերին եւ աւար լինին ամենայն ազգք քրիստոնէից՝ վասն ծուլացեալ մեղաց իմոց եւ ի տառապանս եւ ի տարակուսանս կապեալ ամենեքեան: Գրեցաւ սա ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոյս Գամաղիէլի, որ կայ առընթեր թիզաձ քաղաքիս, ի խնդրոյ սուրբ եւ առաքինաբան վարապետի Յովհաննիսի՝ յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց եւ ամենայն արեան մերձաւորաց, եւ փոխելոցն առ Քրիստոս. ամէն: Դարձեալ կրկին յերես անկեալ աղաչեմ խոշորութեանն եւ սխալանացն անմեղադիր լինել, զի յոյժ վշտալից էր տեղս ի մժեխից եւ ի ճանճից եւ յայոց, որ սոցին նման է: Թվականին ՊՒԺ.երորդի (1363):

Գրչափոխութեամբ յաւելեալ ունի՝

259բ Ի Յոբայ — Արդ, քնար եմ ես նոցա, եւ գիս ունին բամբասանս: Գարշեցան յինէն մեկնեալք ի հեռաստանէ եւ յերեսաց իմոց գիտուք ոչ խնայէին: Վասն իմ ծախեցին գգուշս իւրեանց, քաղցրացաւ նոցա հաց ընդ լկտիս: Ձանդ տհաս, որ ոչ իւրեանց էր, հնձեցին, տկարք գայդիս ամբարշտաց անհաց եւ անվարձ գործեցին, զմերկս [բա]զմսս ննջեցուցին առանց հանդերձից, զսգեստս անձանց նոցա գերծին (Գիրք Յոբայ, է. 9-10, ԻԴ. 5-7):

258բ Ձմեղուցեալ գրիչս եւ գիմսն ամենայն յիշել ի Տէր, աղաչեմ:

259ա Վասն սիրոյն Քրիստոսի՝ գրչի սորայ մեղապարտի Յովհաննիսի սուտ կրօնաւորի եւ անպիտան յամենայնի լի սրտիւ ասացէ՛ք Աստուած ողորմի:

2ա Ձբազմակէրս յիշ[եյ]՝, աղաչեմ:

89բ Ով սուրբ ընթերցող, բարէմի՛տ եւ խոստո՛ւմն, յիշեա՛ ի բարին գգծողս եւ մի՛ մեղադրեր խոշորութեան գրոյս եւ սղալանացս, աղաչեմ:

132ա եւ գիս յիշէ՛:

162բ Ձանպիտանս յիշեա՛:

202ա եւ գիս յիշեա՛յ գմեղուցեալս:

221բ Տ՛ր իմ Յիսուս, յայնմ ժամուն ողորմ[եա՛] ինձ:

2. *258բ (ստացողի) Ի ժամանակս այլայլական,*
Աշխարհս ամեն թափառեցան,
Յերկիրէ յերկիր տարագրեցան
Վասն մեղացն, որ բարդեցան:
Յովհաննէս մականի, տգէտ ու անքան
Ի յրտամկաց պատեալ իշխան
Վասն փառաց յոյժ մոլուեցան
Վարդ անւան իմ/// անպիտան:
Հոգին անեղ անհասական
Ինձ ասդ արար, ձէ չես պիտան
Ես խոնարհացն եմ բնակարան
Անմեղ հոգւոյն, որ ինձ բաղձան:
Դու միշտ ցանգաս փառաց մարդկան
Գերիս մոռք դու ելնես անբան
Կարծես զքեզ յոքունց պիտան
Փչաբեր լինիս ծաղկի փոխան:
Յիշեա՛ց զգումին արարչական,
|259ա| Զի է արւեստ իւրն բնական,
Եցոյց ինձ զհացս անմահութեան,
Զի բաբունեացն է սայ սեղան:
Ես լի սիրով յայս փուճացա,
Ի մեկնչաց բանս յարեցայ,
Կենաց կտակ զսայ ինձ ստացա,
Զի արեգական ոգոյ է սայ:

Արդ, ազաչեմք գթիպողք սորա
Յիշման առնէք գմեզ յարակա,
Զի տապ բոցոյն յինէն դառնա,
Ջոր իմ կամաւս ես ինձ ստացա:
Անչափ 'ւ անբաւ եղուկ եւ վայ,
Երբ քանքարաց Տէրն յայտնի գա,
Պահանջէ յինէն զգրեալս ի սմա,
Ջոր ի գործոցն յոյժ հեղգացայ:
Անձն անպիտան փութիով ջանա,
Մինչ դեռ այսօրդ առաջի կա,
Զի արա/// եղի է սա
Եւ այլ բարեացն ով կամենա:
Երկորդութեանն փա՛ռք յարակա,
Որ ըստանալ ետ գմեզ գսա,
Զի որ սիրով ընծեռնու գսա
Եւ ի գործոյն ոչ հեղգանա,
Ամմահութիւն տիրէ նմայ. ամէն:

3. *89բ (կազմողի)* Հնդ սմին եւ զկազմողս յիշեցէ՛ք ի բուն բարին Քրիստոս, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. *Պտուկ-պհպնկ Բբ (1594 թ., անարուեստ նոտրգիր)* Թվին ՌԽԳ. (1594), յունիս ԺԶ. (16) սկիզբն արարի Մաթէոսեան Աւետարանին ի Համթ՝ ի Սուրբ Սարգսի եկեղեցին: Թվին ՌԽԳ. (1594), մարտի Գ., Աւագ պահոցն Իպրահիմ փաշային փիլա քեխեան մտաւ ի Համթ. գարհուրեցաւ բոլոր քաղաքն յահէ նորա: Մայիս Բ. եկաւ ի Համթա, մայգուվ յունիսի ԻԴ. Մահմատ փաշան եկաւ ի Համթ: Տոյժ, այսինքն պատիժ: Տեսի զգործս քո, զի անուն կենդանոյ ունիս, եւ մեռեալ ես, զի միշտ ցանգս մարդ անյայտիցն գիտակ լինել:

2. *Պտուկ-պհպնկ Գբ (1599 թ., անարուեստ նոտրգիր)* Ազարիայ կաթողիկոսն յեսայա մարգարէի տօնին Ե.շաբթին եկաւ ի Համթա, յուլիսի ԺԹ. գնաց ի Ջուղա: Կառկառեցի Պետրոս վարդապետն օգոստոսի Ա., օրն Դ.շաբթի ՌԽՀ. (1599) թվին եկաւ ի Համթա, գնաց յեզկնան վանն Տրուսաղեմայ նիւթրակութեան:

3. *107բ (ԺԶ. դ., անարուեստ բոլորգիր)* Փրկեա՛յ, Քրիստո՛ս, զյուսացեալս ի քեզ:

4. *Պտուկ-պհպնկ Բա (ԺՀ. դ., անարուեստ նոտրգիր)* Աբդուլիճ գնած Մատթէոսի մեկնիչն է:

ԿՆՔԱԳՐՈՑՆ՝ *Պտուկ-պհպնկ Բա սեւով շրջանակ, մէջը թագապսակ զինանշան, եզրերին՝ "Печ. Ахалцыхской градской полиции"*:

ԳՐՉԱՓՈՐՁ՝ *Պտուկ-պհպնկ Աա (նոտրգիր)* «ապրաա, Հանգամանս, այսինքն՝ սահման կամ չափ կամ ընտրեալ, հանգամանս ցսահման կչվ, ափիընա»: «Քանզի ան մարդ է/// դանձին իւրոյ գիտաս/// եւ կարծելի առնել վիսորհուրդ, որպէս ցոփ ոք, որ պատմէ գարժանաւորութիւն եւ գպատիւ անձին իւրոյ: Քանզի դժուարահաւատ է քնութիւն ի կարի վիշտս գոլով ագատութիւն, հագիւ թէ ակն ունիցի: Առաւել յանձին ունել, քան խնգրականացն: Զի այս բնաւորեալ է ի մարդ բարոյն ընդ առաջ գընալ խելով, Աստուծոյ եւ ի պատուհասեալն հրաժարելս կարծէիր, թե յինէն ի բաց կացցէ աւելի ինձ, քան իցէ: Զի լաւ է մի ոք առնէ գկամս, գի այն գբիւր անօրէն: Զի լաւ է վէրք բարեկամի, քան գկամակոր համբոյր թշնամոյն»: «Իսկ դու մի մեռացես ի կարծեցեալ քո իշխանութիւնդ»: Պտուկ-պհպնկ Բբ (նոտրգիր՝ իբրեւ շարունակութիւն վերոյիշեալ յետագայի չիշատակարանի) Զինչ է վհուկ: Դեւ իմն չար, որ յորովայնէ կանանց խօսի եւ նոր իրօքն ջանայ հաւատալի առնել գմոլութիւն, գի ոչ քերաեովն, այլ յորովայնէն խօսի: Զագացեալս, այսինքն Ճագուց պէս ճռվռեալս: Թուի, թէ եւ այս գմեռելահարեցուկս նշանակէ, գի նոր բարբառովն զարմացուսցեն դեւք իբրեւ գհաւս, զոր Հ.ունքն գրայխօս ասացին: Զինչ խնդրեն վասն կենդանեացն ի մեռելոցն: Մեռեալս գդեւսն կոչէ կամ գմեռեալսն եւ այս բաւական է ցուցանել գստութիւնն, գի թէ կենդանիքն հարցօղքն չգիտեն ինչ, գիա՞րդ մեռեալքն գիտեն: Որ ոչ է առողջ մարմնով, ոչ կարէ ծառայել Աստուծոյ հոգւով»: 1ա (բոլորգիր եւ նոտրգիր) «Թէ ասիցէ ոք, թէ անիծեալն եւ մեռեալն գիարդ կեանս տայ աշխարհի, եւ աւձն անիծեալ գիարդ կեանս տայր սեւօղացն յանապատին: Զվերգիլիոսի, որ ասէ յերից մխութենէն ի մի տեսաւորի եւ յերից աներեւութիցն ոչ պակասի եւ Սիբիլայ կին էր եւ գրեաց ի գիրս իւր ի շարս պատճէնի, վասն խաչին ասէ. Ով երիցս երանեալ փայտ, քանզի աւծեալն տարածէր գբազուկս իւր ի վերայ քո, եւ նախ գուշակեաց գխորհուրդ Սուրբ Երրորդութեանն եւ միւսն գչարչարանսն Քրիստոսի: Քահանայութեան կառք սէր եւ խոնարհութիւն, գի մին բարձրացուցանէ, եւ միւսն զբարձրացեալն ոչ թողու անգանել: Արի՛, Տէ՛ր, ի հանգիստ քո: Ոչ ուրեք է տեղի, որ կարող է ի մեղաց պահել գմարդ, եթէ ոչ անձին ամբիւրով սգուշացցի: Եբրաեցերէն Մովսէսի Ե. գրոց անունն այս է. Բեբսիիբ Արարածք էլեամովիմ Ելք, Նուարէ, Դաբբեր, Վաբարիս՝ Երրորդ օրէնք: Աւետարանիւն է յամենայնէ հրաժարել եւ յԱստուածոյ զինք անորոշելի ունել եւ ոչ յաշխարհէ յաշխարհ շրջելս»: Պտուկ-պհպնկ Գա՝ «խի», Պտուկ-պհպնկ Դբ՝ «ն, իի»:

ՆԿԱՐԱՓՈՐՁ՝ 2բ, Դա՝ «Յուլոն», Դա՝ բուսական նախշ:


ՆՇՈՒԻ՝ կազմի մէջքին փակցուած Թերթիկին՝ «Եփրեմ վարդապետի Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանին», Աա՝ «Մ[եսրոպ] եպ[իսկոպոս], Պհ.-1371», Բա՝ «Հ[ին] 171, 64.», 1ա՝ «Հ[ին] 151/2610», 259բ՝ «1371»:

2611
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

ՂՐԻՄ մաթեմատիկ

ԳՐԻՉ, ՍՏԱՑՈՂ, ԿԱԶՄՈՂ՝ Կարապետ Ռիլ։

ԹԵՐԹ՝ 177 չգրուած՝ 175բ-176ա, 177ա՝ ՊՐԱԿ՝ Ա-ԺԵՒ12 (Ա՝ 11, ԺԵ՝ 10)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 25x17,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիան (1ա-4ա, 133ա՝ 20,5x13), երկսիան (4բ-132բ, 133բ-15բ՝ 20,5x13,5)։ ԳԻՐ՝ յոյգիր (մնուշ՝ 32ա)։ ՏՈՂ՝ 37-41 (1ա-134բ), 33-38 (133ա-175բ)։ ԿԱԶՄ՝ ծաղկաթուղթ, մէջի կարմիր կաշի, միջուկը ստուարաթուղթ։ յուսաճգակողեր՝ կարմիր։ ՊԱՀՊԱՆՈՒԱԾ՝ Ա+Բ՝ սպիտակ չգրուած թուղթ, մոս կազմաստառի։



Նմուշ 32

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ – ձ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 4ա, 133ա։ Հովի՝ 65բ։ ն ո ւ ս ո ւ ա ճ գ ա գ ա ր դ՝ բուսական, թռչնային, խաչ, տաճար, յոլկապարիկ։ Զ ա ր դ ա գ լ ի՛ թռչնագիր, հանգուցագիր։ Գ ո յ ե ո՛ կարմիր։

Տե՛ս Աստղիկ Գեղոփեան, Աճառում հայ մանրանկարիչներ, IX-XVII, Կահիրէ, 2005, էջ 132։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. յուսաճգակողեր գունաթափ, մէջի կարճին կեդտոտուած, մաշուած, վերին մասում գեղի աճգի, թ. 132, 137-8, 140, 143՝ հիմիից մասամբ պոկուած, ձեռագիրը խոնաւութիւն տեսած, թերթերին ցեղի աճցիր, հիմիերի մօտ կեդտոտուած, աղտոտուածութեան զանազան հետեր վերակազմուել է քազմիցս՝ 1363, 1601 թթ. եւ ԺԹ. դ։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1ա-128բ* Սրբոյն Նան<ան>այ վարդապետի Ասորոյ առաբեալ Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին

Տե՛ս ձեռ. 2520, 18ա-255բ։ *Յոբբ՝ ա/1ա-3բ։ առ/4ա-72ա։ բ/72բ-118բ։ գ/118բ-28բ։*

Լուսանցեերում եւ տողամէջերում կան յետագայ գրչութեամբ սրբագրութիւններ։

Տպ. տե՛ս Նահապետ Աւորոյ վարդապետի Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին, Վենետիկ, 1920։

Բ. *129ա-32ա* Յաղագս սեանչելեացն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի – *Ընդ ժամանակս Դիմէտրիանոսի երանելին Յովհաննէս առաքեալ... էր Յովհաննէս ամաց Ծ.ից (50), եւ ես էի ամաց երեսից, եւ երրորդութեանն փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

– *131բ-2ա* Վասն տեսլեան – *Եւ յետ ժամանակաց ինչ առեալ զիս Յովհաննէս...*

Գ. *133ա-68ա* Տեսութիւն ննջեցեան աղաւթիգ աւետարանչին Յովհաննու, ի խնդրոյ Ստեփաննոսի վարդապետի Յակովբացւոյ, ի ներսիսէ աշակերտէ իւր[ոյ] եւ հոգեւոր որդւեկէ...

Տե՛ս ձեռ. 2516, 1ա-80բ։ *Նախդր/133ա-4բ։ ա/135ա-68ա։*

Դ. *168ա-74բ* [Մեկնութիւնի Հայր մեր-ի]

ա. *168ա-71բ* Մեկնութիւն սրբոյ վարդապետաց եկեղեցւոյ, աւետեալ ի Հայր մեր որ յերկինս, զոր ուսոյց Տէր աշակերտացն, եւ նոճաւ ամենայն հաւատացելոյ՝ աղաւթել առ Հայր Տեառն – *[Բան]. Հա՛յր մեր, որ յերկինսդ ես։ [Մեկնութիւն]. Քաղցր եւ ախորժ, շնորհայի անուն... արքայութեան իւրոյ եւ փառս տալոյ նմա յաւիտեանս. ամէն։*

Պ-Ծ. – 1363

բ. *171բ-4բ* Դարձեալ կրկին մեկնութիւն ի Հա՛յր մեր որ յերկինսն, զոր ուսոյց Տէրն աշակերտացն – *[Բան]. Հա՛յր մեր, որ յերկինսդ ես։ [Մեկնութիւն]. Որ Հայր դասանէ, զինքն ի ներքոյ որդեգրութեան... զմեզ ապրեցո՛, Տէր, եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն։*

Ձեռ. 771, 141ա՝ սա վերագրուած է ներսէս Լամբրոնացուն։

ԺԶ. դ.ի գոյութեամբ յատելեալ ունի՝

176բ [Փառատութիւն առ Տէրն] – *Արդ, հաստատեցարուք ի նա, յիշելով գնայ...*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ՁԱՄԱՆԱԿԻ

132բ Փառք Հաւրն էականի, Որդոյն միածնի եւ ածառիչ Սուրբ Հոգւոյն. *այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն, ամէն։* Արդ, գրեցաւ լուսաշուիղ եւ աստուածաշունչ գիրքս Աւետեաց ի Թուականիս հայկազան տումարիս ՊԺԲ. (1363), եւ յամենեան ուզտաւոսի աւարտեցաւ ի փառս Աւետեաց, ի հայրապետութեան տեառն Մեսրովբայ եւ ի թագաւորութեանն Կոստանդինեան բարեպաշտի, եւ յառաջնորդութեանն մայրաքաղաքիս Ղրիմի տէր Ստեփաննոսի արքեպիսկոպոսի եւ յաթոռակալութիւն տէր Յովհաննիսի կոտւմիտ վարդապետի եւ հոգեւոր իմաստասիրի՝ հերձուածողաց հալածողի եւ ցոփագնացից ահ արկանողի, զոր այժմ փայլէ ի մէջ եկեղեցւոյ իբրեւ գսիւն լուսոյ եւ իբրեւ զպարիսպ բարձրապատուար շուրջանակի։ Եւ մեք խնդրեմք աղաչանաւք ի Տեառնէ, զի լծոյ երկայն աւուրս շնորհեսցէ գասս աւրինակ բարեաց մանկանց նոր Սիոնի։

Բայց գրեցաւ առ ոսս Սուրբ Ստեփաննոսի՝ *արեամբ նահատակեալ ծառային Քրիստոսի եւ նախավկայի եւ այլ եւս հաւաքեալ աստ սրբոց. Ձեռամբ անպիտան եւ անարհեստ գրչի Կարապետի՝ միայն անուամբ կոչեցեալ քահանայ եւ գործովք հեռի։ Որում փափաղող ելեալ եմ՝ անբարիս, այսմ հոգիանորոգ եւ լուսաւոր երգարանի սուրբ գրոցս, յամենայն սրտէ եւ ի կամաց աջողութեամբ Տեառն գրեցի զսուրբ Աւետարանիս Յովհաննու մեկնութիւնս, մեկնեալ Նանա<ան>այ Ասորոյ ուղղադատաւն վարդապետի, բազում տառապանաւք յաղագս աշխարհիս զրպտանց, եւ կապկեցի զսա ի լուսաւորութիւն հոգւոց եւ մարմնոց հաւատով ընծայեցուցոց եւ յիշատակ եւ բարեխաւս ինձ եւ ծնողաց իմոց, եւ գասակաց եւ ամենայն ազգականաց իմոց եւ աւտա-

բաց: Արդ, ամենեքեան, որք ընթեռնուք կամ աւրինակէք, գոհութիւն եւ աւրհնութիւն տո՛ւք մարգասիրին Աստուծոյ եւ ընթեռնուն ձեր յիշեսջիք զիս աղաւթիւք ձերովք ի Տէր, զի բազում վիշտս կրեցի ի գրել սորին՝ յաներեւութի թշնամւոյն եւ յերեւելեացն: Այլ Տէրն ողորմած փութով զերան արար եւ գնոսա զամենեսեան պարտեալ ամաչեցոյց: Եւ դարձեալ գնոսա ետղեալ եմք յահեղ ատեանն եւ յանխաբ դատաւորն ամենայնի: Եւ ես՝ եղկելիս եւ բազմամեղս յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ, յիշեսջիք ի Տէր զԿարապետ գրիչս եւ զկենակիցն իմ զԹօհար տիկինն եւ զաստուածապարգեւ զաւակն մեր՝ զՀիլալն եւ զԱստուածատուրն՝ զհանգուցեալսն առ Քրիստոս, եւ զոր դարձեալ պարգեւաց մեզ Տէր զաւակք մխիթարութեան նոցին անուամբ՝ զՀիլալն եւ զԱւարդենին, եւ զծնողսն իմ զԱստուածատուրն եւ զԱղութխաթունն, եւ զմայրքոյրն իմ զԱյխաթունն եւ զեղբարսն նոցա՝ զՍերթերն եւ զՄովսէսն, եւ զԱւգերան եւ զՔուսրաթն եւ զԵլխաթունն եւ զհաչատուրն եւ զՇուշանն եւ զԱստուածատուրն եւ զեղբարսն եւ զքոյրսն իմ յիշեսջիք աղաւթիւք ձերովք, եւ դուք յիշեալ լիցիք առ Տէր. ամէն, ամէն:

22ա Ջողրմելի հողս զԿարապետ գրիչս աղաչեմ յիշել բարի յիշմամբ առ բարերարն Աստուած եւ թողութիւն հայցել ինձ եւ իմոցն (Նմա՝ 48ա, 50բ, 118բ):

28ա Որդի՛ Աստուծոյ, Քրիստո՛ս Աստուած, փրկեա՛ զմեզ ի փորձութենէ:

31բ Որ որ յերկուս բաժանեն, նզովեսցէ զնոսա Քրիստոս, եւ զմի բնութիւն դաւանօղքն աւրհնեսցէ. ամէն:

34բ Մեղայ Տեառն Աստուծոյդ մերոյ:

77բ Եւ զմեզ կոչեա՛ զողորմութեամբն քո, Տէ՛ր, ի գերեզմանացն՝ որպէս զՂազար, ի կեանդ յաւիտենից:

78ա Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ Յիսուս Քրիստոս, քո կամաւոր չարչարանաւքդ ազատեա՛ զհոգիս մեր ի մեղաց հրոյն եւ տանջանաց:

80ա Տէ՛ր իմ եւ Աստուած Յիսուս Քրիստոս, արժանի զմեզ արա՛ տեսանել զքեզ յահագին աւուրն եւ մասնաւորեա՛ վիճակի ժառանգութեան սրբոցն ի լոյս, եւ աւրհնեալ ես յաւիտեանս. ամէն:

82ա Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ Յիսուս Քրիստոս, եւ զմեզ ժողովեա՛ ընդ արդարոցն ի շտեմարանս արքայութեան քո. եւ քեզ փառք յաւիտեանս:

89ա Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ Յիսուս Քրիստոս, քո անճառելի խոնարհութեամբդ կանկնեա՛ գպղտեալքս մեզաւք եւ ողորմեա՛ ինձ՝ Կարապետի գրչի, եւ իմոցն. ամէն:

126ա Փառք անհասանելոյդ Աստուծոյ. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. *128բ (1602 թ., անաբուեստ նոտրգիր) Եւ զսքրագրողս գՍրապիոնս Ուռհայեցի, յիշեա՛ ի Տէր, եւ զաշխատողս ընդ իս՝ զհոգեւոր որդեակս իմ գՈւռհայեցի Յովհաննէս աշակերտն իմ: Էր թիւն ՌՃՄ. (1602), յապրիլ եւ ի մայիս ամսոյն:*

2. *175ա (1603 թ., անաբուեստ բոլորգիր) Ես՝ Սրապիոն վարդապետս Ուռհայեցի, որ ստացա զայս Յոհաննու Մեկնիչս ի հալալ արդեանց իմոց եւ ետու նուէր ես ընծայ ի գուռն Բարձրաւհայեաց Ուռհայու Սուրբ Աստուածածնին, զի մնասցէ անջնջելի յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնաւղաց իմոց՝ հաւրն իմոյ Խօճա Դանիէլին եւ մօրն իմոյ մղտեսի Աթլազին, եւ եղբարցն իմ Խաւտավերտուն եւ մղտեսի Յակոբին, Քասպարին, Պաղտասարին, եւ քվերցն իմ մղտեսի Մարիամին եւ Վարթխաթունին եւ ամենայն արեան մերձաւորացն իմո: Եւ ով որ յանդգնի եւ հանէ զսա ի գրանէ Սուրբ Աստուածածնիս՝ յիմոց եւ թէ յաւտարաց, ծախելով եւ կամ այլ ինչ պատճա[ռա]ւ, դատապարտեալ լիցի յԱստուծոյ եւ յամենայն սրբոց նորա՝ աստ եւ ի հանգերձեալ աշնեղ աաենին Քրիստոսի: Այլ լաւ պահողն եւ խնամ տանողն աւրհնի յԱստուծոյ եւ յամենայն սրբոց նորա եւ ի մէնջ. ամէն:*

Գրեցաւ ձեռագիրս ի թվին հայոց ՌՃԲ. (1603) յունվար ամսոյ Գ., Ք.շաբթի, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերո. ամէն:

ԿՆՔՎՔԴՐՈՇՄ՝ *174բ (անընթեռնելի): 175ա՝ սեւով ոճաւորուած ուխանկիւն շրջանակ՝ ներսում. «ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱՒԱՅ ՅԻՍՈՒԻՄ ՔՐԻՍՏՈՍԻ»: 4ա՝ սեւով ութանկիւն շրջանակ՝ ներսում. «ԳԻՐՔԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՆԻ»:*


ԳՐՉԱՔՓՈՐՉ՝ *177բ (նոտրգիր)՝ «Ստորոգութիւնք ներքեւաստութիւնք անուանին կամ քննութիւնք, այսինքն՝ գներքինսն քննելոյ: Ստորաստութիւն եւ բացաստութիւն: Ստորաստութիւն ճշմարտութիւն է, եւ բացաստութիւն՝ ստուն»: «Եղնիկ մի չրին խմելն գեղեցկացն գշուքն է տեսեր: Նա յայնքաքան գարկեր, թէ սրլեհ եմ հետ վերուցեր աւրինակ մի յառիւծո փախէր, նա եղջիւրքն ի ծառն է գամե[ր], զոր ինքն ապաւէն դրեր, նա իւր մահն ի յանկից եղեր»: «Թճիկ, որպէս, դէ, անակիալ ի զատ խոստ, այսաւր ա զանճառե, որպէս մուշտաթէ, սաբգգեգէրթ, որպէս, Մարտիրոս, կատա»:*

ՆՇՈՒՄ՝ *Աա՝ [ՀՄ 185/2611, Պ.թ.-1363, Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*

2612

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈԲԱՅ

Թերթ՝ 105. չգրուած՝ 105բ: Պրակ՝ Ա-Թ×12 (Թ՝ 9): Նիհ՝ թուղթ, լուսագծերով: Մեկնութիւնն՝ 24,5×18,6: Գրութիւնն՝ միասիւն (17,5×11,5): Գիր՝ նոտրգիր (նմոյշ՝ 7ա): Տող՝ 31: Կնքոյր դէզմագարդ սեւ կաշի, միջուկը տախտակ. լուսանցակողերը՝ դեղին: Պաշտպանող՝ Ա + բ, դեղնատիպ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով եռատեղիով:



Նմոյշ 7ա

Վիճակ՝ բաւարար. կազմի կաշին վնասուած, մաշուած, Ա փեղկին անցքեր, թ. 1-12՝ կարերը հիւմից թուլացած, մասամբ անջատուած, թ. 85-105, պիսպ. բ՝ հիւմից պրակով անջատուած, թ. 44-105՝ լուսանցներին խոնաւութեան հետքեր, թ. 105, պիսպ. բ՝ ցեցի անցքեր, թերթերի եզրերը դեղնած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-105ա Մեկնութիւն Յոբայ՝ արարեալ Վանական վարդապետի

Ժէ. դար

Տե՛ս նեռ. 1166, 1ա-99ա. *Յառաջաբանութիւն/1աբ: 1/2ա-16բ: 2/17ա-20ա: 3/20ա-4բ: 4/24բ-6ա: 5/26ա-31բ: 6/31բ-3ա: 7/33ա-8բ: 8/38բ-41ա: 9/41ա-4բ: 10/44բ-6ա: 11/46ա-8բ: 12/48բ-50բ: 13/50բ-2բ: 14/52բ-4բ: 15/54բ-8ա: 16/58ա-9ա: 17/59ա-60բ: 18/60բ-6ա: 19/66ա-73ա: 20/73ա-4ա: 21/74ա-7բ: 22/77բ-9բ: 23/79բ-80բ: 24/80բ-4բ: 25/84բ-92բ: 26/92բ-100բ: 27/100բ-5ա:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ, 105ա (1831 թ., չդագիր) Մետրապոլիտ Բաղդասար Հասան-Ջալալեանց *ստացաւ սուրբ տաւս հոգեշունչ ի 1831 ամին, ի 15 օգոստոսի, ի սուրբ աթոռս Գանձասարու:*

ԳՐՁԱՓՈՐՁ *պիսպ. Ամէ՛ն «ամէնայն, ամէնայն», դրած չնչաձև տառեր, 105բ՝ խորհրդ:*

ՆՇՈՒՄ՝ *կազմի մէջբին փակցուած թերթիկին՝ «վ. Վանական վարդապետի «Մեկնութիւն Յոբայ (2)», պիսպ. Ամէ՛ն «Mifs bibiothek. F. a. 47», «2դր 194/2612, Ժէ., Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*


2613

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

ՇԱՄԱԽԻ

ԳՒՒՁ՝ Բառեղ ինչ եւ Ղազար սրկ. Քարաճառագի (եղբարք՝ 3ա-298բ), Թումայ ինչ. (299ա-313ա), Բաղդասար դպիր (313ա-684բ): ՍՏՍՅՈՂ՝ Վահախոս վրդ. Շամախեցի:

Թերթ՝ 687. չգրուած՝ 1ա-2բ, 587բ, 605բ-6ա, 685ա-7բ. Պրակ՝ Ա-Լ×12 (ԺԲ՝ ԺԳ՝ 11, ԻԹ՝ 10, ԼՐ՝ 13)+12+ԼԳ-ԼԹ×12 (ԼԱ՝ 10)+6+Ը-ՂԲ×12 (ՂՁ՝ 11)+3: Նիհ՝ թուղթ: Մեկնութիւնն՝ 24,7×19,5: Գրութիւնն՝ երկսիւն (19×14,5): Գիր՝ բոլորգիր (նմոյշ՝ 23ա): Տող՝ 33-36: Կնքոյր դէզմագարդ շագանակագոյն կաշի, դռնեակով եւ երեք գամով, միջուկը տախտակ. աստառը ծաղկազարդ կտաւ, լուսանցակողերը՝ կաւախր: Պաշտպանող՝ Ա (սկ), դեղնատիպ թուղթ, չգրուած:



Նմոյշ 23ա

ՄԱՆՐԱՆՁԱԳՐՈՒԹԻՒՆ – Կ ի ս ա խ ո ւ ա ծ՝ 3ա: ճ ա կ ա տ ա գ ր ո ւ թ՝ 9ա, 112ա, 200ա, 271ա, 345ա, 416ա, 485ա, 606բ: Լ ա տ ա ճ գ ա գ ա ր դ՝ բուսական, թոչնային, խաչ: Ջ ա ր դ ագ ի ր՝ հանգուցագիր, թոչնագիր: Գ ո յ ն ե ր՝ կաւիր, կապոյտ, կանաչ, ձաուիչ:

Վիճակ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, մէջին վերին եւ ստորին մասի կաշիները վնասուած, երեք կապիչներն բնիկ, դռնակը ծալուած, վնասուած, մէջը հիւմից մասամբ անջատուած, ոտի հետեւանիով կարերը թուլացած, պիսպ. Ա՝ հիւմից պոկուած, թ. 311՝ պրոյծի հետք. թ. 316՝ պատռուած, թ. 470-92, 670-87՝ ցեցի անցքեր, թ. 628՝ հիւմից մասամբ պոկուած, ուսլս ին հետեւ, թանաքի թթուայնութիւնը բարձր, հիւմերի մօտ կէտոտուած, թերթերին սպոտոտուածութեան զանազան հետքեր:

Ռ3Լ-Ռ3ՀԱ. – 1681-1682

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

3ա-681ա [Ներսիսի Լամբրոնացւոյ Մեկնութիւն Սաղմոսաց]

Տե՛ս նեռ. 990, 2ա-730ա: *Նախաբանութիւն/3ա-4ա: Թէ վասն էր/4ա-8բ: ա/9ա-112ա: բ/112ա-99բ: գ/200ա-71ա: դ/271ա-344բ: ե/345ա-415բ: զ/416ա-84բ: է/485ա-605ա: ը/606բ-81ա:* Յշտկրճ/*681ա:*

Կից ունի՝

1. *681բ-2բ* Նախադրութիւն յիշատակ ոգողաց ճոգելից սուրբ տաճիս — *Աստուածային մարգասիրութեանն նախախնամութիւնին... |682ա| եղեւ վերափոխումն սրբոյ քահանապետին Աստուծոյ տեառն Ներսէսի Մեծ. (1198)... իսկ առաջին գրութիւն ճառիս ՈՂԳ. (1204)... |682բ| ընդ որում Հօր, միանգամայն եւ Սուրբ Հոգւոյն վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ:*

Յիշատակարանը Ներսէս Լամբրոնացւոյ գեղարդի Ներսէսենին է: Տե՛ս նեռ. 990, 745ա-ճա, տե՛ս նաեւ Ներսէս վ. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956:

2. *682բ-3ա* Յիշատակ տաճիս եւ աստուածախօս մատենիս — *Փառք քեզ անճառական անուն...*

Ալֆաթհրի պարբերագործութեան մասին է:

3. *683ա-բ* Յիշատակարան մատենիս — *Աստուած Բանն իւր անհաս գիտութեամբն... Դարձեալ հաստատեցին զառաքելական սահմանս կանոնաց ուղղափառ*

հաւատոյ ի փառս սուրբ Երրորդութեանն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Ագամ-Եւայի, Քրիստոսի ծննդեան եւ խաչելութեան մասին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԱԻԹԵՒՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. *52բ (Բարսէղ գրչի)* Ջստացող աստուածապատում երգարանիս զվաս վարդապետն եւ գԲարսեղ գրիչս յիշեսջիք առացի Քրիստոսի Աստուծոյ մերոյ (նման՝ 15ա, 25ա, 41ա, 66ա, 77բ, 90բ, 123ա, 138ա, 156ա, 188ա, 210ա, 229ա, 250բ, 310բ):

168ա Ստացողի գրոյս՝ Վրլաս վարդապետին, եւ անարժան Ղազար գրչիս ողորմեսցի Քրիստոս Աստուած եւ վարձս բարեաց պարեւեսցէ, ամէն (նման՝ 180ա):

199բ Ջստացող գրոյս զՎաս վարդապետն եւ զծնօղսն իւր եւ գԲարսեղ գրիչս յիշեսջիք եւ թողութիւն մեզաց խնդրեցէ՛ք ի փրկչէն Յիսուսէ Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն: Այլ եւ աղաչեմ յիշել զբարեսէր եւ զցանկալին իմ զհրաշագեղ եւ զսիրելի եղբայրն իմ զԹումանն, որ բազում աշխատանս կրէր վասն մեր ի գրելն այսմ սուրբ երգարանիս, որ կոչի Մաղմոս Դաւթի: Թվին ՌՃՀ. *(1681)*:

344բ Ով աստուածասէր անձինք, յորժամ հանդիպիք աստուածահաճոյ Մաղմոսաց մեկնողիս, յիշեսջիք յաղօթս ձեր զստացողի գրոցս, զքաջ բաբունապետն:

2. *370ա (Բաղդասար գրչի)* Յիսո՛ւս Քրիստոս, լո՛յսդ հայրական, լուսաւորեա՛ զհոգի զստացողի գրոցս Վլաս ամենիմաստ վարդապետի եւ ծնողացն, եւ ինձ՝ մեղաւոր եւ անարժան Բաղդասար գրչի (նման՝ 393ա, 404ա, 415բ, 431բ, 453բ, 458ա, 469ա, 616բ, 628ա, 636ա):

484բ Յիսո՛ւս Քրիստոս, Որդի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, յորժամ գաս հայրական փառօք՝ ի դատել զերկիր եւ հատուցանես իւրաքանչիւր ըստ գործոց մարդկան ի քում գալստեանն եւ առաս ողորմութեամբդ, ողորմեա՛ զստացողի սուրբ տառիս Վըլասաս վարդապետին եւ ծնողացն սորին եւ պիս՝ անարժան գրչի եւ իմ ծնողացն՝ Եղիայ քահանայի. ամէն:

Արդ, որ հանդիպիք սուրբ լուսագարդիս ընթերցմամբ կամ գաղափարելով, ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղօթս ձեր յիշեցէ՛ք եւ զվերոյգրեալսս ի սմա եւ մեզաց թողութիւն խնդրեցէ՛ք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս եւ անդրաւ յաւիտենից. ամէն: Աղաչեմ զձեզ, ո՛վ հարք եւ եղբարք, անմեղադիր լերո՛ւք սխալանաց գրոցս, զի գօրինակն այսպէս էր:

(«Պաղտասարի»)

Պարգեւ Հոգւոյ սա է բարի,
ով ընթերցեալ եւ իմասցի,
Աստուածահաճոյ մարգարէի,
որոյ Դաւիթ վերաձայնի,

Ղազար աղքատ անուն բարի
նստաւ ի գոգն Աբրահամի,
Տառիս ստացող վարդապետի
եւ ընդ սրբոցս ճարակեսցի,
Անուն Վլասաս վերագոլի
հանդերձ ծնողօք յիշեսցի,
Սա յանգիտաց յոյժ հրաժարի
եւ իմաստնոցն է տենչալի,
Աշակերտեալս եմ վարպետի՝
Բարսեղ անուն քահանայի,
Բաղ նուաստ անպիտանի
պատճառ յիշման գայս գրեցի,
Ի սոսկալի աւուրն մեծի
կամքն Աստուծոյ ձեզ քաղցրասցի:

515բ Ջստացողի լուսազարդ տառիս ողորմեսցի Քրիստոս եւ թողութիւն մեզաց պարգեւեսցէ. ամէն (նման՝ 644ա):

526ա Ողորմեսցի Քրիստոս Աստուած ստացողի գրոյս Վլասաս վարդապետի, եւ պիս՝ մեղաւոր Բաղդասար գրչի. ամէն:

655ա Քարեբա՛ր եւ ողորմած Աստուա՛ծ, ողորմեա՛ ստացողի սորայ եւ փրկեա՛ ի հրոյն յաւիտենից:

667ա Քրիստո՛ս Որդի Աստուծոյ, ճշմարիտ թողութիւն շնորհեա՛ մեզաց եւ յանցանաց ի քում ահաւոր եւ ի փառաւորեալ գալստեանդ ստացողի սորա եւ ծնօղաց իւրոց, մանաւանդ եւ պիս՝ անպիտան մեղապարտ գծողս, յիշեցէ՛ք զհանդերձ ծնօղսւք:

681ա Ընդ նմին եւ մասն ողորմութեան լիցի / հոգւով խաւարեալ մեղսամած գրչի, / նաեւ ծնողացն իմոց եղիցի, եղբարց իմոց հարազատի, / արդ, ես, եղկելի երեսս եղեալ ի գետնի, / աղաչեմ հանդիպողք այս սրբոյ տառի, / յիշել ի ժամ սուրբ պատարագի, / յորժամ արտասուս ձեր հոսեսցի, / յիշողն յիշեալ լիցի ի պարգեւողէն մեզ յամենայնի:

681ա Արդ, հայցեմ ի սուրբ ընթերցողաց, զի ներել անպիտանիս, որ եմք յոյժ մտոք եւ հոգով խաւարեալ ի պանդխտութեան յերկրի:

3. *684ա (Ստացողի)* Յիշատակարան մատենիս. Ընորհօք եւ առատ գթութեամբ, օժանդակութեամբ եւ աստուածութեամբ ինքնաշարժ եւ գերապատճառ էին, նոյնասահմանն եւ սկզբանց սկզբան միակին, Հօր Աստուծոյ՝ միշտ էին եւ անեղական պարագոյն գոյին, եւ իւրում էական բանին համագօրի, եւ նորին նոյնափառ Հոգւոյն իսկականի, որով են եւ կեան եւ շարժին ամենայն էակք նախկինք եւ երկրորդականք, յառաջընդունականք եւ վերջագալսականք, ըստ իւրաքանչիւր կարգի եւ եղեալ սահմանի: Յայնմ աստուածապատկան զօրութենէ ի նուաստիս եւ փանաքիս Վլասիոսի իբրու պիտակ սպասաւորի սէրութեան բանի ողորմութիւն գտեալ՝ որպէս ընդ հուսկ վերջինս ի ծնունդս

մանկանց եկեղեցւոյ, բուն աշխարհաւ Ալանաց, քաղաքաւ Նամախի կոչեցեալ ըստ պարսկական լեզուի, ցանկացօղ եղեալ յաւէտ իմն տարփմամբ սրտի այսմ հշմարտապատում մատենի, այսինքն՝ բացայայտութեան եւ մեկնութեան Մաղմոսաց Դաւթի, որ ի հոգիընկալ արքեպիսկոպոսէն Տարսոնի Կիւրիկեցւոյ ի մեծէն Ներսիսէ պարզաբանէ խորագոյն մտաց տեսութեամբ: Եւ ետու գրել գոսոս գայս երկուց հարագատաց եղբարց՝ Բասիլիոսի քահանայի եւ Ղազար սարկաւագի, որք էին ի կողմանց Գանձակայ, ի գեղջէ Քարաճատ կոչեցեալոյ: Եւ ստացայ զսա ի հոգեւորական զրօսանս անձին իմոյ եւ ի մխիթարութիւն եւ ի սպեղանիս վիրաց լցեալ հոգւոյ իմոյ, որպէս զի սովաւ եւ ի ձեռս սորին սփոփութիւն գտից բազում տրտմութեան իմացակալիս հեծութեան: Բայց ժամեմ եւ աղաչեմ, զի յաղագս խոշորութեան գրոյ տառիս եւ սխալանացն, որ ի սմա, եւ խառնափնդոր լինելոյ ըստ արուեստին ամենազբերի թողուլ զմեզ եւ ներել, քանզի ոչ գտանիւր ուղղագիծ օրինակ ի մերումս աշխարհի, յորմէ ածանցեալ տայաք ըստ մերում կամաց: Տինա եւ ոչ կրթագոյն ոք յարհեստս գրչութեան, յորով յօրինուածով աւարտիւր: Նա եւ խրթնահայաց եւ դժուարթմաց բայիւք եւ բանիւք պաճուճելոյ լուսաւոր մեկնողին ոչ բաւականային անքստգիւտ ի գլուխ հանել, որոյ աշագաւ ոչ բարւոք եգերացաւ: Այլ դուք ըստ յօժարութեան փափկման ստացողիս ապիկար Վասպուրականի շարժիլ պարտիք սիրով, ո՛վ ընթերցողք, եւ բարի մտօք յիշատակել զմեզ առ Քրիստոս եւ թողութիւն մեղաց խնդրել, զի եւ ձեզ յապագային պատահողաց նոյն շնորհեսցէ:

Եւ արդ, եղեւ զրաւ գծագրութեան սորին յամի հարապերորդի վեցհարիւրերորդի եւ ութսնեւորդի երկրորդի (1682) |634բ| ըստ մեզ կենարարին Բանի, եւ ի թուահաշուվ[ութեան Արամեանս տոհմի հազարերորդի հարիւրերորդի եւ եռ տասնեակ եւ միոյ մասնիկի (1682), ի թագաւորութեանն պարսկական ազգի շահ Սուլէյմանի, ընդ որոյ տէրութեամբ եւ երկիրս մեր նուաճի: Իսկ ի հայրապետութեան ընդհանրական մեծի աթոռոյն էջմիածնի տեառն եղէազարու արիաբան հովուապետի եւ ի կաթողիկոսութեան Աղուանից աշխարհիս Սիւնեաց՝ մերում դաստիարակողի եւ ի պատիւ քարոզութեան բանի Տեառն վերածողի: Եւ արդ, ըստ փոփոխման աստէիցս, որ ոք գինի եւիցէ մերոց գգիրսս գայս ժառանգիցէք եւ կամ ընթերցմամբ պարապիցէք եւ կամ գաղափար դնիցէք, հայցեմ եւ մաղթեմ յիշել զիս՝ զՎասիոս գլեւոնեալս ի բարեաց առ Քրիստոս յոյսն ընաւից, զի ողորմութիւն պարգեւեսցի ինձ՝ մեղուցեալոյս իբրու պատճառ եղեալ այսմ տեւչալի մատենիս ստացման, հանդերձ մարմնաւոր ծնողօք եւ համայն ազգատոհմիւք, գոյիր իմ գմուտսասի Առաբելն, որ ի Քրիստոս գոյ այժմ հանգուցեալ, եւ մայրն իմ գեսանիչայ, եղբայր մեր եւ գՕալուստն եւ զՄակարն եւ զմիհայկն եւ գնոցին որդեակսն գՕօղոսն, զՎէրսահաճոսն եւ գԱմիրաղայն եւ գհամօրէն արեանառու ծնունդս նոցին եւ գսերունդս յառաջնոց նոցին, այլ եւ գհանգուցեալ հոգեւոր հայրն մեր գՊետրոս կաթողիկոսն եւ գկիւրակոս վարդապետն, նա եւ ըստ հոգւոյ հարազատ եղբարսն մեր զՄարտիրոս վարդապետն եւ գԱնտոն վարդապետն, որք այժմու կենօքս կեսն եւ կենցաղավարին բոլորապէս պատճառիւք եւ մասամբ պատճառելւոք նախկնէօք հաղորդեցելոյք եւ վերջնեօք կցորդեցելոյք, օրինակին ընձեռողօք եւ գծագրողք, որոց ամենից Տէրն գթասցի պարգեւօք: Եւ եղիցի եւ եղիցի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. *112ա (1750 թ., անարուեստ նոտրգիր) Եւ ես՝ վերչին ստացողս Գասպար վարդապետս, ինձ եւ իմոցն ամենեցուն ի Ռձ|Թ. (1750) թվին, ի հայրապետութեան տեառն Ներսէսի Աղուանից կաթողիկոսին ձեռամբ մերազամած Ստեփան ապէդայի. ամէն:*

2. *684բ (ԺՐ. դ., անարուեստ նոտրգիր) Եւ ես հուզ հետինս Գասպար վարդապետս ըստացայ յիշատակ ինձ եւ իմոցն ամենեցուն:*

Քանաքով ցնչած, նեղուած:

ԿՆՔԱԶԱՐՈՇՈՒ՝ *պահպանակ Աա սեւով շրջանակ, մէջը թագապակ գինանշան, եղերքին "Печ. Ахалцыхской градской полиціи":*

ԳՐՉԱՔՈՐՉ՝ *1ա «էդգ, աքգդ», Աա՝ «գգոյծս ձեռ, գգսձրաաաաս», 344բ՝ «ովվ սուրբ հայրք»:*

ՆՇՈՒՄ՝ *Աա՝ Ա[ԱՄ 205/2613, Ա[ԱՄ 160/11, Ռձ|.-1682, Մ[եսրոպ] եպ[իսկոպո]ս»:*


2614

ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԺԸ., ժթ. դդ.*

ԹԵՐԹ՝ 152. չգուած՝ 1բ, 21բ, 152բ: ՊԱՐԱԿ՝ 4x10 (1, 2, 4՝ 11, 3՝ 12)+6x12 (6՝ 11)+2x14 (8՝ 15)+1x8 (9՝ 10): ՆԻՒԹ՝ թուղթ (թ. 145-52՝ տարբեր, լուսագծերով եւ լուսաղոշմով՝ «VG»): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 24,8x17,8 (թ. 1-144), 23x16,5 (թ. 145-52): ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն՝ 20,5x14,5 (1-144), 17,5x11,3 (145-52): ԳԻՐ՝ նուռզիր (նմուշ՝ 27ա): ՏԱՂ՝ 27-28, 30, 36 (1ա-144բ), 26 (145ա-52բ): ԿԱԶՄ՝ դոշմագաղղ շագանակագոյն կաշի (Բ. վերկը), դռնակով, մէջը՝ կարմիր կաշի, միջուկը տախտակ. աստառը շագանակագոյն (Ա) եւ կապոյտ (Բ) կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ ԱԲ + ԳԴԵ՝ սպիտակ թուղթ, չգուած (պլեպ. Գ.՝ լուսագծերով եւ լուսաղոշմով՝ եւրոպական ոճի կանացի գլխարկ, ժԹ.-Ի դ.):

* Թ. 1-44 ԺԸ. դ. գրել են տարբեր գրիչներ, Կ. Պոլսում, իսկ թ. 145-152՝ 1801 թ., Երուսաղէմում:



Նմոյշ 27ա

Վիճակ՝ բաւարար. բաղկացած է երկու տարբեր ձեռագրերից, կազմի Ա. փեղկր կաղապանան եղած՝ կպչին րնկած. Բ. փեղկի կպչին մասամբ թափուած, Բ. փեղկի եւ մշրի կպչին վնասուած, մշրի րնկած կպչին փոխարինել են կարմիր կպչով, դրնական 2/3 մասը պոկուել-ընկել է ձեռագիր հիմից թուլացած, թ. 1-4, 131, 141-2, 145-52՝ եզրերր վնասուած, թ. 3, 46՝ հիմից մասամբ պոկուած, կան խոնաւութեան եւ ադտոտուածութեան զանազան հետքեր, բամաի թթուպոռթքներ բաշխ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *2ա-21ա* [Յովհաննու ձառ] — *Անպատճառից Որդւոյս քո ծոցածնի... եւ ինձ՝ մեղապարտ սեւաւոր* Յովհաննիսի՝ *յօրինողի ճառիս, ասան բարեաց լիցի յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Բ. *22ա-144բ* [Պատճէնիչ թլթոց]

1. *22ա* Սիրելի եւ ազնիւ ոդեկիր իմոյ տեառնդ Կարապետի ծայրագոյն նուիրակի եւ աստուածաբան վարդապետի հայրական սիրով ողջոյն եւ օրհնութիւն ի Տէր — *Յիրաւի է, թէ յարմատոց յոտսն նլանեն խոնաւութիւնք... եւ ողջ լ՛ր ի պարծանս* Յակոբայ *երբեմն պատրիարգի սրբոյն* Սաղեմայ *տնօրինական քաղաքի, եւ արդ, ի Կոստանդնուպոլիս, որ ի ՌՀՃԼ. (1752), յուլիսի ԻՓ. գրեցի զգիրս իմով ձեռամբս, ի* Սուրբ Աստուածածնի, *ի պատրիարքարանն ամենայն Հայոց, վէքիլ* Սամուէլ *աստուածաբան վարդապետն, ընդ* Աբրահամ *վարդապետ եւ այլոց զքեզ ողջունէ սիրով։*

2. *22բ-3ա* Իմաստութեամբ հաստն... տեառնդ Յօհաննէսի Քրակիոյ *ձայ դիտի եւ աստուածաբաշնորէն ներկուս ուսուցչի ոդոյն ի Քրիստոս — Գիրգ իրրեւ զանուշահոտ վարդ...*

3. *23ա-4ա* Եաճառտար տաճարի... ծայրագոյն *ֆաճանայապետիդ տեառնդ Միքնասայ սրբագնակատար կաթողիկոսի՝ երիցագոյն եղբօր եւ վեհափառ պաշտօնակցի սէտտ սիրով եւ կարօտախեղճ տարփանօք ճամբոյր ի ոդոյն — Եւ ըստ նախկնոյ աստուածապաշտիցն օգեցի... Ոդջ լ՛ր ի պարծանս* Յակոբայ *իրրու երբեմն պատրիարգի* Սաղեմայ... *որ ի օգոստոս մ՛կն զգիրս գրեցի...*

4. *24ար* [Գրառաչ] — *Յորմէ սիրով ողջունիս... Գրեցաւ աթոռակալութեան Համակ հրամանի ՌՄԱ. (1752) յոգոստոս ԺԵ., ի տօնի Վերափոխման սրբուհւոյ Աստուածածնին, ի պատրիարքարանս ամենայն հայոց։ Բաւ է։*

5. *24բ-5ա* Յորմէ սիրով օրհնութեամբ... *ի* Պուրսայ *գիւղաքաղաքի բնակեալ յուսաւորչադաւան օրհնեալ եւ բարեմիտ իշխանազուն պարօն մահտեսի* Աստուածատուր *եւ պարոն մահտեսի* Յակոբ... *Գրեցաւ նամակս օրհնութեան ՌՀԱ. (1752), սեպտեմբերի ԺԸ., ի* Սուրբ Աստուածածնի, *որ ի* Սամպօլ, *ի պատրիարքարանս ամենայն հայոց։*

6. *25ար* [Ա՛ր] Սուրբ Գէորգ եկեղեցւոյ համայն ֆահանայ եւ կղերիկոսոսիճ... *Գրեցաւ աւագերիցութեան նամակս ՌՄՄԱ. (1752), ի պատրիարքարանս ամենայն հայոց, ի* Սուրբ Աստուածածնի։

7. *25բ-6ա* Յորմէ ժամանեալ հասագէ գիս... *պարոն* Նիկողայոսիդ... *Գրեցաւ սիրոյ եւ ողջունի գիրս ՌՄԱ. (1752), սեպտեմբերի ԺԶ. ...*

8. *26ա-7բ* Ազնիւ սիրելեաց իմոց՝ Պետրոս աղայիի, Խաչատուր եւ Յօսէփ աղայից... *Գրեցաւ... ՌՄԳ. (1754) թուին եւ ի ապրիլի Ը., ի* Կոստանդնուպոլիս, *ի* Սուրբ Աստուածածնի, *ի պատրիարքարանս ամենայն հայոց. բաւ է։*

9. *27բ-8բ* [Թուղթ] — *Եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... Գրեցաւ... ՌՀՃԱ. (1752) դեկտեմբերի Դ., ի պատրիարքարանս ամենայն հայոց, ի* Սուրբ Աստուածածնի, *որ ի* Կոստանդնուպոլիս. *բաւ է։*

10. *28բ-30ա* Ծայրագոյն... Միհնասայ վեհափառ հօդ... — *Յորմէ բղխեաց հուրն այն... ի ՌՄԲ. (1753), մարտի է. գգիրս գրեցի...*

11. *30ար* Գեղգօնի... *հովուի* Թռակիոյ... *Ջողղուեագիրդ... ընկալայ... որ ի ՌՄԲ. (1753), ապրիլի Դ. գրեցի...*

12. *30բ-1ա* Ի տէր Յակոբ վարդապետէ... *Սիրոյ մեղադրանօք յանհքս... Գրեցաւ... ՌՄԲ. (1753), ապրիլի Դ. ...*

13. *31ա-2ա* [Ա՛ր] համայն լուսաւորչադաւան ազգդ իմ... — *Զի մինչ կայր ի բանտի, գլուխն առաքելոյ... Գրեցաւ... ՌՄԲ. (1753) եւ մայիսի Ը. ...*

14. *32բ-3ա* [Գիր խաղաղութեան] — *Անուամբ ամենասուրբ երրորդութեանն... Գրեցաւ... ՌՀՃԲ. (1753), յոգոստոս Ե.:*

15. *33ա-4բ* Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Աղէքսանդր կաթողիկոս... — *Յորոց ժամանեալ հասագէ գիր օրհնութեան...*

16. *34բ-5ա եւ ընդ սիրոյ ողջունի եւ օրհնութեան գրոյս ձանի՛ք... Գրեցաւ... ՌՄԲ. (1753), սեպտեմբերի Ի. ...*

17. *35աբ* երեբեռանեան սրբազանի... տեառնդ Աղէքսանդրոսի վեհափառի... — *Տէր իմ սրբազան... ի ՌՄԲ. (1753), նոյեմբերի Դ. զծիրս գրեցի...*

18. *35բ-6ա* Յիսուսածին *սիրով... Որ ի ՌՄԲ. (1753), նոյեմբերի Դ. գրեցի...*

19. *36աբ* [Ա՛ր]... մահտեսի Յօհան աղայ — *Զի ադեացս գալարիչ... Գրեցաւ ՌՄԲ. (1753), նոյեմբեր Բ....*

20. *36բ-7բ Յորմէ ժամանեալ հասագէ գիր դառնութեան... չիք տէր* Գրիգորիդ *եւ չիք տէր* Աստուածատոյդ... *Գրեցաւ... ՌՀՃԲ. (1753) դեկտեմբերի Ժ. ...*

21. *37բ-5ա Ի տէր Յակօբ վարդապետէ... գրեցաւ արգելման գիրս ՌՄՒ. (1753), դեկտեմբեր ԻԲ. ...*

22. *38ար եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... Գրեցաւ ՌՄՒ. (1753), յունվարի ԻԱ. ...*

23. *38բ-9ա եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... Գրեցաւ առաջնորդական նամակս օրհնութեան ՌՃԾԳ. (1754), եւ փետրվարի ԺԵ. ...*

24. *39ար Յորմէ ժամանեալ հասցէ նամակ օրհնութեան...*

25. *39բ-40ա եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... Գրեցաւ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան գիրս ՌՃԾԳ. (1754), մարտ ամսոյ Իբ. ...*

26. *40ա Յորմէ ժամանեալ հասցէ գիր սիրոյ... քաղաքիդ երգնկայու հնգից որքոց եկեղեցեաց քահանայից... Գրեցաւ... ՌՄԺ. (1761), ի յունվար ամսոյ Ժե. ...*

27. *40ար եւ ընդ սիրոյ ողջունի... Մելքօնին... Գրեցաւ... ՌՃԾԳ. (1754), ապրիլի Ժ. ...*

28. *40բ-1ա եւ ընդ աստուածապարգեւի... Գրեցաւ նամակս օրհնութեան ՌՄԳ. (1754), մայիսի ԻԳ. ...*

29. *41ար Յորմէ սիրով, ողջունիս... լուսահոգի մահտեսի Ղազարի որդի խօճայ մահտեսի Յարութիւն եւ խոճայ մահտեսի Մարտիրոս... Գրեցաւ ՌՄԳ. (1754), յուլիս Գ. ...*

30. *41բ-3բ [Թուղթ] – Զկնի օծմանդ շնորհիս...*

31. *43բ-4բ եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... Գրեցաւ ՌՄԳ. (1754), յօգոստոսի ԺԳ. ...*

32. *44բ-5ա եւ ընդ սիրոյ ողջունի... Գրեցաւ նամակս օրհնութեան ՌՃԾԳ. (1755), ապրիլի ԻՀ. ...*

33. *45ար Յորմէ ժամանեալ հասցէ գիր անհծից... առ ի վերայ Կաֆայեցի շուշտակ չիք տէր Աստուածառուրիդ եւ շուշտակ արեղայ չիք Ստեփաննիդ... ՌՃԾԳ. (1755), յունիսի Զ. ...*

34. *45բ-6ա Յորմէ ժամանեալ հասցէ գիր դառնութեան... ի վերայ չիք եւ անհծեալ Ամասիացի տուրք եկեղեցւոյն զժողովուրդդ... Գրեցաւ... ՌՄԷ. (1758), յունվարի ԻԹ. ...*

35. *46ար...ի տէր Յակոբ վարդապետէ... ի յԱրապկեր բնակեալ համայն հահաձայ, իշխանճ եւ առ հասարակ ժողովուրդ... – Զի գրէ սրբազան առաքեալն... Գրեցաւ բանագրանաց գիրս ի ՌՄԺԲ. (1763) Յուին, մարտի ԺԸ. ...*

36. *46բ...ի տէր Յակոբ վարդապետէ... յԱմասիա Սարաթօղլի չիմ մանուեսի Ալիխսան եւ մարավանցի չիմ եւ նզովեալ չմանուեսի Սրապիօն – Ո՛վ որդիք կորստեան... Գրեցաւ այրեցմամբ սրտի գիրս բանագրանաց ՌՃԾԳ. (1755) եւ ի յունիսի ԻԹ. ...*

37. *46բ-7ա Ի տէր Յակոբ վարդապետէ... ի վերայ Կարփըցի չիմ եւ անհծեալ երկու եղբայրդ, այսինքն մարդասպան չմանուեսի Պօղոսիկ եւ չմանուեսի Պետրոսիկ... – Քանզի դուք որդիքդ կորստեան... Գրեցաւ բանագրանաց գիրս ի ՌՄԺԲ. (1736) Յուին, ի փետրվարի Ե. ...*

38. *47ա-8ա եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ օրհնութեան գրոյս... Գրեցաւ... ի ՌՄԺԵ. (1766) Յուին, սեպտեմբեր Ժե. ...*

39. *48ա Յորմէ ժամանեալ հասցէ գիր նզովից... ի վերայ Մէտիճցի թէզլի չիմ Կարապետիդ – Եւ ծանո՛ր, ով որդի կորստեան... Գրեցաւ բանագրանաց գիրս ՌՄԴ. (1755), յուլիսի Է. ...*

40. *48ար Յորմէ ժամանեալ հասցէ գիր դառնութեան... ի վերայ չիմ եւ անհծեալ եզնկացի... Մելքօնիդ – Ծանո՛ր, այ պիղծ Կայէն... Գրեցաւ... գիրս ՌՃԾԳ. (1754), ապրիլի Ժ.:*

41. *49ար Եւ ընդ աստուածապարգեւի... Գրեցաւ նամակս օրհնութեան եւ շնորհակալութեան առ Աստուած ՌՄԶ. (1757), օգոստոսի ԻՀ. ...*

42. *49բ-50բ Յորմէ ծանիմ, Սուրբ Գէորգ եկեղեցւոյ հահաձա՛յ, իշխա՛ճ եւ առ հասարակ ժողովուրդ... Գրեցաւ խրատական յորդորական եւ գնդապանդղոյց բանագրանաց գիրս ՌՄԶ. (1757), նոյեմբերի Ժե.:*

43. *50բ-1ա Որովհետեւ կարգ է ամենայն էակաց... Գրեցաւ դպրապետութեան գիրս ՌՄԵ. (1756)...*

44. *51ա-2ա Ի տէր Յակոբ վարդապետէ... – Ծանո՛ր Սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյ աւագերէց... Գրեցաւ գիրս պատուիրանաց ՌՄԶ. (1757), դեկտեմբերի ԺԴ. ...*

45. *52ար եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... Գրեցաւ օրհնութեան նամակս ՌՄԶ. (1757), դեկտեմբերի Դ. ...*

46. *52բ-3ա եւ ըստ սիրոյ օրհնութեան գրոյս Ծանի՛ր... Գրեցաւ գիրս օրհնութեան ՌՄԷ. (1758) եւ ի մայիսի Լ. ...*

47. *53ար Վէ պատէ սէլամու տուալէրէն... [Գրեցաւ Յուին] հայոց ՌՄՒ. (1791), մարտի Ժ. ...*

48. *53բ-4ա Վէ պու տուվանամէ... [Գրեցաւ Յուին] հայոց ՌՄԷ. (1758), մայիսին ԺԲ. ...*

49. *54ա-5ա Եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... Գրեցաւ... կոնդակս ի ՌՄՀ. (1759) Յուին հայոց, հոկտեմբերի Ի. ...*

50. *55ա-6ա Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... Գրեցաւ ՌՄԶ. (1757) ապրիլի Լ:*

51. *56ա-7ա Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ...*

52. *57ա-8ա Եւ աստուածապարգեւի եւ սիրոյ... Գրեցաւ սիրոյ եւ վերհաստատութեան առաջնորդական նամակս ի ՌՄԺ. (1761) Յուին, դեկտեմբերի ԺԳ. ...*

53. *58ար Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... ՌՄԺԲ. (1763), մայիս:*

54. *58բ-9ա Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... Գրեցաւ ժողովարարութեան օրհնութեան նամակս ի ՌՄԺ. (1761) Յուին, յունիսի ԻՀ. ...*

55. *59աբ* Վէ պու տուսաճամէ... *Գրեցաւ պատուիրանի կանօնական գիրս ՒՄԺՍ. (1762) թուին հայոց, ապրիլի Ջ. ...*

56. *60աբ* Եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... *Գրեցաւ պատգահաւաքութեան գիրս ի ՒՄԺՒ. (1763) թուին:*

57. *60բ-1ա* Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... *Գրեցաւ օրհնութեան եւ պատուիրանի ի ՒՄԺՒ. (1763) թուին. ամէն: Ապրիլի ԻՀ. ...*

58. *61աբ* Յորմէ սիրով ծանիւ Անդրիաճուպօլսոյ Սուրբ Թէոդորոս եկեղեցւոյ համայք հաճաձայ... *Գրեցաւ խրատական եւ կանոնական կոնտակս ի ՒՄԺՒ. (1763) թուին, փետրուարի ԻԲ. ...*

59. *61բ-2բ* Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... *Գրեցաւ օրհնութեան եւ շրջաբերական կոնտակս ի ՒՄԺԸ. (1766) թուին, յոգոստոսի ԻԸ. ...*

60. *62բ-3բ* Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... *Գրեցաւ յորդորանաց, պատուիրանի եւ օրհնութեան գիրս ի ՒՄՊԸ. (1806) թուին, սեպտեմբերի ժԸ. ...*

61. *63բ* Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... *Գրեցաւ պատուիրանի եւ փոխանորդութեան գիրս ի ՒՄԺԳ. (1764) թուին եւ յուլիսի Ը. ...*

62. *64ա-5ա* Եւ ընդ աստուածապարգեւի, սիրոյ... *Գրեցաւ օրհնութեան եւ յորդորանաց նամակս ի ՒՄԺԸ. (1766) թուիս հայոց:*

63. *65աբ* Եւ ընդ աստուածապարգեւ եւ շնորհազեղումն... *Գրեցաւ օրհնութեան եւ պատուէրի նամակս ի ՒՄՊԸ. (1806) թուին եւ մարտի ամսոյ տասին...*

64. *65բ-6բ* Եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... *Գրեցաւ օրհնութեան, սիրոյ եւ յորդորանաց նամակս ի ՒՄԺԳ. (1765) թուին հայոց:*

65. *66բ-7ա* Ձիսուսի Քրիստոսի ծառայի տէր Գրիգոր վարդապետ եւ պատրիարքէ Կոստանդնուպօլսոյ... — *Ծանիք, Իսմայիլու քաղաքին Սուրբ Աստուած|ճշմ|ածնի եկեղեցւոյ համայն քահանա՛յք, իշխա՛նք եւ առհասարակ ժողովո՛ւրդք... Գրեցաւ աթոռակալութեան գիրս ի ՒՄԺԳ. (1764) թուին եւ յուլիսի տասն. եւ այլն:*

66. *67աբ* Եւ ընդ աստուածապարգեւի, սիրոյ... *Գրեցաւ օրհնութեան եւ պատուէրի նամակս ի ՒՄԺԸ. (1766) թուին եւ յունվարի ԻԹ.ին (29)...*

67. *68աբ* Վէ պու տուվայի վէ մուհապպէթ նամէ... *Գրեցաւ օրհնութեան եւ պատուէրի նամակս ի ՒՄԺԸ. (1766)...*

68. *68բ-9բ* Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... *Գրեցաւ քաջալերութեան եւ սիրոյ գիրս... ՒՄԺԸ. (1766), նոյեմբեր Ը.:*

69. *69բ-70բ* Ի տէր Գրիգոր վարդապետէ – *Յորմէ ծանիք լուսաւորչադաւան օրհնեալ ազգդ իմ... Գրեցաւ պատուէրի նամակս ՒՄԺԸ. (1766) թուին:*

70. *70բ-1բ* Եւ ընդ աստուածապարգեւի սիրոյ... *Գրեցաւ աթոռակալութեան գիրս ի ՒՄԺԳ. (1764)...*

71. *71բ-2բ* Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... *Գրեցաւ... նամակս ի ՒՄԺՋ. (1757) թուին, սեպտեմբերի հինգ...*

72. *72բ-3բ* Եւ ընդ աստուածապարգեւի եւ սիրոյ... *Գրեցաւ... գիրս ի ՒՄԺՋ. (1767) թուին, նոյեմբերի վեց...*

73. *73բ* Ձիսուսի Քրիստոսի ծառայ ի տէր Գրիգոր վարդապետէ... *ի Պոլիս բնակեալ համայն քահանայք, իշխանք եւ առ հասարակ ժողովուրդք... Գրեցաւ... գիրս ի ՒՄԺՋ. (1767) թուին, սեպտեմբերի հինգ...*

74. *73բ-5ա* Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... Կարապետ *վարդապետին վերիվ գնալու գրին օրինակն է:*

75. *75ա-6ա* Եւ ընդ աստուածապարգեւի, սիրոյ... *Գրեցաւ օրհնութեան եւ փոխանորդութեան, սիրոյ նամակս ի ՒՄԺԷ. (1768) թուին, ապրիլի Ա. ...*

76. *76բ-7ա* Յորմէ ժամանեալ հասցէ գիրս ողջունի... *Գրեցաւ յորդորական եւ յանձնարարական ՒՄԺԷ. (1768), ապրիլի Ա. ...*

77. *77աբ* Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... *Գրեցաւ նազրութեան նամակս ՒՄԺԷ. (1768), մայիսի ԻԹ. ...*

78. *77բ-8բ* Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... *Գրեցաւ սիրոյ, յորդորանաց եւ խրատու գիրս ի ՒՄԺԷ. (1768) թուին հայոց, յուլիսի Ա. ...*

79. *78բ-9ա* Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... *Գրեցաւ նոր սիրոյ եւ պատուէրի գիրս ՒՄԺԷ. (1768) թուին հայոց, յունիսի ամսոյ տասնեււթին:*

80. *79աբ* Եւ ընդ սիրոյ ողջունի... *Գրեցաւ սիրոյ եւ միաբանութեան նամակս ի ՒՄԺԷ. (1768) թուին հայոց...*

81. *80աբ* Յորմէ դառնութեամբ հոգւոյ եւ մեղադրանօք ծանիւ ի Ձիսմայիլ քաղաքի բնակեալ Պարխուտար, Մադաթիայ... *Գրեցաւ մեղադրակաց գիրս ՒՄԺԷ. (1768), յունիսի մէկ...*

82. *80բ-2ա* Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... *Գրեցաւ... ՒՄԺԷ. (1768) թուին եւ յուլիսի ամսոյ Իե. ...*

83. *82ա-3ա* Եւ ընդ աստուածապարգեւի, օրհնութեան... *Գրեցաւ սիրոյ եւ պատուէրի գիրս ի ՒՄԺՋ. (1767) թուին հայոց եւ յոգոստոսի Իե. ...*

84. *83ա-4ա* Հայրութեան Ոյ զգիրն...

85. *84աբ* Յորմէ սիրով եւ աստուածային օրհնութեամբն ծանիւ, Սուրբ Գէորգ եկեղեցւոյ համայն դասք...

86. *84բ-5բ* Եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... *Գրեցաւ դատապարտութեան եւ յորդորանաց գիրս ՒՄԺՀ. (1769) թուին, սեպտեմբերի մէկ...*

87. *85բ-6ա* Յորմէ ընծայի ողջոյն... *առ եօթնից*

եկեղեցւոյն աւագերիցունս եւ առ ծերունի խորհրդական քահանայսդ Եվդոկիոյ աստուածապահ քաղաքին... Գրեցաւ օրհնութեան, պատուէրի գիրս ՌՄԺԹ. (1770) թուին, ապրիլի ամսոյ ԻԸ. ...

88. *86ա-7ա* Սիրոյ գործ է, մտերիմ իմ... *Գրիգոր վարդապետ եւ պատրիարգ, Կոստանդնուպոլիս, ՌՄԺԹ. (1770), յուլիսի ԺԶ.:*

89. *87ա-8ա* եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... *Գրեցաւ օրհնութեան եւ մխիթարութեան եւ օգտակար խրատու գիրս ՌՄԺԹ. (1770) թուին, յուլիսի Ի.:*

90. *88ա-9բ* եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... *Գրեցաւ օրհնութեան, խրատու եւ ի բարին յորդորման գիրս ՌՄԺԸ. (1769), դեկտեմբերի քսանեւմէկ...*

91. *89բ-90բ* եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... *Գրեցաւ սիրոյ եւ օրհնութեան գիրս ՌՄԺԸ. (1769) թուին հայոց, դեկտեմբերի ԻԱ. ...*

92. *90բ-ա* եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... *Գրեցաւ խրատական գիրս ՌՄԺԹ. (1770), յոգոստոսի ԺՐ. ...*

93. *91ա-2ա* եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան...

94. *92ա-3ա* եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... *Գրեցաւ օրհնութեան եւ սիրոյ եւ պատուիրանի նամակս ի ՌՄԺԹ. (1770), հոկտեմբերի Ի. ...*

95. *93ա-4բ* եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... *Գրեցաւ շրջաբերական յորդորանաց նամակս ՌՄԺԷ. (1768) ուին, յոգոստոս Ժ. ...*

96. *95ա-6ա* Յորմէ եշմարտիւ սիրելութեամբ... *Գրեցաւ սիրոյ եւ պատուէրի գիրս ՌՄԽ. (1791) թուին եւ ի յունիսի Ժ. ...*

97. *96աբ* եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... *Գրեցաւ օրհնութեան եւ սիրոյ նամակս ի ՌՄԻ. (1771) թուին, սեպտեմբերի Բ. ...*

98. *97աբ* եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... *Գրեցաւ օրհնութեան, խրատուց եւ յորդորանաց նամակս ՌՄԷ. (1768), յուլիս ԺԶ. ...*

99. *97բ-9ա* եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... *Գրեցաւ օրհնութեան եւ յորդորանաց գիրս ՌՄԺԸ. (1769), յոգոստոսի Գ. ...*

100. *99ա* եւ ընդ աստուածապարգեւի օրհնութեան... *ՌՄԺԹ. (1770) թուին, յուլիսի ամսոյ մէկ:*

ՎիճԱԿ՝ բատառաւ. կազմի կաշին մաշուած, ճեղուած, տեղ-տեղ՝ առանկապէս անկիւններու մաշուած-բախուած, երեսկող կապիչներից 16 ընկած. մնում են Ա փեղկին՝ 3 գամերը, Բ. փեղկի ներսի կողմում՝ 3 կապիչների հիմերը, լուսացկոցների կարմիրը բախուած ճոռոգուած, գործածութեան հետեւանքով զանազան թեր, մոլի եւ իւղի հետքեր, մասնաւորապէս վերին եւ ստորին լուսանցներում խոնաւութեան հետքեր, վերին լուսանցքերին՝ ցեցի անցքեր (թ. 161-87, 246-51, 284-357) թ. 49-50՝ ստորին լուսանցքները 3.5x18 չափով եզրասմասած, գրադարձը անվնաս, է 143բ, 144ա՝ թամնարթներ, թ. 306՝ ստորին լուսանցը պատռուած, թ. 8՝ կարուած թ 9ից յետոյ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

– *1ա-394բ* [Ներսիսի Շնորհալւոյ եւ Յովհաննու երգնկացւոյ Մործորեցւոյ Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի]

Տե՛ս ձեռ. 1279, 12ա-339բ: *Ընծայական՝ 1ա-2գ: ա՝ 3ա-10ա: բ՝ 10ա-7ա: գ՝ 17ա-27ա: դ՝ 27ա-37բ: ե՝ 37բ-65բ: զ՝ 65բ-89բ: է՝ 89բ-100ա: ը՝ 100ա-11բ: թ՝ 111բ 23ա: ժ՝ 123ա-40բ: ժա՝ 140բ-9բ: ժբ՝ 149բ-66ա: ժգ՝ 166ա-81բ: ժդ՝ 181բ-90ա: ժե՝ 190ա-7ա: ժզ՝ 197ա-206ա: ժէ՝ 206ա-22ա: ժը՝ 222ա-34ա: ժթ՝ 234ա-45բ: ի՝ 245բ-61ա: իա՝ 261ա-83բ: իբ՝ 283բ-95բ: իգ՝ 295բ-305բ: իդ՝ 305բ-23բ: իե՝ 323բ 38բ: իզ՝ 338բ-65ա: իէ՝ 365ա 82բ: իը՝ 382բ-94բ «...անդամք նեխեալ եւ տիկ պատառատուն հնացեալ չարութեանն գործովք///» (վերջը՝ թափուած. ընկած 1 թ.):*

Լուսանցներում կան արբագրումներ եւ լուսկումներ: Տե՛ս ներքև Շնորհալի, Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի, կ. Պոլիս, 1825:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

81բ Զհնգահոգի եւ զանյաղի փիլիսոփայէ զմեծ հեռատես Յոհաննէս Մործորեցի, որ զսուրբ մատեանս մեկնեալ շնորհեաց բանասիրաց ժանկանց Միօվհի, յիշխողիք ի Տէր:

Ընդ նմին եւ զատացաւղ աստուածաշունչ սուրբ մատենիս՝ գարի եւ գքաջ հեռատեսն՝ զհնգահոգի եւ ամենայն առաքինութեամբ գարդարեալն գՅովաննէս գարշի եւ զմեծ բարեբանին գՀամդէնեցին՝ աղաչեմ յիշել ի Տէր: Եւ զգծող սմին զսիրասնունդ գաշակերտն իւր զՄովսէս աբեղայն առնել արժանի յիշման: Ի թվականութեանն ՋԻԵ. (1476):

Տե՛ս ժե. գ. յիշ-ք, Ռ., էջ 410:

146ք Զգծողս յիշեա՛, աղաչեմ (նմոյշ՝ 117ա, 181բ):

193ա Զնեղաւս մեռեալս յիշեա՛, աղաչեմ (նմոյշ՝ 149բ, 176ա, 224բ):

254ա Զմեղօք մեռեալս գծողս յիշեա՛, աղաչեմ, ո՛վ սուրբ ընթերցօղ եւ լսաւղ:

271ա Զգծողս յիշէ՛ (նմոյշ՝ 352բ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (1797 թ., նոտրգիր) Թվին ՌՄՀԶ.ին (1797), յունիսի ԺԱ. (11), ի յաւուրն Ե.շաբաթի եղեւ նոր սկսեալ ժամ ի քաղաքն Սալնայ Ջորոյ, որ մակագրեալ Բաղէշ կոչի. եմք ծնեալ եւ սնեալ ի վանս Սրբոյն Յոհաննու, որ մակագրեալ Ամրոլ յորջորջի: Սա անդրանիկ գոլո[վ] ի մէջ քաղաքին եւ բարձր, քան զերիցուցն վանս, որք են ի գաւառի կրիաբան եւ վարժարան: Այս միանն միայն գտանի շինեալ ձեռամբ Բասիլի քաջ բարեբնապետի, որ եւ եգիտ սա զարհնան արտաքնոց: Եւ որ ոք հանդիպիկ այսմ մատենի, յիշեցէ՛ք ի Քրիստոս զքաջ բարեբնապետքն գԿարապետ եւ զՎարդան հանկուցեալ վարդապետք, որ եւ բազում երախտիս արարին սրբոյ տանս եւ հանգեան խաղաղութեամբ ի Տէր: Եւ ի յայսմ ժամանակիս՝ ի յաջորդութեանն սրբոյ տանս տէր Գրիգոր արքեպսկոպոս եւ հոգեւոր ծնօղն իմ Գրիգոր վարդապետն այլ եւս լուսաւորեաց զսուրբ տունս. եւ Աստուած լուսաւորեսցէ դիւր ննջեցելոց հոգին. ամէն: Ձեռաքս մեղսամած Վարդանիս:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ *պհպ. Բա՝ սեւով բոլորակ՝* «Печать Ахалцыхской градской полиции»:

ՆՇՈՒՄ՝ *կապմի մէջքին փակցուած պիտակին, նոտրգիր. «Ներսիսի Շնորհալւոյ / Մեկնութիւն Մատթէոսի / Աւետարանին / (1.)», պհպ. Ա՝ «180/2687», «ՋԻԵ. - 1476, Մ[ատթ] Եպ[իսկոպո]ս», պհպ. Բա՝ «171/12.», թ. 248ա-ին փակցուած էջանշան թերթիկին՝ (նոտրգիր) «Սէիան Թէոդեցի է»:*


2688

ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԵՐՈՒՍԱՂԷՄ (Մուրբ Փրկիչ վանք)

ԳՐԻՉ, ՍՏԱՓՈՂ Յակոբ աբեղայ։

ԹԵՐԹ՝ 184 (գրչի էջակուտ Ա-ՅԿԲ, որ է 1ա-184ա). չբուած՝ 184բ։ ՊՐԱԿ՝ 1-15x12 (15՝ 16)։ ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծեալ եւ լուսադրչմով՝ բուսական զարդանախշ։ ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 28.5x20։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (22.5x14.5)։ Խոռոչներ՝ կարմիր եւ վարդագոյն։ ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 172ա)։ ՏՈՂ՝ 45։ ԿԱՋՄ՝ Յակոբաթոռք, միշտկը ստուարաթուղթ, մշկի մուգ շագանակագոյն կաշի. աստառը թուղթ, լուսագծեալ, չբուած լուսանցակողերը՝ դեղին։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (Ա)+1 (Բ)՝ թուղթ, լուսագծեալ եւ լուսադրչմով «F F A», չբուած, մաս կազմաստարի։



Նմուշ 172ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ – Զ ա ր դ ա գ ի ր՝ հանգուցագիր, թղթագիր (78ա), Գ՝ մշկը մատղկային դեմի՞ 37ա, Զ՝ մշկը մատղկային դեմի՞ 54ա, 71ա, 108բ, 164բ, Ը՝ մշկը մատղկային դեմի՞ 156բ։ Գ ո յ ն ե ր՝ կարմիր, վարդագոյն։

ՎԻՃԱԿ՝ բառարար. կազմի ծաղկաթուղթ ի՞ւծուած, տեղ-տեղ՝ առաւելապէս անկիւններ եւ Բ. թերկր մաշուած-թափուած, մշկի կաշին մաշուած, վերին եւ ստորին եզերքր մասամբ անյստուած նոտրուած, գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան չափ, դեղին եզրեր, ձեռագրի համաւեա բոլոր թերթերի ստորին լուսանցներում գեղի անցիր։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1ա-182ա Սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի հայրապետի Մեկնութիւն Աւետարանին, որ է Յովհաննու

Տե՛ս նաեւ 1347, 1ե-422բ։ *Յանկ/չիք։ Նախերգանք եւ Յորդորակք/1ա-2բ։* 1. *2բ-95բ [Գիրք առաջին]։ ա/2բ-5բ։ բ/5բ-9ա։ գ/9ա-12ա։ դ/12ա-13ա։ ե/16բ-19ա։ զ/13ա-14ա։ է/14ա-6բ։ ը/19ա-20բ (նեւ. 1347ում միաւորների համարների ի՞ւրիք ը-ժ.)։ ժ/20բ-2ա։ ի/ա/22ա-4ա։ ի/բ/24ա-5բ։ ի/գ/26ա-7բ։ ի/դ/27բ-9բ։ ի/ե/29բ-31բ։ ի/զ/31բ-4ա։ ի/է/34ա-7ա։ ի/ը/37ա-8ա։ ի/թ/38ա-40ա։ ի/ժ/40ա-2ա։ ի/ի/42ա-4ա։ ի/լ/44ա-6ա։ ի/խ/46ա-8բ։ ի/ծ/48բ-50բ։ ի/կ/50բ-2ա։ ի/հ/52ա-4ա։ ի/ձ/54ա-6ա։ ի/ղ/56ա-8ա։ ի/ճ/58ա-60ա։ ի/մ/60ա-3ա։ ի/յ/63ա-5ա։ ի/ն/65ա-7ա։ ի/շ/67ա-9ա։ ի/ո/69ա-71ա։ ի/չ/71ա-2բ։ ի/պ/72բ-4բ։ ի/ջ/74բ-8ա։ ի/ռ/75ա-81բ։ ի/ս/81բ-3բ։ ի/վ/83բ-5բ։ ի/տ/85բ-8ա։ ի/ր/88ա-9բ։ ի/ց/89բ-90բ։ ի/ւ/90բ-3ա։ ի/փ/93ա-5բ։* 2. *95բ-182ա [Գիրք երկրորդ]։ ա/95բ-9ա։ բ/99ա-100բ։ գ/100բ-2բ։ դ/102բ-5ա։ ե/105ա-6բ։ զ/106բ-8բ։ է/108բ-10բ։ ը/110բ-3ա։ թ/113ա-4բ։ ժ/114բ-6բ։ ի/116բ-8բ։ լ/118բ-21բ։ խ/121բ-4ա։ ծ/124ա-7բ։ կ/127բ-30ա։ հ/130ա-2բ։ ձ/132բ-4բ։ ղ/134բ-7ա։ ճ/137ա-9ա։ մ/139ա-41ա։ յ/141ա-3ա։ ն/143ա-4բ։ շ/144բ-6ա։ ո/146ա-7ա։ չ/147ա-9ա։ պ/149ա-51ա։ ջ/151ա-2բ։ ռ/152բ-4ա։ ս/154ա-6բ։ վ/156բ-8ա։ տ/158ա-60ա։ ր/160ա-2ա։ ց/162ա-4բ։ ւ/164բ-6ա։ փ/166ա-7բ։ ք/167բ-9ա։ օ/169ա-72ա։ ֆ/172ա-4ա։ ֆ/174ա-7ա։ ֆ/177ա-8բ։ ֆ/178բ-80բ։ ֆ/180բ-2ա։*

Տե՛ս Յովհան Ոսկեբերան, Մեկնութիւն Յովհաննու, կ. Պոլիս, 1717։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԹԱՂԱԹԱՆՑԻ

95բ (1117 թ., նոտրգիր) Արդ, որք ընթեռնոյք կամ գաղափար դնելով փարթամանալք ի ճոխ եւ յանգաստում մեծութեանցս, յաստուածային գերունակ իմաստից, լիցեսցիք ի քրիստոս Յիսուս գաշնաստղք սուրբ կուակիս, նախ զսրբազան սուրբ կիրակոս վարդապետն, որ բազում աշխատութեամբ եւ ըղձափափագ տենչմամբ ի յումեքանէն քերթողական արուեստիս թարգմանեալ ի հայ բարբառ եւ գիր։

182ա (1117 թ., նոտրգիր) Փառք անեղի եւ անմահի, անբովիկքդն եւ անվախճան արարչի եւ համագործողի միասնական եւ անբաժանելի սուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Յիշատակարան գրոցս ըստ պատշաճի յանգման. զաստուածպետական բոլոր գոյութիւնս, թէ գի՞նչ երբէք իցէ առ ի յաւագերոցն օրհնաբանի, գեր գրան եւ անհաս ի մտաց իմանալեացն եւ ի մարմնաւորացն, իսկ զնոյն բարերարութիւնն որոշեալ եւ յայտնեալ ըղձափափագ աղօթիւք Հեռնարկելի է մաքուր մտաց սրբոց առելով։ Երրորդութիւն գերագոյ, գերագոյնդ Աստուած, եւ գերագոյնդ բարութիւն, քրիստոնէից վերատեսուչ յաստուածայնոյ իմաստութեանն ուղղեա զմեզ, ի խորհրդականացն ասացելոց, գերածանօթ եւ գերաճաճանչ եւ ծայրագոյն գագաթին, ուրանօր պարզքն եւ արձակք եւ անփոփոխելիք աստուածաբանութեանն խորհուրդք՝ ըստ գերապատուութեան ծածկեալ թաքնախորհուրդ յոյսիցեանն մի գոյ, բայց մեզ ըստ իրիս առաջի կացելոյ ի գրաւ զօրեղիս՝ աստուածախօս տաճիս՝ գոհութեամբ զամենայնս աստուածպետական յառաջ ճանապարհացն գործոս աւրհնաբանելի է։ Վասն զի յոյսն փառաց Հօր՝ էական ինքնաբուխ է միութիւն, գերակատար ծայրապատութեամբն, կատարողական տեսակ բարի, ի նիւթի ոչ տեսակ մերովս արարչապետութեամբ տեսակ, զմերս բացերեսաւորեալ, անխառն յամենից եւ մօտ առ ամենսին, եկեալ խոնարհութեամբ ի մարմնի միացեալ, որով կատարեալ գոնօրինականն եւ վերատին արարչագործեալ զազգս մարդկան ի փառս աւրհնաբանութեան երրորդական գաստից, որով զընտրեալ զընտրեալսն ի սկզբանէ կենարար բանիւն եւ զօրութեամբ մեծապայծառ լուսագեղաց սարսեալ, փառակարգ է ի փառագնատեսակ կառուցման ի հոյլս ժողովրդոց գլուխս, որոց եւ զաստուածածանօթ գաստուածագործ անուն վերակոչեալ առաքեալս ինքեանն պարգեւատուի, ոտանքեցեալ փրիւնորդս կոցուցմունէ, իսոտովանալով աւետեօք զգալոստ ի նոցա աստուածպետական հոգւոյն։

Արդ, նոքա զօրացեալք ի Քանէն աստուածագործ Հոգւովն լցեալք, տախտակք աստուածագիրք եւ այ-

ձանք բանաւորք, աստուածատեսակք եղեալ, լուսոյն ճշմարտի կայարան գտեալք եւ թագաւորեալք ի լոյս ընթացան՝ լուսով ընդ տիեզերս, արեգակունք արդարութեան եղեալ աստուածային կենարար Բանին |182բ| եւ աստուածագործ նորոգաստուր Հոգւոյն լըցին զընդհանուրս, հալածեցին զխաւար եւ բարձին զմոլութիւն յաշխարհէ, փախուցին զժանտն սատանայ ամենայն չարագործ դիւօքն, փշրեցին զպատկերսն սատանայի, զոր պաշտէին մարդիկ եւ զճնճեղս շարաւահոտս՝ գարշելիս երեւեցուցին, սրբեցին զամենայն տիեզերս ի մեղաց, ստացան մարդկան հոգի եւ միտս նորս եւ մարմինս ժուժկալ եւ անմեղ, եւ միանգամայն ասել՝ գերկիրս երկին արարին եւ գմարդիկ ընդ հրեշտակս խառնեցին՝ գործելով գմեծամեծս, քան զոր փրկիչն արար յաշխարհի ըստ նորուն խոստմանն:

Եւ եւս առաւելեալ անունակիրն անօթին ընտրութեան, քան զամենեսեան ի գործս եւ ի բանս, յարեւելս եւ յարեւմուտս, ի հիւսիս եւ ի հարաւ, ընդ ամենայն տեղիս ելից զԱւետարանն, վասն որոյ եւ երանելի աւետարանիչս աստուածաբան Յովհաննէս՝ մականուանեալ ի փրկչէն Որդի Որոտման, գեր զբնաւս եւ գյաւիտեանս անցեալ որոտալիր հնչմամբ ի հայրականն սրտէ առեալ, Հոգւովն քննող զխորս Աստծոյ զանծան իմանալեացն եւ զանգիտելին բոլոր սեռի բանս կանացն, ելից գոչմամբ գերկինս եւ գերկիր, գերեւելիս եւ գաներեւոյթս, որով ծանոյց ամենայն ընդհանրական եկեղեցւոյ զսկիզբն եւ զպատճառ փրկութեան ամենեցուն: Ջորոյ գհանգամանս ի սոյն սուրբ տառիս է գիտելի համօրէն աստուածասէր անձանց, որ կամին զկեանս իւրեանց գտանել, եւ հանդիպին սմա սիրով եւ աղօթիւք առ Տէր՝ բանալ զաչս սրտի: Ուստի եւ երանելին Յոհան Ոսկէբերան՝ հետեւողն առաքելոց, գվարդապետական գործ ի ձեռն առեալ, որ համագոյգս ընդ բնաւ աստուածախօս տառս Աւետարանին խաղացեալ գայ: Ըստ որում եւ Տէրն ի վերջնում տնօրինական ժամանակիս զուսուցչապետականն առնլով յանձն մատուցեալ անուն թէ եմ իսկ, զորոյ գձեւ բերեալ լինքեան սորա, լոյս ի լոյս յաւելեալ աղբիւրաբար բղխեալ, լնու զընդհանուր եկեղեցիս ուղղադաւան հաւատացելոց, մաքրելով զոդիս ամենեցուն ի քրէական ծանոնց ծառայականաց, որով աստուածայօրս ի զօրս աստուածատես արժանացաք, անձան դիմաց քառակիս հասանել, գեղապատիս գաղափարութեամբ առ սարսափելին ներմարդութեամբն, անգամ խառնութեամբ միաւորիլ, որում աստուածաբանս բանին անեղբեւակի կրաւան զմերս ցոյցեալ փառօք փանաքիս այսմ, տաղտկալի եւ քակտելի տաղաւարիս, տարան եւ կենդանեղ գտեալ լիապատար հոգւով ոգեալ զերեքսբրեանն աւրհնաբանութիւն:

Վասն որոյ եւ ես՝ վերջացեալս ի գործառնութենէ երկասիրութեան ժամանելոցն ի գործս եւ ի բանս աստուածատուրս, տարտամ հետեւողս աշակերտութեամբ քեզ, ո՛վ Տէր իմ, Տէր՝ աստուածակիր լուսափայլութեամբ լցեալ Յոհան եւ տեսեալ զքոյդ աստուածունակ պայծառութիւն եւ ծիանածալալ ծաղկազարճ երանգախոյտիւք իմաստալեղձ գիւտս բանի, զարիւցեալ եւ սթափեալ ի գանդաղմամբ եւ ջանիւ մեծաւ եւ անկիրթ արհեստիւ, բազում տաժանմամբ աշխատեալ, վերըստին ստացայ գքեզ գրատուրութեամբ, քանզի շնորհեալ շահատակումն ի խոյզս մանրորոն, սիրակարկիր սաղագա իմաստութեան, խնդիր արանց աստուածաբելոց, զի ի խնդիրս երկասիրաց ցանզ առկայեալ կա կուտակս գաղտակրականն մարգարիտ, որ է նոյն ինքն բան, բանաւոր բերան բացումոցագ եւ ընկալողաց, գհոգի կենդանախարուկիդ, զի սա է պանծալի պատուականութիւն, յորմէ յորդորմամբ յառաջատածի բերկրական խրատ եւ բանալի ականջագ սրտի: Ասաց, որ ասացն. Ստացի՛ր զիմաստութիւն եւ զհանճար եւ գրեա՛ ի սեամս սրտի եւ արիեալ մանեակ սափերական, փառս փայլակիրս եւ գեր գմեծութիւն հանուրց, քան զհոսանս ոսկւոյ, որ եւ պատէ պետականան գշաւիղս, ուզեւորեալ անսայթաք գարքունականն անատերիւր հորդել պողոտայ եւ գականակիտն սրբամա[ռ]ր շաւիղսյի ի գոյն վեհիտ սաունատես պետին պատուանդանին աննկուն կարկառէ տեսումն եւ ճրագ ճերտատաց դիմաց դիմառնութիւն դնէ, սլացմամբ սարսափելեաւ սօսինաթաք սաւառնելոցն, քառիցն հակակայից ընդ լըծակցութեամբն ներշրջանապտոյտ պակուցմամբն ահեղասպա գնդին, երիւք եռանկեան թեւօքն պարածածկութիւ ի թնդմանէ առ նոսայն, թեւրաքամ գիտնականութեամբն եղեալ եւ լենդացեալ պարիսն պակչելեաւ յոյորոս ցանկապատիւռ տոփականութեամբն, բազմաբերձն ձօնիւք ալացն յանհունն, անշունչ շարսն շրտուցեալ, ջանան անչը[շ]ելի գհակեցուածան կացուցանել հանդէպ կանոնի վերտառութեանդ գիւտի, ուստի եւ զանգիտանալն խոստովանաբար բերէ բանն բարեբանական ասել՝ Աւրհնեալ են փառք Տեառն ի տեղւոջէ իւրմէ:

Զայսոսիկ գերազանց լրութիւն լնուս յայնցանէ յանտեսութենէ, ո՛վ աստուածաշարժ հայր մեր եւ ուսուցիչ հանուրցս Յոհան, քանզի գու |183ա| հոգիակորով կարեկցեալ մերումս ախմար արհեստականութեանս եւ տեսութեան սուրբ եւ փառազուարճ, նմանեալ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ նորին աշակերտացն, գորոց գգործս ի ձեռն առեալ եւ բացեալ՝ ետուր մեզ, եւ ամենայնիւ նորոգելով զընութիւնս մեր՝ հրեշտակիրս արարեալ վերաթռիչս կացուցեր, նոյնպէս տեսակաւորեալ գերարհաշափառ ունակութեամբ զրամացն հանդիսացար կարգս, ուղղածեցար ի յաջորդումն նախաթոռոցն, ազգապետել քահանայապետութեամբ եւ սաւառնելոցն հնչմանց զկցորդութիւն ապրհնաբանութեանցն, առբերելով փողագոչ երգս, զի

գգուվեստականան քո առ աստուածութիւնն, ուղղափառ հաւատդ եւ բանքդ քո վերառոյգ ի հանդիպումն երեսացն Աստուծոյ, եւ քո բազկատարած աղօթարուղիս պաղատանօքդ, զստօրանկեալս յոտս քո վերամբարձեսցես ամենաթագաւորին Աստուծոյ:

Վասն որոյ աստանօր անդրանիկ յարկացոյց ի քարուղ ճշմարտութեանն, բան տեսողացն, ահա ժամանակ հաճելութեան, ահա օր պարագաստօղ, ի հանդիսական մրցարանումս բերձարերիկ ի ստորեւ կենացս, ընդ երկնաթռիչն հանդիպիլ դաս սրբազանս կառուցանել իմոյ անձինս վարս, նմանել արքայազուն բանակացն գորձակցօղ, յարատիպ գոլ ի լուսափայլն ճեմարանին ըստ սրբազան բանին, եթէ գիտակցեմ գիմսն եւ գիտեմ յիմոցն: Եւ ուր պաշտեցեալն, անդ եւ պաշտելին, ընդ նմին միահոմեսցի, ընդ որս եղիցի ինձ եւ ամենեցունն, որ սիրեն զքեզ եւ պահեն զբանս քո, բացաւ երեսօք փոխակերպիլ փառաց ի փառս, համարձակատես լինել փառաց մեծին Աստուծոյ եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ քեզ եւ ընդ ամենայն սուրբս:

Արդ եւ դուք, ո՛վ սուրբ մանկունք եկեղեցւոյ, հրեշտակերամ, լուսաձիր դասք կրօնաւորաց, որ էք յընթհանուրս առկայացեալ եւ ունիք փոյթ աշխատաժիր կրօնից գտանել՝ յառաջակաց եւ սիրով սրտի ծարաւեալ ոգւով դիմիք ի սուրբ պատուիրանս, ի գիտել եւ յառնել կամ առ դնել օրինակ ի նորահերետեալ ի խորոց սրտէ, մաքուր մտօք եւ բազկատարած պաղատանօք հայելով առ Աստուած, յիշեցէ՛ք զամենատրուպ եւ զբազմամեղս զկիւրակոս, որ բազում աշխատեցայ ի սայս, սակս անյարմար եւ խրթնի թարգմանութեան հռետորին յունականի, որ եւ չանացի յերիւրել միայն, ո՛չ յաւելուլ եւ ո՛չ պակասեցուցանել յաստուածաշունչ բանիցն: Իսկ եթէ ի վեր գոլով սոցայս մակացութիւնն, քան գմեր տեսութիւն, եւ պակաս ինչ կամ այլաստարազ եւ աղաւեմ չլինել մեղադիր: Ջայս գիտելով, թէ ոչ ի ծուլութենէ կամ յանփոյթ առնելոյ եղեւ, այլ յանհաւասարութենէ հատակոտոր թարգմանելոյն: Բայց ընդ իս ոչ ինչ պակասեցուցեալ ի ճշմարտութենէ, ուստի եւ զաղաւանան անտես առնել Աստուծոյ, եղբայրական սիրով պիղեալ ընդ իս աղօթեցէ՛ք ի վերայ վշտացելոյս եւ պաշարելոյս ներքին եւ արտաքին պատերազմօք:

Այլ եւ զանգիւտ հայկազանցս գլուսաւորս մարգարտիս գպատճառն գերանելի Լուսաւորչին մերոյ՝ գփոխանորդ գԿրիգորիս գհոգեւոր հայր մեր եւ խնամածու յիշեցէ՛ք ի Տէր, վասն զի նա եղեւ սկիզբն սուրբ Աւետարանիս Մեկնութիւնս գրելոյ ի գիրս յայս, ի ձեռն բազում աղաչանաց իմոց զինքն գերանելին, որ եւ լուեալ ինձ ըստ աստուածասէր եւ պատուիրանասէր հոգւոյ իւրոյ, սկիզբն ետ առնել թարգմանութեան նախ յատորոյն լեզուէ: Եւ քանզի շաղփաղփ այլատարազ գայ լեզուն ասորի ի մերս Հայկազանցս արամեանս ազգ եւ լեզու, ըստ որում վերըստին իմ աղաչանս ի ձեռ առեալ վկայասէր ոգւոյն եւ յունականէն առնել զթարգմանութիւն գերահրաշ ճառիցս եւ աստուածախօս բանիցս աստուածաբան աւետարանչիս Յոհաննու Մեկնութեան, ի ձեռն հոմանուն երանելի պատրիարգին Կոստանդնուպօլսի՝ տիեզերակեցոյց, աշխարհալոյս վարդապետի՝ Ոսկէբերանն կոչեցելոյ մականունութեամբ, որպէս եւ վերագոյնդ առ նա արարեալ իմ Կիրակոսի գրանս մաղթանաց, վասն զի յարմար գոյ յունականն բարբառ ի մերս ըստ թարգմանութեան:

Արդ, ունկնդիր եղեալ ինձ, ննդեալ զՆորեսս Եէց ասորի զթարգմանիչ, յոլ ի Միսապոտամն գաւառ, առ յունականն հռետոր Թեոփիստէ կոչեցեալ, որ էր քարտուղար եւ պատուոյնօսար իշխանին Աւոօնն կոչեցելոյ: Եւ բազում ծախիւք առատատուր պարգեւօք նմա ետ թարգմանեալ զսուրբ գիրս:

Եւ արդ, նա ի Քրիստոս փոխեալ յերանելի կեանսն, բազում ճառք մնացին անթարգման, յոր ես ձեռն արկեալ նոյնպէս առատաբար Հրիւք, զմնացեալսն եւտու աւարտել նմին առն: Եւ է ճառիցս թիւ, | 183բ| զոր նորոդ ի յայտ ածաք, յիսուն եւ ե. (55) ճառ, քանզի զերեսուն եւ զերիսն բազում յուղիւք առաջին մեր թարգմանչացն գտաք թարգմանեալ ի սկզբանն՝ տասնեւերեք ճառ յասորի լեզուէ, բանքն իսկ ցուցանեն, իսկ գքսանն՝ ի յունականէն, որ են երեսունեւերեք ճառ: Բովանդակն էր գիրքն լիեալ թարգամանած ի հայս, եւ ի ծուլութենէ եւ յանփոյթ առնելոյ այլքն կորուսեալ եղծեալ էին յօրինակս հինս, ուր եւ կայր: Եւ այս, զոր գտաք ի յախմար եւ ի տգէտ, խաւարած գրագրերոյ, այլայլած եւ թիւրած էր բանքն եւ տունքն, եւ աւելի եւ պակաս, անօգուտ ի կարդալոյ եւ յիմանալոյ: Ջոր իմ Կիրակոսն տրպի եւ անաբժանի ի ձեռն առեալ՝ ուղիղ յօրինեցի ըստ կարի, այլ ըստ մտաց բանիցն եւ այլ ի կրկին օրինակաց: Եւ ըստ այսմ զնորոդ թարգմանեալս բազում ջանիւ եւ աշխատութեամբ յերիւրեցաք յուղիղն բառ եւ բանս ըստ մերումս գհասակոտոր եւ ի կրկնին բանսն եւ ըստ վերագոյն գրելոցն՝ ո՛չ աւելի եւ ո՛չ պակաս:

Արդ, այսպէս գրեցաք եւ տուաք վերջին աւուրց վերջին դարուս, յորում, ըստ կանխասացութեան փրկչին եւ առաքելոց նորա չար եւ գժոգակ են աւուրքս. սատանայ թագաւորեալ, եւ սէր եւ հաւատք եւ ճշմարտութիւն բարձեալ յամենայն մարդկանէ, քանզի բոլոր տիեզերք գնացին գհետ սատանային, է՛ որ անհաւատութեամբ, եւ է՛ որ հերետիկոսութեամբ, եւ է՛ որ մեղօք, յոր թաւալեցան առ հասարակ. եւ մեր ազգ հաւատովք եւ կարգօք ուղիղ եւ գործօք ըստ բանսարկուին կամաց հետեւեալք եւ հեռացեալք յերկինատոր կոչմանէն, նաեւ բարձրացեալ յերկիրէ աշտիճանաւ կրօ-

նաւորք եւ քահանայք ընդ այլ չարահաւատ ազգս նախանձեալ, ի մարմին գարձան եւ ի կամս նորա օտարացեալք ի կոչմանէն Քրիստոսի: Այլ եւ յանիշխանութենն գոլով տիւզերք, քանզի կարծեալքն իշխանք ի սուր եւ յաւեր գարձան լիրեարս, եւս եւ որ թագաւորք անուանէին:

Եւ մեք ի սոյն աւուրս աշխատեալք՝ նորոգեցաք զսա եւ տուաք ի յիշատակ աստուածասէր եղբարց սրբոց, ՝ներեալս անձանց եւ բազմաց օգուտս գործնեցեն, որ եւ հովացեալք եւ ցրտացեալք եղեն բնաւք ի պատուիրանացն Աստուծոյ եւ ի սիրոյ գրոց: Զայս գրեցաք, զի որք ընթեռնուցուք՝ իմացեալք վերս եւ գտուրք գիտապետին ջանս ըստ այսմ ի փրկչէն հայցեցջ՛ զողորմութիւն նորա, ընդ որս եւ գտուրք վարգապետն մեր գԳեղարգ յիշեսջիք՝ գդիտապետն Հայոց, գհովիւն, բարի եւ զգաստ եւ զմարդասէր հոգին, որ վերստին ծնաւ զմեզ ի Տէր բանիւն կենաց, եւ զէրեց աւուրբք եւ խոհականութեամբ գեղբայրն մեր եւ զանգրանիկ մերոյն կրթաւարժ եւ հրահանգալեղ աշակերտութեան գքրիստոսապգեացն գԳեղարգ՝ մականուն Մեղր կորեցեալ, յիշեսջիք ի Քրիստոս: Եւ եւս զծնօղս իմ հանգուցեալ ի Քրիստոս յիշեսջիք ազօթիւք:

Եւ որ գգիրքս գրեցի, որ է երկրորդ գկնի թարգմանելոյն ի յունականէն ի հայկական գիր եւ լեզու, զՍահփանմնոս յոքնամեղ եւ գեղբարս իմ եւ զծնօղս գկենդանի եւ գհանգուցեալ ի Քրիստոս աղաչեմ յիշել ի սուրբ մաղթանս, որպէս զի աղօթիւք ձեր եւ ամենայն սրբոց հաճոյացելոց Տեառն ի սկզբանէ գացուք միաբան արժանաւորք կենացն յաւիտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, ընդ որում Հօր եւ ամենասուրբ Հոգւոյն փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Էր թիւ ի սկզբանէն արարչութենից ի մեզ ՅՇԼԶ. (1111)* ամ, իսկ ի կենարար գալստեանն ՌՃԺՀ. (1112) ամ, իսկ ի հոսդրոյն Պարսից սկսեալ մերս թիւ ըստ ամաց ՇԿԶ. (1117), իսկ ըստ ասարտման առաջին շրջանին ՇԼԲ. (532), նորս սկսեալ շար ամաց ԼԴ. (34) ամ: Այլ եւ գաղաչանս իմ գվերջին ընկալցիք սիրովն Աստուծոյ, գկնի վախճանի իմոյ ում եւ ապ Աստուած ի ձեռն ի գտուրք գիրս գայս, մի՛ արգելցէ տալ գսա օրինակ ով եւ կամեսցի գրել, զի տարածեսցի, եւ մի՛ իմ ի փակեսցի խօսքս Աստուծոյ: Եւ որք գրել տացեն, գրեսցեն եւ զլիշատակարանս գայս բովանդակ ի նմին եւ մի՛ հատցեն ի նմանէ բան մի: Եւ որք գկերկու խնդիրս գիմ կատարեսցեն, գրեսցէ գնոսա Աստուած ի դպրութեան կենաց, իսկ որք ստունգանենն, եղիցին ընդ դատաստանաւ Տեառն Աստուծոյ, որ է աւրհնեալ յանբաւ յաւիտեանս. ամէն:

* Թարգմանչի յիշատակարանի ճուականի վերծանումը Համառօտ ցուցակում (Մ., 1965, էջ 855) վրիպակով է 1663 թ., մինչդեռ յիշատակարանի բուն ճուականը ՇԿԶ. (1117) է, ևին ճուականը աւարչութեան ճուականի Ալեքսանդրեան տարբերակով է 6536-5425=1111, այս յիշատակարանը մասամբ տե՛ս Գ. Զարբհանեան, Մատենագարան հայկական թարգմանութեանց նախնեաց, էջ 611-2, իսկ ամբողջութեամբ, որպես այլ՝ 2-ր 1347 ձեռագրից առած՝ տե՛ս Յովս. Յիշ-ք, էջ 309-18 (1112 թ. նկարագրությ), 2-ր 147, հմմտ. Ե-ԺԲ. գգ. գիշ-ք, էջ 145-50 (1117 թ.):

ՅԻՇԵՍՏԱԿԱԲԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

95բ Ընդ նմին յիշեսջիք զբստացօղ մատենիս զկուսակրօն Յակոբ աբեղայս, եւ զծնօղսն իւր, եւ ամենայն գարմիւքն եւ ոգորմեսցի Քրիստոս Աստուած յիշողացդ գմեզ:

183բ Ըստ պատճ[էն]ի յիշատակարանացս եւ ըստ պահանջելոյ հարիկ սովորութեան սահմանի՝ պարտ վարկաք շարադրել եւ գանարժանութեանս մերոյ յիշատակ ի քարտիսի այսր, ընդ մշտնջենաւորութեան կատկիս աստուածայնոյ, յարակայեալ եւ մերս յեղում ըստ սմին ի յապա ժամանակս յոքունս ունելով մեր ակնկալութիւն յեղման սրբազանիկ ընթերցողաց զսոյն տառ, որք ոտոգեալ ի բանից ցօղոյ շնորհաց սորային անձրեւաց, որոտընդոստ տեղացմանէ եւ պտղաբերեն [184ա] առաքինութիւնս աստուածահաճոյս, որոց վերամբարձ երկնաթռիչ սր[ը]նթաց պլպլմամբ բարձրացեալ աստուածամերձ եղեալ մաղթանացն, աղերսանօք շնօրհացն ոգորմութիւն բարեբարին Աստուծոյ ցօղեցէ ի հոգիս թափուր եւ ի հոգացեալ մարմինս մեր ի գետնախիշտ շիրմի պահարանի եւ դժոխամանն եղելոց պարտականաց բիւրոց քանքարաց, եւս եւ թէ ոք ի շնորհաբաշխելոց վշտակցելով մեզ, ոգորմաբար ի խորոց սրտէ հառաչաբողոք յիշմամբ յոգոց հանիցէ եւ գիջեալ առ մեզ ջերմագոյն կամօք, յարատուս հարեալ ընդ մեր, խնդրելով ի Քրիստոսէ զթողութիւն մեղաց, ազօթաբան գայցմամբ ըստ առաքելոյ բանի հզօրապէս բաւականացեալ գօրէ ողնաբարձ բեռանց մերոց, մեղանաց ծանրացելոց ի թեթեւութեան տէր Յակոբ աբեղայ գծողի սորին տաժանելոցս սակաւ աշխատութեամբ ի մատենիս աստուածաբան, եւ գտրիտուր յիշողացդ գմեզ Քրիստոս հատուսցէ:*

Եւ արդ, վասն որոյ ցանկացօղ եղեալ հրաշապատում, քաղցրալուր բարբառ եւ յոքնապատուղ, համեղաճաշակ կտակիս եւ ետ գրել ի յընչից, յարկար վաստակոց իւրոց գանձեալ գինչս յերկինս անենգ յամենայն կերչաց եւ ի վատնողաց ի լուսատուիսն հոգւոյ իւրոյ եւ ամենայն գարմից եւ ընթերցողացն յոգուստս հոգեւորականս ի գիտութիւնս երկնաւորականս, ի խնդրոյ բարեմիտ եւ հոգիասէր կրօնաւոր Յակոբ աբեղայի, ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնօղացն իւրոց, եւ եղբարցն եւ քորցն եւ ամենայն արեան մերձաւորացն, ի ժամանակս կաթողիկոսութենն տեառն Նղիազարու երջանկի եւ լեպիսկոպոսութեան տեառն Սիմէոնի երեւսաղէմայ մեծի քաղաքի տէրունեան գահի, ընդ հովանեաւ սուրբ տեօրիսականացն եւ Քրիստոսի լուսա-*

բուխ գերեզմանին կատարիչ վիմի, որ է Սուրբ Փրկի վանս, յաւարտ սոփերիս, ի Թրւաբերութեանս Տեառնոց զգրոյս սեփհական Ռէմէ. (1689) ամին, ի վայելումն իւրոյ անձին: Աստուած եւ Տէրն մեր բարով վայելել տացէ նմա մինչեւ ի խորին ծերութիւնն. ամէն: Եւ յետ աստեացս ելանելոյ լսել տացէ գերանաւէտ բարբառն, որ ասէ. Եկա՛յք աւրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք զանեսցան ուրախութիւնն անգրաւ յաւիտենից. ամէն:

Արդ, յերես անկեալ եւ յողոք դեղերեալ աղաչեմ զքարեմիտ հաւքդ իմ եւ զեղբարքդ, ողորմելով մեզ հիքացելոցս եւ խնդրել մաքուր աղօթիւք թողութիւն պարտեաց յանձնանաց տէր Յակոբ աբեղայի եւ ամենայն զարմիցն, եւ որք յիշէք զմեզ, լուեալ պաղատանաց մերոց, յիշեալ լիցիք եւ դուք ի Քրիստոսէ ողորմութիւնաւք յաւուրն մեծի՛ մեծի՛ տանեն. ամէն:*

Այլ եւս խնդրեմ ի ձէնջ՝ գծող սորա գիջանել՝ ըստ իս եւ անպարսաւս ըստգտանաց թողուլ եւ ներել անհմտութեանս եւ անտարր գծոցս, զի կարի տագնապաշատ եղեւ գրեալ, եւ թէպէտ իմ չանս ըստ կարի առեալ ի ձեռն կամաց պարզագրութեան եւ տրտհման տագրից եւ բանից, սակայն շտապաճեպութիւնն ընդ մէջ մտեալ արգել, այլ եւ ոչ ունելով ձեռնտու զվերծանութիւն քերթութեանն, վասն որոյ ոչ եղեւ ըստ կամաց իմոց ընտրութիւն սորին, եւ գոկարութեանս որչափութիւն լոեցից: Զի լաւ եւ ընտիր դիր էր օրինակիս, պարզատեսակ եւ կէսողոր, բայց ոչ գատուցեալ ըստ տեղւոյն գլխոց եւ բանագլխաց, եւ զի հուպ գոլով գրելն սորա Թարգմանութեան ժամանակին, եւ ոչ է բացորոշ ի միմեանց բանքն եւ մեկնեալքն ոճագլխիւք եւ ճառագլխիւք գերալրութեամբ կարգատրաբար, ըստ սահից Կիւրակոս վարդապետի ի վերոյգրեալն յիշատակի սակս աղաւաղելոյն նախնականի: Եւ թէ ոչ էր հանգիպեալ յառաջագոյն ոմն վարժ եւ անջատեալ գրանն նշանակաւ իմն սակաւու եւ շեշտիւ եւ պարուակաւ զամենայն, կարի իմն դանդազէի գհատակոտոր բանան տրոհել ի մեկնութիւնեան եւ կամ աղաւաղիւր ի դիպմանէ, որ եւ լայտ իսկ է բազում տեղիս ի գրածացդ: Որոյ ըստ աշխատանաց նորա վարձս բարեաց հատուցէ Քրիստոս՝ Աստուածն ամենայնի. եւ ինքն օրհնեալ եղիցի ի յաւիտեանս ժամանակաց. ամէն:

* *Քեռագրի գրիչր Յակոբ աբեղան է, սակայն յետագայում անունը հղկել եւ «Յակոբ աբեղայն բառերը գարձրել են առաջին տեղում՝ «Յեռեմի վարդապետն», երկրորդ եւ երրորդ տեղերում՝ «Յեռեմիայ վարդապետի»:*

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ *պհպ. Ասա՝ (սեւ թանաքով շրջան)* «Печать Ахалцыхской градской полиции»:

ՆԿԱՐԱԳՈՐԾ՝ *Ա. եւ Բ. փեղկի կազմաստառին մատիտով առիւծ, պհպ. Ասա «Ա»:*

ՆՇՈՒՄ՝ *կազմի մէջքին փակցուած պիտակին՝ (նոտարիր) «Յովհ.[ան] Ոսկեբերանի/ Մեկնութիւն Յոհ. Աւետարանին/// », պհպ. Ասա՝ «184/2688», «2-ի 192/22.», (կապոյտ թանաքով շրագիր) «Ռէմէ. - 1689 Մ[եարոպ] եպ[իսկոպո]ս»:*


2689

ՆԱՆԱ ԱՍՈՐԻ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԳՐԻՉ, ՍՏԱՁՈՐ՝ Ստեփաննոս վրդ. Տփխիսեցի: Մեկնեալ՝ Մատթիոս աւետեաց. Կեսարացի:

ԹԵՐԹ՝ 134 (գրչի ֆակսիմ. 1-251, որ՝ 3ա-130ա). չքուած՝ 1ա-3բ, 4բ, 130բ-4բ: ՊԱՏԱՆ՝ Ա-ԺԳ×10 (Ա. 13, ԺԳ 11): ՆԻՒԹ՝ թուղթ լուսաքրչվով, «MAL, Bertini», լուսակնիւով եւ գինաշրաններով: ՄԵՆՈՒԹԻՒՆ 28,5x20,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (22x15). սահմանագծերը՝ կարմրով: ԳԻՐ՝ նոստգիր (նմուշ՝ 65ա): ՏՈՂ՝ 34: ԿԱՉՄ՝ դռդմագաղց բաց շագանակագոյն կաշի, միջուկը ստուարաթուղթ. աստառը ծաղկազարդ թուղթ. լուսաներգակոդերը՝ դեղին:



Նմուշ 65ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ – *Կ ի ս ա խ ո ս ո ւ ա ծ* Տա: *Ջ ա ր գ ա գ ի ր* թղթագլիր (5ա, 8ա): *Գ ա յ ն ե ր* կարմիր, կապոյտ, դեղին, մանուշակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին վնասուած, ճռճռուած, տեղ-տեղ թափուած, գարերը՝ մաշուած-թափուած. գործածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, խոնաւութիւնից գրասպաստը գունսփռխուած, սկզբի եւ վերջի թերթերի առտաֆին լուսանցները՝ խոնաւցած:

ՌՄՄԸ. – 1809

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

[Նամայի Աստուծ Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին]

Տե՛ս նեւ. 2520, 13ա-255բ: – *Առջին/5ա-7բ: ա/8ա-74ա: – [Յորդորակ] 72ա-4ա (ս...անմահական պտղովք առ ի բերել ժառուցից ի փառս ամենասուրբ Երրորդութեանն/// վերջը՝ թերի) բ/74բ-130ա: – [Յորդորակ] 129բ-30ա:*

Լմմտ. Նամայի Աստուց վարդապետի Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին, Թանգարան Հայկական Հին եւ Նոր Դպրութեանց, Է., Վենետիկ, 1920:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

4ա Շնչամաքուրն Յովհաննու օրըագնասուրբ Աւետարանի բանիցն Երբից տեսութիւն, մեկնաբանեալ ի Նամայէ Աստուց պանծալի լիմաստասիրէ, որ ըզգաճախ սիրով ստացաւ ի յարքայաճոին մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս, գաղափարեալ շնորհիւ Հոգւոյն լրնտիր օրինակէ, ի վայելս նուաստ անձին իմոյ Ստեփաննոս ապարդիւն վարդապետիս Տփխիսեցւոյ, զոր եւ յետ իմ վայելողդ յարգելիք արասջիք յիշման

արժանիս արժանընդունակ ձեր սուրբ աղօթիւքն զմեզ-սայիս ի խնդրուածս բարեաց, որ առ բազմագութ բարերար Քանն Հօր, որ եւ ձեզ եւ մեզ ողորմեսցի յաւուրն սոսկալի ի յաղերձ շնորհաց՝ իւրոց գոնէ իբրեւ զմի ի վարձականաց զմեզ հանգուցանելով՝ հանգոյն անառա-կին. ամէն:

Յամի Տեառն 1809, յամսոյն մայիսի, ի մեծն Պօլիս, ի շնորհաշատ հայրապետութեան Ամենայն Հայոց տեառն տեառն Եփրեմի ատաուածազարդ կաթողիկո-սին եւ ի պատրիարգութեան մեծին Պօլսոյ տեառն Յովհաննու ատաուածաբան եպիսկոպոսին, եւ ի յա-ռաջնորդութեան Յովածիծաղ քարելից քաղաքին մե-ծին Զմիւռնոյ տէրունի վիճակի լուսանկար մօրն պան-ծալոյ արամեանս ազգի ամենայն եկեղեցեաց Սուրբ էջմիածնի, որով եւ իսկ միաբանի տեառն Մարտիրոսի արքեպիսկոպոսի բազմաշնորհ իմս Ծնողի երջանկի Կեսարացւոյ ստացեալ գանձեցի ի փառս Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է յաւէտ օրհնաբանեալ. ամէն:

ՆՇՈՒՄ՝ կազմի մէջքին փակցուած պիտակին՝ (նոտրգիր) «*Ընանալ վարդապետի Ասուրոյ / Մեկնու-թիւն Յովհաննու աւետարանին*», *Ի*ա՝ «*186/2689*», (*կապոյտ քանքարով շղագիր*)՝ «*1809, Մ*[*եսրով*] *եա*[*խպոպ*]*ոս*»:


2690

ԺՈՂՈՎԱԾՈՅ


ԵՂԻԱՋԱՐԻ ՎԱՆՔ Պկէ. – 1418

Գիրք՝ Ղազար (1ա-94ա), Բառեղ վրդ. (95ա-114բ), Կարա-պետ եպս. (119ա-326ա): ՄԱՂԱԿՈՊ ԿԱՋՄՈՑ՝ Յովհաննէս: ՍՏԱ-ՑՈՂ՝ Բառեղ վրդ. (գիշը):


Թերթ՝ 333+2+1-1 (տե՛ս Վիճակ, կէկն՝ թ 73, թուիչ՝ 233-5) չգրուած՝ 94բ, 115ա-ն, 326բ-333բ: ՊՐԱԿ Ա-ԸՀ12 (Ը 13) +12+9+Ա-ԺԸ×12 (Ա 13): ՆԻՒԹ՝ թուղթ (թ. 118՝ մազաղաթ): ՄԵ-ԾՈՒԹԻՒՆ՝ 26,5×18: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (21.5×14). սկզբնատող-ներ՝ կարմրով եւ մանուշակագոյնով: Գիր՝ նոտրգիր (1ա-94ա՝ նմուշ՝ 33ա, 95ա-114բ, նմուշ՝ 106ա), բոլորգիր (119ա-326ա՝ նմուշ՝ 204ա): ՏՈՂ՝ 37 (1ա-114բ), 29 (119ա-326ա): ԿԱՋՄ՝ դաշնակագոյն շագանակագոյն կաշի, դամակով, միջուկը տախ-տակ, ատամաւոր զարդանկիւս կարմիր մետաղ. լուսանցակողերի կարմիր ներքին գիծ: ՊԱՀՊԱՆԱՆ՝ 2 (Բ-Գ՝ սկ.)՝ ձեռագրի թղթից, չգրուած (Քաք):



Նմուշ 33ա



Նմուշ 106ա




Նմուշ 204ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ – եաչեպիւռ*, չուս անկիւններում աետաուածիչների պատկերները, Քրիստոսի գլխավերեւում Հայր Աստուած եւ Սուրբ Հոգի («ԵՒ ՄՏԱՆԷ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԵՒԱՆՈ-ՍԱՑ», «ԱՅՍՍՐ ԵԼԱՆԷ ՍԻՈՆ», «ՂՈՒԿԱՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ», «ՅՈՎ-ՀԱՆՆԷՍ»)՝ 118բ, եփեսի Աառի եւ Յովհաննէս ոսկեբերան («ՍՈՒՐԲՐՈՅ ՔՕՐԵՒՔ», «ՍՈՒՐԲՆ ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ»)՝ 120բ. Կի-սախոտան՝ 121ա: Ճակատագրի՝ 1ա, 95ա, 119ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչուն: Զարդագիր՝ թռչնագիր, ճանճուցագիր, Ջ սկզբ՝ մարդու դէմ՝ 177բ: Գոյներ՝ կապոյտ, կարմիր, դեղին, վարդագոյն, նարնջի, ոսկի, կանաչ, սպիտակ, մոխրագոյն, շագանակագոյն, սեւ:

* *Թ. 118բ՝ մագաղաթի, հաւանաբար յետագայի մուծում, մանրանկարը այլ ձեռքի գործ է, արուած ուրիշ ժամ ու դարի սկզբներին, եւրոպական ազդեցութեամբ:*

ՊԱՏԱՒԻՒՆ-ՊԱՀՊԱՆԱՆ – Աետաուան Յովհաննու Ե., 10-27, Մաղոսի Թ., 21-36: Ժ-Ի. դար՝ Ի (Ա) + Ի (Գ)՝ ստացուած սեփա-կան թերթերի ընդհատումների հատուածով: Մագաղաթ, 26.5×17.5, երկսիւն (22.5×15.5): Ուղղագիծ երկաթագիր (նմոյշ՝ Աբ): Տող՝ 22. գծումներ ճնշումով: Կարդալ՝ Աաւ, Աբ. «//Ռեզ զբուն կենդա-նի: Աակ ցնս կին՝ե... եւ զաուհանային զի բնդ կ[ոչն խասիր]///» (Յովհ. Դ., 10-27), կարդալ՝ Դաւ, Գբ. «///[բազ]ում անգամ ի ճուռ առեաեէ... բնկպզի յաեուն իմ գիս բնդուեի///» (Մաղ. Թ., 21-36):



Նմուշ Աբ

ՎԻՃԱԿ՝ բաւաարաւ. կազմի կաշին մաշուած, ճեռնուած, տեղ-տեղ՝ աուաեկապէս անկիններու մաշուած-թափուած, եռեխեանն կապիչներն ու զամերն բնկած. մնում են Ա փեղկին՝ զամերի ճեռքերը, Բ փեղկի ճեռի կողմում 2 կապիչների ճիմերը, լուս-անցնկողերի կարմիր թափուած ներգուած, գործածութեան եւ խոնաուածքների հետեանքով զանգաղ բծեր, դեղին ճեռներ, Ա պրակի առաջին 2 թերքը ճամաուկաւոր ոչնչ պաճպա-նակ Բ եւ Գ., թ. 308-33 եւ պատկ-պճա. Դ ցեցի անցքեր, պաուա-ռիկ-պաճպանակ Ա-ի աուամին լուսնկեր ճերամուռուած զրա-դաչտը մասամբ վնասուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1ա-94ա* Մեկնութիւն Յորայ հաւաճեալ համա-ռատ վանականի վարդապետի

Տե՛ս նաեւ. 1166, Ի*ա*-99ա: *Յատուկաբանութիւն*՝ *1ա*բ: 1/*1բ-15ա*: 2/*15ա-5բ*: 3/*15բ-23ա*: 4/*23ա-4բ*: 5/*24բ-9բ*: 6/*29բ-31ա*: 7/*31ա-7ա*: 8/*37ա-9ա*: 9/*39ա-42ա*: 10/*42ա-3բ*: 11/*43բ-6ա*: 12/*46ա-7բ*: 13/*47բ-50ա*: 14/*50ա-1բ*: 15/*51բ-4բ*: 16/*54բ-5բ*: 17/*55բ-7ա*: 18/*57ա-62ա*: 19/*62ա-5ա*: 20/*65ա*բ: 21/*68բ-71ա*: 22/*71ա-2բ*: 23/*72բ-3բ*: 24/*73բ-5բ*: 25/*75բ-82բ*: 26/*82բ-90ա*: 27/*90ա-94ա*:

Բ. *95ա-114բ* Մեկնութիւն համառօտ Դանիէլի մարգարէի, զոր հոգիապայծառ եւ իմաստախոհ

վարդապետին Վարդանայ շարադրեալ է ի հոգեկիր մեկնողացն ձայնից եփրեմի, Հիպոլիտայ, Ստեփանոսի Սիւնեցւոյ, ի խնդրոյ ուսումնասէր մանկանց, առ ի դիւրաւնս ընթերցողաց

1. *95ա-7ա* [Տեսիլ առաջին] – Մերձաւոր մեր եղբարք եւ ոդեակիր յօժարեցիմ զեռաւորութիւնս... *վասն որոյ ասէ մեծացաւ Դանիէլ առաջի ամենայն ժողովրդեանն:*

2. *97ա-8ա* Տեսիլ երկրորդ – *Եւ զառաջինն ևս տեսիլ կոչէ... զի այս ամենայն տեսութիւք կային աստ:*

3. *98ա-100ա* [Տեսիլ երրորդ] – *Իսկ երրորդս յայտնի է թագաւորին վերագս տեսանել եւ մոռանալն... եւ ի պատրանաց մեծութեանց այսպիսի ինչ արար, որ ասէ:*

4. *100ա-2բ* Տեսիլ չորրորդ – *Ջոր սովոր է գիրս այս պատմութիւն ինչ իրաց տեսիլ անուանել... ի գոհութիւն քաւչին եւ ողորմածին Աստուծոյ:*

5. *102բ-9ա* Տեսիլ Ե.երորդ (5) – *Ասեն զի խորք մարդասիրութեանն Աստուծոյ... աւրինելոյն ի Հայր եւ ի Հոգին Սուրբ յաւիտեանս:*

6. *109ա-10բ* Տեսիլ Զ.երորդ (6) – *Յամին երրորդի կիւրոսի պարսից արքայի... ունելով զհոգս թագաւորացն եւ գտեսս կռապաշտիցն:*

7. *110բ-2բ* [Գլուխ ԺԱ., Բան Ա.] – *Եւ ես առաջնում ամի Կիւրոսի կացի ի զօրութեան եւ ի հաստատութեան... զոր սուրբ լեառն Սաբրիայ ասէ:*

8. *112բ-4բ* [Գլուխ ԺԲ., Բան Ա.] – *Եւ ի ժամանակին յայնմիկ յարիցէ Միխայէլ հրեշտ[ակ], յորժամ յաճախէ նեղութեանցն... ի վերայ գլխոյն, մինչեւ գամենայն գէշ գէշ պատառեցին առաջի Նորա:*

9. *114բ* [Յիշատակարան հեղինակի գոյս] – *Աւրհնելով եւ փառաւորելով զԱստուածն յաւիտենից Դանիէլին հանդերձ... եւ հրեշտակաց եւ սրբոց Աստուծոյ:*

Միաւորների դասակարգումը՝ ըստ տպագրի. տե՛ս Վարդան Արեւելցի, Յովհաննէս Մործոփեցի, Թովմա Մեծոփեցի, Մեկնութիւնք Մարգարէութեանն Դանիէլի, Երուսաղէմ, 2007, էջ 19-164. գրիչը 3, 7-9 միաւորները չի առանձնացրել:

Գ. *119ա-325ա [Գեղրգայ Սկեւռացւոյ Մեկնութիւն Գործոց առաքելոց]*

Տե՛ս ձեռ. 1362, թ. 3ա-80ա: *Գրութիւնք/119ա-20ա: Յառաջաբանութիւն/121ա-2ա: ա/122ա-բ: բ/122բ-4ա: գ/124ա-8բ: դ/128բ-31բ: ե/131բ-6ա: զ/136ա-9ա: է/139ա-42ա: ը/142ա-5ա: թ/145ա-7բ: ժ/147բ-9բ: ժա/149բ-54ա: ժբ/154ա-7ա: ժգ/157ա-9բ: ժդ/159բ-62բ: ժե/163ա-5բ: ժզ/165բ-9բ: ժէ/169բ-73ա: ժը/173ա-7ա: ժթ/177բ-80բ: ի/180բ-7ա: իա/187ա-91բ: իբ/191բ-6ա: իգ/196ա-9բ: իդ/199բ-203բ: իե/203բ-6բ: իզ/206բ-9բ: իէ/209բ-12բ: իը/213բ-7ա: իթ/217ա-9բ: լ/219բ-21բ: լա/221բ-5ա: լբ/225ա-8բ: լգ/228բ-32բ: լդ/232բ-6բ: լե/236բ-42բ: լզ/242բ-7բ: լէ/247բ-50բ: լը/250բ-3բ: լթ/253բ-6բ: խ/256բ-61բ: խա/261բ-5բ: խբ/265բ-8ա: խգ/268ա-72ա: խդ/272ա-6ա: խե/276ա-8բ: խզ/278բ-83ա: խէ/283ա-6բ: խը/286բ-9բ: խթ/289բ-93բ: ծ/293բ-7ա: ծա/297ա-300բ: ծբ/300բ-4բ: ծգ/304բ-8ա: ծդ/308ա-14բ: ծե/314բ-9բ: ծզ/319բ-21բ: ծէ/321բ-5ա:*

ՅԱՀԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ, ԺՋ. դար.

Պիսպ. Գա Հմայագիր* – *(սկ. անընթեռնելի, կարդացւում է մնացած 5 տողը) ///ու ընդ իւն անկանի եւ բարով ազատի, սիրէ եւ ի մարդէ բաղդ չի ունի... ուխտի տուն հարսն մ///:*

* *Պիսպ. Գր, թ. 93բ, 94աբ՝ նոյն գրով, խոնաւութիւնից անընթեռնելի:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԹՈՒՐԿՄԱՆԶԻ

325բ (1076 թ., բոլորգիր) Ազէրս նորոգ ստացողի եւ աշխատասիրաբար նորոգողի բուն Մեկնութեանն, յորմէ այս համառօտեցաւ:

Յամի վեց հազարերորդի հինգ հարիւրերորդի ազգնեղորդի արարածոց աշխարհի (1076) եւ ի հազարերորդի եւաճառասներորդի եւթներորդի կենարարին մերոյ գալստեանն (1077) եւ ըստ Հոսրովական թուոյ հայկազանց հինգ հարիւր[եր]որդի քսաներորդի հինգերորդի (1076), ի թագաւորութեանն Միխայելի որդւոյ Դուկիթի եւ ի պատրիարգութեան Կոզմայի երկրքնակի՛ եւ՝ Գրիգորիս՝ որդի Գրիգորի Պալեաւանոյ, ողորմութեամբ մեծին Աստուծոյ արժանացեալ աթոռոյ հաւուն իմոյ՝ սրբոյն Գրիգորի եւ ըստ յառաջատեսեալն սրբոյն Սահակայ, ի սաստկացեալ սրոյ սկիբեացւոցն հալածանօք հասի ի պայծաչէն կայանս սրբոյն Կոստանդինաճոսի եւ մեծաւ ըղձմամբ հայցեալ գտի զտեն չալիս յոգունց, գգերարհաւ Մեկնութիւն Գործոց առաքելոցն մեծին Յովհաննու Ոսկեբերանի՝ լուսաւոր եւ ոգեշահ վարդապետութեամբ: Եւ հանդիպեալ հմտագոյն հռետորին Կիրակոսի՝ յունական եւ հայկական ումանմն պերճացեալ, եւ առատաձեռն արգասեալ եւտու թարգմանել տենչալիս ոգւոյ իմոյ, եւ ընկալեալ սրտալիր ուրախութեամբ իբրեւ գտանելական նախամարգարէին եւ մեծաւ տաժանմամբ գտանեալ գհամատարածն Վիրիայ եւ Ասիական ծոցոյն, խնամօքն Հոգւոյն հասի ի բաժինս Սեմա ի ստորուտս Տաւրոսի, ի հրեշտակաբնակ կայարան սրբոցն, եւ գտի անդ զհոգեշնորհ գիտնականն Կիրակոս՝ որդի իմ ըստ հոգւոյ եւ աշակերտ մեծ գիտնականին Գէորգեայ՝ փոխանորդին մեր: Եւ սորա յօժարակամ մտօք աշխատութիւն գանձամբ առեալ՝ ըստ առատաւոր Հոգւոյն պարգեւացն, վերստին արծարծեալ զիստրինացեալ բանս հռետորին, յեղանակելով ի դիւրալուրս եւ յարմատականս մերոյիմս ազին: Արդ, մաղթեմ զամենե|326ա|սեան, որք հանդիպիք այսմ հոգեհատուղս պատգամացս, յիշել գիմս կաղդղութիւնս ի Տէր սրտի մտօք, ընդ ինեւ եւ գաշխատօղսն ի սմա, եւ գրել գփոքր յիշատակարանս ընդ սմին գրոց՝ յորժամ գրեսջիք, եւ մի՛ պակասեցուցանել, զի եւ զձեղ գրեսցէ Տէր ի գիրս կենաց՝ յաշխար-

հին կենդանեաց, որ է եւ եղիցի աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

6501 թուականը արաքսութեան թուականի Ալէքսանդրեան տարբերակով է 6501-5425=1076: Յիշ-ս 2^որ 1315 ձեռ-ից առել են՝ Յովս. Յիշ-ք, էջ 253-6, 2^որ 117. հմմտ. Ե-ԺՒ. գգ. յիշ-ք, էջ 108-9, 2^որ 129:

114բ (1267-Ց ՔԹ., Նոտրգիր) Եւ ինձ իակ՝ անարժանիս, եղեւ բաղձալի փոքր-ինչ վաստակել ի բանս նորա՝ զորբոցն խօսս վասն գրոց նորա դնել առ իրեարս, յորոց շատ մնացեալ լինի ի յոյով հոգւոց իմոց եւ ի ցնորից, եւ զոր չէին առեալ ի մեկնութիւն յայնց բանից, գնէաք լուծմունս, եւ շատս ՅՈՂՈՒԱՔ՝ վասն ձանձրանալոյ զբնաբանն չգրելով: Եւ յաղագս ամենեցուն երկնչիմ եւ խնդրեմ ներումն եւ ՅՈՂՈՒԹԻՒՆ եւ ողորմութիւն յԱստուծոյ եւ յիւրմէնն եւ ի սուրբ հրեշտակաց եւ յեղբարց եւ յորդոյդ, որք պատահիք՝ չբարկանալ մերում համարձակութեանս, պատճառ ունելով գլոյսն եւ զսէրն ի սուրբն Աստուծոյ, որ միայն յԱստուած նայելով եւ ի մեզ բարի կամօք հաւատամք սրբիլ եւ հաճոյ երեւել Աստուծոյ եւ սուրբ եկեղեցւոյ, ամօթոյս եւ անհաճոյս որ քան յինէնէ:

Այլ եւ եղբայրքն՝ որ ընդ մեզ, շատ հարկեցին զմեզ եւ աճեցուցին զյոյսն իմ ի Քրիստոս եւ ի Դանիէլ, որ գնայն աստուածաբանեաց եւ կանխաւ գուշակեաց՝ կրելով գնա յանարք[աւո] ոգւոյն: Եւ սկսաք ի ՉԺՉ. (1267) թուին, ի սուրբ Վիրապին եւ կատարեցաւ ի ՉԺԷ. (1268), առաջի սուրբ եւ փառաւոր նահատակիս Սուրբ Ստեփաննոսիս, ի սուրբ ուխտս Աղոց վանիցս, յառաջնորդութեանն Երեմիայ գովելի ասպնջականի եւ գոհանալի եղբարց:

Արդ, աղաչեմ զամենեսեան սիրովն Քրիստոսի գպատահելոյդ Ներել պնալանացն մեր յամենայն իրս եւ զոր ի գիրքս յայս, եւ խնդրել յԱստուծոյ մեզ ողորմութիւն եւ ՅՈՂՈՒԹԻՒՆ մեզաց եւ ամենայն երախտաւոր պարտեացն Սադունին, Սմբատայ, Քրթին, Պոօչոյ եւ ամենայն բնակչաց երկրիս եւ եղբօր մերոյ Ներսէս վարդապետին, որ եւ գնա աշխատեցաք ի գիրս: Եւ աւրհնեալ է Քրիստոս Աստուած ի սուրբս իւր եւ յարաբածս ի բոլոր եւ ի մասնաւոր, ընդ Հօր եւ ամենասուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Այս յիշ-ք՝ որպէս այլ 2^որ 4534 ձեռագրի գրչութեան յիշ. տե՛ս ԺԳ. դ. յիշ-ք, էջ 365-6:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Պհպ. Գը (կարմրով) Աւգնեա՛յ Հոգիտ Սուրբ Աստուած ճշմարիտ: Ջգործս ձեռաց մերոց ուղիղ արա՛յ ի մեզ, Տէր, զգործս ձեռաց մերոց աջողեա՛յ մեզ:

94ա Արդ, եա՛ կորուսեալ եղկելիս եւ թշուառականս Ղազար անպիտան, որ փոյթ յաւժարեմ ի զանազան չարիսն եւ ծոյլ ի բարիս, յերես անգեալ աղաչեմ գրաբունդ բարի եւ երանելի վարդապետ ճշմարտութեան եւ քանոն ուղղութեան, քաջ պրլէտիկոս եւ իմաստուն սոփեստէս տէր Գրիգոր՝ Արթում անուն, զքեզ քո սրբազան դասուց աշակերտաւոր պաղատիմ եւ խնդրեմ, որ գաղտեղացեալ եւ գտգիտացեալ տիղմս տաղտկալի ոչ անտես առնես, այլ միով Ողորմոյ արժանի առնես գիտոր խոցեալս, եւ սղալանացս եւ անարհեստ եւ խոշոր գրիս անմեղադիր առնես, քանզի կար տկարիս այս էր:

114բ Ընդ վերոյ յիշեցեալ անուանցս Վաղրանա սուրբ վարդապետին՝ համառաւտողի գրոցս Դանիէլի եւ նորին յիշեցեալ աշխատաւորացն յիշեսջիք եւ զիս՝ գպաիկարս ի բարեաց զԲարսեղս գփծուն գրիչս ի Քրիստոս՝ յոյն ամենեցուն, որ զսա գրեցի աւժանդակութեամբ եւ աջողութեամբ Հոգւոյն Սրբոյ՝ խնդրելով ՅՈՂՈՒԹԻՒՆ բազում մեղացս եւ Աստուած ողորմի ասել իմոցն ամենիցն: Այլ եւ գշնորհօղ աւրհնակին սուրբ գրոցս տէր Արխատակէսին խնդրել մեզաց ՅՈՂՈՒԹԻՒՆ. ամէն:

120բ (Ծաղկոզի) Զանպիտան հողս, զապիկար ծրողս, ո՛ պրւետիկոսս յիշեա՛ ի Քրիստոս: Նկարեցաւ ձեռամբ Յովհաննիսի ի ՊԿՀ. (1419) թուի:

187ա Ընդունողն Քրիստոս ապաշխարողացն ընդունի զստացող սուրբ գրոցս:

326ա (Ստացողի) Փառք համագով եւ միասնական, անբաժանելի սուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Որ եւտ կարողութիւն տկար անձիս Բարսեղ աստիանուն բանի սպասաւորիս, որ եւտու գրել զաստուածաշունչ տառս առաքելոց պրակիս, զոր մեկնեալ է սա Յովհաննու Ոսկերերանին եւ սուրբ հօրն Եփրեմի եւ ՓԱՐԳՄԱՆԵԱԼ է ի յունաց ի հայս Գրիգորի Վկայասիրի Պալհաւունոյ (վերջին բառը՝ լուսանցում, մանրագիր):

Արդ, գրեցաւ ի մեծ Թուականին հայոց ՊԿՀ. (1418), ի դուռն Երկոտասան սուրբ Առաքելոցն Եղիազարու վանացն՝ յիշատակ ինձ եւ ծնօղաց իմոց:

Այդ եւ ուսուցչին իմոյ՝ քաջ հռետորին Սրապիոն բարեմնապետին եղիցի յիշատակ մատեանս այս:

Արդ, աղաչեմ զձեզ, ո՛վ բարեմիք եւ աշակերտեալ մանկունք, յոյժամ ընթեռնուք եւ կամ աւրինակէք գմեկնութիւն Գործոց առաքելոցս, յիշեցէ՛ք ի սուրբ յաղօթս ձեր զԲարսեղ վարդապետս եւ գամենայն ագգաւորո[մ]ն իմ: Եւ որք յիշէք, յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյ:

326ա (ստ. լս.) Կատարեցաւ աստուածաշունչ տառս, որ է պրակք առաքելոց, փետրվար ԻՒ.:

326ա Գծագրեցաւ ձեռամբ Կարապետ եպիսկոպոսի եւ ծաղկեալ կազմեցաւ ձեռամբ մեղապարտ Յովհաննիսի: Ընթերցողք, ասէք Ողորմի:

ԿՆՔԱԶՐՈՑՔ՝ *պհպ. Բա. սեւով բոլորակ՝* «Печать Ахалцыхской градской полиции». 326ա. *սեւով բոլորակ՝* «ԲԱԼԲԱԿ ՎԱԼՐԴԱՊԵՏ ՇԱՂԱՅ ՅՈՍՈՒԻ ՔՐԻՍՏՈՍԻ»:

ՆԿԱՐԶԱՓՈՐՁ՝ *94բ՝ ձի, լուսանցազարդ, թռչուն:*

ԳՐՁԱՓՈՐՁ՝ *պհպ. 9բ՝ (նոտրգիր) «առաքից, ասի»:*

ՆՇՈՒՄ՝ *կազմի մէջքին փակցուած պիտակին՝ (նոտրգիր) «/// Վանական / վարդապետի / ///ածոյ Մեկնութիւն / [Յոբ]այ», պհպ. Բա՝ «193/2690», «Հ՝՝՝ 177/33», «Պկէ. - 1418 / Մ[ատոս] եպ[իսկոպո]ս»:*


2691

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀԵՑԻ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՆ ՊՕՂՈՍԻ


ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ, ԵՂԻԱԶԱՐՈՒ ՎԱՆՔ (ՏԱՐՕՆ) ՌԿԷ.-ՌԼԶ. – 1618-1627

ԳՐԻՉ՝ Կարապետ կրօնաւոր: ՆԱՂՈՂ, ԿԱԶՄՈՂ՝ Սահակ ՀԿ. Բաղիշեցի: ՍՏԱՑՈՂ՝ Բարսեղ ոսարուեպետ:

Թերթ՝ 256, չգրուած 254բ-ճբ. Գրված Ա-ԽԲ×12 (ԽԲ՝ 4): Նիւթ՝ թուղթ: Մեծութիւնը՝ 29,5x20.5: Գրութիւնը՝ երկսիւն (22.5x14.5): սկզբնատառողներ՝ կարմրով եւ մանուշակագոյնով: Գիր՝ բոլորգիր (3ա-164բ. ճմուշ՝ 45ա), նոտրգիր (164բ-254ա. ճմուշ՝ 178ա): ՏՈՂ՝ 37: ԿԱԶՄ՝ դռդմնազարդ բաց շագանակագոյն կաշի, դամոկով եւ 2 կապիչով, միջուկը տախտակ. տատանը դռդմնազարդ կապոյտ կտաւ. վերին յատանգակոդերի հիմի մօտ՝ զարդաչրաձանի մէջ խոչ, ստորին յատանգակոդերի հիմի մօտ՝ զարդաճախոչ:




Նմուշ 45ա



Նմուշ 178ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Սկիզբ Աստի՛ւ եւ Յովհաննէ Ոսկեբերա՛ն («ՍՈՒՐԲՆ ԵՓՐԵՄ», «ՍՈՒՐԲՆ ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ»)՝ 2բ, Պօղոս առաքեալ եւ Ա՛նանիա Սանահնեցի («ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԱԼՆ ՊՕՂՈՍ»)՝ 11բ: Կ ի ս ա խ ո ր ա ն՝ 3ա, 12ա: Ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 49բ, 89ա, 114բ, 129բ, 146բ, 159բ. 171ա, 181բ, 192ա, 224ա, 236ա, 245ա, 251ա: Լ ու ս ա ն ց ա զ ա ր դ՝ բուսական, թռչուն, յուշկապարիկ՝ 168բ: Զ ա ր դ ա գ ի ր՝ ճաճանչագիր, թոյնագիր, կենդանագիր, Ծ՝ մէջը մարդու դէմ՝ 79բ: Գ ո յ ն ե՛ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, ծաղիկ, վարդագոյն, շագանակագոյն, սպիտակ, սեւ, ոսկի:

ՊԱՏՄԱԲԱՆ-ՊԱՀՊԱՆԱՆ – Աւետարան բստ Մատթէոսի, ԺԶ 19-28, ԺԹ. 4-14: ԺԱ. դ.՝ 1 (Ա) + 1 (Բ), ստացուած միջական թերթերի ընդերկայնակի հատումով: Մաքաղաթ, 29x19.5, երկսիւն (25.5x17): Բոլորգիր երկաթագիր (ճմուշ՝ Աբ), տող՝ 18. գծումներ՝ ճնշումով: Կարդալ՝ Աա, Աբ. ՝///[կապե]սցես յերկիր, [եղիցի]՝ կապեալ [յերկի]ինս... զոգի մարդոյ եկեալ արդարութեամբ իւրով՝///» (ԺԶ. 19-28), կարդալ՝ Բա, Բբ ՝/// [Պատասխանի եւ ն]ոցա եւ ասէ Ցիկէ՝ ընթերգեալ ձեր՝ [թէ ո՞ր հաստատացան... թո[լ տուի] մանկտոյ[ղ՝ եւ] մի արգելու[լ]՝//» (ԺԹ. 4-14): Ունի ստորին յատանգային համաբարբառ:



Նմուշ Աբ

Վիճակ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, ճեռնուած, տեղ-տեղ՝ առանկապէս անկիւններ մաշուած-թափուած, չուրս կապիչներից 2բ եւ 4 գաճերն բնկած. մնում են Ա. փեղկին՝ գամերի անցիքը, Բ. փեղկի ներսի կողմում՝ 4 կապիչների հիմերը. գոծածութեան եւ խոնաւութեան հետեւանքով զանազան բծեր, դեղին հետեւեր, թ 199-256 ստորին առաջին անկիւններու անախորժ չրից խոնաւացած, մզացած, բորբոսի հետեւով, պատառոտկ-պաճպանակների ներքին յատանգներ 1,5 սմ լայնութեամբ մնացած կազմատատի կլոստի տակ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յա-252բ [Անանիայ Սանահնեցւոյ Մեկնութիւն թղթոցն Պօղոսի]

1. ա. *Յա-4ա* [Պատճառք թղթոյն Հռովմայեցւոց] — *Բազումք հաւատացին ի Քրիստոս... եւ ցածուցանէ դհակառակութիւն:*

բ. *4ա-6բ* Յաղագս թղթոց առաքելոյն այսպիսի իմանալի է — *Զի ոչ առին հրամանս... իշխանութիւն եւ պատիւ:*

գ. *6բ-9բ* Այլ պատճառք առաքելական թղթոյն: Վասն թղթոց առաքելոյ, թէ որպէս կարգեցան գնալ միմեանց: Նախ թէ որ յառաջագոյն նորոգեցաւ կամ ուսաի — *Զհռոմվայեցւոց ՅուղԹին յառաջագոյն եդեալ են... խորհրդոյս, որպէս եւ կամին:*

դ. *9բ-10բ* Յովհաննու Ոսկեբերանի Պատճառ թղթոյն Հռովմայ — *Յանգ եւ հանապազ ընթեռնուիմ գգիրս... տեսանել առ Պօղոսի անձինն:*

ե. *10բ-48ա* Սրբոյն Եփրեմի Պատճառ թղթոյն Հռովմայ — *[Գ]իտեմ, դի նոր կատակարանքս... ազգաս լինել այակերտելոցն:*

2. ա. *48ապ* Սրբոյն Եփրեմի Պատճառ Առաջին Կորնթացւոց թղթին — *Աս Կորնթացիս իբրեւ էհաս առ նոսա... առաքեալ գրեաց գայս:*

բ. *48բ-88ա* Յովհաննու Ոսկեբերանոյն Պատճառ Առաջին թղթոյն Կորնթացւոց — *Կորնթոս քաղաք է ելլադացւոց... եւ մարմնական, այլ հոգեւոր իմն է:*

3. ա. *88ա* Տեառն Եփրեմի Պատճառ Կորնթացւոց — *Հալածումն մեծ եւ անհնարին չարեաւ... եւ աղաչէր գնոսա:*

բ. *88ա* Եւթաղեայ — *Ամենայն բանք թղթոյս այսորիկ... ամբարտաւանութեանց եւ չարութեանց:*

գ. *88բ-113բ* Յովհաննու Ոսկեբերանին Պատճառ Բ. Կորնթացւոց — *Պարտ եւ պատշաճ է ինքնին մտանել... եւ լինել բնակարան սուրբ Երրորդութեանն:*

4. ա. *113բ* Սրբոյն Եփրեմի Պատճառք Գաղատացւոց թղթոյն – *Գաղատացիքն աշակերտեցան ի Պաւղոսէ... ընդդէմ նոցա յասելն իւրում այսպէս Պաւղոս*:

բ. *113բ-29ա* Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին Պատճառս Գաղատացւոց թղթոյն – *Բազում ցաւմամբ լի է սկիզբն բանիս... մոլորութենէն հեռացուցանել զնոսա*:

5. ա. *129ա* Պատճառ Եփեսացւոց թղթոյն Եփրեմի սուրբ հօրն ասա՛՛ – *Եփեսացիքն աշակերտեալ էին յաւետարանչէն... որպէս ի վերուստ յաղագս Քրիստոսի*:

բ. *129ա-45ա* Պատճառս Յովհաննու Ոսկեբերանին առ Եփե՛՛ – *Եփեսոս մայր քաղաքաց է ասիացւոց... եւ արդարութիւնն անեղծ*:

6. ա. *145ա* Սուրբ հօրն Եփրեմի Պատճառք թղթոյն Փիլիպեցւոց – *Հալածումն մեծ յարեան ի վերայ Պաւղոսի... այսպէս՝ Պաւղոս եւ Տիմոթէոս*:

բ. *145բ-59ա* Յովհաննու Ոսկիբերանի Պատճառք թղթոյն Փիլիպեցւոց – *Փիլիպեցիքն ի քաղաքէն Մակեդոնացւոց են... գործովք առաքինութեամբ, զի հանապազ ընդ մեզ եղիցին*:

7. ա. *159ա* Սրբոյն Եփրեմի Պատճառք Կողոսացւոց թղթոյն – *Կողոսացիքք աշակերտեալ էին... ի սկզբան թղթոյս իւրոյ այսպէս*:

բ. *159ա-71ա* Յովհաննու Ոսկեբերանի Պատճառք Կողոսացւոց թղթոյն – *Ամենայն սուրբ թուղթքն Պօղոսի... ի ձեռն Տիւքիկոսի եւ Ոնեսիմայ*:

8. ա. *171ա* Սրբոյն Եփրեմի Պատճառս Առաջին թղթոյն Թեսաղոնիկեցւոց – *Պաւղոս իբրեւ հալածեցաւ ի քաղաքէ անտի... առաքեալ յԹեսաղոնիկեցիս յասելն իւրում այսպէս*:

բ. *171ա-80բ* Սրբոյն Յովհաննու Ոսկիբերանի Պատճառս Առաջին թղթոյն Թեսաղոնիկեցւոց – *Ընդէր յորժամ առ Փիլիպեցիսն գրէ... քանզի մեծ երկիւղէր նոցա յիրացն*:

9. ա. *180բ-1ա* Սրբոյն Եփրեմի Պատճառս Բ. թղթոյն Թեսաղոնիկեցւոց – *Թեսաղոնիկեցիք կինի այսր... գրել նոցա յասելն իւրում այսպէս*:

բ. *181ա-3ա* Յովհաննու Ոսկեբերանի Պատճառ Բ. թղթոյն Թեսաղոնիկեցւոց – *Ասաց յառաջնում թղթին... եւ ի համալ զիոտելի բանս թղթոյ նոցա*:

10. ա. *183ա* Սրբոյն Եւթագեայ Պատճառք Երրայեցւոց թղթին – *Երբայեցւոց թուղթս թուի թէ յիցէ Պաւղոսի... յառաջ մատուցեալ ցուցանել*:

բ. *183ա-9ա* Սրբոյն Եփրեմի Պատճառք Երրայեցւոց թղթին – *Ի սկզբան իսկ թղթոյս այս ծուի եւ խնդիր... ասէ ի սկզբան թղթոյն իւրոյ այսպէս*:

գ. *189ա-90ա* Սրբոյն Կիւրղի Պատճառք [թղթոյն] Երր[այեցւոց] – *Եւ ի վերայ լերինն բարձու... սկիզբ արարի ասել*:

դ. *190ա* Որոգինի յԱկեղեցւոյ պատմութենէ – *Բայց ասաց նա դարձեալ... եւ թարգմանեաց Կղեմենտէս ի յոյն անդր*:

ե. *190ա-223ա* Յովհաննու Ոսկեբերանի Պատճառք երրայեցւոց թղթին – *Հռովմայեցւոցն գրէ երանելին Պօղոս... ծառայի եւ տեառն, ծերոյ եւ տղայի, ամէն*:

11. ա. *223ա* Սրբոյն Եփրեմի Պատճառք Առաջին թղթոյն Տիմոթեայ – *Առաքեալ յղեաց զՏիմոթէոս առ Եփեսացիսն... նա ինքն է եկեղեցի Աստուծոյ յասել իւրում այսպէս*:

բ. *223բ-35ա* Յովհաննու Ոսկեբերանի Պատճառք Ա. թղթոյն Տիմոթեայ – *Յեւթանասնից առաքելոցն էր Տիմոթէոս... ամենայն ինչ բարւոք լինի*:

12. ա. *235ա* Սրբոյն Եփրեմի Պատճառք երկրորդ թղթին Տիմոթեա – *Պաւղոս ծանեաւ հոգւովն... ի Հռոմ քաղաքէ առ Տիմոթէոս յասելն իւրում այսպէս*:

բ. *235բ-44բ* Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի Պատճառք Բ. թղթոյն Տիմոթեա – *Ջիարդ իցէ, զի երկրորդ թուղթ գրէ առ Տիմոթէոս... յորժամ այն լինիցի, չէ ինչ, որ տրտմեցուցանէ*:

13. ա. *244բ-5ա* Սրբոյն Եփրեմի Պատճառք Տիտոսի թղթոյն – *Պաւղոս սիրող զՏիտոս ի կրետէ... գրել առ Տիտոս յասելն իւրում այսպէս Պաւղոս*:

բ. *245ա-50ա* Յովհաննու Ոսկեբերանին Պատճառք Տիտոսի թղթոյն – *Քան զամենեսեան, որ ընդ Պօղոսին էին... եւ ահա ամենայն ինչ ձեր սուրբ է*:

14. *250ա-2բ* Յովհաննու Ոսկիբերանի Պատճառք Պիլիմոնի – *Նախ պատճառս թղթոյս կարեւոր համարիմ... որ եւ մեք աղօթիւք սրբոց փրկեսցուք յանիտենից մահուանէն, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր եւ Հոգւոյն Սրբոյ փառք յանիտեանս. ամէն*:

Լուսանցներում (51ա, 83բ, 155ա եւ այլուր) կան ազգերների նշումներ եւ լրացումներ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԱՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

49բ Եւ զեղկելի գրիչս՝ գօտւտանուն Կարապետս, եւ զծնօղսն իմ, որք ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ յիշեցէ՛ք ի Քրիստոս:

79բ Եւ զստացող սուրբ կտակիս զտէր Բարսեղ բարեպաշտին եւ գաւտուածաբան վարդապետն, որ ետ գրել նուաստ գրչի՝ սուտանուն Կարապետի՝ յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց եւ եղբօրն՝ մահդասի Ապտուլին: Եւ որ յիշէ, յիշեալ լիցի յահեղատեա՛[նի]:

252բ Աւարտեցաւ սուրբ գիրքս Պաւղոսի, զոր մեկնեալ են աստուածաբան վարդապետքն սուրբն Եփրեմ եւ սուրբն Յովհան Ոսկիսբան, ի թուականութեանն հայոց Ռ. եւ ՀԴ. (1625), ի հայոց ի ԺԴ. (13) քաղոց, ի հռովմայեցոց փետրվարի ԻԵ. (25), ի Բուն բարեկենդանի ուրբաթին, ձեռամբ նուաստ Կարապետի, զի ի ՌԿԷ. (1618) թվին սկիզբն եղեւ եւ ի [Ռ]ՀԴ-ին

(1625) կատարումն, հրամանաւ վարդապետին իմոյ տէր Բարսղի, որ հրամայեաց նա, եւ ես գրեցի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, նա եւ եղբօրն իւրոյ մահդասի Ապտուլին, որ այս *Լ. (30)* ամ է հրաժարեալ յաշխարհէս եւ մրցեալ յերկիս աշխատութեանց մշտամուռնչ աղօթիւք եւ խարտեաղգետ ճգնութեամբ լիցի ի սմա մասն եւ յիշատակի. ամէն:

253ա Փառք ամենակալ, ամենակարող, ամենաբարի, անբաժանելի սուրբ երրորդութեանն եւ մի աստուածութեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, աւրհնեալ յաւիտենից. ամէն:

Արդ, ի ժամանակս յետինս եւ անբարի, դառն եւ դժուար ես՝ Բարսեղ վարդապետս, յետինս յորդիս Նոր Սիովնի, ցանկացող եղէ սուրբ տառիս, վասն որոյ եւ փափագեալ իմ աստուածախօս վարդապետութեան սուրբ առաքելոյն Պօղոսի՝ բացայայտեալ սրբոյ Հարցն Յովհաննու Ոսկերերանի եւ Եփրեմի, զոր եւ յետոյ այլք՝ ի սրբոց վարդապետաց համառօտեալ՝ Անանիայ վարդապետէ Սանահնին, որ էր ի ժամանակս կաթողիկոսութեան տեառն Պետրոսի, յաւուրս Դիոսկորոսի, առ ի պէտս սպասաւորաց բանի:

Եւ ես՝ Բարսեղ վարդապետս, եւտու գրել զայս բուրաստանս ամենալի, զանձ անկորոգպտելի՝ յիշատակ հոգւոյ իմոյ եւ միսիթարիչ մարմնոյ, սփոփիչ տրտմութեան եւ փարատիչ ձանձրութեան, եւ եդի ի դուռն վանացն Նոիազարու, զի մնացէ անձին յիշատակ ինձ եւ ծնօղաց իմոց՝ հաւրն (անուան տեղը բաց՝ չգրած) եւ մօրն, եւ եղբարցն իմոց մահդասի ծերունի Ապտուլին, որ ի բաղում ժամանակէ ճգնի ի դուռն նոյն վանացն, որ երկոտասան առաքեալք վերաձայնի, եւ այլ եղբարցն փոխեցելոցն առ Քրիստոս:

Արդ, ընկա՛լ զսա ողորմութեամբ քոմ որպէս զերկուս լումայս այրւոյն յանկարօտ գանձանակի փառաց քոց, եւ տո՛ւր մանկանց եկեղեցւոյ ուրախութեամբ հանդիպիլ սմա եւ ընդունել զսա ըստ հաճոյից կամաց քոց եւ տո՛ւր նոցա լինել երկիր բարի եւ պարարտ եւ արա՛ զսա նոցա սերմն սրբութեան եւ արդարութեանն՝ տալ քեզ պտուղն *Ճ.*աւոր *(100)*, *Կ.*աւոր *(60)* եւ *Լ.*աւոր *(30)*: Եւ որք ընծեռնուն սիրով եւ յանն եւ ընդունին, աղաչեմ զքեզ, տո՛ւր նոցա լուսաւորութիւն մտաց, սրբութիւն սրտի, ուղղափառութիւն հաւատոյ եւ հաստատութիւն սիրոյ եւ յուսոյ, եւ արա՛ զսա նոցա անբծութիւն հոգւոյ եւ գոլսումն ապաշխարութեան եւ թողութիւն մեղաց, եւ քաղցրացոյ զսա ի լսելիս նոցա եւ ի միտս՝ քան զմեղր բերանոյ, եւ արա՛ զսա մեզ կտակ կենաց եւ առաջնորդ երկնայնոյ ճանապարհին եւ ի լսել զբանս զայտոսիկ, ընդ նմին լցո՛ զնոսա հոգւով երկիւղի եւ հոգւով իմաստութեան, որպէս երբեմն լցեր նեռնոյն գիծուքին Պօղոսի առնուին Հոգի Սուրբ եւ խօսէին յայլեւայլ լեզուս: Վասն որոյ եւ իմ աղաչանք են առ ձեզ, եղբա՛րք սիրելի Աստուծոյ եւ սիրեցեալք ի Քրիստոսէ, զի եւ արտասուօք պաղատանօք խնդրեմ չառնել անտես զերկայն ժամանակաց աշխատութիւնս, որ եղեւ ի սմա յերկս վաստակոց: Այդ ընկալարուք ձեզ ի փշոց վարդ եւ ի տատասկէ թուզ, եւ ի մորենոյ՝ խաղող, եւ ի խորոց ծովու՝ զանանս պատուականս եւ ի գաղտկրայէ՝ զմարգարիտս գեղեցիկս: Նա եւ ինձ՝ ստացօղիս վարձ բարեաց պարգեւեա՛, գթասասուս աչաց, զողորմս հառաչանաց, զարաւիս պաղատանաց, զթողութիւն մեղաց եւ զբաւութիւն յանցանաց՝ հայցեալով ինձ յարարչէն ամենեցուն, զի ոչ ան|*253բ*|տես առնէ գհայցուածս մեր:

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան առ հասարակ, որք ակտիք ի սմանէ եւ կամ աւրինակէք, եւ որք չետ մեր ժառանգէք զսա, յիշման արժանի առնէք զիս՝ հանդերձ ծնօղօք իմովք:

Արդ, գրեցաւ աստուածախօս մեկնութիւնս Պօղոսի առաքելոյն ի թվին հայոց Ռ. եւ Հե. *(1626)* ամին, յերկիրն Տարօնոյ, ի վանքն Եղիազարու, ի դուռն Սուրբ Աստուածածնին եւ երկոտասան Սուրբ Առաքելոցն եւ Սուրբ Ստեփաննոս Նախավկային եւ Սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին եւ այլ սրբոցն, որ են աստ հաւաքեալ: Վասն որոյ եւ աստ եդի յիշատակ ինձ եւ ծնօղաց իմոց՝ հաւրն (անուան տեղը բաց՝ չգրած) եւ մօրն (անուան տեղը բաց՝ չգրած) եւ եղբարցն իմ մահդասի Ապտուլին եւ Մեհերին՝ փոխեցելոյն առ Քրիստոս եւ Մախսուտին՝ փոխեցելոյն, գոր տէր Աստուածն ողորմեսցի նոցա: Եւ որ յիշէ, յիշեալ լիցի առաջի աւետին Քրիստոսի: Եւ լաւ պահօղքն եւ խնամ տանօղքն պահակեալ լիցին ի Քրիստոսի Աստուծոյ:

